

EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS
COUR EUROPÉENNE DES DROITS DE L'HOMME

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

Ընդունելիության չափանիշների
վերաբերյալ



Հայաստանի Հանրապետության
արդարադատության նախարարություն

Սույն ուղեցույցը տպագիր կամ առցանց վերարտադրելու (կամ թարգմանելու) ցանկություն ունեցող հրատարակողներին կամ կազմակերպություններին խնդրում ենք դիմել publishing@echr.coe.int էլեկտրոնային հասցեով՝ հետագա ցուցումների համար:

© Եվրոպայի Խորհուրդ/Մարդու Իրավունքների Եվրոպական Դատարան, 2014 թվական

Սույն ուղեցույցը պատրաստվել է Քաղաքացիական և միջազգային իրավունքի հարցերով իրավախորհրդատու վարչության շրջանակներում և Դատարանի համար պարտադիր ուժ չունի: Ուղեցույցի առաջին խմբագրությունը հրատարակվել է 2009 թվականին, իսկ երկրորդը՝ 2011 թվականին: Երրորդ հրատարակության համար տեքստը լրամշակվել է 2014 թվականի հունվարի 1-ին:

Ուղեցույցը կարող է ներբեռնվել www.echr.coe.int կայքից (Case-law – Case-law analysis – Admissibility guide):

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ	8
Դիմումի ընթացքը.....	11
Ըստ դատական միավորի զանգատի ուսումնասիրման պարզեցված սխեման .	12
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	13
Ա. Անհատական զանգատ.....	15
1. Դրույթի նպատակը.....	15
2. Դիմումատուների կատեգորիաները.....	15
(ա) Ֆիզիկական անձինք.....	15
(բ) Իրավաբանական անձինք.....	16
(գ) Անձանց ցանկացած խումբ.....	17
3. Ձոռի կարգավիճակը	17
(ա) «Ձոռի» հասկացությունը	17
(բ) Անմիջական զոռ	17
(գ) Անուղղակի զոռ.....	18
(դ) Պոտենցիալ զոռեր և այլոց իրավունքների պաշտպանությամբ դատարան դիմելու իրավունք (actio popularis)	19
(ե) Ձոռի կարգավիճակը կորցնելը.....	20
(զ) Ձոռի մահը.....	22
4. Ներկայացուցչություն.....	23
Բ. Անհատական զանգատի իրավունքի իրականացման ազատությունը	23
1. Պատասխանող պետության պարտավորությունները.....	25
(ա) Դատարանի կանոնակարգի 39-րդ կանոն.....	25
(բ) Փաստերի հաստատումը	27
(գ) Քննություններ.....	28
ԱՆԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԱՅԻՆ ՀԻՄՔԵՐԸ	29
Ա. Իրավական պաշտպանության ներպետական միջոցների չսպառումը.....	29
1. Կանոնի նպատակը	30
2. Կանոնի կիրառելիությունը	30
(ա) Ճկունությունը.....	30
(բ) Ներպետական կանոններին և սահմանափակումներին համապատասխանությունը	30
(գ) Ներպետական իրավական պաշտպանության մի քանի միջոցների առկայությունը 31	
(դ) Ըստ էության բարձրացված բողոք	31
(ե) Առկայությունը և պատշաճությունը	32
(զ) Առկայությունը և արդյունավետությունը	33
3. Կանոնի կիրառման սահմանափակումները	33
4. Ապացուցման բեռի բաշխումը	34
5. Ընթացակարգային ասպեկտները	36
6. Իրավական պաշտպանության նոր միջոցների ստեղծումը	37
Բ. Վեցամսյա ժամկետը չպահպանելը.....	39
1. Կանոնի նպատակը	39
2. Վեցամսյա ժամկետի հաշվարկման սկիզբը	40
(ա) Վերջնական որոշումը.....	40
(բ) Ժամկետի մեկնարկային կետը.....	40

(i) Որոշման մասին իմացությունը	41
(ii) Որոշման հանձնումը	41
(iii) Որոշումը չհանձնելը	41
(iv) Իրավական պաշտպանության միջոցների բացակայությունը	41
(v) Շարունակական իրավիճակ	42
3. Վեցամսյա ժամկետի լրանալը	42
4. Գանգատի ներկայացման ամսաթիվը	42
(ա) Դիմումի՝ լրացված ձևաթուղթը	42
(բ) Լիազորագիրը	43
(գ) Ուղարկման օրը	43
(դ) Ֆաքսով ուղարկելը	43
(ե) Գանգատի բովանդակությունը	43
(զ) Հաջորդող բողոքները	44
5. Հատուկ իրավիճակներ	44
(ա) Ժամանակային սահմանափակումների կիրառելիությունը	44
(բ) Վեցամսյա կանոնի կիրառման պայմանները Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետի՝ դիմումատուին բազում անգամ կալանքի տակ պահելու դեպքերում	45
Գ. Անանուն գանգատ	45
1. Անանուն գանգատ	45
2. Ոչ անանուն գանգատ	46
Դ. Ըստ էության նույն գանգատներ	46
1. Ըստ էության այն նույն հարցն է, որը Դատարանն արդեն քննել է	47
2. Ըստ էության նույն հարցն է, որն արդեն քննվել է կամ որն արդեն հանձնվել է միջազգային քննության կամ կարգավորման այլ ընթացակարգի	48
(ա) Գործերի նմանության գնահատումը	48
Ե. Գանգատի իրավունքի չարաշահումը	49
1. Ընդհանուր սահմանում	49
2. Դատարանին ապակողմնորոշելը	50
3. Վիրավորական խոսքեր	51
4. Բարեկամական կարգավորման ընթացակարգի գաղտնիության սկզբունքի խախտումը	51
5. Դատարան դիմելու իրավունքի չարաշահմամբ ներկայացված կամ որևէ իրական նպատակից զուրկ գանգատ	52
6. Այլ գործեր	53
7. Պատասխանող պետության կողմից որդեգրման ենթակա մոտեցումը	53
II. ԴՍՏԱՐԱՆԻ ԻՐԱՎԱԶՈՐՈՒԹՅԱՆ ԿԵՐԱԲԵՐՈՂ ԱՆԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԻՍՔԵՐԸ	54
Ա. Ratione personae անհամատեղելիությունը	54
1. Սկզբունքները	54
2. Իրավագործությունը	55
3. Պատասխանատվությունը և մեղավորության վերագրումը	55
4. Հարցեր՝ Կոնվենցիայի անդամ պետությունների՝ միջազգային կազմակերպության անդամակցության հետ կապված իրենց գործողությունների կամ անգործության համար հնարավոր պատասխանատվության վերաբերյալ	57
Բ. Ratione loci անհամատեղելիությունը	60

1. Սկզբունքները	60
2. Հատուկ դեպքեր.....	61
Գ. <i>Ratione temporis</i> անհամատեղելիությունը	62
1. Ընդհանուր սկզբունքներ.....	62
2. Ընդհանուր սկզբունքների կիրառումը	63
(ա) Կոնվենցիայի վավերացման կամ Կոնվենցիայի ինստիտուտների իրավագործության ընդունման համար վճռորոշ ամսաթիվը.....	63
(բ) Հայտարարությանը կամ ուժի մեջ մտնելուն անմիջապես նախորդող կամ հաջորդող փաստեր.....	63
3. Հատուկ իրավիճակներ	65
(ա) Շարունակական խախտումներ.....	65
(բ) Վճռորոշ ամսաթվին նախորդող անհետացման դեպքերը քննելու «շարունակական» ընթացակարգային պարտավորությունը.....	66
(գ) Հոդված 2-ով նախատեսված մահը հետաքննելու ընթացակարգային պարտավորությունը. Դատարանի ժամանակային իրավասությունից դուրս գտնվող փաստերի առնչությամբ իրականացվող վարույթը	66
(դ) Նախորդող փաստերի ուսումնասիրությունը.....	68
(ե) Դատարանի վարույթում գտնվող հայց կամ ազատությունից զրկում.....	68
(զ) Միայն դատապարտման համար փոխհատուցում ստանալու իրավունքը.....	69
Դ. <i>Ratione materiae</i> անհամատեղելիությունը	69
1. «Քաղաքացիական իրավունքների և պարտականությունների» հասկացությունը.....	70
(ա) 6-րդ հոդվածի 1-ին կետի կիրառելիության ընդհանուր պահանջները.....	70
(բ) «Վեճ» եզրույթը.....	71
(գ) Վիճարկվող իրավունքի գոյությունը ներպետական իրավունքում.....	72
(դ) Իրավունքի «քաղաքացիական» բնույթը.....	75
(ե) Իրավունքի մասնավոր բնույթը՝ նյութական մասը.....	75
(զ) Այլ վեճերի նկատմամբ կիրառումը	76
(է) Հարցեր, որոնք ենթակա չեն քննության	78
(ը) 6-րդ հոդվածի կիրառելիությունը այլ՝ ոչ հիմնական վարույթների նկատմամբ ..	80
2. «Քրեական մեղադրանք» հասկացությունը	81
(բ) Ընդհանուր սկզբունքների կիրառումը.....	83
(i) Կարգապահական վարույթ	83
(ii) Վարչական, հարկային, մաքսային և մրցակցության պաշտպանության իրավունքներին վերաբերող վարույթներ.....	85
(iii) Քաղաքական բնույթի հարցեր	86
(iv) Վտարում և հանձնում.....	86
(v) Քրեական դատավարության տարբեր փուլերը, օժանդակ վարույթները և իրավական պաշտպանության միջոցները	86
(գ) Կոնվենցիայի այլ հոդվածների կամ դրան կից Արձանագրությունների հետ փոխհարաբերակցությունը.....	89
3. «Անձնական կյանք» և «ընտանեկան կյանք» հասկացությունները.....	90
(ա) 8-րդ հոդվածի գործողության շրջանակը	90
(բ) «Անձնական կյանքի» ոլորտը	90
(i) Ֆիզիկական, հոգեբանական և բարոյական ամբողջականությունը.....	90
(ii) Առանձնացվածությունը	93
(iii) Ինքնությունը և անհատական ինքնավարությունը.....	94
(գ) «Ընտանեկան կյանքի» ոլորտը	96
(i) Ծնող դառնալու իրավունք	97
(iii) Երեխաների վերաբերյալ.....	97
(iv) Զույգերի վերաբերյալ.....	99
(v) Այլ փոխհարաբերությունների վերաբերյալ	100
(vi) Նյութական շահագրգռվածությունը.....	100

4. «Բնակարան» և «նամակագրություն» հասկացությունները.....	101
(ա) 8-րդ հոդվածի գործողության ոլորտը.....	101
(բ) «Բնակարան» հասկացության սահմանները	101
(գ) «Բնակարան» հասկացության շրջանակներում դիտարկվող իրավիճակներ....	103
(դ) «Նամակագրություն» հասկացության սահմանները.....	105
(ե) Միջամտությունների օրինակները.....	106
3. «Գույք» հասկացությունը.....	107
(ա) Պաշտպանվող գույքը.....	107
(բ) Ինքնուրույն իմաստը.....	107
(գ) Գոյություն ունեցող գույք	108
(դ) Պահանջները և պարտքերը.....	108
(ե) Սեփականությունը վերադարձնելը.....	109
(զ) Ապագա եկամուտը.....	110
(է) Մասնագիտական գործունեությունից օգտվող հաճախորդները.....	110
(ը) Բիզնեսի լիցենզավորումը.....	110
(թ) Գնաճը.....	111
(ժ) Ստավոր սեփականությունը	111
(ի) Ընկերության բաժնեմասերը.....	111
(լ) Սոցիալական ապահովության նպաստները.....	111
III. ԳԱՆԳԱՏԻ ԸՍՏ ԷՈՒԹՅԱՆ ԱՆԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ.....	111
Ա. Ակնհայտորեն անհիմն	111
1. Ընդհանուր ներածություն	112
2. «Չորրորդ ատյան».....	113
3. Խախտման հստակ կամ ակնհայտ բացակայությունը	115
(ա) Անարդարության կամ կողմնակալության բացակայությունը.....	115
(բ) Միջոցի և նպատակի անհամաչափության բացակայությունը	116
(գ) Այլ համեմատաբար ակնհայտ էական հարցեր.....	118
4. Անհիմն զանգատներ. ապացույցների պակաս.....	118
5. Շփոթ առաջացնող կամ անհիմն զանգատներ.....	120
Բ. Ոչ էական վնաս.....	120
1. Նոր չափանիշի նախապատմությունը.....	120
2. Գործողության ոլորտը	121
3. Արդյոք դիմումատու և կրել է էական վնաս.....	122
(ա) Էական ֆինանսական վնասի բացակայությունը.....	123
(բ) Էական ֆինանսական վնաս	124
(գ) Էական ոչ ֆինանսական վնասի բացակայությունը.....	125
(դ) Էական ոչ ֆինանսական վնաս	126
4. Երկու պաշտպանական դրույթ.....	127
(ա) Արդյոք մարդու իրավունքները հարգելու սկզբունքը պահանջում է գործի ըստ էության քննություն	127
(բ) Արդյոք գործը հավուր պատշաճի քննվել է ներպետական դատարանի կողմից	129
ՄԵԶԲԵՐՎԱԾ ԳՈՐԾԵՐԻ ՑԱՆԿ	131
—A—	131
—B—.....	133
—C—.....	135
—D—	136
—E—.....	139

—F—	139
—H—	141
—I—	142
—J—	143
—K—	143
—L—	145
—M—	146
—N—	148
—O—	149
—P—	150
—Q—	151
—R—	151
—S—	152
—T—	155
—U—	155
—V—	156
—W—	156
—X—	157
—Y—	158
—Z—	158
—З—	158

ՆԱԽԱԲԱՆ

Անհատական գանգատի իրավունքը արդարացիորեն համարվում է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի հիմնական առանձնահատկությունը և մեծագույն ձեռքբերումը: Այն անձինք, ովքեր գտնում են, որ իրենց մարդու իրավունքները խախտվել են հնարավորություն ունեն բողոք ներկայացնել Մարդու իրավունքների եվրոպական դատարան: Սակայն, գոյություն ունեն Կոնվենցիայով նախատեսված ընդունելիության կարևոր պահանջներ, որոնք պետք է բավարարվեն, որպեսզի գործով քննություն անցկացվի: Օրինակ՝ դիմումատուները պետք է սպառեն իրավական պաշտպանության ներպետական բոլոր միջոցները և իրենց բողոքը ներկայացնեն վեց ամսվա ընթացքում՝ հաշված այն օրվանից, երբ կայացվել է ներպետական վերջնական որոշումը:

2014 թվականի նոյեմբերի 1-ի դրությամբ Դատարանի վարույթում կար շուրջ 78,000 գանգատ: Չնայած, որ վերջին երեք տարիների ընթացքում Դատարանի դատական գործերի ռեեստրը մոտավորապես 50%-ով կրճատվել է, այս [ցուցանիշը]¹ միջազգային դատարան ներկայացված գործերի համար դեռևս բավականին զգալի թիվ է ներկայացնում և շարունակում է սպառնալ Կոնվենցիայով ամրագրված դիմում ներկայացնելու իրավունքի արդյունավետությանը: Փորձից գիտենք, որ Դատարանը կմերժի գործերի զգալի մեծամասնության քննությունը (2013 թվականին քննված [գործերի] 92%-ը)՝ անընդունելիության հիմքերից մեկով: Իրավաբանները և դատավորները պետք է ուշադրություն դարձնեն նմանատիպ գործերին՝ մինչև դրանց մերժվելը: Դրանք այսպիսով ծանրաբեռնում են Դատարանի դատական գործերի ռեեստրը և խոչընդոտում քննության համար ավելի կարևոր նշանակության այն գործերի քննությունը, որոնցով ընդունելիության պահանջները պահպանվել են և որոնք, հնարավոր է, առնչվում են մարդու իրավունքների լուրջ խախտումների վերաբերյալ հայտարարություններին:

Ե՛վ փորձից, և՛ վերը նշված վիճակագրությունից պարզ է դառնում, որ որպես անհատ հանդես եկող դիմումատուների մեծամասնությունը ընդունելիության պահանջների մասին բավարար գիտելիք չունի: Նույնը իրավախորհրդատուների կամ գործող փաստաբանների դեպքում է: Դատարանի բարեփոխումների վերաբերյալ Ինտերլակենի համաժողովում անդամ պետություններին արդարացիորեն մատնանշել են այս խնդիրը և կոչ արել «անդամ պետություններին և Դատարանին ապահովել, որպեսզի պոտենցիալ դիմումատուներին տրամադրվի Կոնվենցիայի և Դատարանի նախադեպային իրավունքի, մասնավորապես՝ դիմելու ընթացակարգի և ընդունելիության չափանիշների վերաբերյալ համապարփակ և օբյեկտիվ տեղեկատվություն» (2010 թվականի փետրվարի 19-ի Ինտերլակենի հռչակագրի 6-րդ կետ):

Այս կոչին Դատարանի պատասխանը եղավ Ընդունելիության վերաբերյալ գործնական ձեռնարկի կազմումը, որը հստակ սահմանում է ընդունելիության

¹ Թարգմանիչը քառակուսի փակագծերն օգտագործել է Ուղեցույցի հայերեն տեքստը մատչելի դարձնելու համար:

կանոնները և Դատարանի [համապատասխան] նախադեպային իրավունքը: Այն նպատակ ունի հնարավորություն ընձեռել, որպեսզի իրավաբանները Դատարանին ընդունելի գործ ներկայացնելու հավանականության մասին իրենց հաճախորդներին տրամադրեն պատշաճ խորհրդատվություն և [նպատակ ունի] նվազեցնելու ներկայացվող՝ ակնհայտորեն անհիմն գործերի քանակը: Ուղեցույցի նախկին հրատարակությունները թարգմանվել են ավելի քան քսան լեզուներով և հասանելի եղել և՛ ներպետական մակարդակով, և՛ Դատարանի կայքի միջոցով: Կցանկանայի շնորհակալություն հայտնել [անդամ պետությունների] բոլոր կառավարություններին և մյուս գործընկերներին, ովքեր այս ուղեցույցը դարձրին իրականություն և նաև քաջալերել նրանց թարգմանել և տարածել երրորդ հրատարակությունը:

Դատարանի կանոնակարգի 47-րդ նոր կանոնը, որը Դատարանն դիմելու ավելի խիստ պայմաններ է նախատեսում, ուժի մեջ է մտել 2014 թվականի հունվարի 1-ին: Կանոնակարգի այս լրացումը, զուգորդված նոր Գործնական ցուցումով, իրականացրեց երկու նոր հիմնական փոփոխություն, որոնց միջոցով կորոշվի՝ արդյոք գանգատը պետք է մերժվի, թե՛ հանձնվի Դատարանի քննությանը: Դրանցից առաջինը հերթին վերաբերում է նոր հեշտացված դիմումի ձևաթղթին, որը պետք է ամբողջությամբ լրացվի և ուղեկցվի բոլոր վերաբերելի հաստատող փաստաթղթերի պատճեններով՝ հակառակ դեպքում չի քննվի: Այնուհետև, եթե դիմումի ձևաթուղթը լրացվել է կամ գործի նյութերն ամբողջականացվել են վեց ամսյա ժամկետը լրանալուց հետո, գործը կմերժվի՝ ժամկետների խախտմամբ ներկայացված լինելու պատճառով:

Պոտենցիալ դիմումատուներին և/կամ նրանց ներկայացուցիչներին դիմումի ներկայացման այս նոր պայմանների մասին տեղեկացնելու նպատակով, Դատարանը, Կոնվենցիայի անդամ պետությունների պաշտոնական լեզուներով ընդլայնել է իր տեղեկատվական նյութերի շրջանակը: Նյութերը ներառում են ինտերակտիվ ստուգման թերթիկը (checklist), ընդունելիության չափանիշները և դիմումի ձևաթուղթը ճիշտ լրացնելու կարգը բացատրող տեսանյութեր: Ի հավելումն, դատարանն դիմել ցանկացող յուրաքանչյուր անձին օգտակար տեղեկատվություն տրամադրող կայքէջերն արդեն հասանելի են Կոնվենցիայի անդամ պետությունների բոլոր լեզուներով: Հարկ եմ համարում նշել վերջերս Եվրոպայի փաստաբանական պալատի և իրավաբանական կազմակերպությունների խորհրդի (Council of Bars and Law Societies in Europe (CCBE)) կողմից հրապարակված «Հարցեր և պատասխաններ» ուղեցույցի մասին:

Վերջինս ըստ հերթականության, բայց ոչ ըստ կարևորության՝ 2012 թվականին Դատարանի մեկնարկած թարգմանությունների ծրագրի արդյունքում ավելի քան 12,000 նախադեպ HUDOC-ի տվյալների բազայում արդեն հասանելի է շուրջ 30 լեզուներով (անգլերենից և ֆրանսերենից բացի): Որոշ գործեր, որոնք արդեն թարգմանված են, ներառում են ընդունելիության վերաբերյալ Դատարանի դիտարկումները: Գործերը կարելի է գտնել HUDOC-ում՝ օգտագործելով ընդունելիությանը վերաբերող մեկ կամ ավելի բանալի բառ:

² Երբ Կոնվենցիային կից թիվ 15 Արձանագրությունը մտնի ուժի մեջ, գանգատ ներկայացնելու վեց ամիս տևողությամբ այս ժամկետը կկրճատվի, կդառնա չորս ամիս:

Իրավաբանները և իրավախորհրդատուները, ի թիվս այլոց, պետք է ապահովեն, որպեսզի Կոնվենցիայով նախատեսված ընդունելիության չափանիշները, ինչպես նաև վերը նշված ընթացակարգային պայմանները բավարարող գործեր ներկայացնող անձանց համար Դատարանի ճանապարհը լինի բաց: Չնայած Դատարանի վարույթում գտնվող գործերի թվի զգալի կրճատմանը՝ Դատարանը դեռևս շարունակում է ստանալ այնպիսի գանգատներ, որոնք նշված պահանջները չբավարարելու պատճառով երբևէ չպետք է ներկայացվեին: Գործող փաստաբանները, մինչև գործը ներկայացնելը պետք է մանրամասն ուսումնասիրեն այս Գործնական ուղեցույցը: Այդ կերպ նրանք Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի արդյունավետության ապահովման հարցում մեծ ներդրում կունենան:

Կցանկանայի հիշատակել այս երրորդ հրատարակությունը անգլերեն և ֆրանսերեն և այս գրավիչ տեսքով ստեղծելու համար Վոլֆ Լեգալ Փաբլիշերսին (Wolf Legal Publishers) ուղղված իմ շնորհակալությունը: Կասկած չունեմ, որ քանի դեռ իրավունքը շարունակում է զարգանալ և [Ուղեցույցի] կարևորությունը գնահատվում է, հետագայում կլինեն այս Ուղեցույցի այլ հրատարակություններ:

Ստրասբուրգ, նոյեմբեր, 2014թ.


Դին Շպիլման (Dean Spielmann), Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախագահ

Դիմումի ընթացքը


Վարույթն ազգային մակարդակում




Վարույթը Մարդու իրավունքների եվրոպական դատարանում



Վճռի իրականացում





ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայով (Կոնվենցիա) երաշխավորված հիմնարար իրավունքների և ազատությունների պաշտպանության համակարգը հիմնված է սուբսիդիարության սկզբունքի վրա: Կոնվենցիայի անդամ պետությունների հիմնական խնդիրն է ապահովել Կոնվենցիայի կիրառումը: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (Դատարան) պետք է միջամտի միայն այն ժամանակ, երբ պետությունները թերանում են իրենց պարտականությունների կատարման մեջ:

Ստրասբուրգի վերահսկողության անհրաժեշտությունը հիմնականում առաջանում է անհատական զանգատների ներկայացմամբ, որոնք Դատարան կարող են ներկայացնել Կոնվենցիայի անդամ պետությունների իրավասության ներքո գտնվող ցանկացած անհատ կամ իրավաբանական անձ: Այդ է պատճառը, որ զանգատ ներկայացնող պոտենցիալ դիմումատուների շրջանակը լայն է. մեծ Եվրոպայի ութ հարյուր միլիոն բնակիչների և այդ տարածքում բնակվող կամ ժամանակավոր գտնվող Եվրոպայի քաղաքացի չհանդիսացող անձանց թվին պետք է ավելացնել նաև միլիոնավոր ասոցիացիաներ, հիմնադրամներ, քաղաքական կուսակցություններ, ընկերություններ և այլ կազմակերպություններ (չհաշված այն անձանց, ովքեր հայտնվել են Կոնվենցիայի անդամ պետության իրավասության ներքո՝ վերջիններիս կողմից իրենց տարածքներից դուրս իրականացված գործողությունների արդյունքում):

Տարիների ընթացքում, բազմաթիվ գործոններով պայմանավորված, Դատարանը եղել է անհատական զանգատներով գերծանրաբեռնված (2013 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ավելի քան 99,900 զանգատ է գտնվել Դատարանի վարչություն): Այս զանգատների ճնշող մեծամասնությունը (ավելի քան 95%-ը) մինչ զանգատի ըստ էության քննությունն, այնուամենայնիվ, մերժվում է՝ Կոնվենցիայով սահմանված ընդունելիության չափանիշներից որևէ մեկը չբավարարելու հիմքով: Այս իրավիճակը հիասթափեցնող է 2 պատճառով. առաջին՝ քանի որ Դատարանը պարտավոր է յուրաքանչյուր զանգատի անդրադառնալ առանձին, այն հնարավորություն չունի ողջամիտ ժամկետում քննելու այն գործերը, որոնք ունեն ըստ էության քննության անհրաժեշտություն՝ առանց հանրության համար որևէ օգուտի: Երկրորդ՝ հազարավոր դիմումատուների ներկայացրած զանգատներն անխուսափելիորեն մերժվում են, հաճախ՝ երկար տարիների սպասումներից հետո:

2. Կոնվենցիայի անդամ պետություններն, ինչպես նաև Դատարանը և Քարտուղարությունն այս խնդիրը լուծելու և արդարադատության արդյունավետ իրականացումն ապահովելու համար մշտապես փնտրել են եղանակներ: Ամենատեսանելի միջոցներից մեկը Կոնվենցիային կից [թիվ 14 Արձանագրության](#) ընդունումն էր: Այն, ի թիվս այլ պայմանների, նախատեսում է, որ ակնհայտ անընդունելի զանգատները քննվեն ոչ թե երեք դատավորի կազմով, այլ մեկ դատավորի կողմից՝ ոչ դատական գեկուցողի օգնությամբ: Թիվ 14 Արձանագրությունը, որն ուժի մեջ մտավ 2010 թվականի հունիսի 1-ին, նաև ներմուծեց ընդունելիության նոր՝ դիմումատուի համար ստեղծված իրավիճակի անբարենպաստության աստիճանի վերաբերյալ չափանիշ՝ նպատակ ունենալով ոչ էական վնաս կրած դիմումատուներին հետ պահել դիմումներ ներկայացնելուց:

2010 թվականի փետրվարի 19-ին, Եվրոպայի խորհրդի քառասունյոթ անդամ պետությունների ներկայացուցիչները հանդիպեցին Ինտերլակենում (Շվեյցարիա)

քննարկելու Դատարանի ապագան և, մասնավորապես, մեծ թվով անընդունելի ճանաչված գանգատների արդյունքում կուտակված գործերը: [Պաշտոնական հայտարարությամբ](#) նրանք վերահաստատեցին հիմնարար իրավունքների և ազատությունների պաշտպանության եվրոպական համակարգում Դատարանի կենտրոնական դերը և հանձն առան բարձրացնել դրա արդյունավետությունը՝ միևնույն ժամանակ պահպանելով անհատական գանգատի սկզբունքը:

Կոնվենցիայի համակարգի կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ կենսունակության ապահովման կարիքի մասին հետազայում խոսվել է [Իզվիթի](#) և [Բրայթոնի](#) համապատասխանաբար 2011 և 2012 թվականներին տեղի ունեցած համաժողովներից հետո ընդունված հռչակագրերում:

3. Գանգատ ներկայացնելու ընթացակարգի և ընդունելիության չափանիշների վերաբերյալ պոտենցիալ դիմումատուներին ամբողջական և օբյեկտիվ տեղեկատվություն տրամադրելու մտահաղացումը հստակորեն արտահայտված է Ինտերլակենի հռչակագրի Գ-6 (ա) և (բ) կետերում: Անհատական գանգատների ընդունելիության պայմանների մասին սույն գործնական ուղեցույցի անհրաժեշտությունը նույնպես պետք է դիտարկել այդ համատեքստում: Ուղեցույցի նպատակն է ընդունելիության չափանիշները ներկայացնել առավել պարզ և մանրամասն, որպեսզի, առաջինը՝ հնարավորին կրճատվի ըստ էության քննության հեռանկար չունեցող գանգատների թիվը, և երկրորդ՝ ըստ էության քննության ենթակա գանգատները բավարարեն ընդունելիության թեստը: Ներկայում, թեստն անցած գործերով ընդունելիության հարցի և ըստ էության քննությունն անցկացվում է միաժամանակ, ինչը պարզեցնում և արագացնում է գործընթացը:

Սույն ուղեցույցն ի սկզբանե նախատեսված է գործող իրավաբանների համար, մասնավորապես այն փաստաբանների, ովքեր հնարավոր է Դատարանում ներկայացնեն դիմումատուների շահերը:

Կոնվենցիայի 34-րդ (անհատական գանգատներ) և 35-րդ (ընդունելիության չափանիշներ) հոդվածներով նախատեսված ընդունելիության բոլոր չափանիշներն ուսումնասիրվել են Դատարանի նախադեպային իրավունքի լույսի ներքո: Բնականաբար, որոշ հասկացություններ, ինչպիսիք են օրինակ՝ վեցամսյա ժամկետի պահպանման և իրավական պաշտպանության ներպետական միջոցների սպառման պահանջը, ավելի հեշտ է բացատրել, քան մյուսները, օրինակ՝ «ակնհայտորեն անհիմն» հասկացությունը, որը կարելի է անվերջ (*ad infinitum*) վերլուծել, կամ Դատարանի *ratione materiae* կամ *ratione personae* իրավագործությունը: Ավելին, որոշ հոդվածներ դիմումատուների կողմից վկայակոչվում են ավելի հաճախ, քան մյուսները, բացի այդ, որոշ պետություններ դեռևս չեն վավերացրել Կոնվենցիային կից բոլոր լրացուցիչ Արձանագրությունները, իսկ որոշ պետություններ որոշակի դրույթների գործողության շրջանակի մասով կատարել են վերապահումներ: Միջպետական գանգատներին առնչվող հազվադեպ դեպքերը սույն ուղեցույցի շրջանակներում հաշվի չեն առնվել, քանի որ դրանք ենթադրում են այլ մոտեցում: Հետևաբար, սույն ուղեցույցը սպառիչ չէ և անդրադառնում է առավել հաճախ հանդիպող իրավիճակներին:

4. Ուղեցույցը պատրաստել է Դատարանի Քաղաքացիական և միջազգային իրավունքի հարցերով իրավախորհրդատու վարչությունը և ընդունելիության չափանիշների մասին վերջինիս մեկնաբանությունը Դատարանի համար պարտադիր բնույթ չի կրում: Այն պարբերաբար կլրամշակվի: Ուղեցույցը կազմվել է ֆրանսերենով և անգլերենով և նախատեսվում է թարգմանել այլ լեզուներով՝

նախապատվությունը տալով այն երկրների պաշտոնական լեզուներին, որոնց դեմ ներկայացվել են առավել մեծ քանակությամբ գանգատներ:

5. «Անհատական գանգատ» և «տուժողի կարգավիճակ» հասկացությունները սահմանելուց հետո ուղեցույցը կոդիտարկի անընդունելիության ընթացակարգային հիմքերը (I), անընդունելիության՝ Դատարանի դատազորությանը վերաբերող (II) և գործի ըստ էության քննությանը վերաբերող հիմքերը (III):

Ա. Անհատական գանգատ

Հոդված 34՝ Անհատական գանգատ

«Դատարանը կարող է գանգատներ ընդունել ցանկացած անձից, հասարակական կազմակերպությունից կամ անձանց խմբից, որոնք պնդում են, թե դարձել են սույն Կոնվենցիայով կամ նրան կից Արձանագրությունով ճանաչված իրենց իրավունքների (...) խախտման զոհ: (...):»

1. Դրույթի նպատակը

6. 34-րդ հոդվածը, որը երաշխավորում է անհատական գանգատի իրավունքը, անձանց ընձեռում է միջազգային մակարդակում դատարան դիմելու հնարավորություն: Այն Կոնվենցիայի համակարգի արդյունավետությունն ապահովող հիմնական երաշխիքներից և մարդու իրավունքների պաշտպանության «մեխանիզմի հիմնական բաղադրիչներից մեկն է» ([Mamatkulov and Askarov ընդդեմ Թուրքիայի](#) (ՄՊ)³), §§ 100 և 122, ([Loizidou ընդդեմ Թուրքիայի](#) (նախնական առարկություններ), §70):

7. Կոնվենցիան «կենդանի գործիք» է և պետք է մեկնաբանվի արդի պայմանների լույսի ներքո: Այս առումով, Դատարանի նախադեպային իրավունքը նույնպես կիրառվում է ընթացակարգային այնպիսի դրույթների նկատմամբ, ինչպիսին է 34-րդ հոդվածը (նույն տեղում, § 71):

8. Կոնվենցիայի 34-րդ հոդվածին հղում անելու համար դիմումատուն պետք է բավարարի երկու պահանջ. նա պետք է պատկանի դիմումատուների՝ 34-րդ հոդվածում նշված երկու կատեգորիաներից մեկին և պետք է կարողանա ապացուցել, որ ինքը Կոնվենցիայի խախտման զոհ է ([Vallianatos and Others ընդդեմ Հունաստանի](#) (ՄՊ)), § 47):

2. Դիմումատուների կատեգորիաները

(ա) Ֆիզիկական անձինք

9. Յուրաքանչյուր անձ, Կոնվենցիայի 1-ին հոդվածին համապատասխան ([Van der Tang ընդդեմ Իսպանիայի](#)), § 53), անկախ իր ազգությունից, բնակության վայրից, քաղաքացիական կարգավիճակից, իրավիճակից կամ իրավունակությունից կարող է վստահ լինել անդամ պետության դեմ Կոնվենցիայի տրամադրած պաշտպանությունում, եթե ենթադրյալ խախտումը տեղի է ունեցել հետաքրքրված

³ Հղումները տանում են Դատարանի վճիռների կամ որոշումների անգլերեն և ֆրանսերեն բնօրինակ տեքստերին (Դատարանի երկու պաշտոնական լեզուները), Մարդու իրավունքների եվրոպական հանձնաժողովի որոշումների, զեկույցների անգլերեն և ֆրանսերեն բնօրինակ տեքստերին: Այլ նշումի բացակայության պայմաններում, բոլոր հղումները վերաբերում են Դատարանի Պալատի կողմից գործի ըստ էության քննության արդյունքում կայացված վճիռներին: «(ՄՊ)» հապավումը նշանակում է, որ գործը քննել է Մեծ պալատը:

պետության իրավագործության ներքո: Ծնողական իրավունքներից զրկված մոր իրավունքների մասով, տե՛ս [Scozzari and Giunta ընդդեմ Իտալիայի, \(ՄՊ\)](#), § 138, անչափահասի մասով, տե՛ս [A. ընդդեմ Միացյալ Թագավորությունների, իրավունակությունից զրկված անձի մասով, տե՛ս Zehentner ընդդեմ Ավստրիայի](#)), §§ 39 և հաջորդները:

10. Գանգատները կարող են ներկայացվել միայն կենդանի անձանց կողմից կամ նրանց անունից. մահացած անձը չի կարող դիմում ներկայացնել ([Aizpurua Ortiz and Others ընդդեմ Իսպանիայի](#)), § 30, [Dvořáček and Dvořáková ընդդեմ Սլովակիայի](#), § 41), նույնիսկ ներկայացուցչի միջոցով ([Kaya and Polat ընդդեմ Թուրքիայի](#) (որոշում), [Ciobanu ընդդեմ Ռումինիայի](#) (որոշում)):

(բ) Իրավաբանական անձինք

11. Կոնվենցիայով նախատեսված իրավունքի՝ անդամ պետության կողմից թույլ տված խախտման գոհ լինելու մասին պնդող իրավաբանական անձը կարող է հանդես գալ Դատարանում, եթե այն Կոնվենցիայի 34-րդ հոդվածի իմաստով հասարակական կազմակերպություն է:

12. «Կառավարական կազմակերպություններ» եզրույթը, հակառակ Կոնվենցիայի 34-րդ հոդվածի իմաստով «հասարակական կազմակերպությունների», վերաբերում է ոչ միայն պետության կառավարման կենտրոնական ապարատի մարմիններին, այլ նաև ապակենտրոնացված իշխանություններին, որոնք կենտրոնական ապարատի նկատմամբ ունեցած իրենց ինքնավարությունից անկախ՝ իրականացնում են «հանրային գործառնություններ»։ [այս եզրույթը] նմանապես վերաբերում է տեղական և մարզային իշխանություններին ([Radio France and Others ընդդեմ Ֆրանսիայի](#) (որոշում), § 26), քաղաքապետարանին ([Ayuntamiento de Mula ընդդեմ Իսպանիայի](#) (որոշում)) կամ քաղաքապետարանի այն բաժնին, որը մասնակցում է հանրային իշխանության իրականացմանը ([Municipal Section of Antilly ընդդեմ Ֆրանսիայի](#) (որոշում)), [նշվածներից] ոչ մեկը չի կարող 34-րդ հոդվածի հիմքով Դատարան գանգատ ներկայացնել (տե՛ս նաև [Dösemealtı Belediyesi ընդդեմ Թուրքիայի](#) (որոշում)):

13. «Կառավարական կազմակերպությունների» կատեգորիան ներառում է այն իրավաբանական անձանց, ովքեր մասնակցում են պետական իշխանության իրականացմանը կամ պետական վերահսկողության ներքո մատուցում են հանրային ծառայություններ: Որպեսզի պարզենք, թե արդյոք տարածքային իշխանություններից բացի ցանկացած այլ իրավաբանական անձ տեղավորվում է այդ [սահմանման] շրջանակներում, պետք է հաշվի առնել նրա իրավաբանական կարգավիճակը և անհրաժեշտության դեպքում այդ կարգավիճակով պայմանավորված իրավունքները, իրականացրած գործունեության տեսակը, ինչպես նաև դրա իրականացման համատեքստը, և քաղաքական իշխանություններից նրա անկախության մակարդակը ([Radio France and Others ընդդեմ Ֆրանսիայի](#) (որոշում), § 26, [Kotov ընդդեմ Ռուսաստանի](#) (ՄՊ), § 93): Պետական իշխանություն չիրականացնող հանրային իրավունքի [սուբյեկտ] իրավաբանական անձանց մասով, տե՛ս [The Holy Monasteries ընդդեմ Հունաստանի](#), § 49, [Radio France and Others ընդդեմ Ֆրանսիայի](#) (որոշում), §§ 24-26, [Österreichischer Rundfunk ընդդեմ Ավստրիայի](#) (որոշում): Պետությունից ինստիտուցիոնալ և գործառնությամբ առումով անկախ պետական կազմակերպությունների մասով, տե՛ս [Islamic Republic of Iran Shipping Lines ընդդեմ Թուրքիայի](#), §§ 80-81, [Ukraine-](#)

[Tyumen ընդդեմ Ուկրաինայի](#), §§ 25-28, [Unédic ընդդեմ Ֆրանսիայի](#), §§ 48-59 և ի հակադրումն՝ [Zastava It Turs ընդդեմ Սերբիայի](#) (որոշում), [State Holding Company Luganskugillya ընդդեմ Ուկրաինայի](#) (որոշում), տե՛ս նաև [Transpetrol, a.s., ընդդեմ Սլովակիայի](#) (որոշում):

(գ) Անձանց ցանկացած խումբ

14. Գանգատ կարող է ներկայացվել մի խումբ անձանց կողմից: Սակայն, տեղական իշխանությունները կամ այլ կառավարական մարմինները, պետության կողմից պատժելի և իրենց վերաբերելի արարքների առնչությամբ, իրենց անդամների կամ իրենց ներկայացնող և իրենց անունից հանդես եկող անձանց միջոցով չեն կարող գանգատ ներկայացնել ([Demirbaş and Others ընդդեմ Թուրքիայի](#) (որոշում)):

3. Չոհի կարգավիճակը

(ա) «Չոհ» հասկացությունը

15. Կոնվենցիայի 34-րդ հոդվածի համատեքստում «չոհ» բառն օգտագործվում է մատնանշելու այն անձին կամ անձանց, ում վրա ենթադրյալ խախտումն անմիջական կամ անուղղակի ներգործություն է ունեցել: Այդպիսով, 34-րդ հոդվածը վերաբերում է ոչ միայն ենթադրյալ խախտման անմիջական զոհերին կամ զոհերին, այլ նաև ցանկացած այլ՝ անուղղակի զոհերի, որոնց խախտման արդյունքում վնաս է պատճառվել կամ որոնք գործի ելքով անձնական և հիմնավոր շահագրգռվածություն ունեն ([Vallianatos and Others ընդդեմ Հունաստանի](#) (ՄՊ), §§ 47): «Չոհ» հասկացությունը մեկնաբանվում է ինքնուրույն և ներպետական, օրինակ՝ շահագրգռվածությանը կամ հայց ներկայացնելու իրավասուրբեկությանը վերաբերող կանոններից անկախ ([Gorraiz Lizarraga and Others ընդդեմ Բասկիայի](#), § 35), չնայած, որ Դատարանը պետք է հաշվի առնի այն հանգամանքը, որ դիմումատուն ներպետական մակարդակում դատավարության կողմ է եղել ([Aksu ընդդեմ Թուրքիայի](#) (ՄՊ), § 52, [Micallef ընդդեմ Մալթայի](#) (ՄՊ), § 48): Դա չի ենթադրում կանխակալություն ([Brumărescu ընդդեմ Ռումինիայի](#) (ՄՊ), § 50), և նույնիսկ ժամանակավոր իրավական հետևանքներ ունեցող ակտի առկայությունը հնարավոր է, որ բավարար լինի ([Monnat ընդդեմ Շվեյցարիայի](#), § 33):

16. «Չոհ» եզրույթի մեկնաբանությունը պետք է զարգանա արդի հասարակության պայմանների լույսի ներքո և պետք է կիրառվի առանց ավելորդ ձևականությունների (նույն տեղում՝ §§ 30-33, [Gorraiz Lizarraga and Others ընդդեմ Բասկիայի](#), § 38, [Stukus and Others ընդդեմ Լեհաստանի](#), § 35, [Ziętal ընդդեմ Լեհաստանի](#), §§ 54-59):

(բ) Անմիջական զոհ

17. 34-րդ հոդվածի պահանջներին համապատասխան գանգատ ներկայացնելու համար դիմումատուն պետք է ապացուցի, որ այն միջոցառումը, որի մասին բողոքել է իր վրա «անմիջական ներգործություն» է ունեցել ([Tănase ընդդեմ Սլովակիայի](#) (ՄՊ), § 104, [Burden ընդդեմ Միացյալ Թագավորությունների](#) (ՄՊ), § 33): Կոնվենցիայի պաշտպանության մեխանիզմը գործի դնելու համար դա պարտադիր է՝ չնայած

դատավարության ընթացքում այս չափանիշը խիստ, մեխանիկական և անփոփոխ կերպով չպետք է կիրառվի ([Micallef ընդդեմ Մայթայի](#) (ՄՊ), § 45, [Karner ընդդեմ Ավստրիայի](#), § 25, [Aksu ընդդեմ Թուրքիայի](#) (ՄՊ), § 51):

(գ) Անուղղակի գոհ

18. Եթե ենթադրյալ խախտման գոհը մահացել է մինչ գանգատ ներկայացնելը, հնարավոր է, որ մտերիմ ազգական հանդիսացող անձը կարողանա [գոհի] մահվան կամ անհետացման մասին բողոքի առնչությամբ գանգատ ներկայացնի ([Varnava and Others ընդդեմ Թուրքիայի](#) (ՄՊ), § 112): Սա պայմանավորված է ենթադրյալ խախտման բնույթով՝ դեպքի առանձնահատկությամբ և Կոնվենցիայի համակարգի հիմնարար դրույթների արդյունավետ կիրառման նկատառումներով ([Fairfield ընդդեմ Միացյալ Թագավորությունների](#) (որոշում)):

19. Նման գործերով Դատարանն ընդունել է, որ ընտանիքի անդամները, օրինակ՝ այն անձի ծնողները, ում մահը կամ անհայտացումը ենթադրում է պետության պատասխանատվության հարցի քննարկում, կարող են իրենց համարել Կոնվենցիայի 2-րդ հոդվածի ենթադրյալ խախտման անուղղակի գոհ [և այս դեպքում] մահացածի՝ իրավահաջորդ ունենալու հարցը վերաբերելի չէ ([Van Colle ընդդեմ Միացյալ Թագավորությունների](#), § 86):

20. Մտերիմ ազգականը կարող է իր մահացած կամ անհետացած բարեկամի անունից ներկայացնել նաև այլ բողոքներ, օրինակ՝ Կոնվենցիայի 3-րդ և 5-րդ հոդվածների շրջանակներում, պայմանով, որ ենթադրյալ խախտումները սերտորեն կապված են մահվան կամ անհետացման հետ և առաջ են բերում 2-րդ հոդվածին վերաբերող խնդիրներ:

21. Ամուսնացած զույգերի մասով, տե՛ս [McCann and Others ընդդեմ Միացյալ Թագավորությունների](#) (ՄՊ), [Salman ընդդեմ Թուրքիայի](#) (ՄՊ), չամուսնացած զույգերի մասով, տե՛ս [Velikova ընդդեմ Բուլղարիայի](#) (որոշում), ծնողների մասով, տե՛ս [Ramsahai and Others ընդդեմ Նիդերլանդների](#) (ՄՊ), [Giuliani and Gaggio ընդդեմ Իտալիայի](#) (ՄՊ), հարազատ քույրերի և եղբայրների մասով, տե՛ս [Andronicou and Constantinou ընդդեմ Կիպրոսի](#), երեխաների մասով, տե՛ս [McKerr ընդդեմ Միացյալ Թագավորությունների](#), զարմիկների մասով, տե՛ս [Yaşa ընդդեմ Թուրքիայի](#):

22. Այն գործերում, երբ Կոնվենցիայի ենթադրյալ խախտումը սերտորեն կապված չէր անմիջական գոհի մահվան կամ անհետացման հետ, Դատարանը սովորաբար ոչ մի այլ անձի բողոք ներկայացնելու իրավունք չի տվել, բացառությամբ երբ այդ անձը կարողացել է բացարձակ կերպով ցուցաբերել անձնական շահագրգռվածություն ([Nassau Verzekering Maatschappij N.V. ընդդեմ Նիդերլանդների](#) (որոշում), § 20): Տե՛ս օրինակ՝ [Sanles Sanles ընդդեմ Իսպանիայի](#) (որոշում) գործով որոշումը, որը վերաբերում էր 2-րդ, 3-րդ, 5-րդ, 8-րդ, 9-րդ և 14-րդ հոդվածների խախտմամբ իրականացված էֆթանագիային և որով Դատարանը վճռել է, որ դիմումատուի, ով մահացածի կնոջ քույրն էր և իրավահաջորդը, վկայակոչած իրավունքները պատկանում էին չփոխանցվող իրավունքների խմբին, հետևաբար նա չէր կարող ամուսնու եղբոր անունից հանդես գալ որպես խախտման գոհ. տե՛ս նաև [Bic and Others ընդդեմ Թուրքիայի](#) (որոշում) և [Fairfield ընդդեմ Միացյալ Թագավորությունների](#) (որոշում):

23. Այն գործերով, որոնցով մտերիմ ազգականներին գոհի կարգավիճակ է տրվել՝ վերջիններիս թույլատրելով գանգատ ներկայացնել օրինակ՝ 5-րդ, 6-րդ կամ 8-րդ հոդվածների վերաբերյալ բողոքների առնչությամբ, Դատարանը հաշվի է

առել՝ արդյոք նրանք մահացած զոհին ներկայացված մեղադրանքը վերացնելու (*Nölkenbockhoff ընդդեմ Գերմանիայի*, § 33, *Grädinar ընդդեմ Սոլդովայի*, §§ 95 և 97-98) կամ իրենց կամ ընտանիքի պատիվը պաշտպանելու համար (*Brudnicka and Others ընդդեմ Լեհաստանի*, §§ 27-31, *Armoniené ընդդեմ Լիտվայի*, § 29, *Polanco Torres and Movilla Polanco ընդդեմ Իսպանիայի*, §§ 31-33)) ցուցաբերել են բարոյական շահագրգռվածություն կամ իրենց դրամական իրավունքների վրա ունեցած ներգործության հիմքով ցուցաբերել են նյութական շահագրգռվածություն (*Nölkenbockhoff ընդդեմ Գերմանիայի*, § 33, *Grädinar ընդդեմ Սոլդովայի*, § 97, *Micallef ընդդեմ Սալթայի* (ՄՊ), § 48): Ընդհանուր շահագրգռվածության առկայությունը, որն բողոքների քննության հետ միասին առաջ է բերել դատավարության իրականացման անհրաժեշտություն, ևս հաշվի է առնվել (նույն տեղում, §§ 46 և 50, տե՛ս նաև *Bic and Others ընդդեմ Թուրքիայի* (որոշում), §§ 22-23):

24. Ներպետական դատավարությունում դիմումատուի մասնակցությունը մի շարք վերաբերելի չափանիշներից մեկն է (*Nölkenbockhoff ընդդեմ Գերմանիայի*, § 33, *Micallef ընդդեմ Սալթայի* (ՄՊ), § 48-49, *Polanco Torres and Movilla Polanco ընդդեմ Իսպանիայի*, § 31, *Grädinar ընդդեմ Սոլդովայի*, §§ 98-99, տե՛ս նաև *Kaburov ընդդեմ Բուլղարիայի* (որոշում), §§ 57-58, գործով որոշումն, որտեղ Դատարանը պարզել է, որ Կոնվենցիայի 3-րդ հոդվածի փոխանցելիության վերաբերյալ գործում դիմումատուի՝ գործի ելքով բարոյական կամ այլ համոզիչ շահագրգռվածության բացակայության պայմաններում նա չէր կարող համարվել զոհ միայն այն պատճառով, որ ներպետական իրավունքը նրան թույլատրում էր որպես պրն. Կաբուրովի իրավահաջորդ միջամտել քաղաքացիական դատավարությանը, տե՛ս նաև *Nassau Verzekering Maatschappij N.V. ընդդեմ Նիդերլանդների* (որոշում) գործով որոշումն առ այն, որ դիմումատու ընկերության պնդումը, որ Կոնվենցիային համապատասխան պահանջ ներկայացնելու իրավունքը ձեռք էր բերել իրավաբանական գործողություններ կատարելու հանձնարարության ակտով, մերժվել է Դատարանի կողմից):

25. Ինչ վերաբերում է ընկերությունների առնչությամբ բողոքներին, Դատարանը գտել է, որ անձը չի կարող բողոքել իր իրավունքների՝ այն դատավարության ընթացքում տեղի ունեցած խախտման մասին, որի կողմ չի հանդիսացել, եթե նույնիսկ նա դատավարության կողմ հանդիսացած ընկերության բաժնետերը և/կամ տնօրենն է: Մինչդեռ, որոշ հանգամանքներում ընկերության միակ սեփականատերը կարող է պնդել, որ ինքը Կոնվենցիայի 34-րդ հոդվածի իմաստով «զոհ» է, չնայած որ վիճարկվող միջոցառումները ձեռնարկվել են նրա ընկերության առնչությամբ, սակայն, երբ [դիմողն ընկերության միակ սեփականատերը չէ], ընկերության իրավունակության անտեսումը հիմնավորվում է միայն բացառիկ հանգամանքներում, մասնավորապես, երբ հստակ սահմանված է, որ ընկերությունն իր կանոնադրությամբ ստեղծված մարմինների կամ լուծարման դեպքում՝ լուծարողի միջոցով Կոնվենցիայի ինստիտուտներին դիմել չի կարող (*Centro Europa 7 S.r.l. and Di Stefano ընդդեմ Իտալիայի* (ՄՊ), § 92):

**(դ) Պոտենցիալ զոհեր և այլոց իրավունքների
պաշտպանությամբ դատարան դիմելու իրավունք (actio popularis)**

26. Որոշ հատուկ դեպքերում Դատարանն ընդունել է, որ դիմումատուն կարող է լինել պոտենցիալ զոհ: Օրինակ՝ երբ նա չի կարողացել ապացուցել, որ այն

օրենսդրությունը, որի մասով ինքը բողոքել է, իր նկատմամբ կիրառվել է [այդ օրենսդրությամբ] թույլատրված գաղտնի բնույթի միջոցառումների միջոցով ([Klass and Others ընդդեմ Գերմանիայի](#)) կամ երբ օտարերկրացու աքսորումը կարգադրվել է, բայց չի իրականացվել, իսկ իրականացման դեպքում՝ նա կհայտնվեր այն երկրում, որտեղ կարող է ենթարկվել Կոնվենցիայի 3-րդ հոդվածին հակասող վերաբերմունքի կամ իր՝ Կոնվենցիայի 8-րդ հոդվածով նախատեսված իրավունքները կխախտվեին ([Soering ընդդեմ Միացյալ Թագավորությունների](#)):

27. Այնուհանդերձ, որպեսզի դիմումատուն կարողանա պնդել, որ նման իրավիճակում ինքը գոհ է, նա պետք է ներկայացնի ողջամիտ և համոզիչ ապացույցներ առ այն, որ տեղի կունենա իր վրա անմիջական ներգործություն ունեցող խախտում. սոսկ կասկածները և ենթադրությունները բավարար չեն ([Senator Lines GmbH ընդդեմ Եվրոպական միության տասնհինգ անդամ պետությունների](#) (որոշում) (ՄՊ)): Տարիանման վերաբերյալ պաշտոնական կարգադրության բացակայության մասով, տե՛ս [Vijayanathan and Pusparajah ընդդեմ Ֆրանսիայի](#), § 46, խորհրդարանական զեկույցի ենթադրյալ հետևանքների մասով, տե՛ս [Fédération chrétienne des témoins de Jéhovah de France ընդդեմ Ֆրանսիայի](#) (որոշում), թմբիրային վիճակում (coma) գտնվող երրորդ անձի վերաբերյալ կայացված դատական ակտի ենթադրյալ հետևանքների մասով, տե՛ս [Rossi and Others ընդդեմ Իտալիայի](#) (որոշում):

28. Դիմումատուն չի կարող պնդել, որի ինքը խախտման գոհ է, եթե մասնակիորեն պատասխանատու է ենթադրյալ խախտման համար ([Paşa and Erkan Erol ընդդեմ Թուրքիայի](#)):

29. Դատարանը նաև ընդգծել է, որ Կոնվենցիայով նախատեսված իրավունքների մեկնաբանման նպատակով կամ ներպետական օրենսդրության դրույթի՝ Կոնվենցիային անհամապատասխան լինելու մասին բողոք ներկայացնելու կապակցությամբ (սակայն, առանց այդ դրույթի՝ իր վրա ունեցած անմիջական ներգործության առկայության), այլոց իրավունքների պաշտպանությամբ դատարան դիմելու իրավունք (*actio popularis*) Կոնվենցիան չի նախատեսում ([Aksu ընդդեմ Թուրքիայի](#) (ՄՊ), § 50, [Burden ընդդեմ Միացյալ Թագավորությունների](#) (ՄՊ), § 33):

30. Սակայն, անձը կարող է պնդել, որ օրենքը կիրառման անհատական միջոցառումների բացակայության պայմաններում խախտում է իր իրավունքները, եթե ինքը ստիպված էր փոխել իր վարքը կամ [գնահատել] քրեական հետապնդման ենթարկվելու ռիսկերը կամ եթե նա պատկանում էր այն անձանց խմբին, որի վրա հնարավոր է օրենսդրությունն անմիջական ներգործություն ունենար (նույն տեղում, § 34, [Tănase ընդդեմ Սլովակիայի](#) (ՄՊ), § 104, [Michaud ընդդեմ Ֆրանսիայի](#), §§ 51-52, [Sejdić and Finci ընդդեմ Բոսնիայի և Հերցեգովինայի](#) (ՄՊ), § 28):

(ե) Զոհի կարգավիճակը կորցնելը

31. Կոնվենցիայի խախտմամբ պատճառված վնասի հատուցման գործընթացը առաջինը սկսում են ազգային իշխանությունները: Այսպիսով, դիմումատուի՝ ենթադրյալ խախտման գոհ լինելու հարցը էական է Դատարանում քննության բոլոր փուլերում ([Scordino ընդդեմ Իտալիայի \(թիվ 1\)](#) (ՄՊ), § 179): Այս առումով դիմումատուն դատավարության ամբողջ ընթացքում պետք է կարողանա հաստատել զոհի իր կարգավիճակը ([Burdov ընդդեմ Ռուսաստանի](#), § 30, [Centro Europa 7 S.r.l. and Di Stefano ընդդեմ Իտալիայի](#) (ՄՊ), § 80):

32. Այն հարցը, թե արդյոք անձը կարող է պնդել, որ ինքը Կոնվենցիայի

ենթադրյալ խախտման գոհ է, էապես ենթադրում է Դատարանի կողմից նրա իրավիճակի *ex post facto* քննություն (նույն տեղում, § 82):

33. Դիմումատուի համար նպաստավոր ակտը կամ միջոցառումը Կոնվենցիայի 34-րդ հոդվածի նպատակներին համապատասխան նրան «գոհի» կարգավիճակից զրկելու համար սկզբունքորեն բավարար չէ, բացառությամբ եթե ազգային իշխանություններն ակնհայտորեն կամ ըստ էության ճանաչել են [Կոնվենցիայի խախտումը] և այնուհետ Կոնվենցիայի խախտման համար տրամադրել փոխհատուցում ([Scordino ընդդեմ Իտալիայի \(թիվ 1\)](#) (ՄՊ), § 180, [Gäfgen ընդդեմ Գերմանիայի](#) (ՄՊ), § 115, [Nada ընդդեմ Շվեյցարիայի](#) (ՄՊ), § 128): Միայն այն դեպքում, երբ այս պայմանները պահպանված են, Կոնվենցիայի պաշտպանության սուբսիդիար համակարգը բացառում է դիմումատուի գանգատի քննությունը ([Jensen and Rasmussen ընդդեմ Դանիայի](#) (որոշում), [Albayrak ընդդեմ Թուրքիայի](#), § 32):

34. Դիմումատուն կշարունակի համարվել գոհ, եթե ազգային իշխանություններն ակնհայտորեն կամ ըստ էության չընդունեն, որ տեղի է ունեցել դիմումատուի իրավունքների խախտում (նույն տեղում, § 33, [Jensen ընդդեմ Դանիայի](#) (որոշում)), նույնիսկ եթե դիմումատուն ստացել է փոխհատուցում ([Centro Europa 7 S.r.l. and Di Stefano ընդդեմ Իտալիայի](#) (ՄՊ), § 88):

35. Ավելին, տրամադրված հատուցումը պետք է լինի համապատասխան և բավարար: Սա կախված է գործի բոլոր հանգամանքներից և հատկապես Կոնվենցիայի համապատասխան խախտման բնույթից ([Gäfgen ընդդեմ Գերմանիայի](#) (ՄՊ), § 116):

36. Օրինակ՝ անձը չի կարող պնդել, որ ինքը Կոնվենցիայի 6-րդ հոդվածով նախատեսված արդար դատաքննության իրավունքի այնպիսի խախտման գոհ է, որն իր կարծիքով տեղի է ունեցել այն դատավարության ժամանակ, որի արդյունքում իրեն արդարացրել են կամ որը դադարեցվել է ([Oleksy ընդդեմ Լեհաստանի](#) (որոշում), [Koc and Tambas ընդդեմ Թուրքիայի](#) (որոշում), [Bouglame ընդդեմ Բելգիայի](#) (որոշում)), բացառությամբ այն բողոքների, որոնք վերաբերում են խնդրո առարկա դատավարության տևողությանը ([Osmanov and Husseinov ընդդեմ Բուլղարիայի](#) (որոշում)):

37. Որոշ այլ գործերում դիմումատուի գոհ լինելու հարցը կախված է ներպետական դատարանների կողմից սահմանած փոխհատուցման չափից և փոխհատուցում տրամադրող իրավական պաշտպանության միջոցի արդյունավետությունից (ներառյալ արագությունից) ([Normann ընդդեմ Դանիայի](#) (որոշում), [Scordino ընդդեմ Իտալիայի \(թիվ 1\)](#) (ՄՊ), § 202, տե՛ս նաև [Jensen and Rasmussen ընդդեմ Դանիայի](#) (որոշում)):

38. Առանձնահատուկ իրավիճակների մասով, տե՛ս [Arat ընդդեմ Թուրքիայի](#), § 47 (հոդված 6), [Constantinescu ընդդեմ Ռումինիայի](#), §§ 40-44 (Հոդվածներ 6 և 10), [Guisset ընդդեմ Ֆրանսիայի](#), §§ 66-70 (հոդված 6), [Chevrol ընդդեմ Ֆրանսիայի](#), §§ 30 և հաջորդները (հոդված 6), [Moskovets ընդդեմ Ռուսաստանի](#), § 50 (հոդված 5), [Moon ընդդեմ Ֆրանսիայի](#), §§ 29 և հաջորդները (Կոնվենցիային կից թիվ 1 Արձանագրության 1-ին հոդված), [D.J. and A.-K.R. ընդդեմ Ռումինիայի](#) (որոշում), §§ 77 և հաջորդները (Կոնվենցիային կից թիվ 4 Արձանագրության 2-րդ հոդված), [Sergey Zolotukhin ընդդեմ Ռուսաստանի](#) (ՄՊ), § 115 (Կոնվենցիային կից թիվ 7 Արձանագրության 4-րդ հոդված), [Dalban ընդդեմ Ռումինիայի](#) (ՄՊ), § 44 (հոդված 10), [Güneş ընդդեմ Թուրքիայի](#) (որոշում) (հոդված 10):

39. Գործը կարող է քննվող գործերի ցանկից հանվել, որովհետև դիմումատուն կորցրել է գոհի կարգավիճակը (*locus standi*): Ինչ վերաբերում է ընդունելիության

մասին որոշումից հետո ներպետական մակարդակում գործի հանգուցալուծմանը, տե՛ս [Ohlen ընդդեմ Դանիայի](#) (քննվող գործերի ցանկից հանում), Դատարանի կողմից քննվող գանգատի հիմքում ընկած իրավունքների փոխանցման համաձայնագրի մասով, տե՛ս [Dimitrescu ընդդեմ Ռումինիայի](#), §§ 33-34:

40. Դատարանը քննում է նաև՝ արդյոք Կոնվենցիայի 37-րդ հոդվածով նախատեսված մեկ կամ մի քանի հիմքով և գանգատը ներկայացնելուց հետո տեղի ունեցած իրադարձությունների լույսի ներքո գործը պետք է հանել քննվող գործերի ցանկից, անկախ այն փաստից, որ դիմումատուն դեռևս կարող է պնդել, որ ինքը «գոհ» է ([Pisano ընդդեմ Իտալիայի](#) (քննվող գործերի ցանկից հանում) (ՄՊ), § 39) կամ անկախ նրանից դիմումատուն շարունակում է պնդել, թե՛ ոչ, որ ինքն ունի գոհի կարգավիճակ: Ընդդատությունը Մեծ պալատին զիջելու մասին որոշման կայացումից հետո զարգացումների մասով, տե՛ս [El Majjaoui and Stichting Touba Moskee ընդդեմ Նիդերլանդների](#) (քննվող գործերի ցանկից հանում) (ՄՊ), §§ 28-35, երբ գանգատը հայտարարվել է ընդունելի, տե՛ս [Shevanova ընդդեմ Լատվիայի](#) (քննվող գործերի ցանկից հանում) (ՄՊ), §§ 44 և հաջորդները, և երբ Պալատը կայացրել է վճիռ, տե՛ս [Sisojeva and Others ընդդեմ Լատվիայի](#) (քննվող գործերի ցանկից հանում) (ՄՊ), § 96:

(գ) Զոհի մահը

41. Սկզբունքորեն, սկզբնական դիմումատուի՝ մինչև իր մահը ներկայացրած գանգատի քննությունը կարող է շարունակվել իր իրավահաջորդների կամ ընտանիքի անդամների կողմից, ովքեր դատավարությունը շարունակելու ցանկություն են արտահայտել, պայմանով, որ նրանք գործի ելքով բավականաչափ հետաքրքրված են ([Hristozov and Others ընդդեմ Բուլղարիայի](#), § 71, [Malhous ընդդեմ Չեխիայի Հանրապետության](#) (որոշում) (ՄՊ)):

42. Այնուամենայնիվ, եթե դիմումատուն մահացել է դատավարության ընթացքում և ոչ ոք դատավարությունը շարունակելու ցանկություն չի արտահայտել կամ նրանք, ովքեր նման ցանկություն արտահայտել են, չեն հանդիսանում դիմումատուի իրավահաջորդ կամ բավականաչափ մտերիմ ազգական և չեն կարող ապացուցել, որ դատավարությունը շարունակելու համար ունեն այլ հիմնավոր շահագրգռվածություն՝ Դատարանը գործը քննվող գործերի ցանկից կհանի ([Léger ընդդեմ Ֆրանսիայի](#) (քննվող գործերի ցանկից հանում) (ՄՊ), § 50, [Hirsi Jamaa and Others ընդդեմ Իտալիայի](#) (ՄՊ), § 57), բացառությամբ շատ բացառիկ դեպքերի, երբ գտնում է, որ Կոնվենցիայով և դրան կից Արձանագրություններով սահմանված մարդու իրավունքների պաշտպանությունը պահանջում է գործի քննության շարունակություն ([Karner ընդդեմ Ավստրիայի](#), §§ 25 և հաջորդները):

43. Տե՛ս օրինակ՝ [Raimondo ընդդեմ Իտալիայի](#), § 2 և [Stojkovic ընդդեմ նախկին Հարավսլավիայի Մակեդոնական Հանրապետության](#), § 25 (այրի և երեխա), [X ընդդեմ Ֆրանսիայի](#), § 26 (ծնողներ), [Malhous ընդդեմ Չեխիայի Հանրապետության](#) (որոշում) (ՄՊ) (զարմիկ և պոտենցիալ իրավահաջորդ), [Velikova ընդդեմ Բուլղարիայի](#) (որոշում) (չամուսնացած կամ *de facto* զուգընկեր), ի հակադրումն [Thévenon ընդդեմ Ֆրանսիայի](#) (որոշում) (մահացածի հետ կապ չունեցող ժառանգ), [Léger ընդդեմ Ֆրանսիայի](#) (քննվող գործերի ցանկից հանում) (ՄՊ), §§ 50-51 (զարմուխի):

4. Ներկայացուցչություն

44. Այն դեպքում, երբ դիմումատուները որոշում են ինքնուրույն դիմում ներկայացնելու փոխարեն Դատարանի կանոնակարգի 36-րդ կանոնի 1-ին մասի համաձայն ունենալ ներկայացուցիչ, 45-րդ կանոնի 3-րդ կետը պահանջում է, որ նրանք պատրաստեն գործողությունների կատարման գրավոր լիազորագիր՝ պատշաճ ստորագրված: Ներկայացուցիչների համար կարևոր է ապացուցել, որ 34-րդ հոդվածի իմաստով ենթադրյալ զոհից՝ այն անձից, ում անունից պատրաստվում են հանդես գալ Դատարանում, ստացել են հատուկ և հստակ ցուցումներ ([Post pñդդեմ Նիդերլանդների](#) (որոշում)): Գործողությունների կատարման լիազորագրի վավերության մասով, տե՛ս [Velikova pñդդեմ Բուլղարիայի](#), §§ 48-52:

45. Սակայն, Կոնվենցիայի 2-րդ, 3-րդ և 8-րդ հոդվածների՝ ազգային իշխանությունների թույլ տված ենթադրյալ խախտումների զոհերի դեպքում հնարավոր է առաջ գան առանձնահատուկ նկատառումներ՝ կապված զոհերի խոցելիության, [մասնավորապես]՝ տարիքի, սեռի կամ Դատարան բողոք ներկայացնել չթույլատրող հաշմանդամության հետ. հատուկ ուշադրության է արժանի նաև զոհի և դիմում ներկայացնող անձի միջև կապը: Նման դեպքերում զոհ(եր)ի անունից ներկայացված գանգատները, եթե նույնիսկ վավեր լիազորագիր չէր ներկայացվել, ճանաչվել են ընդունելի: Տե՛ս օրինակ՝ [Ilhan Ilhanpñդդեմ Թուրքիայի](#) (ՄՊ), § 55 գործը, որտեղ դիմումատուն գանգատը ներկայացրել է իր եղբոր անունից, ով ենթարկվել էր վատ վերաբերմունքի, [Y.F. pñդդեմ Թուրքիայի](#), § 29 գործն, առ այն, որ ամուսինը բողոքել է, որ կինը ստիպողաբար անցնել է գինեկոլոգիական ստուգում, [S.P., D.P. and A.T. pñդդեմ Միացյալ Թագավորությունների](#), Հանձնաժողովի որոշումն առ այն, որ բողոքը երեխաների անունից ներկայացրել էր այն հավատարմատարը, ով [երեխաներին] ներկայացրել էր ներպետական դատավարության ժամանակ և ում նկատմամբ նշանակել էր խնամակալ *ad litem*, և ի հակադրումն՝ [Nencheva and Others pñդդեմ Բուլղարիայի](#), § 93 գործն, որով Դատարանը չէր ընդունել անմիջական վկաների անունից որպես դիմումատու հանդես եկող ասոցիացիայի զոհի կարգավիճակը՝ նշելով, որ վերջինս գործը ներպետական դատարանների քննությանը չի ներկայացրել, ինչպես նաև բողոքի առարկա փաստերն իր գործունեության վրա ոչ մի ազդեցություն չեն ունեցել, քանի որ ասոցիացիան կարողացել է շարունակել աշխատել՝ հետամուտ լինելով իր նպատակների իրականացմանը:

Բ. Անհատական գանգատի իրավունքի իրականացման ազատությունը

Հոդված 34՝ Անհատական գանգատներ

«(...) Բարձր պայմանավորվող կողմերը պարտավորվում են որևէ կերպ չխոչընդոտել այդ իրավունքի արդյունավետ իրականացումը»:

46. Դատարան դիմելու իրավունքը բացարձակ է և չի թույլատրում որևէ խոչընդոտում: Այս սկզբունքը ենթադրում է Կոնվենցիայի ինստիտուտների հետ հաղորդակցման ազատություն (կալանքի տակ գտնվելու ժամանակ իրականացվող հաղորդակցության մասով, տե՛ս [Peers pñդդեմ Հունաստանի](#), § 84, [Kornakovs pñդդեմ Լատվիայի](#), §§ 157 և հաջորդները): Այս առնչությամբ տե՛ս նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանում դատավարությանը մասնակցող

անձանց վերաբերող 1996 թվականի Եվրոպական համաձայնագիրը ([CETS Թիվ 161](#)):

47. Ներպետական իշխանությունները պետք է զերծ մնան գանգատը հետ վերցնելու կամ փոփոխելու նպատակով դիմումատուների նկատմամբ ճնշում գործադրելուց: Ըստ Դատարանի՝ ճնշման գործադրումը կարող է արտահայտվել դիմումատուի, պոտենցիալ դիմումատուի, նրանց ընտանիքների կամ օրինական ներկայացուցիչների նկատմամբ անմիջական ճնշում գործադրմամբ և ահաբեկման [նպատակով իրականացվող] սարսափազդու գործողություններով, ինչպես նաև անօրինական անուղղակի գործողություններով և կապերի օգտագործմամբ ([Mamatkulov and Askarov ընդդեմ Թուրքիայի](#) (ՄՊ), § 102):

Դատարանն ուսումնասիրել է [ճնշման՝] անհատական գանգատի իրավունքի իրականացման վրա ունեցած տարհամոզիչ ազդեցությունը ([Colibaba ընդդեմ Սլովակիայի](#), § 68): Որոշ հանգամանքներում, [Դատարանը] կարող է իր նախաձեռնությամբ բարձրացնել այն հարցը, թե արդյոք դիմումատուն ենթարկվել է ահաբեկումների, ինչը խոչընդոտ է հանդիսացել իր՝ անհատական բողոքի իրավունքի արդյունավետ իրականացման համար ([Lopata ընդդեմ Ռուսաստանի](#), § 147):

Պետք է հաշվի առնել դիմումատուի խոցելիությունը և իշխանությունների կողմից նրա վրա ներագդելու ռիսկը ([Iambor ընդդեմ Ռումինիայի \(թիվ 1\)](#), § 212): Դիմումատուները կարող են հատկապես խոցելի լինել կալանքի տակ գտնվելու ժամանակ, երբ իրենց ընտանիքի և արտաքին աշխարհի հետ կապը սահմանափակ է ([Cotlet ընդդեմ Ռումինիայի](#), § 71):

48. Որոշ հիշատակման արժանի օրինակներ՝

- գանգատի վերաբերյալ իշխանությունների հարցաքննության մասով՝ [Akdivar and Others ընդդեմ Թուրքիայի](#), § 105, [Tanrikulu ընդդեմ Թուրքիայի](#) (ՄՊ), § 131,
- դիմումատուի փաստաբանի նկատմամբ քրեական հետապնդում իրականացնելու սպառնալիքների մասով՝ [Kurt ընդդեմ Թուրքիայի](#), §§ 159-65, ներպետական դատավարությունում դիմումատուի փաստաբանի դեմ իշխանությունների բերած բողոքների մասով՝ [McShane ընդդեմ Միացյալ Թագավորությունների](#), § 151, դիմումատուի փաստաբանի նկատմամբ կարգապահական և այլ միջոցառումների մասով՝ [Khodorkovskiy and Lebedev ընդդեմ Ռուսաստանի](#), §§ 929-33,
- արդարացի փոխհատուցման պահանջի վերաբերյալ ոստիկանության կողմից դիմումատուի փաստաբանի և թարգմանչի հարցաքննության մասով՝ [Fedotova ընդդեմ Ռուսաստանի](#), §§ 49-51, կառավարության ներկայացուցչի կողմից կարգադրված հարցման մասով՝ [Ryabov ընդդեմ Ռուսաստանի](#), §§ 53-65,
- դիմումատուի փաստաբանի և բժիշկի հանդիպման անհնարինության մասով՝ [Boicenco ընդդեմ Սլովակիայի](#), §§ 158-59,
- խորհրդակցական սենյակում փաստաբան-դիմումատու քննարկման գաղտնիությունը չհարգելու մասով՝ [Oferta Plus SRL ընդդեմ Սլովակիայի](#), § 156,
- բանտի վարչակազմի գործադրած սպառնալիքների մասով՝ [Petra ընդդեմ Ռումինիայի](#), § 44,
- ներպետական պաշտպանության միջոցները չսպառելու հիմքով բանտի վարչակազմի՝ գանգատը Դատարանին ուղարկել մերժման

- մասով՝ [Nurmagomedov ընդդեմ Ռուսաստանի](#), § 61,
- պահման պայմանների վերաբերյալ Դատարանում քննվող գործի վկայի հանդեպ գործադրված ճնշման մասով՝ [Novinskiy ընդդեմ Ռուսաստանի](#), §§ 119 և հաջորդները,
 - բանտի վարչակազմի տարհամոզիչ նկատառումները զուգորդված չարդարացված անգործությամբ և դիմումատուին իր հաղորդակցման համար գրելու անհրաժեշտ պարագաներ, ինչպես նաև Դատարան դիմելու համար անհրաժեշտ փաստաթղթերը տրամադրելու ուշացմամբ՝ [Gagiu ընդդեմ Ռումինիայի](#), §§ 94 և հաջորդները,
 - իշխանությունների՝ Դատարան գանգատ ներկայացնելու համար անհրաժեշտ փաստաթղթերի պատճեն տրամադրելու մերժման մասով՝ [Naydyon ընդդեմ Ուկրաինայի](#), § 68, [Vasiliy Ivashchenko ընդդեմ Ուկրաինայի](#), §§ 107-10,
 - դիմումատուի՝ Դատարան ներկայացվող գանգատի համար անփոխարինելի փաստաթղթերը բանտի վարչակազմի կողմից կորցնելու մասով՝ [Buldakov ընդդեմ Ռուսաստանի](#), §§ 48-50,
 - Դատարանում քննվող գործի առնչությամբ իշխանությունների կողմից դիմումատուի նկատմամբ կիրառվող ճնշման և ահաբեկման մասով՝ [Lopata ընդդեմ Ռուսաստանի](#), §§ 154-60:

49. Գործի հանգամանքները, հնարավոր է, անհատական գանգատի իրավունքի ենթադրյալ միջամտությունը դարձնեն ավելի քիչ կարևոր ([Sisojeva and Others ընդդեմ Լատվիայի](#) (քննվող գործերի ցանկից հանում) (ՄՊ), §§ 118 և հաջորդները): Տե՛ս նաև [Holland ընդդեմ Շվեդիայի](#) (որոշում) գործով որոշումը, որով Դատարանը գտել է, որ շվեդական իրավունքին համապատասխան՝ մինչև Դատարան գանգատ ներկայացնելու վեց ամսյա ժամկետի լրանալը դատական լսումների ձայնաժապավենի ոչնչացումը չի խոչընդոտում դիմումատուի՝ բողոք ներկայացնելու իրավունքի իրականացումը, [Farcaș ընդդեմ Ռումինիայի](#) (որոշում) գործով որոշումը, որով Դատարանը գտել է, որ հանրային ծառայությունները մատչելի դարձնող հատուկ միջոցների բացակայության պայմաններում ֆիզիկական հաշմանդամություն ունեցող անձի՝ ներպետական պաշտպանության միջոցները սպառելու ենթադրյալ անկարողությունը չէր խոչընդոտում նրա՝ բողոք ներկայացնելու իրավունքի իրականացումը, [Yepishin ընդդեմ Ռուսաստանի](#), §§ 73-77, գործով վճիռը, որով Դատարանը վճռել է, որ բանտի վարչակազմի կողմից Դատարանին ուղղված նամակների ուղարկման ծախքերը վճարելուց հրաժարվելը չէր խոչընդոտում դիմումատուի՝ բողոք ներկայացնելու իրավունքի արդյունավետ իրականացումը:

1. Պատասխանող պետության պարտավորությունները

(ա) Դատարանի կանոնակարգի 39-րդ կանոն

50. Դատարանի կանոնակարգի 39-րդ կանոնի համաձայն՝ Դատարանը կարող է նշանակել միջանկյալ (ժամանակավոր) միջոցառումներ ([Mamatkulov and Askarov ընդդեմ Թուրքիայի](#) (ՄՊ), §§ 99-129): Եթե անդամ պետության իշխանությունները չձեռնարկեն այնպիսի քայլեր, որոնք Դատարանի նշած միջոցառման իրականացման համար ողջամտորեն պետք է ձեռնարկելին, ապա տեղի կունենա 34-րդ հոդվածի խախտում ([Paladi ընդդեմ Սլովակիայի](#) (ՄՊ), §§ 87-92):

51. Կառավարությունը Դատարանին պետք է ապացուցի, որ միջանկյալ (ժամանակավոր) միջոցառումներն իրականացվել են կամ, որ, բացառիկ դեպքում, որ առկա էր միջոցառման իրականացմանը խանգարող օբյեկտիվ խոչընդոտ և, որ կառավարությունը ձեռնարկել է բոլոր ողջամիտ քայլերը, որպեսզի վերացնի այդ խոչընդոտը և իրավիճակի մասին տեղյակ պահի Դատարանին (տե՛ս օրինակ՝ [*A.N.H. ընդդեմ Ֆինլանդիայի*](#) (որոշում), § 27):

52. Որոշ նոր օրինակներ՝

- անկախ նրանից, որ 39-րդ կանոնով նախատեսված էր միջանկյալ (ժամանակավոր) միջոցառում՝ կալանքի տակ գտնվող, ապաստան փնտրող անձի և փաստաբանի հանդիպումը ժամանակին չէր կազմակերպվել՝ [*D.B. ընդդեմ Թուրքիայի*](#), § 67,
- միջանկյալ (ժամանակավոր) միջոցառմանը հակառակ՝ կալանավորվածներին Իրաք տեղափոխելու մասով՝ [*Al-Saadoon and Mufdhi ընդդեմ Միացյալ Թագավորությունների*](#), §§ 162-65,
- միջանկյալ (ժամանակավոր) միջոցառմանը հակառակ՝ առաջին դիմումատուի տարհանման մասով՝ [*Kamaliyevy ընդդեմ Ռուսաստանի*](#), §§ 75-79,
- հոդված 8-ի առնչությամբ նշված միջանկյալ (ժամանակավոր) միջոցառման՝ չկանխամտածված, սակայն անդադնալի [հետևանքներ ենթադրող] չկատարման մասով՝ [*Hamidovic ընդդեմ Բոսնիայի*](#) (որոշում),
- բանտարկյալին հատուկ մասնագիտացված բժշկական հաստատություն տեղավորել պահանջող միջանկյալ (ժամանակավոր) միջոցառման չկատարման մասով՝ [*Makharadze and Sikharulidze ընդդեմ Վրաստանի*](#), §§ 100-05,
- հանձման դեպքում առաջ եկող խոշտանգման ռիսկը հաշվի առնելով՝ Դատարանի նշանակված միջանկյալ (ժամանակավոր) միջոցառումը չկատարելու մասով՝ [*Mannai ընդդեմ Բոսնիայի*](#), §§ 54-57, [*Labsi ընդդեմ Սլովակիայի*](#), §§ 149-51,
- Ուզբեկստանում վատ վերաբերմունքի ենթարկվելու ռիսկի տակ գտնվող անձի, ում վերաբերյալ առկա էր ուժի մեջ մտած միջանկյալ (ժամանակավոր) միջոցառում, գաղտնի տեղափոխման մասով՝ [*Abdulkhakov ընդդեմ Ռուսաստանի*](#), §§ 226-31,
- վատ վերաբերմունքի ենթարկվելու ռիսկի առկայությամբ անձին ստիպողաբար Տաջիկստան տեղափոխելու և միջանկյալ (ժամանակավոր) միջոցառման կատարումը շրջանցելու մասով՝ [*Savridin Dzhurayev ընդդեմ Ռուսաստանի*](#), §§ 218-19, տե՛ս նաև ռուսական իշխանությունների իրենց հսկողության տակ գտնվող տաջիկին միջանկյալ (ժամանակավոր) միջոցառմանը հակառակ չպաշտպանելու մասով՝ [*Nizomkhon Dzhurayev ընդդեմ Ռուսաստանի*](#), §§ 157-59:

53. Դատարանը պետք է հաստատի, որ միջանկյալ (ժամանակավոր) միջոցառումը կատարված է, մինչդեռ պետությունը, որը մտածում է իր տրամադրության տակ եղած նյութերով համոզել Դատարանին, որպեսզի միջանկյալ (ժամանակավոր) միջոցառումը չեղյալ հայտարարի, պետք է համապատասխանաբար տեղեկացնի Դատարանին ([*Paladi ընդդեմ Սլովակիայի*](#) (ՄՊ), §§ 90-92, [*Olaechea Cahuas ընդդեմ Բուլղարիայի*](#), § 70, [*Groni ընդդեմ Ալբանիայի*](#), §§ 181 և հաջորդները):

Ձուտ այն փաստը, որ դիմումը ներկայացվել է 39-րդ կանոնի կիրառմամբ բավարար չէ, որպեսզի պետությունը պարտավորվի չկատարել արտաքսման մասին որոշումը (*Al-Moayad ընդդեմ Գերմանիայի* (որոշում), §§ 122 և հաջորդները, տե՛ս նաև պետության՝ Դատարանի հետ բարեխղճորեն համագործակցելու պարտավորությունը):

(բ) Փաստերի հաստատումը

54. Մինչ Դատարանը պատասխանատու է փաստերի հաստատման համար, կողմերը պետք է վերջինիս տրամադրեն օգնություն՝ ներկայացնելով ամբողջ վերաբերելի տեղեկատվությունը: Նրանց վաքքը կարող է հաշվի առնվել ապացույցներ ձեռք բերելիս (*Ireland ընդդեմ Միացյալ Թագավորությունների*, § 161):

55. Դատարանը վճռել է՝ միշտ չէ, որ որոշ տեսակի գանգատներով իրականացվող դատավարությունը ենթադրում է այն սկզբունքի խիստ կիրառումը, համաձայն որի, անձը պարտավորվում է ապացուցել իր ներկայացրած պնդումները: Կոնվենցիայի 34-րդ հոդվածի հիման վրա ստեղծված անհատական բողոքի համակարգի արդյունավետ աշխատանքի համար մեծ կարևորություն ունի այն, որ պետությունները գանգատների պատշաճ և արդյունավետ քննության համար տրամադրեն անհրաժեշտ բոլոր հարմարությունները (*Bazorkina ընդդեմ Ռուսաստանի*, § 170, *Tahsin Acar ընդդեմ Թուրքիայի* (ՄՊ), § 253): Այս պարտականությունը պահանջում է, որպեսզի անդամ պետությունը Դատարանին տրամադրի անհրաժեշտ բոլոր հնարավորությունները, անկախ նրանից այն իրականացնում է փաստերի քննություն, թե գանգատների քննության առնչությամբ իր ընդհանուր պարտականությունները: Պետության կողմից այդպիսի՝ իր ձեռքի տակ գտնվող տեղեկատվությունն առանց բավարար բացատրության չտրամադրելը ոչ միայն կհանգեցնի դիմումատուի՝ ներկայացրած պնդումների հիմնավորվածության մասին հետևությունների, այլ նաև հնարավոր է բացասաբար անդրադառնա պատասխանող պետության՝ Կոնվենցիայի 38-րդ հոդվածով նախատեսված պարտականությունների կատարման մակարդակի վրա (նույն տեղում, § 254, *Imakayeva ընդդեմ Ռուսաստանի*, § 200, *Janowiec and Others ընդդեմ Ռուսաստանի* (ՄՊ), § 202):

56. Դատարանի պահանջած ապացույցները տրամադրելու պարտականությունը պատասխանող պետության համար պարտադիր է այն պահից, երբ այդ պահանջը ներկայացվել է և անկախ այն հանգամանքից, թե դա եղել է կառավարությանը գանգատը կոմունիկացնելու սկզբնական փուլում, թե դատավարության ավելի ուշ փուլում (նույն տեղում, § 203, *Enukidze and Girgvliani ընդդեմ Վրաստանի*, § 295, *Bekirski ընդդեմ Բուլղարիայի*, §§ 111-13): Հիմնարար պահանջ է, որ պահանջված տեղեկատվությունը ներկայացվի ամբողջությամբ, եթե Դատարանը այդպես է կարգադրել և ցանկացած բացակայող հատվածի համար պետք է պատշաճ բացատրություն տրվի (*Janowiec and Others ընդդեմ Ռուսաստանի* (ՄՊ), § 203): Ավելին, ցանկացած պահանջված նյութ պետք է ներկայացվի հնարավորին արագ և ցանկացած դեպքում Դատարանի սահմանած ժամկետներում. էական և անբացատրելի ուշացման դեպքում՝ Դատարանը հնարավոր է պատասխանող պետության բացատրությունները համարի ոչ համոզիչ (նույն տեղում):

57. Դատարանը նախկինում վճռել է, որ պատասխանող կառավարության կողմից 38-րդ հոդվածի պահանջները [կհամարվեն] չկատարված, եթե այն

պահանջված փաստաթղթերը ներկայացնելու մերժման ոչ մի բացատրություն չներկայացվի (տե՛ս օրինակ՝ [Maslova and Nalbandov *ընդդեմ Ռուսաստանի*](#), §§ 128-29) կամ դրանք ներկայացվեն ոչ ամբողջական կամ աղավաղված օրինակը՝ մերժելով Դատարանին քննության համար տրամադրել բնօրինակ փաստաթուղթը (տե՛ս օրինակ՝ [Trubnikov *ընդդեմ Ռուսաստանի*](#), §§ 50-57):

58. Եթե կառավարությունն որպես պահանջված նյութի չտրամադրման պատճառ առաջ է քաշում գաղտնիության կամ անվտանգության նկատառումները, Դատարանը պետք է համոզվի, որ խնդրո առարկա փաստաթղթերն որպես գաղտնի փաստաթուղթ դիտարկելու համար գոյություն ունեն ողջամիտ և ամուր հիմքեր ([Janowiec and Others *ընդդեմ Ռուսաստանի*](#) (ՄՊ), § 205): Ինչ վերաբերում է գաղտնի զեկույցը Դատարանին չբացահայտելուն՝ տե՛ս նույն տեղում, §§ 207 և հաջորդները, [Nolan and K. *ընդդեմ Ռուսաստանի*](#), §§ 56 և հաջորդները:

Ինչ վերաբերում է 34-րդ և 8-րդ հոդվածների հարաբերակցությանը, տե՛ս [Bazorkina *ընդդեմ Ռուսաստանի*](#), §§ 170 և հաջորդները, § 175: 34-րդ հոդվածը նպատակ ունի ապահովել անհատական գանգատի իրավունքի արդյունավետ իրականացումը, այն կարծես *lex generalis* լինի, մինչդեռ 38-րդ հոդվածը պետություններից հատուկ պահանջում է համագործակցել Դատարանի հետ:

(գ) Քննություններ

59. Ենթադրվում է, որ անդամ պետությունները պետք է աջակցեն քննությունների հարցում (հոդված 38), քանի որ պետությունն է, որ գանգատների արդյունավետ քննության համար տրամադրում է «անհրաժեշտ հնարավորություններ» ([Çakıcı *ընդդեմ Թուրքիայի*](#) (ՄՊ), § 76): Փաստերի հաստատման և գնահատման նպատակով իրականացվող այցը խոչընդոտելը ենթադրում է 38-րդ հոդվածի խախտում ([Shamayev and Others *ընդդեմ Վրաստանի and Russia*](#), § 504):

ԱՆԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԱՅԻՆ ՀԻՄՔԵՐԸ

Ա. Իրավական պաշտպանության ներպետական միջոցների չսպառումը

Հոդված 35, կետ 1՝ Ընդունելության չափանիշ

«1. Դատարանը կարող է գործը քննության ընդունել միայն այն բանից հետո, երբ սպառվել են միջազգային իրավունքի հանրաճանաչ նորմերին համապատասխան իրավական պաշտպանության բոլոր ներպետական միջոցները, (...)»

60. 35-րդ հոդվածի բովանդակությունից երևում է, որ այս պահանջը հիմնված է միջազգային իրավունքի հանրաճանաչ նորմերի վրա: Իրավական պաշտպանության ներպետական բոլոր միջոցները սպառելը միջազգային սովորույթային իրավունքի մի մասն է, որը ճանաչվել է այդպիսին Արդարադատության միջազգային դատարանի նախադեպային իրավունքում (օրինակ, տե՛ս Interhandel-ի գործը (Շվեյցարիան ընդդեմ Ամերիկայի Միացյալ Նահանգների), 1959թ.-ի մարտի 21-ի վճիռը): Այն նաև կարելի է գտնել մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային այլ պայմանագրերում: Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագրում (հոդված 41(1)(գ)) և դրան կից կամընտիր արձանագրությունում (հոդվածներ 2 և 5(2)(բ)), Մարդու իրավունքների ամերիկյան կոնվենցիա (հոդված 46), Մարդու և ժողովուրդների իրավունքների աֆրիկյան կանոնադրությունում (հոդվածներ 50 և 56(5)): Ինչպես Դատարանը դիտարկել է [De Wilde, Ooms and Versyp ընդդեմ Բելգիայի](#) վճռում, պետությունը կարող է հրաժարվել իրավական պաշտպանության ներպետական միջոցները սպառելու կանոնով նախատեսված առավելությունից, քանի որ այդ մասով գոյություն ունի հաստատված միջազգային փորձ (§ 55):

61. Դատարանը նպատակ ունի ծառայել որպես մարդու իրավունքների պաշտպանության ազգային համակարգերին սուբսիդիար օղակ և տեղին կլինեք, որ ազգային դատարանները նախապես հնարավորություն ունենային որոշելու ներպետական օրենսդրության և Կոնվենցիայի համապատասխանության վերաբերյալ հարցերը ([A, B and C ընդդեմ Բոլանդիայի](#) (ՄՊ), § 142): Եթե գանգատն, այնուամենայնիվ, հետազայում ներկայացվում է Ստրասբուրգ, Դատարանը պետք է ազգային դատարանների դիտարկումներին տա առավելություն, քանի որ նրանք գտնվում են այդ երկրների հիմնական ուժերի հետ ուղղակի և շարունակական կապի մեջ ([Burden ընդդեմ Միացյալ Թագավորությունների](#) (ՄՊ), § 42):

62. 35-րդ հոդվածի 1-ին կետը վերաբերում է միայն ներպետական իրավական պաշտպանության միջոցներին, այն չի պահանջում իրավական պաշտպանության միջոցների սպառում միջազգային կազմակերպությունների շրջանակում: Ընդհակառակը, եթե դիմումատուն գանգատը հանձնում է միջազգային այլ ընթացակարգի քննությանը կամ կարգավորմանը, ապա գանգատը Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 2 (բ) կետի համաձայն հնարավոր է մերժվի: Դատարանն է որոշում՝ տվյալ մարմինը ներպետական է, թե միջազգային՝ հաշվի առնելով բոլոր գործոնները, ներառյալ այդ մարմնի իրավական բնույթը, դրա հիմնադիր փաստաթուղթը, իրավունակությունը, իրավական համակարգում տեղը (եթե այդպիսին կա) և ֆինանսավորումը ([Jeličić ընդդեմ Բոսնիայի և Հերցեգովինայի](#) (որոշում), [Peraldi ընդդեմ Ֆրանսիայի](#) (որոշում), տե՛ս I.E.):

1. Կանոնի նպատակը

63. Իրավական պաշտպանության ներպետական միջոցները սպառելու կանոնի նպատակն է հնարավորություն տալ ներպետական մարմիններին, մասնավորապես՝ դատարաններին, կանխելու կամ վերականգնելու Կոնվենցիայի ենթադրյալ խախտումները: Սա հիմնված է 13-րդ հոդվածում արտացոլված այն ենթադրության վրա, համաձայն որի Կոնվենցիայի իրավունքների խախտումների համար ներպետական իրավական համակարգը պետք է նախատեսի իրավական պաշտպանության արդյունավետ միջոցներ: Սրանում է կայանում Կոնվենցիայի մեխանիզմի սուբսիդիար բնույթը ([Selmouni ընդդեմ Ֆրանսիայի](#) (ՄՊ), § 74, [Kudla ընդդեմ Լեհաստանի](#) (ՄՊ), § 152, [Andrášik and Others ընդդեմ Սլովակիայի](#) (որոշում)): Այն գործում է անկախ այն հանգամանքից, թե արդյոք Կոնվենցիայի դրույթները ներպետական իրավունքում կիրառվում են ([Eberhard and M. ընդդեմ Սլովենիայի](#)): Վերջերս Դատարանը վերահաստատել է, որ համաձայն Կոնվենցիայի՝ իրավական պաշտպանության ներպետական միջոցների սպառման կանոնը պաշտպանության համակարգի գործունեության անփոխարինելի մասն է և հիմնական սկզբունքը ([Demopoulos and Others ընդդեմ Թուրքիայի](#) (որոշում) (ՄՊ), §§ 69 և 97):

2. Կանոնի կիրառելիությունը

(ա) Ճկունությունը

64. Իրավական պաշտպանության ներպետական միջոցները սպառելու կանոնը ավելի շատ ոսկե կանոն է, քան կարծրացած սկզբունք: Հանձնաժողովը և Դատարանը հաճախ ընդգծում են, որ մարդու իրավունքների պաշտպանության համատեքստում կանոնը անհրաժեշտ է կիրառել որոշակի ճկունությամբ, առանց ավելորդ ձևականությունների ([Ringeisen ընդդեմ Ավստրիայի](#), § 89, [Lehtinen ընդդեմ Ֆինլանդիայի](#) (որոշում)): Ներպետական միջոցների սպառման կանոնը ոչ բացարձակ է և ոչ էլ պետք է կիրառել մեխանիկորեն ([Kozacıoğlu ընդդեմ Թուրքիայի](#) (ՄՊ), § 40): Օրինակ՝ Դատարանը գտել է, որ չափից դուրս ձևական կլինի դիմումատուներից պահանջել օգտվել այնպիսի միջոցից, որը նույնիսկ երկրի բարձրագույն դատարանը չի պարտավորեցրել նրանց օգտագործել ([D.H. and Others ընդդեմ Չեխիայի Հանրապետության](#) (ՄՊ), §§ 116-18): Դատարանը մի գործում հաշվի է առել դիմումատուների պատասխան ներկայացնելու համար տրված սեղմ վերջնաժամկետները, որը հանգեցրել էր դիտարկումները ներկայացնելու «շտապողականության» (տե՛ս [Financial Times Ltd and Others ընդդեմ Միացյալ Թագավորությունների](#) §§ 43-44): Այնուամենայնիվ, առկա իրավական պաշտպանության ներպետական միջոցների օգտագործումն ազգային իրավունքի ընթացակարգերի պահպանմամբ հատկապես կարևորվում են այն դեպքում, երբ քննարկվում է իրավական հստակության և որոշակիության վերաբերյալ հարցերը ([Saghinadze and Others ընդդեմ Վրաստանի](#), §§ 83-84):

(բ) Ներպետական կանոններին և սահմանափակումներին համապատասխանությունը

65. Դիմումատուները պետք է պահպանեն ներպետական իրավունքի կանոնները և ընթացակարգերը, հակառակ դեպքում իրենց կողմից ներկայացրած գանգատը կհակասի 35-րդ հոդվածի պահանջին ([Ben Salah Adraqui and Dhaima](#)

[ընդդեմ Իսպանիայի](#) (որոշում), [Merger and Cros ընդդեմ Ֆրանսիայի](#) (որոշում), [MPP Golub ընդդեմ Ուկրաինայի](#) (որոշում), [Agbovi ընդդեմ Գերմանիայի](#) (որոշում)): 35-րդ հոդվածի 1-ին կետի պահանջը չէր կատարվել այն դեպքում, երբ վերաքննիչ բողոքի քննությունը մերժվել էր դիմումատուի թույլ տված ընթացակարգային սխալի պատճառով ([Gäfgen ընդդեմ Գերմանիայի](#) (ՄՊ), § 143): Սակայն պետք է նշել, որ այն դեպքում, երբ վերաքննիչ դատարանն իրականացնի բողոքի ըստ էության քննություն, նույնիսկ, եթե այն համարվի անընդունելի՝ 35-րդ հոդված 1-ին կետի պահանջները կլինեն պահպանված ([Voggenreiter ընդդեմ Գերմանիայի](#)): Սա կգործի նաև այն դեպքում, երբ չնայած դիմումատուները չեն պահպանել ներպետական իրավունքով նախատեսված ընթացակարգերը, այնուամենայնիվ, իրավասու մարմինն իրականացրել է հայցի ըստ էության քննություն ([Vladimir Romanov ընդդեմ Ռուսաստանի](#), § 52): Նույնը վերաբերում է իրավական պահանջները նվազ բավարարող, հապճեպ պատրաստված այն գանգատներին, որոնց նկատմամբ դատարանը թեև հակիրճ, սակայն ըստ էության վճիռ է կայացրել ([Verein gegen Tierfabriken Schweiz \(VgT\) ընդդեմ Շվեյցարիայի \(թիվ 2\)](#) (ՄՊ), §§ 43-45):

(գ) Ներպետական իրավական պաշտպանության մի քանի միջոցների առկայությունը

66. Եթե առկա է մեկից ավելի արդյունավետ միջոց, դիմումատուից պահանջվում է օգտագործել դրանցից միայն մեկը ([Moreira Barbosa ընդդեմ Պորտուգալիայի](#) (որոշում), [Jeličić ընդդեմ Բոսնիայի և Հերցեգովինայի](#) (որոշում), [Karakó ընդդեմ Հունգարիայի](#), § 14, [Aquilina ընդդեմ Սալթայի](#) (ՄՊ), § 39): Իրապես, մեկ միջոցի օգտագործումից հետո չի պահանջվում էապես նույն նպատակը ունեցող այլ միջոցի կիրառում ([Riad and Idiab ընդդեմ Բելգիայի](#), § 84, [Kozacıoğlu ընդդեմ Թուրքիայի](#) (ՄՊ), §§ 40 և այլն, [Micallef ընդդեմ Սալթայի](#) (ՄՊ), § 58): Դիմումատուն ընտրում է իր գործի համար առավել շահավետ միջոցը: Ամփոփելով, եթե ներպետական իրավունքը նախատեսում է իրավունքի տարբեր բնագավառներում մի քանի գույառնե միջոցներ, դիմումատուն, ցանկանալով Կոնվենցիայի ենթադրյալ խախտման համար այդ միջոցներից որևէ մեկի միջոցով ստանալ փոխհատուցում, պարտավոր չէ դիմել այլ միջոցների, որոնք ունեն էապես նույն նպատակը ([Jasinski ընդդեմ Լատվիայի](#), §§ 50 և 53-54):

(դ) Ըստ էության բարձրացված բողոք

67. Պարտադիր չէ, որ Կոնվենցիայով նախատեսված իրավունքը հստակորեն վկայակոչված լինի ներպետական վարույթներում, պայմանով, որ բողոքը ներկայացվել է «առնվազն ըստ էության» ([Castells ընդդեմ Իսպանիայի](#), § 32, [Ahmet Sadik ընդդեմ Հունաստանի](#), § 33, [Fressoz and Roire ընդդեմ Ֆրանսիայի](#), § 38, [Azinas ընդդեմ Կիպրոսի](#) (ՄՊ), §§ 40-41): Սա նշանակում է, որ եթե դիմումատուն չի հիմնվել Կոնվենցիայի դրույթների վրա, նա, հիմք ընդունելով ներպետական իրավունքի նորմերը, պետք է ներկայացնի այնպիսի բովանդակությամբ փաստարկներ, որոնք առաջին հերթին հնարավորություն կտան ներպետական դատարաններին վերացնելու ենթադրյալ խախտումը ([Gäfgen ընդդեմ Գերմանիայի](#) (ՄՊ), §§ 142, 144 և 146, [Karapanagiotou and Others ընդդեմ Հունաստանի](#), § 29): Այն բողոքի կապակցությամբ, որը չի բարձրացվել արդարադատություն իրականացնող վերջին ատյանում, տե՛ս [Association Les témoins de Jéhovah ընդդեմ Ֆրանսիայի](#) (որոշում)):

(ե) Առկայությունը և պատշաճությունը

68. Դիմումատուները պարտավոր են սպառել իրավական պաշտպանության ներպետական միայն այն միջոցները, որոնք տվյալ ժամանակահատվածում գոյություն են ունեցել տեսության մեջ և պրակտիկայում, և որոնք կարող են ուղղակիորեն կիրառվել. այսինքն միջոցներ, որոնք մատչելի են, ներկայացված բողոքների դիմաց կարող են տրամադրել փոխհատուցում և ներկայացնում են հաջողության ողջամիտ հեռանկարներ ([Sejdovic ընդդեմ Իտալիայի](#) (ՄՊ), § 46, [Paksas ընդդեմ Լիտվայի](#) (ՄՊ), § 75):

69. Հայեցողական կամ արտասովոր միջոցները չպետք է օգտագործվեն: Որպես օրինակ, տե՛ս դատարանի որոշումը վերանայելու մասին պահանջը՝ [Činar ընդդեմ Թուրքիայի](#) (որոշում), [Prystavka ընդդեմ Ուկրաինայի](#) (որոշում)), կամ գործի վերաբացման պահանջը՝ [K.S. and K.S. AG ընդդեմ Շվեյցարիայի](#) (Հանձնաժողովի որոշում), բացառությամբ այն դեպքերի, երբ, օրինակ, ներպետական իրավունքով սահմանված է, որ այդպիսի պահանջը փաստացի արդյունավետ պաշտպանություն է, կամ երբ վճռի բեկանումը, որը ձեռք է բերել իրավաբանական ուժ, միակ միջոցն է, որով պատասխանող պետությունը կարող է իր իրավական համակարգի միջոցով լուծում տալ հարցին՝ [Kiiskinen ընդդեմ Ֆինլանդիայի](#) (որոշում), [Nikula ընդդեմ Ֆինլանդիայի](#) (որոշում)): Նմանապես, բարձրագույն մարմինն բողոքարկումը ([Horvat ընդդեմ Խորվաթիայի](#), § 47, [Hartman ընդդեմ Չեխիայի Հանրապետության](#), § 66), ինչպես նաև դիմումատուին ուղղակիորեն անհասանելի, միջնորդավորված հայեցողությամբ պայմանավորված միջոցը ([Tănase ընդդեմ Սոլովայի](#) (ՄՊ), § 122) չեն հանդիսանում արդյունավետ պաշտպանության միջոցներ: Վերաքննության արդյունավետության մասով, որի օգտագործումը սկզբունքորեն չի պահանջվում (Օմբուդսմեն), տե՛ս [Egmez ընդդեմ Կիպրոսի](#) վճռի պատճառաբանական մասը, §§ 66-73: Վերջապես, ներպետական միջոցը, որը ոչ մի ստույգ ժամանակային սահմանափակման ենթակա չէ և, հետևաբար, տարակուսանք է առաջացնում, չի կարող համարվել արդյունավետ ([Williams ընդդեմ Միացյալ Թագավորությունների](#) (որոշում), և մեջբերված հղումները):

70. Արդյոք Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 1-ին կետով պահանջվում է Սահմանադրական դատարան անհատական գանգատ ներկայացնել, մեծ մասամբ կախված է պատասխանող պետության իրավական համակարգից և նրա Սահմանադրական դատարանի իրավագործությունից: Այսպիսով, այն պետությունը, որտեղ իրավագործությունը սահմանափակվում է իրավական դրույթների սահմանադրականության և նրանց՝ ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող իրավական դրույթներին համապատասխանության վերանայմամբ, դիմումատուները պարտավորվում են Սահմանադրական դատարան բողոք ներկայացնել միայն այն դեպքում, երբ վիճարկում են, որ օրենքի կամ կարգավորման դրույթը հակասում է Սահմանադրությանը ([Grisankova and Grišankovs ընդդեմ Լատվիայի](#) (որոշում), [Liepājnieks ընդդեմ Լատվիայի](#) (որոշում)):

71. Այն դեպքում, երբ դիմումատուն օգտվել է այնպիսի միջոցից, որը Դատարանը համարում է ոչ պատշաճ, ապա միջոցն օգտագործելու համար նախատեսված ժամկետը չի կասեցնի վեցամսյա ժամկետը, որն էլ իր հերթին կարող է հանգեցնել ժամկետը չպահպանելու հիմքով գանգատի մերժմանը ([Rezgui ընդդեմ Ֆրանսիայի](#) (որոշում), [Prystavska ընդդեմ Ուկրաինայի](#) (որոշում)):

(գ) Առկայությունը և արդյունավետությունը

72. Միջոցները պետք է լինեն բավականաչափ որոշակի ոչ միայն տեսության մեջ, այլ նաև պրակտիկայում: Որոշելիս, թե արդյոք որևէ կոնկրետ իրավական պաշտպանության միջոց բավարարում է առկայության և արդյունավետության չափանիշը, պետք է հաշվի առնել առանձին գործի որոշակի հանգամանքներ (տե՛ս ստորև նշված 4-րդ կետը): Ներպետական դատարանների որդեգրած մոտեցումը պետք է բավարար չափով ընդգրկվի ազգային իրավակարգում: Այսպիսով, Դատարանը վճռել է, որ բարձր դատական ատյանին դիմելը դադարում է լինել «արդյունավետ», եթե տվյալ դատարանը շեղվում է իր նախադեպային իրավունքից [և շարունակում է մնալ անարդյունավետ] այնքան ժամանակ, քանի դեռ այդ շեղումները գոյություն ունեն (*Ferreira Alves ընդդեմ Պորտուգալիայի (թիվ 6)*, §§ 28-29):

73. Օրինակ՝ Դատարանը վճռել է՝ եթե դիմումատուն բողոքում է պահման պայմանների մասին, երբ արդեն ազատվել է կալանքից, [այս համատեքստում] առկա և բավարար փոխհատուցումը, որն, այսպես ասած հաջողության ողջամիտ հեռանկարներ է ենթադրում, Կոնվենցիայի 35-րդ հոդվածի իմաստով կհամարվի կիրառելի իրավական պաշտպանության միջոց:

74. Դատարանը պետք է ոչ միայն իրատեսորեն հաշվի առնի ներպետական իրավական համակարգում առկա իրավական պաշտպանության պաշտոնական միջոցները, այլ նաև դրանց գործողության ընդհանուր իրավական և քաղաքական համատեքստը, ինչպես նաև դիմումատուին վերաբերող անձնական հանգամանքները (*Akdivar and Others ընդդեմ Թուրքիայի*, §§ 68-69, *Khashiyev and Akayeva ընդդեմ Ռուսաստանի*, §§ 116-17): Այն պետք է քննի, թե արդյոք գործի բոլոր հանգամանքներում դիմումատուն իրավական պաշտպանության ներպետական միջոցների սպառման համար իրականացրել է իրենից ողջամտորեն ակնկալվող անհրաժեշտ ամեն բան (*D.H. and Others ընդդեմ Չեխիայի Հանրապետության* (ՄՊ), §§ 116-22):

Պետք է նշել, որ փաստացի կամ իրավական սահմանները, ներպետական իրավական պաշտպանության միջոցների սպառման համար *per se* խոչընդոտ չեն հանդիսանում. որպես ընդհանուր կանոն՝ անդամ պետության իրավագործության շրջանակներից դուրս ապրող դիմումատուները չեն ազատվում պետությունում գործող իրավական պաշտպանության ներպետական միջոցները սպառելու պարտականությունից՝ անկախ այնպիսի հանգամանքներից, ինչպիսիք են՝ պրակտիկ անհարմարությունները կամ հասկանալի պատճառներով անձնական դժկամությունը (*Demopoulos and Others ընդդեմ Թուրքիայի* (որոշում) (ՄՊ), §§ 98 և 101, գործն այն դիմումատուների վերաբերյալ է, ովքեր անկախ իրենց կամքից հայտնվել են պատասխանող պետության իրավագործության ներքո):

3. Կանոնի կիրառման սահմանափակումները

75. «Միջազգային իրավունքի հանրաճանաչ նորմերի» համաձայն՝ գոյություն ունեն հատուկ հանգամանքներ, որոնց դեպքում դիմումատուն ազատվում է ներպետական իրավական պաշտպանության միջոցներից օգտվելու պարտականությունից (*Sejdovic ընդդեմ Իտալիայի* (ՄՊ), § 55) (տե՛ս ստորև նշված 4-րդ մասը):

Կանոնը կիրառելի չէ նաև այն դեպքում, երբ առկա է Կոնվենցիայի հետ անհամատեղելի գործողությունների շարունակական կատարման վարչական

պրակտիկա, և պետական իշխանությունների դրսևորած հանդուրժողականության արդյունքում՝ իրավական պաշտպանության միջոցը դառնում է անօգուտ կամ անարդյունավետ ([Aksoy ընդդեմ Թուրքիայի](#), § 52):

Այն դեպքերում, երբ դիմումատուին կոնկրետ միջոց օգտագործել պարտադրելը գործնականում ողջամիտ չէ և իրենից ներկայացնում է Կոնվենցիայի 34-րդ հոդվածով նախատեսված անհատական զանգատի իրավունքի իրականացման անհամաչափ խոչընդոտ, Դատարանն եզրակացնում է, որ դիմումատուն այդ պահանջը բավարարելուց ազատված է ([Veriter ընդդեմ Ֆրանսիայի](#), § 27, [Gaglione and Others ընդդեմ Բուլղարիայի](#), § 22):

Վերաքննիչ բողոքի արդյունքում տուգանքի նշանակումը, երբ ընթացակարգային ոչ մի չարաշահում չի արձանագրվել, սպառման ենթակա միջոցների շարքից բացառում է այդ միջոցը ([Prencipe ընդդեմ Մոնակոյի](#), §§ 95-97):

4. Ապացուցման բեռի բաշխումը

76. Երբ կառավարությունը պնդում է, որ իրավական պաշտպանության ներպետական միջոցները չեն սպառվել, այն ստանձնում է դիմումատուի կողմից արդյունավետ և մատչելի միջոցը չօգտագործելու ապացուցման պարտականությունը ([Dalia ընդդեմ Ֆրանսիայի](#), § 38, [McFarlane ընդդեմ Իռլանդիայի](#) (ՄՊ), § 107): Իրավական պաշտպանության նմանատիպ ցանկացած միջոցի առկայություն իրավունքում և պրակտիկայում պետք է լինի բավականաչափ որոշակի ([Vernillo ընդդեմ Ֆրանսիայի](#)), հետևաբար, ներպետական իրավունքում միջոցի հիմքը պետք է լինի պարզ և հստակ ([Scavuzzo-Hager and Others ընդդեմ Շվեյցարիայի](#) (որոշում), [Norbert Sikorski ընդդեմ Լեհաստանի](#), § 117, [Sürmeli ընդդեմ Գերմանիայի](#) (ՄՊ), §§ 110-12): Միջոցը պետք է կարողանա վերականգնել դիմումատուի խախտված իրավունքը և առաջարկել հաջողության ողջամիտ հեռանկարներ ([Scoppola ընդդեմ Իտալիայի \(թիվ 2\)](#) (ՄՊ), § 71): Գոյություն ունեցող միջոցի զարգացումն ու հասանելիությունը, ներառյալ կիրառման շրջանակը, պետք է հստակորեն սահմանված լինեն և հաստատվեն կամ լրացվեն պրակտիկայով կամ նախադեպային իրավունքով ([Mikolajová ընդդեմ Սլովակիայի](#), § 34): Սա կիրառելի է նաև այնպիսի իրավական համակարգերի համատեքստում, որոնք ստեղծվել են ընդհանուր իրավունքի համակարգի (common law system) ոգով, որտեղ գրված սահմանադրությունն անվերապահորեն ապահովում է դիմումատուի կողմից վկայակոչված իրավունքը ([McFarlane ընդդեմ Իռլանդիայի](#) (ՄՊ), § 117, գործով վճիռը, որը վերաբերում է քսանհինգ տարի տեսությունում առկա միջոցին, որը, սակայն, պրակտիկայում երբեք չի օգտագործվել):

Կառավարության փաստարկները հստակորեն ավելի մեծ կշիռ կունենան, եթե ազգային նախադեպային իրավունքից օրինակներ ներկայացվեն ([Doran ընդդեմ Իռլանդիայի](#), [Andrášik and Others ընդդեմ Սլովակիայի](#) (որոշում), [Di Sante ընդդեմ Իտալիայի](#) (որոշում), [Giummarra and Others ընդդեմ Ֆրանսիայի](#) (որոշում), [Paulino Tomás ընդդեմ Պորտուգալիայի](#) (որոշում), [Johetti Sappmelaccat Ry and Others ընդդեմ Ֆինլանդիայի](#) (որոշում): Թվարկված որոշումներն ըստ էության պետք է կայացվեին մինչև զանգատների ներկայացումը ([Norbert Sikorski ընդդեմ Լեհաստանի](#), § 115) և ընթացիկ գործերի համար լինեին վերաբերելի ([Sakhnovskiy ընդդեմ Ռուսաստանի](#) (ՄՊ), §§ 43-44), այնուհանդերձ, տե՛ս նոր իրավական պաշտպանության միջոցների ստեղծման սկզբունքները (ներքոնշյալ) քանի դեռ գործը Դատարանի վարույթում է:

77. Եթե կառավարությունը պնդում է, որ դիմումատուն ներպետական դատարանում պետք է անմիջականորեն հղում կատարեր Կոնվենցիային, նման միջոցի որոշակիության աստիճանը պետք է ապացուցվի կոնկրետ օրինակներով (*Slavgorodski ընդդեմ Բստոնիայի* (որոշում)): Նույնն ուղղակիորեն վերաբերում է ազգային Սահամանադրության որոշ ընդհանուր դրույթների վրա հիմնված ենթադրյալ իրավական պաշտպանության միջոցին (*Kornakovs ընդդեմ Լատվիայի*, § 84):

78. Դատարանն այս փաստարկներին ընկալմամբ է մոտեցել, երբ ազգային օրենսդրությունն երկարատև դատավարության համար ստեղծել է հատուկ միջոց (*Brusco ընդդեմ Իտալիայի* (որոշում), *Slaviček ընդդեմ Խորվաթիայի* (որոշում)): Տե՛ս նաև *Scordino ընդդեմ Իտալիայի (թիվ 1)* (ՄՊ), §§ 136-48: Ի հակադրումն *Merit ընդդեմ Ուկրաինայի*, § 65 գործի:

79. Երբ արդեն կառավարությունն ապացուցել է, որ դիմումատուի համար առկա է եղել իրավական պաշտպանության պատշաճ և արդյունավետ միջոց, դիմումատուն [իր հերթին] պարտավորվում է ապացուցել, որ՝

- միջոցը փաստացի օգտագործվել է (*Grässer ընդդեմ Գերմանիայի* (որոշում)), կամ
- միջոցը, գործի հատուկ հանգամանքներով պայմանավորված, որոշակի պատճառով անհամապատասխան և անարդյունավետ էր (*Selmouni ընդդեմ Ֆրանսիայի* (ՄՊ), § 76), օրինակ՝ հետաքննության չափից ավել ձգձգումների դեպքում (*Radio France and Others ընդդեմ Ֆրանսիայի* (Որոշում, § 34), կամ իրավական պաշտպանության այն միջոցը, օրինակ՝ վճռաբեկ բողոք ներկայացնելը, որը սովորաբար առկա է, բայց նմանատիպ գործերով որդեգրված մոտեցման լույսի ներքո, գործի տվյալ հանգամանքներով պայմանավորված դառնում է անարդյունավետ (*Scordino ընդդեմ Իտալիայի* (որոշում), *Pressos Compania Naviera S.A. and Others ընդդեմ Բելգիայի*, §§ 26-27), նույնիսկ եթե այդ որոշումները կայացվել են վերջերս (*Gas and Dubois ընդդեմ Ֆրանսիայի* (որոշում)): Սա նաև վերաբերում է այն դեպքին, երբ դիմումատուն չի կարողացել ուղղակիորեն դիմել համապատասխան դատարան (*Tănase ընդդեմ Սոդոմիայի* (ՄՊ), § 122): Որոշ հատուկ հանգամանքներում հնարավոր է լինեն նմանատիպ իրավիճակներում հայտնված դիմումատուներ, ովքեր կառավարության մատնանշած դատարանին չեն դիմել, սակայն, ազատվում են դա անելուց, քանի որ այլ անձանց կողմից օգտագործված այդ ներպետական միջոցը պրակտիկայում եղել է անարդյունավետ և անարդյունավետ կլիներ նաև իրենց դեպքում (*Vasilkoski and Others ընդդեմ նախկին Հարավսլավիայի Սակեդրոնական Հանրապետության*, §§ 45-46, *Laska and Lika ընդդեմ Սլովենիայի*, §§ 45-48): Սակայն, սա կիրառվում է միայն բացառիկ դեպքերում (համեմատի՛ր *Saghinadze and Others ընդդեմ Վրաստանի*, §§ 81-83), կամ
- գոյություն ունեն դիմումատուին այդ պահանջի կատարումից ազատող առանձնահատուկ հանգամանքներ (*Akdivar and Others ընդդեմ Թուրքիայի*, §§ 68-75, *Sejdovic ընդդեմ Իտալիայի* (ՄՊ), § 55 և *Veriter ընդդեմ Ֆրանսիայի*, § 60):

80. Նման գործոն կարող է լինել պետական մարմինների ոչ պատշաճ վարքագծի կամ նրանց կողմից պատճառված վնասի (օրինակ՝ երբ նրանք հրաժարվում են հետաքննություն իրականացնել կամ օգնություն տրամադրել) վերաբերյալ ներկայացված լուրջ մեղադրանքների առնչությամբ իշխանությունների անգործությունը: Նման դեպքում կարելի է ասել, որ ապացուցման բեռը կրկին ընկնում է պատասխանող կառավարության վրա, որպեսզի վերջինս բացատրի, թե

ինչ է իրականացվել ի պատասխան ներկայացված բողոքների մասշտաբի և լրջության ([Demopoulos and Others ընդդեմ Թուրքիայի](#) (որոշում) (ՄՊ), §70):

81. Դիմումատուի կողմից որոշակի միջոցի արդյունավետության վերաբերյալ սուկ կասկածները նրան չեն ազատում միջոցից օգտվելու փորձ կատարելու պարտականությունից ([Epözdemir ընդդեմ Թուրքիայի](#) (որոշում), [Milošević/Milosević ընդդեմ Նիդերլանդների](#) (որոշում), [Pellegriti ընդդեմ Իտալիայի](#) (որոշում), [MPP Golub ընդդեմ Ուկրաինայի](#) (որոշում)): Ընդհակառակը, դիմումատուի շահերից է բխում դիմել համապատասխան դատարան, որպեսզի վերջինիս հնարավորություն տրամադրվի մեկնաբանելու իրավասության միջոցով զարգացնել գոյություն ունեցող իրավունքները ([Ciupercescu ընդդեմ Ռումինիայի](#), § 169): Հիմնարար իրավունքների սահմանադրական պաշտպանություն տրամադրող իրավական համակարգերում այդ պաշտպանության սահմանները ստուգելու պարտականությունը պատկանում է տուժած անձին, իսկ ընդհանուր իրավունքի (common law) համակարգում անձը պետք է ներպետական դատարաններին հնարավորություն ընձեռի մեկնաբանությունների միջոցով զարգացնել այդ իրավունքները [A, B and C ընդդեմ Իռլանդիայի](#) (ՄՊ), § 142): Սակայն, այն դեպքում, երբ հաստատված ներպետական նախադեպային իրավունքի լույսի ներքո միջոցը հաջողության ողջամիտ հեռանկարներ փաստացի չի ներկայացնում՝ դիմումատուի կողմից իրավական պաշտպանության միջոցը չօգտագործելը [զանգատի] անընդունելիության համար հիմք չի հանդիսանա ([Pressos Compania Naviera S.A. and Others ընդդեմ Բելգիայի](#), § 27, [Carson and Others ընդդեմ Միացյալ Թագավորությունների](#) (ՄՊ), § 58):

5. Ընթացակարգային ասպեկտները

82. Իրավական պաշտպանության ներպետական միջոցները սպառելու դիմումատուի պարտականությունը սովորաբար գնահատվում է Դատարան գանգատ ներկայացնելու օրվա դրությամբ ([Baumann ընդդեմ Ֆրանսիայի](#), § 47), բացառությամբ գործի որոշակի հանգամանքներով պայամանավորված դեպքերի (տե՛ս ստորև նշված 6-րդ կետը): Այնուամենայնիվ, Դատարանն ընդունում է, որ միջոցների վերջնական սպառման փուլ կարելի է հասնել գանգատը Դատարան ներկայացնելուց հետո, սակայն ոչ ուշ, քան ընդունելիության մասին որոշման կայացումը ([Karoussiotis ընդդեմ Պորտուգալիայի](#), §57):

83. Եթե կառավարությունը մտադիր է [իրավական պաշտպանության միջոցները] չսպառելու մասին դիրքորոշում ներկայացնել, ապա, այնքանով որքանով գանգատի բնույթն ու հանգամանքները թույլ են տալիս, դա պետք է անի իր նախնական առարկություններում՝ նախքան ընդունելիության մասին որոշման կայացումը, չնայած՝ հնարավոր է նրան իր այդ պարտականությունից ազատող բացառիկ հանգամանքներ լինեն (տե՛ս [Mooren ընդդեմ Գերմանիայի](#) (ՄՊ), § 57 և մեջբերված հղումները, §§ 58-59):

Հաճախ [իրավական պաշտպանության միջոցները] սպառած չլինելու վերաբերյալ հայտարարության քննությունը կարող է իրականացվել գործի ըստ էության քննության հետ միաժամանակ, մասնավորապես՝ ընթացակարգային պարտականություններին և երաշխիքներին վերաբերող գործերում, օրինակ՝ 2-րդ հոդվածի ([Dink ընդդեմ Թուրքիայի](#), §§ 56-58) կամ 3-րդ հոդվածի ընթացակարգային կողմի շրջանակներում բերված բողոքները: Հոդված 6-ի մասով, տե՛ս [Scoppola ընդդեմ Իտալիայի](#) (թիվ 2) (ՄՊ), § 126, հոդված 8-ի մասով՝ [A, B and C ընդդեմ](#)

[Բոլանդիայի](#) (ՄՊ), § 155, հոդված 13-ի մասով՝ [Sürmeli ընդդեմ Գերմանիայի](#) (ՄՊ), § 78 և [M.S.S. ընդդեմ Բելգիայի and Greece](#) (ՄՊ), § 336):

6. Իրավական պաշտպանության նորմիզոցների ստեղծումը

84. Այն հարցը՝ արդյոք իրավական պաշտպանության ներպետական միջոցները սպառվել են, սովորաբար գնահատվում է զանգատը Դատարան ներկայացնելու օրվա դրությամբ՝ հիմք ընդունելով ներպետական դատավարության ընթացքը: Այս կանոնը, սակայն, ունի իրավական պաշտպանության նոր միջոցների ստեղծմամբ պայմանավորված բացառություններ (տե՛ս [İçyer ընդդեմ Թուրքիայի](#) (որոշում), §§ 72 և հաջորդները): Դատարանը, մասնավորապես՝ դատական վարույթների տևողությանը վերաբերող գործերում ([Predil Anstalt ընդդեմ Բուլղարիայի](#) (որոշում), [Bottaro ընդդեմ Բուլղարիայի](#) (որոշում), [Andrášik and Others ընդդեմ Սլովակիայի](#) (որոշում), [Nogolica ընդդեմ Խորվաթիայի](#) (որոշում), [Brusco ընդդեմ Բուլղարիայի](#) (որոշում), [Korenjak ընդդեմ Սլովենիայի](#) (որոշում), §§ 66-71, [Techniki Olympiaki A.E. ընդդեմ Հունաստանի](#) (որոշում)), սեփականության իրավունքի իրականացմանը միջամտելու պարագայում փոխհատուցման նոր միջոցի վերաբերյալ գործերում ([Charzyński Charzynski ընդդեմ Լեհաստանի](#) (որոշում), [Michalak ընդդեմ Լեհաստանի](#) (որոշում), [Demopoulos and Others ընդդեմ Թուրքիայի](#) (որոշում) (ՄՊ)), ներպետական վճիռները չկատարելուն ([Nagovitsyn and Nalgiyev ընդդեմ Ռուսաստանի](#) (որոշում), §§ 36-40), բանտի գերբնակեցմանը ([Łatak Łatak ընդդեմ Լեհաստանի](#) (որոշում)) վերաբերող գործերում հեռացել է այս կանոնից:

Դատարանը հաշվի է առնում նորաստեղծ միջոցների արդյունավետությունը և մատչելիությունը ([Demopoulos and Others ընդդեմ Թուրքիայի](#) (որոշում) (ՄՊ), § 88): Խնդրո առարկա գործում միջոցի արդյունավետ չլինելու մասով, տե՛ս [Parizov ընդդեմ Նախկին Հարավսլավիայի Մակեդոնական Հանրապետության](#), §§ 41-47, իրավական պաշտպանության նոր սահմանադրական միջոցի արդյունավետ լինելու մասով, տե՛ս [Cvetković ընդդեմ Սերբիայի](#), § 41:

Ինչ վերաբերում է այն հարցին, թե երբ արդարացի կլինի դիմումատուից պահանջել, որպեսզի օգտագործի նախադեպային իրավունքում իրականացված փոփոխությունների արդյունքում պետության դատական համակարգում ներառված իրավական պաշտպանության միջոցը, Դատարանը վճռել է, որ առանց անձանց դատական որոշմանը ծանոթանալու համար ողջամիտ ժամանակի տրամադրման, այդ նոր միջոցի սպառում պահանջելը կլինի անարդարացի ([Broca and Texier-Micault ընդդեմ Ֆրանսիայի](#), § 20): «Ողջամիտ ժամանակի» տևողությունը կախված է յուրաքանչյուր գործի հանգամանքներից, սակայն Դատարանը, սովորաբար, այն սահմանում է վեց ամիս (նույն տեղում, [Depauw ընդդեմ Բելգիայի](#) (որոշում)): Օրինակ՝ [Leandro Da Silva ընդդեմ Լյուքսեմբուրգի](#), § 50 գործով, այդ ժամկետը ներպետական որոշման ընդունումից հետո ութ, իսկ հրապարակումից հետո՝ երեքուկես ամիս է սահմանվել: Տե՛ս նաև [McFarlane ընդդեմ Բոլանդիայի](#) (ՄՊ), § 117, պիլոտային վճռից հետո ներդրված նոր միջոցի մասով՝ [Fakhretdinov and Others ընդդեմ Ռուսաստանի](#) (որոշում), §§ 36-44 և ներպետական նախադեպային իրավունքից շեղվելու մասով՝ [Scordino ընդդեմ Բուլղարիայի \(թիվ 1\)](#) (ՄՊ), § 147:

[Scordino ընդդեմ Բուլղարիայի \(թիվ 1\)](#) (ՄՊ) և [Cocchiarella ընդդեմ Բուլղարիայի](#) (ՄՊ) գործերում Դատարանը ցուցումներ է տվել իրավական պաշտպանության ներպետական միջոցների այն առանձնահատկությունների վերաբերյալ, որոնք երկարատև դատավարական գործերի ժամանակ անհրաժեշտ են ապահովելու

իրենց արդյունավետությունը (տե՛ս նաև վերջերս կայացված, [Vassilios Athanasiou and Others ընդդեմ Հունաստանի](#), §§ 54-56): Վարույթների երկարատևության նկատմամբ կանխարգելիչ և փոխհատուցող ազդեցություն չունեցող միջոցները, որպես կանոն, չպետք է օգտագործվեն ([Puchstein ընդդեմ Ավստրիայի](#), § 31): Վարույթների երկարատևության դեմ կիրառվող միջոցը պետք է, մասնավորապես գործի առանց անհարկի ձգձգումների և ապահովի համապատասխան չափի հատուցում ([Scordino ընդդեմ Իտալիայի \(թիվ 1\)](#) (ՄՊ), §§ 195 և 204-07):

85. Երբ Դատարանը ներպետական օրենսդրությունում կամ իրավակիրառ պրակտիկայում ընդհանուր թերություններ է հայտնաբերում, կարող է պետությանը խնդրել, քննարկել իրավիճակը և, անհրաժեշտության դեպքում, ձեռնարկել արդյունավետ միջոցառումներ՝ կանխելու նույնաբնույթ գործերի ներկայացումը Դատարան ([Lukenda ընդդեմ Սլովենիայի](#), § 98): Այն կարող է եզրակացնել, որ պետությունը պետք է կա՛մ փոփոխի գոյություն ունեցող միջոցառումների շարքը, կա՛մ ավելացնի նորերը՝ ապահովելու Կոնվենցիայի խախտումների իրապես արդյունավետ փոխհատուցումը (տե՛ս օրինակ՝ [Xenides-Arestis ընդդեմ Թուրքիայի](#), § 40 գործով պիլոտային վճիռները և [Burdov ընդդեմ Ռուսաստանի \(թիվ 2\)](#), §§ 42 և 129 և հաջորդները, § 140): Հատուկ ուշադրություն պետք է դարձնել իրավական պաշտպանության ներպետական արդյունավետ միջոցներ ապահովելու անհրաժեշտությանը (տե՛ս [Vassilios Athanasiou and Others ընդդեմ Հունաստանի](#) պիլոտային վճիռ, § 41):

[Եղել են դեպքեր,] երբ պատասխանող պետությունը ներդրել է իրավական պաշտպանության նոր միջոց [և] Դատարանը պարզել է արդյոք այդ միջոցն արդյունավետ է (տե՛ս օրինակ՝ [Robert Lesjak ընդդեմ Սլովենիայի](#), §§ 34-55, [Demopoulos and Others ընդդեմ Թուրքիայի](#) (որոշում) (ՄՊ), § 87): Վերջինս, դա անում է յուրաքանչյուր գործի հանգամանքներն ուսումնասիրելու միջոցով. այն հարցի՝ արդյոք նոր օրենսդրական կառուցակարգն արդյունավետ է, պատասխանը պետք է հիմնվել դրա գործնական կիրառության վրա ([Nogolica ընդդեմ Խորվաթիայի](#) (որոշում)): Սակայն, ոչ այն փաստը, որ կառուցակարգի վերաբերյալ դեռևս չկա ձևավորված դատական կամ վարչական պրակտիկա, ոչ էլ այն, որ դատավարությունը հնարավոր է երկար ժամանակ պահանջի, չեն կարող նոր միջոցը դարձնել անարդյունավետ ([Nagovitsyn and Nalgiyev ընդդեմ Ռուսաստանի](#) (որոշում), § 30):

86. Եթե Դատարանը պարզի, որ իրավական պաշտպանության նոր միջոցն արդյունավետ է, նշանակում է, որ մնացած նմանատիպ գործերում հանդես եկող դիմումատուները պարտավորվում են օգտագործել այդ նոր միջոցը՝ պայմանով, որ դրա համար նախատեսված ժամկետներն արդեն բաց չեն թողել: Դատարանն այս գանգատները 35-րդ հոդվածի 1-ին կետին համապատասխան ճանաչել է անընդունելի, անգամ եթե դրանք ներկայացվել են նախքան նոր միջոցի ստեղծումը ([Grzinčič ընդդեմ Սլովենիայի](#), §§ 102-10, [İçyer ընդդեմ Թուրքիայի](#) (որոշում), §§ 74 և հաջորդները):

Սա վերաբերում է այն իրավական պաշտպանության ներպետական միջոցներին, որոնք հասանելի են դարձել գանգատները ներկայացնելուց հետո: Այն, թե արդյոք առկա են դիմումատուներին՝ նոր միջոցները գործածել պարտավորեցնող բացառիկ հանգամանքներ, թե՛ ոչ, պետք է գնահատվի՝ հաշվի առնելով, մասնավորապես՝ ներպետական կարգավորումների բնույթը և դրանց ներդրման համատեքստը ([Fakhretdinov and Others ընդդեմ Ռուսաստանի](#) (որոշում), § 30): Այս գործով Դատարանը վճռել է, որ արդյունավետ ներպետական միջոցը, որը

ներդրվել է հետամուտ լինելով այդպիսի միջոց ստեղծելու մասին պիլոտային վճռում առկա պահանջին և այդ վճիռն ընդունելուց հետո, պետք է օգտագործվի մինչ ղիմումատուների կողմից Դատարան գանգատ ներկայացնելը:

Դատարանը նաև հստակեցրել է 35-րդ հոդվածի 1-ին կետի կիրառման պայմանները՝ կապված գանգատի ներկայացման ամսաթվի հետ (նույն տեղում, §§ 31-33, տե՛ս նաև [Nagovitsyn and Nalgiyev ընդդեմ Ռուսաստանի](#) (որոշում), §§ 29 և հաջորդներ և § 42):

Բ. Վեցամսյա ժամկետը չպահպանելը

Հոդված 35, կետ 1. Ընդունելիության չափանիշ

«1. Դատարանը կարող է գործը քննության ընդունել միայն ... վեց ամսվա ընթացքում՝ սկսած այն օրվանից, երբ կայացվել է ներպետական վերջնական որոշումը»:

1. Կանոնի նպատակը

87. Վեցամսյա ժամկետի կանոնի հիմնական նպատակն է պահպանել իրավական որոշակիությունը՝ ապահովելով, որ Կոնվենցիայի վերաբերյալ խնդիրներ վեր հանող գործերը քննվեն ողջամիտ ժամկետում, և համապատասխան անձինք երկար ժամանակով չգտնվեն անորոշության մեջ: Այն նաև հնարավոր ղիմումատուներին տրամադրում է ժամանակ՝ որոշելու ներկայացնել գանգատ, թե՛ ոչ, և եթե այո, [ժամանակ է տրամադրում], որպեսզի որոշեն կոնկրետ բողոքները և փաստարկները, ինչպես նաև հեշտացնում է գործով փաստահավաքության իրականացումը, քանի որ ժամանակի ընթացքում բարձրացված խնդիրների քննությունը դառնում է խնդրահարույց ([Sabri Günes ընդդեմ Թուրքիայի](#) (ՄՊ), § 39):

88. Կանոնը նշում է Դատարանի կողմից իրականացվող վերահսկողության ժամանակային սահմանը և, ինչպես անձանց, այնպես էլ պետական իշխանությունների համար ազդանշում այն ժամանակահատվածը, որից հետո այդ վերահսկողությունը այլևս հնարավոր չէ: Այն արտացոլում է բարձր պայմանավորվող պետությունների ցանկությունն առ այն, որ նախկին վճիռներն այլևս կասկածի տակ չդրվեն և իրենից ենթադրում է կարգ ու կանոնի, կայունության և խաղաղության վերաբերյալ մտահոգության հայտնում ([Idalov ընդդեմ Ռուսաստանի](#) (ՄՊ), § 128, [Sabri Günes ընդդեմ Թուրքիայի](#) (ՄՊ), § 40):

89. Վեցամսյա ժամկետի կանոնը հանրային քաղաքականության կանոն է և Դատարանն այն իր նախաձեռնությամբ կիրառելու իրավագործություն ունի, նույնիսկ եթե կառավարությունն այդ առարկությունը չի ներկայացրել (նույն տեղում, § 29):

90. Վեցամսյա ժամկետի պահպանման կանոնը չի կարող ղիմումատուին պարտադրել իր գանգատը Դատարան ներկայացնել նախքան ներպետական մակարդակում հարցի առնչությամբ իր դիրքորոշման վերջնական լուծումը ([Varnava and Others ընդդեմ Թուրքիայի](#) (ՄՊ), § 157, [Chapman ընդդեմ Բելգիայի](#) (որոշում), § 34):

2. Վեցամսյա ժամկետի հաշվարկման սկիզբը

(ա) Վերջնական որոշումը

91. Վեցամսյա ժամկետը սկսվում է հաշվարկվել իրավական պաշտպանության ներպետական միջոցների սպառման գործընթացի վերջնական որոշման ընդունման պահից ([*Paul and Audrey Edwards ընդդեմ Միացյալ Թագավորությունների*](#) (որոշում)): Դիմումատուն պետք է պատշաճ օգտագործի իրավական պաշտպանության ներպետական միջոցները, որոնք ամենայն հավանականությամբ արդյունավետ են և բավարար ([*Moreira Barbosa ընդդեմ Պորտուգալիայի*](#) (որոշում)):

92. Միայն նորմալ և արդյունավետ միջոցներն են, որ հաշվի են առնվում, քանի որ դիմումատուն չի կարող երկարաձգել Կոնվենցիայով նախատեսված խիստ ժամանակային սահմանափակումը՝ ներկայացնելով ոչ պատշաճ և անհասկանալի դիմումներ այն մարմիններին կամ հաստատություններին, որոնք Կոնվենցիայի շրջանակներում բերված բողոքի արդյունավետ լուծման համար չունեն իշխանություն և իրավասություն ([*Fernie ընդդեմ Միացյալ Թագավորությունների*](#) (որոշում)):

93. Հաշվի չպետք է առնվեն այն միջոցները, որոնց օգտագործումը կախված է պետական պաշտոնյաների հայեցողությունից և որոնք, հետևաբար, դիմումատուի համար ուղղակիորեն մատչելի չեն: Նմանապես, հստակ ժամանակային սահմանափակումներ չունեցող միջոցները ստեղծում են անորոշություն և արժեզրկում են 35-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված վեցամսյա ժամկետի կանոնը ([*Williams ընդդեմ Միացյալ Թագավորությունների*](#) (որոշում)):

94. Որպես կանոն, 35-րդ հոդվածի 1-ին կետը չի պահանջում, որպեսզի դիմումատուները դիմեն վարույթների վերաբացման համար կամ օգտագործեն իրավական պաշտպանության նույնանման արտասովոր միջոցներ, հետևաբար, այն չի թույլատրում այդպիսի արտակարգ միջոցների օգտագործման հիմքով երկարաձգել վեցամսյա ժամկետը ([*Berdzenishvili ընդդեմ Ռուսաստանի*](#) (որոշում), [*Tucka ընդդեմ Միացյալ Թագավորությունների \(թիվ 1\)*](#) (որոշում)): Սակայն, եթե արտակարգ միջոցը դիմումատուի համար իրավական պաշտպանության միակ հասանելի դատական միջոցն է, վեցամսյա ժամկետը կարող է հաշվարկվել այդ միջոցի առնչությամբ որոշման կայացման օրվանից ([*Ahtinen ընդդեմ Ֆինլանդիայի*](#) (որոշում)):

Դիմումատուի՝ գործով վարույթը վերաբացելու մասին դիմումը մերժող որոշման կայացումից վեց ամիս հետո ներկայացված գանգատն անընդունելի է, որովհետև որոշումը «վերջնական որոշում» չէ ([*Sapeyan ընդդեմ Հայաստանի*](#), § 23):

Վարույթի վերաբացման կամ վերջնական որոշման վերանայման գործերով, սկզբնական դատավարության կամ վերջնական որոշման առնչությամբ վեց ամսյա ժամկետի հաշվարկն ընդհատվում է միայն Կոնվենցիայի այն խնդիրների կապակցությամբ, որոնք վերաբացման կամ վերանայման համար հիմք են հանդիսացել և ոչ սովորական վերաքննիչ մարմնի կողմից իրականացվող քննության առարկա են եղել (նույն տեղում, § 24):

(բ) Ժամկետի մեկնարկային կետը

95. Վեցամսյա ժամկետի կանոնը ինքնավար է և պետք է մեկնաբանվի և յուրաքանչյուր առանձին գործի փաստերի նկատմամբ կիրառվի այնպես, որ ապահովվի անհատական դիմումի իրավունքի արդյունավետ իրականացումը: Թեև

ներպետական իրավունքը և պրակտիկան հաշվի առնելը [ժամկետի մեկնարկի] կարևոր ասպեկտ է, այն ժամկետի մեկնարկային կետն որոշելու համար որոշիչ չէ [Sabri Günes *ընդդեմ Թուրքիայի*](#) (ՄՊ), §§ 52 and 55):

(i) Որոշման մասին իմացությունը

96. Վեցամսյա ժամկետը մեկնարկվում է սկսած այն օրվանից, երբ դիմումատուն և/կամ նրա ներկայացուցիչը վերջնական ներպետական որոշման մասին ունեն բավարար իմացություն ([Koç and Tosun *ընդդեմ Թուրքիայի*](#) (որոշում)):

97. Վեցամսյա ժամկետը չպահպանելու մասին պնդող պետությունը պարտավորվում է հաստատել այն ամսաթիվը, երբ դիմումատուն տեղեկացվել է վերջնական ներպետական որոշման մասին ([Sahmo *ընդդեմ Թուրքիայի*](#) (որոշում)):

(ii) Որոշման հանձնումը

98. [Որոշման] հանձնումը դիմումատուին. այն դեպքում, երբ դիմումատուն իրավունք ունի անմիջապես ստանալ ներպետական վերջնական որոշման օրինակը, Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 1-ին կետի առարկան և նպատակը լավագույնը կձառայեն իրենց նշանակությանը, եթե վեցամսյա ժամկետը հաշվարկվի որոշման կրկնօրինակը դիմումատուին հանձնելու օրվանից ([Worm *ընդդեմ Ավստրիայի*](#), § 33):

99. [Որոշման] հանձնումը փաստաբանին. վեցամսյա ժամկետի հաշվարկը սկսվում է այն օրվանից, երբ դիմումատուի փաստաբանը տեղեկացվել է իրավական պաշտպանության ներպետական միջոցները սպառող վերջնական որոշման մասին, անկախ այն փաստից, որ դիմումատուն որոշման մասին ավելի ուշ է տեղեկացվել ([Celik *ընդդեմ Թուրքիայի*](#) (որոշում)):

(iii) Որոշումը չհանձնելը

100. Այն դեպքում, երբ ներպետական իրավունքը չի նախատեսում [որոշման] հանձնում, ապա որպես մեկնարկային կետ կարելի է դիտարկել որոշումը վերջնական դառնալու ամսաթիվը, այսինքն՝ երբ կողմերը միանշանակ կարող էին տեղեկանալ որոշման բովանդակության մասին ([Papachelas *ընդդեմ Հունաստանի*](#) (ՄՊ), § 30): Դիմումատուն կամ իր փաստաբանը դատարանի ռեգիստրում պահվող որոշման օրինակը ձեռք բերելու համար պետք է ցուցաբերի անհրաժեշտ շրջահայացություն ([Ölmez *ընդդեմ Թուրքիայի*](#) (որոշում)):

(iv) Իրավական պաշտպանության միջոցների բացակայությունը

101. Երբ ի սկզբանե պարզ է, որ դիմումատուն իր տրամադրության տակ որևէ արդյունավետ իրավական պաշտպանության միջոց չունի, վեցամսյա ժամկետը հաշվարկվում է այն օրվանից սկսած, երբ բողոքարկված գործողությունը տեղի է ունեցել կամ երբ այն դիմումատուի վրա ուղղակիորեն ներգործել է կամ երբ դիմումատուն իմացել է այդ գործողության կամ վերջինիս բացասական հետևանքների մասին ([Dennis and Others *ընդդեմ Միացյալ Թագավորությունների*](#) (որոշում), [Varnava and Others *ընդդեմ Թուրքիայի*](#) (ՄՊ), § 157):

102. Երբ դիմումատուն օգտագործում է ակնհայտ գոյություն ունեցող միջոց, և միայն հետագայում է իմանում այն հանգամանքների մասին, որոնք միջոցը ոչ արդյունավետ են դարձնում, տեղին կլինի որպես վեցամսյա ժամկետի սկիզբ դիտարկել այն օրը, երբ դիմումատուն տեղեկացել է կամ կարող էր տեղեկանալ այդ հանգամանքների մասին (նույն տեղում, § 158):

(v) Շարունակական իրավիճակ

103. «Շարունակական իրավիճակ» հասկացությունը վերաբերում է դեպքերի այնպիսի հանգամանքներին, որոնց առկայությամբ դիմումատուները դառնում են պետության կողմից կամ նրա անունից իրականացվող շարունակական գործողությունների զոհը: Այն փաստը, որ իրադարձությունը հետագայում լուրջ հետևանքներ է առաջացնում, չի նշանակում, որ այն ստեղծել է «շարունակական իրավիճակ» ([Iordache *ընդդեմ Ռումինիայի*](#), § 49):

104. Երբ ենթադրյալ խախտումն ենթադրում է շարունակական իրավիճակ, որի դեմ որևէ իրավական պաշտպանության ներպետական միջոց չկա, վեցամսյա ժամկետը սկսվում է հաշվարկվել միայն այն ժամանակ, երբ այդ իրավիճակն ավարտվում է ([Sabri Güneş *ընդդեմ Թուրքիայի*](#) (ՄՊ), § 54, [Varnava and Others *ընդդեմ Թուրքիայի*](#) (ՄՊ), § 159, [Ülke *ընդդեմ Թուրքիայի*](#) (որոշում)): Այնքան ժամանակ քանի դեռ շարունակական իրավիճակը շարունակվում է, վեցամսյա ժամկետի կանոնը կիրառելի չէ ([Iordache *ընդդեմ Ռումինիայի*](#), § 50):

3. Վեցամսյա ժամկետի լրանալը

105. Ժամկետը սկսում է հաշվարկվել վերջնական որոշման հրապարակային կայացմանը հաջորդող օրը կամ այն օրը, երբ դիմումատուն կամ իր ներկայացուցիչը տեղեկացել են որոշման մասին և լրացել է վեց օրացուցային ամիս՝ անկախ այդ օրացուցային ամիսների իրական տևողությունից ([Otto *ընդդեմ Գերմանիայի*](#) (որոշում)):

106. Վեցամսյա ժամկետի վերջնաժամկետը պահպանելու հարցն որոշվում է օգտագործելով Կոնվենցիային, այլ ոչ թե պատասխանող պետության ներպետական օրենսդրությանը ներհատուկ չափանիշները ([Benet Praha, spol. s r.o., *ընդդեմ Չեխիայի Հանրապետության*](#) (որոշում), [Poslu and Others *ընդդեմ Թուրքիայի*](#), § 10): Դատարանը ժամկետները հաշվարկում է իր իսկ չափանիշներով՝ անկախ ներպետական կանոններից՝ ձգտելով ապահովել իրավական որոշակիություն, արդարադատության պատշաճ վարչարարություն և այդպիսով՝ Կոնվենցիայի համակարգի իրական և արդյունավետ գործունեություն ([Sabri Güneş *ընդդեմ Թուրքիայի*](#) (ՄՊ), § 56):

107. Այն փաստը, որ վեցամսյա ժամկետի վերջին օրը շաբաթ, կիրակի կամ պաշտոնապես տոն օր է և [հակառակ նրան, որ] նման իրավիճակում ներպետական իրավունքի համաձայն՝ ժամկետը երկարաձգվում է մինչև հաջորդ աշխատանքային օրը, ժամկետը լրանալու օրը (*dies ad quem*) որոշելու վրա դա չի անդրադառնում (նույն տեղում, §§ 43 և 61):

108. Դատարանն ազատ վեցամսյա ժամկետի լրանալու օրը որոշելու հարցում, եթե այն տարբերվում է պատասխանող պետության նշած օրվանից ([İpek İpek *ընդդեմ Թուրքիայի*](#) (որոշում)):

4. Գանգատի ներկայացման ամսաթիվը

(ա) Դիմումի՝ լրացված ձևաթուղթը

109. [Դատարանի կանոնակարգի 47-րդ կանոնի](#) համաձայն՝ որն ուժի մեջ է մտել 2014 թվականի հունվարի 1-ին, Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 1-ին կետի իմաստով գանգատ ներկայացման օր է համարվում նշված կանոնի պահանջները

բավարարող դիմումի ձևաթուղթը Դատարան ուղարկելու օրը: Դիմումը պետք է պարունակի ձևաթղթի համապատասխան բաժիններում նշված ամբողջ տեղեկատվությունը և ուղեկցվի բոլոր վերաբերելի հաստատող փաստաթղթերի պատճեններով: Միայն ամբողջական դիմումը ձևաթղթի առկայությամբ վեցամսյա ժամկետի հաշվարկը կընդհատվի, բացառությամբ, եթե 47-րդ կանոնով այլ բան է նշված ([Վարույթ հարուցելու մասին գործնական ցուցումներ](#), § 1):

(բ) Լիազորագիրը

110. Այն դեպքում, երբ դիմումատուն որոշում է իր դիմումը ներկայացնել ներկայացուցչի միջոցով, Դատարանին պետք է տրամադրվի վավերացված լիազորագրի բնօրինակ կամ դիմումատուի ստորագրված լիազորագիր (Դատարանի կանոնակարգի 47-րդ կանոնի 3.1(դ) կետ, տե՛ս նաև [Kaur ընդդեմ Նիդերլանդների](#) (որոշում), § 11 *in fine*): Նման լիազորագրի բացակայության դեպքում՝ դիմումը չի համարվի վավեր և Դատարանի կողմից կմերժվի՝ «զոհի» բացակայության կամ դիմելու իրավունքի չարաշահման հիմքով ([Kokhreizde and Ramishvili ընդդեմ Վրաստանի](#) (որոշում), § 16):

111. Պատշաճ կերպով լրացված լիազորագրի ձևաթուղթը, Դատարանի կանոնակարգի 45-րդ և 47-րդ կանոնների իմաստով, կազմում է դիմումի բաղկացուցիչ մասը, և այն չներկայացնելը կարող է գանգատի ներկայացման օրվա վրա անմիջական հետևանքներ ունենալ (նույն տեղում, § 17):

(գ) Ուղարկման օրը

112. Գանգատի ներկայացման օրը փոստադրոշմի ամսաթիվն է՝ այն օրը, երբ դիմումատուն պատշաճ լրացված դիմումի ձևաթուղթն ուղարկել է Դատարան (Դատարանի կանոնակարգի 47-րդ կանոնի 6(ա) կետ, տե՛ս նաև [Abdulrahman ընդդեմ Նիդերլանդների](#) (որոշում), [Brežec ընդդեմ Խորվաթիայի](#), § 29):

113. Միայն բացառիկ հանգամանքները, օրինակ՝ դիմումի ուղարկման ամսաթվի հաստատման անհնարինություն, կարող են արդարացնել այլ մոտեցման կիրառումը, օրինակ՝ որպես ներկայացման օր է ընդունվում դիմումի ձևաթղթում նշված օրը կամ, դրա բացակայության դեպքում՝ Դատարանի Քարտուղարության կողմից այն ստանալու օրը ([Bulinwar OOD and Hrusanov ընդդեմ Բուլղարիայի](#), §§ 30-32):

114. Դատարանի հետ հաղորդակցման ընթացքում ուշացումների համար Դիմումատուները պատասխանատվություն չեն կրում ([Anchugov and Gladkov ընդդեմ Ռուսաստանի](#), § 70):

(դ) Ֆաքսով ուղարկելը

115. Ֆաքսով ուղարկված դիմումը չի կանգնեցնի վեցամսյա ժամկետի ընթացքը: Դիմումատուները պետք է նաև վեցամսյա ժամկետի ընթացքում փոստով ուղարկեն ստորագրված բնօրինակը ([Վարույթ հարուցելու վերաբերյալ գործնական ցուցումներ](#), § 3):

(ե) Գանգատի բովանդակությունը

116. Գանգատը բնութագրվում է ոչ միայն իրավական հիմքերով և

փաստարկներով, այլ նաև այնտեղ նկարագրված ենթադրյալ փաստերով ([*Scoppola ընդդեմ Բուալիայի \(no. 2\)*](#) (ՄՊ), § 54):

(զ) Հաջորդող բողոքները

117. Ինչ վերաբերում է նախնական գանգատում չներառված բողոքներին, ապա վեցամսյա ժամկետի ընթացքը չի ընդհատվի մինչև գանգատի՝ առաջին անգամ Կոնվենցիայի [համակարգի] մարմին ներկայացման օրը ([*Allan ընդդեմ Միացյալ Թագավորությունների*](#), (որոշում)):

118. Վեցամսյա ժամկետը լրանալուց հետո ծագած բողոքները կարող են ընդունվել միայն, եթե դրանք ժամկետի շրջանակներում ներկայացված սկզբնական գանգատի ասպեկտներ են ([*Sâmbata Bihor Greco-Catholic Parish ընդդեմ Ռումինիայի*](#) (որոշում)):

119. Դիմումատուի կողմից դիմումում 6-րդ հոդվածի գուտ և առանց բողոքի փաստական հիմքերի և խախտման բնույթի նկարագրման վկայակոչումն բավարար չէ, որպեսզի հաջորդող բողոքները համարվեն այդ հոդվածի շրջանակներում ներկայացված ([*Allan ընդդեմ Միացյալ Թագավորությունների*](#) (որոշում), [*Adam and Others ընդդեմ Գերմանիայի*](#) (որոշում)):

120. Ներպետական վարույթների փաստաթղթերի տրամադրումը բավարար չէ, որպեսզի այդ վարույթի շրջանակներում ներկայացված բոլոր բողոքները համարվեն հաջորդող բողոքներ: Գանգատ ներկայացնելու և վեցամսյա ժամկետի ընթացքն ընդհատելու համար անհրաժեշտ է ներկայացնել Կոնվենցիայի ենթադրյալ խախտումների բնույթի վերաբերյալ որոշակի նշում, թեկուզ՝ համառոտ ([*Božinovski ընդդեմ Նախկին Հարավսլավիայի Մակեդոնական Հանրապետության*](#) (որոշում)):

5. Հատուկ իրավիճակներ

(ա) Ժամանակային սահմանափակումների կիրառելիությունը

121. Չնայած, որ վեցամսյա ժամկետի ընթացքի համար հստակ մեկնարկի կետ սահմանված չէ, Դատարանը, կյանքին սպառնացող իրավիճակներում անհետացման դեպքերով շարունակաբար հետաքննություն չիրականացնելու մասին բողոքել ցանկացող դիմումատուների վրա դրել է շրջահայացություն և նախաձեռնության պարտավորություն: Նման դեպքերում դիմումատուն, մինչև Ստրասբուրգի [դատարան] դիմելը, չի կարող անորոշ սպասել: Նրանք իրենց բողոքները պետք է ներկայացնեն առանց անհարկի ձգձգումների ([*Varnava and Others ընդդեմ Թուրքիայի*](#) (ՄՊ), §§ 161-66):

122. Նմանապես, այն դեպքում, երբ երկարատև ընդհարման համատեքստում սեփականության կամ տան իրավունքի ենթադրյալ շարունակական խախտումները խնդրո առարկան են, հնարավոր է գա մի ժամանակ, երբ պետք լինի, որպեսզի դիմումատուն ներկայացնի իր գանգատը, քանի որ չփոփոխվող իրավիճակում անգործության մատնվելը այլևս արդարացված չի լինի: Երբ դիմումատուն տեղեկացել է կամ պետք է տեղեկանար, որ կանխատեսելի ապագայում իր սեփականությունը և տունն իր համար կրկին հասանելի լինելու իրատեսական հույսեր չկան, գանգատի ներկայացման անբացատրելի կամ անհարկի ուշացումը կարող է հանգեցնել նրան, որ նրա գանգատը մերժվի՝ ժամկետի խախտմամբ ներկայացված լինելու պատճառով:

(բ) Վեցամսյա կանոնի կիրառման պայմանները Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետի՝ դիմումատուին բազում անգամ կալանքի տակ պահելու դեպքերում

123. Բազմաթիվ և հաջորդական կալանքի ժամկետները պետք է հաշվի առնվեն որպես մեկ ընդհանուր ժամկետ: Վեցամսյա ժամկետը պետք է հաշվարկվի միայն վերջին կալանքի ժամկետի ավարտից հետո ([Solmaz ընդդեմ Թուրքիայի](#), § 36):

124. Այն դեպքում, երբ մեղադրյալի կալանքը բաժանված է մի քանի ոչ հաջորդական ժամանակահատվածների, այդ ժամանակահատվածները պետք է դիտարկվեն ոչ թե որպես ամբողջություն, այլ՝ յուրաքանչյուրն առանձին: Այդ պատճառով, արդեն ազատության մեջ գտնվելու ժամանակ, դիմումատուն պարտավորվում է փաստացի ազատվելու պահից վեցամսյա ժամկետում ներկայացնել կալանքի առնչությամբ ունեցած իր բոլոր բողոքները: Սակայն, այն դեպքում, երբ այդ ժամանակահատվածները վերաբերում են դիմումատուի դեմ հարուցված նույն քրեական գործին, Դատարանը 5-րդ հոդվածի 3-րդ կետի իմաստով կալանքի ընդհանուր ողջամտությունը գնահատելիս կարող է հաշվի առնել այն փաստը, որ դիմումատուն նախկինում ձերբակալվել է ([Idalov ընդդեմ Ռուսաստանի](#) (ՄՊ), §§ 129-30):

Գ. Անանուն գանգատ⁴

Հոդված 35, կետ 2 (ա)՝ Ընդունելիության չափանիշ

«2. Դատարանը քննության չի ընդունում 34-րդ հոդվածին համապատասխան ներկայացված ոչ մի անհատական գանգատ, եթե այն՝
(ա) անանուն է, (...)»:

125. Դիմումատուի ինքնությունը դիմումի ձևաթղթում պետք է պատշաճ կերպով հաստատվի (Դատարանի կանոնակարգի 47-րդ կանոնի 1(ա) կետ): Դատարանը կարող է որոշել, որ դիմումատուի ինքնությունը չպետք է բացահայտվի հանրությանը (47-րդ կանոնի 4-րդ կետ): Այդ դեպքում, դիմումատուն կմատնանշվի իր անվան տառերով կամ ուղղակի տառերով:

126. Միայն Դատարանն է իրավասու որոշել, թե արդյոք գանգատը 35-րդ հոդվածի 2(ա) կետի իմաստով անանուն է ([Sindicatul Păstorul cel Bun ընդդեմ Ռումինիայի](#) (ՄՊ), § 69): Եթե պատասխանող պետությունը գանգատի իսկության մասով կասկածներ ունի, պետք է այդ մասին տեղեկացնի Դատարանին:

1. Անանուն գանգատ

127. Դատարան ներկայացրած գանգատը համարվում է անանուն, երբ գործում բացակայում է Դատարանի կողմից դիմումատուի անձը բացահայտող որևէ

⁴ Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 2(ա) կետի իմաստով «անանուն» գանգատը պետք է տարբերակել դիմումատուի ինքնությունը հանրությանը չբացահայտելուց (ինչը իրենից ենթադրում է Դատարանում իրականացվող դատավարության ընդհանուր կանոնից, այն է՝ տեղեկատվության հանրային մատչելիության, և Դատարանում գաղտնիության վերաբերյալ հարցից շեղում (տե՛ս Դատարանի Կանոնակարգի 47-րդ կանոնը և դրան կից գործնական ուղեցույցները):

փաստաթուղթ ([*“Blondje” ընդդեմ Նիդերլանդների*](#) (որոշում))։ Ձևաթղթերից և ներկայացված փաստաթղթերից որևէ մեկը չի պարունակում անվան հիշատակում, այլ միայն հղում և ծածկանուններ, և լիազորագիրը ստորագրված է «իքս» նշանով՝ դիմումատուի ինքնությունը բացահայտված չէ։

128. Գանգատը համարվել է անանուն, երբ ասոցիացիան անհայտ անձանց անունից ներկայացրել է գանգատ, որում վիճարկվել է չբացահայտված անձանց անձնական կյանքը հարգելու իրավունքի խախտում ([*Federation of French Medical Trade Unions and National Federation of Nurses ընդդեմ Ֆրանսիայի*](#) (Հանձնաժողովի որոշում))։

2. Ոչ անանուն գանգատ

129. Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 2(ա) կետը կիրառելի չէ այն դեպքերում, երբ դիմումատուները ներկայացրել են փաստական և իրավական տեղեկատվություն՝ հնարավորություն տալով Դատարանին հաստատել նրանց ինքնությունը և նրանց՝ ինդիվիդուալ առարկա փաստերի և ներկայացված բողոքի հետ ունեցած կապերը ([*Sindicatul Păstorul cel Bun ընդդեմ Ռումինիայի*](#) (ՄՊ), § 71)։

130. Կեղծ անուններով ներկայացված գանգատներ. անձինք, ովքեր օգտագործում են կեղծանուններ և Դատարանին բացատրում, որ զինված հակամարտության պարագայում նրանք պարտավոր չեն բացահայտել իրենց իրական անունները՝ իրենց ընտանիքի անդամներին և ընկերներին պաշտպանելու նպատակով։ Գտնելով, որ «հասկանալի պատճառներով իրենց իրական ինքնությունը թաքցնելու մարտավարության հետևում իրական մարդիկ են, որոնց կարելի է բացահայտել բավարար ակնարկներով, այլ ոչ իրենց անուններով...» և «դիմումատուների՝ և քննարկվող իրադարձությունների միջև բավականին սերտ կապի առկայությունը», Դատարանը գանգատը չդիտարկեց որպես անանուն ([*Shamayev and Others ընդդեմ Վրաստանի and Russia*](#) (որոշում)), տե՛ս նաև [*Shamayev and Others*](#), § 275)։

131. Եկեղեցական մարմնի կամ կրոնական ասոցիացիայի ներկայացրած գանգատը, որոնց անդամների ինքնությունը չի բացահայտվել, անանուն լինելու հիմքով՝ Դատարանը չի մերժել (Կոնվենցիայի 9, 10 և 11 հոդվածներ), տե՛ս [*Omkananda and Divine Light Zentrum ընդդեմ Շվեյցարիայի*](#) (Հանձնաժողովի որոշում)։

Դ. Ըստ էության նույն գանգատներ

Հոդված 35, կետ 2 (բ)՝ Ընդունելիության չափանիշները

«2. Դատարանը քննության չի ընդունում 34-րդ հոդվածին համապատասխան ներկայացված ոչ մի անհատական գանգատ, եթե այն՝

ա. (...)

բ. ըստ էության այն նույն հարցն է, որը Դատարանն արդեն քննել է կամ որն արդեն հանձնվել է միջազգային քննության կամ կարգավորման այլ ընթացակարգի և չի բովանդակում գործին առնչվող նոր տեղեկություններ»։

132. Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 2 (բ) կետի համաձայն՝ գանգատի քննությունը կմերժվի, եթե այն ըստ էության ենթադրում է այն նույն հարցը, որը Դատարանն արդեն քննել է կամ որն արդեն հանձնվել է միջազգային քննության կամ

կարգավորման այլ ընթացակարգի և չի բովանդակում գործին առնչվող նոր տեղեկություններ:

1. Ըստ էության այն նույն հարցն է, որը Դատարանն արդեն քննել է

133. 35-րդ հոդվածի 2 (բ) կետի առաջին պայմանի նպատակն է ապահովել Դատարանի որոշումների վերջնական լինելը և թույլ չտալ, որ դիմումատուները փորձեն նոր գանգատ ներկայացնելու միջոցով բողոքարկել Դատարանի նախկին որոշումները և վճիռները [Kafkaris ընդդեմ Կիպրոսի](#) (որոշում), § 67, [Lowe ընդդեմ Միացյալ Թագավորությունների](#) (որոշում)):

134. Գանգատը կամ բողոքը հայտարարվում է անընդունելի եթե «այն նույն հարցն է, որը Դատարանն արդեն քննել է և գործին առնչվող նոր տեղեկություններ չի բովանդակում»: Նշվածը ներառում է այն գործերը, որոնցով Դատարանը բարեկամական կարգավորման հիման վրա նախկին գանգատը հանել իր քննվող գործերի ցանկից ([Kezer and Others ընդդեմ Թուրքիայի](#) (որոշում)): Սակայն, եթե նախորդ գանգատը պաշտոնական որոշման առարկա չի եղել, Դատարանը վերջերս ներկայացված գանգատը քննելու հարցում կաշկանդված չէ ([Sürmeli ընդդեմ Գերմանիայի](#) (որոշում)):

135. Դատարանն ուսումնասիրում է՝ արդյոք ներկայացված երկու գանգատները մեծամասամբ վերաբերում են միևնույն անձին, նույն փաստերին և նույն բողոքներին [Verein gegen Tierfabriken Schweiz \(VgT\) ընդդեմ Շվեյցարիայի \(թիվ 2\)](#) (ՄՊ), § 63):

136. Միջպետական գանգատը չի զրկում անձին իր սեփական պահանջը ներկայացնելու կամ շարունակելու հնարավորությունից:

137. Գանգատը սովորաբար կրախվի այս հոդվածին, եթե ունենա նույն փաստական հիմքը ինչ նախորդը: Դիմումատուի համար բավարար չէ վկայակոչել նոր տեղեկատվություն, եթե նա դա անում է իր հին բողոքները նոր իրավական հիմքերով ամրապնդելու համար ([I.J.L. ընդդեմ Միացյալ Թագավորությունների](#) (որոշում), [Mann ընդդեմ Միացյալ Թագավորությունների and Portugal](#) (որոշում)) կամ չկարողանալով փոփոխել իր նախկին գանգատի մերժման հիմքերը՝ ներպետական օրենսդրության մասին տրամադրում է լրացուցիչ տեղեկություն ([X ընդդեմ Միացյալ Թագավորությունների](#), Հանձնաժողովի 1981 թվականի հուլիսի 10-ի որոշում): Որպեսզի Դատարանը քննի նախկին գանգատի նույն փաստերին վերաբերող գանգատը, դիմումատուն պետք է իրապես ներկայացնի նոր բողոք կամ տրամադրի նոր տեղեկություն, որը նախկինում Դատարանի կողմից չի քննվել ([Kafkaris ընդդեմ Կիպրոսի](#) (որոշում), § 68):

138. Դատարանը պարզել է, որ գանգատն ըստ էության նույնը չէր ինչ նախորդը՝ [Massuero ընդդեմ Բուլղարիայի](#) (որոշում), [Riener ընդդեմ Բուլղարիայի](#), § 103, [Chappex ընդդեմ Շվեյցարիայի](#) (որոշում), [Yurttas ընդդեմ Թուրքիայի](#), §§ 36-37, [Sadak ընդդեմ Թուրքիայի](#), §§ 32-33, [Patera ընդդեմ Չեխիայի Հանրապետության](#) (որոշում) (այլ միջազգային աստիճանի ներկայացված բողոքներով փաստերի քննությունը անընդունելի է, բայց հաջորդական փաստերի մասին նոր տեղեկատվությունն ընդունելի է): Ի հակադրումն վերը նշվածի՝ այս գործերով Դատարանը գտել է, որ գանգատը կամ բողոքը ըստ էության նույնն էր՝ [Moldovan and Others ընդդեմ Ռումինիայի](#) (որոշում), [Hokkanen ընդդեմ Ֆինլանդիայի](#) (որոշում), [Adesina ընդդեմ Ֆրանսիայի](#) (որոշում), [Bernardet ընդդեմ Ֆրանսիայի](#) (որոշում), [Gennari ընդդեմ Իտալիայի](#) (որոշում), [Manuel ընդդեմ Պորտուգալիայի](#) (որոշում):

2. Ըստ էության նույն հարցն է, որն արդեն քննվել է կամ որն արդեն հանձնվել է միջազգային քննության կամ կարգավորման այլ ընթացակարգի

139. 35-րդ հոդվածի 2(բ) կետի երկրորդ պայմանը նպատակ ունի խուսափել այնպիսի իրավիճակներից, երբ մի քանի միջազգային մարմին միաժամանակ զբաղվում է ըստ էության նույն գանգատի քննությամբ: Այսպիսի իրավիճակը Կոնվենցիայի տառի և ոգու հետ կլինի անհամատեղելի, որը փորձում է խուսափել միևնույն հարցի կապակցությամբ միջազգային վարույթների բազմակիությունից (*OAQ Neftyanaya Kompaniya Yukos ընդդեմ Ռուսաստանի*, § 520, *Eğitim Egitimve Bilim Emekçileri Sendikası ընդդեմ Թուրքիայի*, § 37). այդ իսկ պատճառով անհրաժեշտ է, որպեսզի Դատարանն այս հարցը քննարկի իր նախաձեռնությամբ (*POA and Others ընդդեմ Միացյալ Թագավորությունների* (որոշում), § 27):

140. Որոշելու համար, թե արդյոք Կոնվենցիայի դրույթի ուժով իր իրավագործությունը կբացառվի, Դատարանը պետք է որոշի արդյոք ներկայացված գործը ըստ էության նույնն է, ինչ արդեն զուգահեռ ներկայացվել է քննության, և եթե այո, արդյոք միաժամանակ իրականացվող դատավարությունը 35-րդ հոդվածի 2(բ) կետի իմաստով, կարող է համարվել «միջազգային քննության կամ կարգավորման այլ ընթացակարգ»:

141. Դատարանն ընդգծել է, որ զուգահեռաբար այլ դատավարությանը ներկայացնելու ամսաթիվը չէ, որ որոշիչ է այս հարցում, բայց արդյոք այն ընթացքում, երբ ինքը քննում է գործը, այդ դատավարության արդյունքում ըստ էության որոշում է կայացվել (*Peraldi ընդդեմ Ֆրանսիայի* (որոշում)):

(ա) Գործերի նմանության գնահատումը

142. Գործերի նմանության գնահատումը սովորաբար ներառում է համապատասխան վարույթների մասնակիցների, նրանց հիմնված իրավական հիմքերի, բողոքների շրջանակի և պահանջված հատուցման տեսակների համեմատություն (*OAQ Neftyanaya Kompaniya Yukos ընդդեմ Ռուսաստանի*, § 521, *Greek Federation of Bank Employee Unions ընդդեմ Հունաստանի* (որոշում), § 39):

143. Դատարանը հետևաբար հաստատում է, որ ինչպես վերը նշված 35-րդ հոդվածի 2(բ) կետի առաջին պայմանի դեպքում՝ արդյոք տարբեր միջազգային ինստիտուտներին ներկայացված գանգատները վերաբերում են ըստ էության նույն անձին, նույն փաստերին և բողոքներին (*Karoussiotis ընդդեմ Պորտուգալիայի*, § 63, *Pauger ընդդեմ Ավստրիայի*, Հանձնաժողովի որոշում):

144. Օրինակ՝ եթե երկու ինստիտուտների առջև հանդես եկող բողոք բերողները նույն անձինք չեն, Դատարան ներկայացված «գանգատը» չի կարող համարվել «արդեն միջազգային քննության կամ կարգավորման այլ ընթացակարգի հանձնված ըստ էության նույն խնդիր» (*Folgerø and Others ընդդեմ Նորվեգիայի* (որոշում)): Այսպիսով, Դատարանը գտել է, որ այն դեպքում, երբ այլ միջազգային ընթացակարգը հարուցվել է ոչ կառավարական կազմակերպության կողմից (*Celniku ընդդեմ Հունաստանի*, §§ 39-41, *Illi and Others ընդդեմ Բելգիայի* (որոշում)) կամ վերջինիս հետ փոխկապակցված միությունների կոնֆեդերացիայի (*Eğitim Egitimve Bilim Emekçileri Sendikası ընդդեմ Թուրքիայի*, § 38) և ոչ հենց դիմումատուների կողմից, իրեն ներկայացված գանգատը քննել խանգարող հանգամանք չկա:

145. Այնուամենայնիվ, Դատարանը վերջերս հաստատել է՝ եթե ներկայացված գանգատը այլ միջազգային մարմին (Աշխատանքի միջազգային կազմակերպություն) ներկայացված գանգատի հետ հիմնականում նույնական է, սակայն, գանգատը ներկայացվել է այն անձանց կողմից, ովքեր չէին և չէին էլ կարող լինել այդ նախկին գանգատի կողմ, քանի որ ընթացակարգն, ըստ էության, հավաքական էր և որպես դիմումատու հանդես են եկել առևտրային միություններ և գործատուների ընկերություններ, գանգատն այդ մարմին ներկայացված գանգատի հետ պետք է համարվի ըստ էության նույնը: Դա պայմանավորված է նրանով, որ անհատական դիմումատուները պետք է դիտարկվեն որպես դատավարության հետ սերտ կապված, իսկ այդ մարմին ներկայացրած նրանց բողոքները, իրենց կարգավիճակով պայմանավորված՝ խնդրո առարկա առևտրային միությունների պաշտոնատար անձանց [անունից ներկայացված]: Դատարանում նրանց հանդես գալը թույլատրելի հավասարազոր կլիներ Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 2(բ) կետը շրջանցելուն ([POA and Others ընդդեմ Միացյալ Թագավորությունների](#) (որոշում), §§ 30-32):

(բ) «Այլ միջազգային քննություն կամ կարգավորում» հասկացությունը

146. 35-րդ հոդվածի 2(բ) կետի շրջանակներում գնահատում իրականացնելիս Դատարանը պետք է որոշի, արդյոք զուգահեռ իրականացվող դատավարությունն ընդունելիության չափանիշների իմաստով այլ միջազգային քննություն է (նույն տեղում, § 28):

147. Այս առնչությամբ Դատարանի քննությունը չի սահմանափակվում ձևական հաստատմամբ, այլ անհրաժեշտության դեպքում ենթադրում է այն հարցի քննությունը, թե արդյոք վերահսկող մարմնի բնույթով, ընթացակարգով և նրա կայացրած որոշման ազդեցությամբ պայմանավորված 35-րդ հոդվածի 2(բ) կետը բացառում է Դատարանի իրավագործությունը ([OAO Neftyanaya Kompaniya Yukos ընդդեմ Ռուսաստանի](#), § 522, [Karoussiotis ընդդեմ Պորտուգալիայի](#), § 62, [Greek Federation of Bank Employee Unions ընդդեմ Հունաստանի](#) (որոշում), § 33):

Ե. Գանգատի իրավունքի չարաշահումը

Հոդված 35, կետ 3 (ա)՝ Ընդունելիության չափանիշ

«3. Դատարանն անընդունելի է համարում 34-րդ հոդվածին համապատասխան ներկայացված ցանկացած անհատական գանգատ, եթե գտնում է, որ.

(ա) ... գանգատ ներկայացնելու իրավունքը չարաշահվում է (...),»

1. Ընդհանուր սահմանում

148. 35-րդ հոդվածի 35-ի 3(ա) կետի իմաստով «չարաշահում» հասկացությունը պետք է ընկալվի իր սովորական նշանակությամբ՝ ընդհանուր իրավական տեսության համաձայն, մասնավորապես՝ որպես իրավունքի՝ իր ստեղծման նպատակներից տաբերվող՝ այլ նպատակների համար վնասակար իրականացում: Համապատասխանաբար, դիմումատուի ցանկացած վարքագիծ, որն ակնհայտորեն հակասում է Կոնվենցիայով նախատեսված անհատական գանգատի իրավունքի

նպատակին և խոչնդոտում է Դատարանի պատշաճ գործունեությունը կամ վարույթների պատշաճ իրականացումը, հանդիսանում է գանգատի իրավունքի չարահաշում ([Miroļubovs and Others](#) [ընդդեմ Լատվիայի](#), §§ 62 և 65):

149. Տեխնիկական տեսանկյունից, 35-րդ հոդվածի 35-ի 3(ա) կետի ձևակերպումից պարզ է, որ իրավունքի չարաշահմամբ ներկայացված գանգատը պետք է հայտարարվի անընդունելի, այլ ոչ թե հանվի քննվող գործերի ցանկից: Իրապես, Դատարանը շեշտել է, որ իրավունքի չարաշահման հիմքով գանգատի մերժումը բացառիկ միջոց է (նույն տեղում, § 62): Այն գործերը, որոնցով Դատարանը գտել է, որ առկա է գանգատի իրավունքի չարաշահում, կարող են խմբավորվել հինգ տիպական կատեգորիաներում՝ ապակողմնորոշող տեղեկատվություն, վիրավորական խոսքերի օգտագործում, բարեկամական կարգավորման ընթացակարգը գաղտնի պահելու պարտականության խախտում, Դատարան դիմելու իրավունքի չարաշահմամբ ներկայացված կամ անհիմն գանգատ և մնացած բոլոր դեպքերը, որոնք սպառնիչ հնարավոր չէ թվարկել:

2. Դատարանին ապակողմնորոշելը

150. Գանգատի իրավունքը չարաշահվել է, եթե այն Դատարանին մոլորեցնելու նպատակով գիտակցաբար հիմնված է ոչ ճշմարիտ փաստերի վրա ([Varbanov](#) [ընդդեմ Բուլղարիայի](#), § 36): Այսպիսի չարաշահումների ամենալուրջ և ակնհայտ օրինակներն են, առաջինը՝ կեղծ ինքնությամբ գանգատի ներկայացումը ([Drijfhout](#) [ընդդեմ Նիդերլանդների](#) (որոշում), §§ 27-29), և երկրորդը՝ Դատարան ուղարկվող փաստաթղթերի կեղծումը ([Jian](#) [ընդդեմ Ռումինիայի](#) (որոշում), [Bagheri and Maliki](#) [ընդդեմ Նիդերլանդների](#) (որոշում), [Poznanski and Others](#) [ընդդեմ Գերմանիայի](#) (որոշում)): Այսպիսի չարաշահումը կարող է իրականացվել նաև անփութությամբ, երբ դիմումատուն, ի սկզբանե Դատարանին չի ներկայացնում գործի քննության համար կարևոր նշանակություն ունեցող տեղեկություններ ([Al-Nashif](#) [ընդդեմ Բուլղարիայի](#), (որոշում), § 89, [Kerechashvili](#) [ընդդեմ Վրաստանի](#) (որոշում)): Գանգատը կարող է մերժվել իրավունքի չարաշահման հիմքով այն դեպքում, երբ Դատարանում իրականացվող վարույթի ընթացքում նոր կարևոր զարգացումներ են տեղի ունենում, սակայն դիմումատուն, Դատարանի կանոնակարգով նախատեսված իր ակնհայտ պարտավորության խախտմամբ Դատարանում չի բացահայտում այդ տեղեկությունը՝ խոչընդոտելով Դատարանի կողմից փաստերի մասին ամբողջական տեղեկություն ունենալով գործը լուծելու հնարավորությունը ([Hadrabová and Others](#) [ընդդեմ Չեխիայի Հանրապետության](#) (որոշում), [Predescu](#) [ընդդեմ Ռումինիայի](#), §§ 25-27):

151. Ավելին, դիմումատուն ամբողջությամբ պատասխանատու է Դատարանում իր փաստաբանի կամ իրեն ներկայացնող այլ անձի վարքի համար: Ներկայացուցչի կողմից ցանկացած անգործություն վերագրվում է դիմումատունին և կարող է հանգեցնել գանգատի իրավունքի չարաշահմամբ բերված լինելու հիմքով նրա գանգատի մերժմանը ([Bekauri](#) [ընդդեմ Վրաստանի](#) (նախնական առարկություններ), §§ 22-25, [Migliore and Others](#) [ընդդեմ Իտալիայի](#) (որոշում)):

152. Դատարանին ապակողմնորոշելու մտադրությունը միշտ պետք է հաստատվի բավարար հստակությամբ ([Melnik](#) [ընդդեմ Ուկրաինայի](#), §§ 58-60, [Nold](#) [ընդդեմ Գերմանիայի](#), § 87, [Miszczyski](#) [ընդդեմ Լեհաստանի](#) (որոշում)):

153. Նույնիսկ այն դեպքում, երբ Դատարանի ըստ էության վճիռը դարձել է վերջնական և վճռից պարզ է դառնում, որ դիմումատուն թաքցրել է այնպիսի

փաստ, որը գանգատի քննության համար կարող էր էական նշանակություն ունենալ, Դատարանը կարող է վերանայման ընթացակարգով վերանայել իր վճիռը (Դատարանի կանոնակարգի 80-րդ կանոնով նախատեսված) և գանգատի իրավունքի չարաշահման հիմքով՝ մերժել գանգատը ([Gardean and S.C. Grup 95 SA ընդդեմ Ռումինիայի](#) (վերանայում), §8 12-22): Վճռի վերանայումը հնարավոր է միայն այն դեպքերում, երբ պատասխանող կառավարությունը Դատարանի քննության ժամանակ ողջամտորեն չէր կարող իմանալ խնդրո առարկա փաստի մասին, և եթե [կառավարությունը] այդ փաստի մասին իմանալուն հաջորդող վեց ամսվա ընթացքում՝ 80-րդ կանոնի 1-ին կետին համապատասխան, դիմել է վերանայման համար:

3. Վիրավորական խոսքեր

154. Գանգատի իրավունքի չարաշահում կդիտարկվի Դատարանի հետ հաղորդակցության ժամանակ դիմումատուի կողմից անհարգալից, վիրավորական, սպառնացող կամ սադրիչ լեզու օգտագործելը, անկախ նրանից, թե դա ուղղված է պատասխանող կառավարությանը, վերջինիս լիազոր ներկայացուցչին, պատասխանող պետության մարմիններին, անմիջապես Դատարանին, դատավորներին, Ռեգիստրին կամ դրա անդամներին ([Řehák ընդդեմ Չեխիայի Հանրապետության](#) (որոշում), [Düringer and Grunge ընդդեմ Ֆրանսիայի](#) (որոշում), [Stamoulakatos ընդդեմ Միացյալ Թագավորությունների](#) (Հանձնաժողովի որոշում)):

155. Վիրավորական համարվելու համար բավարար չէ, որ դիմումատուի խոսքը լինի վիրավորական, բանավիճող կամ հեզնական. այն պետք է գերազանցի «նորմալ, քաղաքակիրթ և օրինական քննադատության սահմանները» ([Di Salvo ընդդեմ Իտալիայի](#) (որոշում), [Apinis ընդդեմ Լատվիայի](#) (որոշում), հակադրվող օրինակի համար, տե՛ս [Aleksanyan ընդդեմ Ռուսաստանի](#), §8 116-18): Եթե վարույթի ընթացքում, Դատարանի պաշտոնական նախագգուշացումից հետո, դիմումատուն դադարում է օգտագործել վիրավորական արտահայտություններ, հստակորեն վերացնում է դրանք, կամ որպես առավել ընդունելի տարբերակ, ներողություն է հայցում՝ գանգատը իրավունքի չարաշահման հիմքով այլևս չի մերժվում ([Chernitsyn ընդդեմ Ռուսաստանի](#), §8 25- 28):

4. Բարեկամական կարգավորման ընթացակարգի գաղտնիության սկզբունքի խախտումը

156. Դիմումատուի կողմից բարեկամական կարգավորման ընթացակարգի գաղտնիության պահպանման պարտականության կանխամտածված խախտումը, որը կողմերի վրա դրվել է Կոնվենցիայի 39-րդ հոդվածի 2-րդ կետով և Դատարանի Կանոնակարգի 62-րդ կանոնի 2-րդ կետով, կարող է դիտարկվել որպես գանգատի իրավունքի խախտում և գանգատի մերժման հիմք հանդիսանալ ([Hadrabová and Others ընդդեմ Չեխիայի Հանրապետության](#) (որոշում), [Popov ընդդեմ Սլովակիայի](#), § 48, [Mirolubovs and Others ընդդեմ Լատվիայի](#), § 66):

157. Որոշելու համար, թե արդյոք դիմումատուն խախտել է գաղտնիության պահպանման պարտականությունը, պետք է նախևառաջ որոշել այդ պարտականության սահմանները: Այն պետք է միշտ մեկնաբանվի ընդհանուր նպատակի լույսի ներքո, մասնավորապես, նպատակի հաշտության կնքմանը՝ պաշտպանելով կողմերին և Դատարանին հնարավոր ճնշումից:

Համապատասխանաբար, այն դեպքում, երբ հաշտության համաձայնագրին վերաբերող փաստաթղթերի բովանդակությունը երրորդ անձանց ներկայացնելը տեսականորեն կարող է որակվել Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3(ա) կետով սահմանված գանգատի իրավունքի չարաշահում, չի նշանակում, որ այսպիսի փաստաթղթերը ցանկացած երրորդ կողմին ցուցադրելը կամ դրանց մասին խոսելը բացարձակապես և անվերապահորեն արգելված է: Նման լայն և խիստ մեկնաբանությունը ռիսկի կենթարկի դիմումատուի օրինական շահերի պաշտպանությունը, օրինակ՝ երբ պաշտպանը փորձի տեղեկություն ստանալ գործի ինչ-որ դեպքի մասին, որի առնչությամբ ինքը լիազորված է Դատարանում հանդես գալ որպես ներկայացուցիչ: Ավելին, Դատարանի համար շատ դժվար, եթե ոչ անհնար, կլինի վերահսկել այսպիսի արգելքի պահպանումը: Կոնվենցիայի 39-րդ հոդվածի 2-րդ կետը և Դատարանի Կանոնակարգի 62-րդ կանոնի 2-րդ կետն արգելում են կողմերին օրինակ՝ ՋԼՄ-ի միջոցով, մեծ քանակությամբ անձանց կողմից կարդալու հնարավորություն ընձեռող նամակագրությամբ, կամ որիչ այլ ձևով հրապարակել քննարկվող տեղեկությունները, (նույն տեղում, § 68): Հետևաբար, սա այնպիսի վարքագիծ է, որը կհանգեցնի լուրջ հետևանքի՝ գանգատ ներկայացնելու իրավունքի չարաշահման:

158. Գանգատի իրավունքի չարաշահում դիտարկվելու համար, պարտադիր է, որ գաղտնի տեղեկատվության բացահայտումը լինի կանխամտածված: Դիմումատուի՝ բացահայտելու ուղղակի դիտավորությունը պետք է միշտ սահմանվի բավարար հստակությամբ, լոկ կասկածը բավարար չէ (նույն տեղում, § 66 *in fine*): Այս սկզբունքի կիրառման մասին կոնկրետ օրինակների համար, տե՛ս [Hadrabová and Others](#) [ընդդեմ Չեխիայի Հանրապետության](#) (որոշում) գործով որոշումը, որտեղ գանգատը մերժվել է, քանի որ դիմումատուները բացահայտորեն մեջբերել են հաշտության համաձայնագրերում Դատարանի Ռեգիստրի՝ իրենց երկրի Արդարադատության նախարարության հետ հաղորդակցությունում ձևակերպված առաջարկները, ինչն էլ իրենց գանգատի մերժման համար հիմք է հանդիսացել, տե՛ս նաև [Miroslubovs and Others](#) [ընդդեմ Լատվիայի](#) գործով վճիռը, որով գանգատը ճանաչվել է անընդունելի, քանի որ հստակ սահմանված չի եղել, որ բոլոր երեք դիմումատուները պատասխանատու են եղել գաղտնի տեղեկատվության բացահայտման համար. արդյունքը եղել է այն, որ Դատարանը մերժել է կառավարության նախնական առարկությունը:

5. Դատարան դիմելու իրավունքի չարաշահմամբ ներկայացված կամ որևէ իրական նպատակից զուրկ գանգատ

159. Դիմումատուն չարաշահում է գանգատի իրավունքը, եթե ինքը անդադար չարաշահում է Դատարան դիմելու իր իրավունքը և ակնհայտորեն անհիմն և անցյալում ներկայացված և անընդունելի ճանաչված գանգատների հետ նույնական գանգատներ է ներկայացնում Դատարան, ([M. ընդդեմ Միացյալ Թագավորությունների](#) և [Philis ընդդեմ Հունաստանի](#), երկուսն էլ Հանձնաժողովի որոշումներ են): Դատարանի համար անհիմն աշխատանք առաջացնող, իր գործառնություններին հակասող, չհիմնավորված և մշտապես դժգոհություն արտահայտող բողոքների, ինչպես դիմումատուների կամ նրանց լիազոր ներկայացուցիչների ակնհայտորեն չարաշահող վարքի քննությունը Դատարանի խնդիրը չէ [Bekauri ընդդեմ Վրաստանի](#) (նախնական առարկություններ), § 21, տե՛ս նաև [Migliore and Others](#) [ընդդեմ Իտալիայի](#) (որոշում), [Simitzi-Papachristou and Others](#)

[ընդդեմ Հունաստանի](#) (որոշում)):

160. Դատարանը կարող է նաև գանգատի իրավունքի չարաշահում համարել այն դեպքերը, երբ գանգատն ակնհայտորեն չունի որևէ իրական նպատակ, վերաբերում է փոքր գումարի կամ ընդհանուր առմամբ ոչ մի կապ չունի դիմումատուի օբյեկտիվ օրինակ շահերի հետ (նույն տեղում՝ [Bock ընդդեմ Գերմանիայի](#) (որոշում)): 2010թ.-ի հունիսի 1-ին Կոնվենցիային կից թիվ 14 Արձանագրությունն ուժի մեջ մտնելուց հետո այս տեսակի գանգատներն ավելի հեշտությամբ հանգուցալուծվում են Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3(բ) կետի շրջանակներում (էական վնասի բացակայություն):

6. Այլ գործեր

161. Երբեմն Դատարանի վճիռները և որոշումները և վարույթում գտնվող գործերն անդամ պետություններում օգտագործվում են ազգային մակարդակով՝ քաղաքական ելույթների նպատակով: Գանգատի՝ հրապարակայնության և քարոզչության ոգով ներշնչված լինելը գանգատի իրավունքի չարաշահում համարվելու համար հիմք չէ ([McFeeley and Others ընդդեմ Միացյալ Թագավորությունների](#) (Հանձնաժողովի որոշում), ինչպես նաև՝ [Khadzhaliyev and Others ընդդեմ Ռուսաստանի](#), §§ 66-67): Այնուամենայնիվ, չարաշահում կարող է լինել, եթե դիմումատուն՝ քաղաքական շահերից դրդված, հարցազրույցներ է տալիս մամուլին կամ հեռուստատեսությանը, որտեղ նա ցուցաբերում է Դատարանում ընթացքի մեջ գտնվող գործերի նկատմամբ անպատասխանատու և մակերեսային վերաբերմունք ([Georgian Labour Party ընդդեմ Վրաստանի](#)):

7. Պատասխանող պետության կողմից որդեգրման ենթակա մոտեցումը

162. Եթե պատասխանող պետությունը գտնում է, որ դիմումատուն չարաշահել է գանգատի իրավունքը, այդ մասին պետք է համապատասխանաբար տեղեկացնի Դատարանին և վերջինիս ուշադրությունը հրավիրի իր տրամադրության տակ եղած տեղեկատվությանը, որպեսզի Դատարանը կարողանա անել համապատասխան հետևություններ: Ոչ թե պատասխանող պետությունը, այլ Դատարանը պետք է վերահսկի Կոնվենցիայով և իր Կանոնակարգով դիմումատուի վրա դրված ընթացակարգային պարտավորությունների կատարումը: Այնուամենայնիվ, կառավարության և իր մարմինների կողմից Դատարանում ընթացակարգային պարտականությունների ենթադրյալ խախտման առնչությամբ դիմումատուի դեմ քրեական կամ կարգապահական վարույթներ հարուցելու վերաբերյալ սպառնալիքների գործադրումը Կոնվենցիայի 34-րդ հոդվածի իմաստով, որն արգելում է անհատական գանգատի իրավունքի արդյունավետ իրականացման ցանկացած միջամտություն, հնարավոր է խնդիր առաջացնի ([Miroļubovs and Others ընդդեմ Լատվիայի](#), § 70):

II. ԴԱՏԱՐԱՆԻ ԻՐԱՎԱԶՈՐՈՒԹՅԱՆԸ ՎԵՐԱԲԵՐՈՂ ԱՆԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԻՄՔԵՐԸ

Հոդված 35, կետ 3(ա)՝ Ընդունելիության չափանիշ

«3. Դատարանն անընդունելի է համարում 34-րդ հոդվածին համապատասխան ներկայացված ցանկացած անհատական զանգատ, եթե գտնում է որ.

ա. այն անհամատեղելի է սույն Կոնվենցիայի կամ դրան կից Արձանագրությունների դրույթների հետ»:

Հոդված 32՝ Դատարանի իրավագործությունը

«1. Դատարանի իրավասությունը տարածվում է այն բոլոր հարցերի վրա, որոնք վերաբերում են Կոնվենցիայի և դրան կից Արձանագրությունների դրույթների մեկնաբանման ու կիրառմանը, և որոնք իրեն հանձնվում են 33, 34, 46 և 47-րդ հոդվածների դրույթներով նախատեսված դեպքերում:

2. Դատարանի իրավագործության վերաբերյալ վեճի դեպքում հարցը լուծում է Դատարանը»:

Ս. *Ratione personae* անհամատեղելիությունը

1. Սկզբունքները

163. *Ratione personae* սկզբունքը պահանջում է, որ Կոնվենցիայի ենթադրյալ խախտումը լինի անդամ պետության կողմից կատարված կամ ինչ-որ կերպ վերագրվի նրան:

164. Եթե նույնիսկ պատասխանող պետությունը Դատարանի *ratione personae* իրավասության վերաբերյալ ոչ մի առարկություն չի ներկայացնում, Դատարանն իր իսկ նախաձեռնությամբ քննարկում է այդ հարցը ([Sejdić and Finci ընդդեմ Բոսնիայի և Հերցեգովինայի](#) (ՄՊ), § 27):

165. Մարդու իրավունքների միջազգային պայմանագրերով պաշտպանվող հիմնարար իրավունքները պետք է երաշխավորվեն իրենց տարածքում բնակվող ֆիզիկական անձանց համար՝ անկախ պետության հետագա կազմալուծումից կամ իրավահաջորդությունից ([Bijelić ընդդեմ Սոնտենեգրոյի և Սերբիայի](#), § 69):

166. Որպեսզի պետությունն իրեն պատկանող կազմակերպության [գործողությունների] համար ազատվի Կոնվենցիայով նախատեսված պատասխանատվությունից, անհրաժեշտ է, որպեսզի այդ կազմակերպությունը պետությունից ինստիտուցիոնալ և գոծառությամբ առումով լինի բավականաչափ անկախ ([Mykhaylenky and Others ընդդեմ Ուկրաինայի](#), §§ 43-45, [Cooperativa Agricola Slobozia-Hanesei ընդդեմ Սոլովայի](#), § 19):

167. Գանգատները Կոնվենցիային *ratione personae* անհամապատասխան կճանաչվեն հետևյալ հիմքերով.

- եթե դիմումատուն Կոնվենցիայի 34-րդ հոդվածի իմաստով չունի իրավունակություն ([Municipal Section of Antilly ընդդեմ Ֆրանսիայի](#) (որոշում), [Döşemealtı Belediyesi ընդդեմ Թուրքիայի](#) (որոշում), [Moretti and Benedetti ընդդեմ Իտալիայի](#)),
- եթե դիմումատուն չի կարող ապացուցել, որ ենթադրյալ խախտման զոհ է,
- եթե զանգատը ներկայացվել է անհատի դեմ ([X. ընդդեմ Միացյալ Թագավորությունների](#), (1976 թվականի դեկտեմբերի 10-ի Հանձնաժողովի որոշում) և [Durini ընդդեմ Իտալիայի](#) (Հանձնաժողովի որոշում)),
- եթե զանգատը ներկայացվել է այն պետության դեմ, որը չի վավերացրել Կոնվենցիան ([E.S. ընդդեմ Գերմանիայի](#) (Հանձնաժողովի որոշում)), կամ

նուդակի ներկայացվել է միջազգային կազմակերպության դեմ, որը չի միացել Կոնվենցիային ([Stephens ընդդեմ Կիպրոսի, Turkey and the United Nations](#) (որոշում), վերջին պարբերություն),

- եթե գանգատը վերաբերում է Կոնվենցիային կից այն Արձանագրությանը, որը Պատասխանող պետությունը չի վավերացրել ([Horsham ընդդեմ Միացյալ Թագավորությունների](#) (Հանձնաժողովի որոշում) և [De Saedeleer ընդդեմ Բելգիայի](#), § 68):

2. Իրավագործությունը

168. *Ratione loci* իրավասության բացակայությունը Դատարանին չի արգելում Կոնվենցիայի 1-ին հոդվածի իմաստով քննել դիմումատուների մեկ կամ ավելի անդամ պետության իրավասության տակ գտնվելու հարցը ([Drozd and Janousek ընդդեմ Ֆրանսիայի and Spain](#), § 90): Ուստի, դիմումատուների՝ պատասխանող պետության իրավասության տակ չլինելու առարկությունը գանգատում սովորաբար ներկայացվում է, որպես դիմումատուի՝ Կոնվենցիայի հետ *ratione personae* անհամատեղելի լինելու մասին պնդում (տե՛ս [Banković and Others ընդդեմ Բելգիայի and Others](#) (dec.) (ՄՊ), § 35, [Ilaşcu and Others ընդդեմ Սլովակիայի and Russia](#) (ՄՊ), § 300, [Weber and Saravia ընդդեմ Գերմանիայի](#) (որոշում)) գործերով պատասխանող կառավարությունների պնդումները):

169. Կոնվենցիայի հետ *ratione personae* համատեղելիությունը լրացուցիչ պահանջում է, որ ենթադրյալ խախտումները վերագրելի լինեն անդամ պետությանը ([Gentilhomme, Schaff-Benhadj and Zerouki ընդդեմ Ֆրանսիայի](#), § 20): Սակայն, վերջին գործերում վերաբերելիություն/պատասխանատվություն հարցերը քննարկվել են առանց *ratione personae* համատեղելիությունն ակնհայտորեն վկայակոչելու ([Assanidze ընդդեմ Վրաստանի](#) (ՄՊ), §§ 144 և հաջորդները, [Hussein ընդդեմ Ալբանիայի and 20 Other Contracting States](#) (որոշում), [Isaak and Others ընդդեմ Թուրքիայի](#) (որոշում), [Stephens ընդդեմ Մալթայի \(թիվ 1\)](#), § 45):

3. Պատասխանատվությունը և մեղավորության վերագրումը

170. Պետությունները կարող են պատասխանատվության ենթարկվել իրենց իշխանությունների՝ ներպետական սահմանների ներսում և դրանցից դուրս իրականացրած այն գործողությունների համար, որոնք պետության տարածքից դուրս հետևանքներ են առաջացրել ([Drozd and Janousek ընդդեմ Ֆրանսիայի and Spain](#), § 91, [Soering ընդդեմ Միացյալ Թագավորությունների](#), §§ 86 and 91, [Loizidou ընդդեմ Թուրքիայի](#) (նախնական առարկություններ), § 62): Սակայն, դա հանդիպում է բացառիկ դեպքերում ([Banković and Others ընդդեմ Բելգիայի and Others](#) (որոշում) (ՄՊ), § 71, [Ilaşcu and Others ընդդեմ Սլովակիայի and Russia](#) (ՄՊ), § 314), մասնավորապես, [այն դեպքերում], երբ անդամ պետությունը տվյալ տարածքում իրականացնում է արդյունավետ վերահսկողություն կամ նվազագույնն՝ ունի վճռորոշ ազդեցություն (նույն տեղում, §§ 314-316 և 392, [Catan and Others ընդդեմ Սլովակիայի and Russia](#) (ՄՊ), §§ 106-07, [Al-Skeini ընդդեմ Միացյալ Թագավորությունների](#) (ՄՊ), §§ 138-40), [Medvedyev and Others ընդդեմ Ֆրանսիայի](#) (ՄՊ), §§ 63-64), «վճռորոշ ազդեցություն» հասկացության համար, տե՛ս [Ilaşcu and Others ընդդեմ Սլովակիայի and Russia](#) (ՄՊ), §§ 315-16, see also [Banković and Others ընդդեմ Բելգիայի and Others](#) (ՄՊ) (որոշում), § 67 և հաջորդները և §§ 79-82, [Cyprus ընդդեմ Թուրքիայի](#) (ՄՊ), §§ 75-81, [Loizidou ընդդեմ Թուրքիայի](#) (նախնական

առարկություններ), § 52, [Markovic and Others ընդդեմ Իտալիայի](#) (ՄՊ), § 54, անուղղակիորեն՝ ստորադաս տեղական վարչական [մարմինների] միջոցով իրականացված և այդ պետության օգնությամբ հարատևած վճռորոշ ազդեցության հասկացության համար, տե՛ս [Catan and Others ընդդեմ Սոյդովայի and Russia](#) (ՄՊ), § 122:

171. Պետությունը կարող է պատասխանատվության ենթարկվել այն անձանց Կոնվենցիայով երաշխավորված իրավունքների խախտման համար, ովքեր [ֆիզիկապես] մեկ այլ պետության տարածքում են, բայց գտնվում են առաջին պետության՝ օրինական կամ ապօրինի գործունեություն ծավալող իրենց գործակալների միջոցով իրականացվող ազդեցության ներքո ([Issa and Others ընդդեմ Թուրքիայի](#), § 71, [Sánchez Ramirez ընդդեմ Ֆրանսիայի](#) (Հանձնաժողովի որոշում), [Öcalan ընդդեմ Թուրքիայի](#) (ՄՊ), § 91, [Medvedyev and Others ընդդեմ Ֆրանսիայի](#) (ՄՊ), §§ 66-67), արտերկրում իրականացվող ռազմական գործողությունների մասով, տե՛ս [Al-Skeini ընդդեմ Միացյալ Թագավորությունների](#) (ՄՊ), § 149):

Ինչ վերաբերում է Միավորված ազգերի կազմակերպության բազմազգ ուժերի իրականացրած գործողություններին, ապա դրանք պետությանը վերագրվում են այն ժամանակ, երբ միջազգային կազմակերպությունն այդ գործողությունների նկատմամբ արդյունավետ վերահսկողություն չի իրականացնում, ոչ էլ դրանց առնչությամբ օժտված է բարձրագույն իրավասությամբ, տե՛ս [Al-Jedda ընդդեմ Միացյալ Թագավորությունների](#) (ՄՊ), §§ 84-85: Միավորված ազգերի բուֆերային գոտում տեղի ունեցող գործողությունների մասով, տե՛ս [Isaak and Others ընդդեմ Թուրքիայի](#) (որոշում):

172. Այնպիսի տարածքների առնչությամբ ներկայացված գանգատները, որոնք իրավաբանորեն գտնվում են անդամ պետության իրավասության ներքո, սակայն չեն գտնվում այդ պետության արդյունավետ վերահսկողության (ազդեցության) տակ, կարող են համարվել Կոնվենցիայի դրույթների հետ անհամատեղելի ([An and Others ընդդեմ Կիպրոսի](#) (Հանձնաժողովի որոշում)), բայց անհրաժեշտ է ուշադրություն դարձնել Կոնվենցիայով սահմանված՝ պետության պոզիտիվ պարտավորություններին [Ilaşcu and Others ընդդեմ Սոյդովայի and Russia](#) (ՄՊ), §§ 312-13 և §§ 333 և հաջորդ, տե՛ս նաև [Stephens ընդդեմ Կիպրոսի, Turkey and the United Nations](#) (որոշում), [Azemi ընդդեմ Սերբիայի](#) (որոշում), [Ivantoc Ivantocand Others ընդդեմ Սոյդովայի and Russia](#), §§ 105-06, [Catan and Others ընդդեմ Սոյդովային Հանրապետության և Ռուսաստանի](#) (ՄՊ), §§ 109-10):

173. Սկզբունքորեն, համարվում է, որ անհատը՝ անդամ պետություններից մեկի տարածքում իր ֆիզիկական ներկայության ուժով գտնվում է նաև այդ պետության իրավասության ներքո, օրինակ՝ երբ պետության տարածքում տեղակայված է այն միջազգային կազմակերպության գլխամասային գրասենյակը, որի դեմ ուղղված են դիմումատուի բողոքները. այս սկզբունքն ունի բացառություններ: Այն փաստը, որ Միջազգային քրեական դատարանի նստավայրը և տարածքը գտնվում են Նիդեռլանդներում, բավարար հիմք չէ, որպեսզի միջազգային տրիբունալի կողմից դիմումատուի դատապարտման կապակցությամբ իրականացված որևէ ենթադրյալ գործողություն կամ անգործություն վերագրվի պետությանը ([Galić ընդդեմ Նիդեռլանդների](#) (որոշում), [Blagojević ընդդեմ Նիդեռլանդների](#) (որոշում), [Djokaba Lambi Longa ընդդեմ Նիդեռլանդների](#) (որոշում)): Միջազգային կազմակերպության մշտական նստավայր հանդիսացող անդամ պետության դեմ բերված գանգատի համար, տե՛ս [Lopez Cifuentes ընդդեմ Իսպանիայի](#) (որոշում), §§ 25-26: Անդամ պետության տարածքում միջազգային քաղաքացիական ադմինիստրացիայի

ընդունման համար, տե՛ս [Beric´ and Others ընդդեմ Բոսնիայի և Հերցեգովինայի](#) (որոշում), § 30:

174. Պետության՝ մեկ այլ պետությունում իր դեմ հարուցված վարույթում զուտ մասնակցությունը չի հանդիսանում արտատարածքային իրավագործության իրականացում ([McElhinney ընդդեմ Իռլանդիայի and the United Kingdom](#) (որոշում) (ՄՊ), [Treska ընդդեմ Ալբանիայի and Italy](#) (որոշում) և [Manoilescu and Dobrescu ընդդեմ Ռումինիայի and Russia](#) (որոշում), §§ 99-111):

175. Անդամ պետության՝ մասնավոր անձանց գործողությունների համար պատասխանատվությունը, որը սովորաբար քննարկվում է *ratione personae*-ի հետ համատեղելիության վերնագրի տակ, հնարավոր է նաև պայմանավորված լինի Կոնվենցիայում ամրագրված անհատական իրավունքների պայմաններով և այդ իրավունքներին կցված դրական պարտավորությունների շրջանակով (տե՛ս, օրինակ՝ [Söderman ընդդեմ Շվեդիայի](#) (ՄՊ), § 78, [Aksu ընդդեմ Թուրքիայի](#) (ՄՊ), § 59, [Siliadin ընդդեմ Ֆրանսիայի](#), §§ 77-81, [Beganović ընդդեմ Խորվաթիայի](#), §§ 69-71): Պետության պատասխանատվության հարցը Կոնվենցիային համապատասխան կարող է առաջ գալ մասնավոր անձանց այնպիսի գործողությունների առնչությամբ, որոնց նկատմամբ իշխանությունները հայտնել են իրենց լուր համաձայնությունը և ցուցաբերել են թողտվություն, ինչը խախտում է իր իրավասության տակ գտնվող անձանց՝ Կոնվենցիայով նախատեսված իրավունքները ([Ilaşcu and Others ընդդեմ Սլովակիայի and Russia](#) (ՄՊ), § 318) կամ նույնիսկ այն դեպքում, երբ այդ գործողություններն իրականացրել են վերջինիս տարածքում գտնվող օտարերկրյա պաշտոնյաները ([El-Masri ընդդեմ նախկին Հարավսլավիայի Մակեդոնական Հանրապետության](#) (ՄՊ), § 206):

176. Դատարանը սահմանել է նաև արտատարածքային պատասխանատվությանը վերաբերող սկզբունքներ, որոնք կարգավորում են հանձման ընթացակարգի շրջանակներում իրականացվող ձերբակալումը և կալանավորումը ([Stephens ընդդեմ Մալթայի \(թիվ 1\)](#), § 52):

4. Հարցեր՝ Կոնվենցիայի անդամ պետությունների՝ միջազգային կազմակերպության անդամակցության հետ կապված իրենց գործողությունների կամ անգործության համար հնարավոր պատասխանատվության վերաբերյալ

177. Կոնվենցիան չի կարող մեկնաբանվել այնպես, որ անդամ պետությունների՝ Միավորված ազգերի Անվտանգության խորհրդի բանաձևերով պայմանավորված գործողություններն ու անգործությունը, որոնք իրականացվում են մինչ Միավորված ազգերի միջազգային խաղաղությունն ու անվտանգությունն ապահովելու առաքելությունը կամ դրա ընթացքում, դառնան Դատարանի քննության առարկա: Դա կնշանակի միջամտություն Միավորված ազգերի առաքելության իրականացմանը ([Behrami ընդդեմ Ֆրանսիայի and Saramati ընդդեմ Ֆրանսիայի, Germany and Norway](#) (որոշում) (ՄՊ) §§ 146-52): Այնուամենայնիվ, Դատարանը որդեգրել է նոր մոտեցում Միավորված ազգերի Անվտանգության խորհրդի բանաձևերը կիրառող այն ներպետական ակտերի առնչությամբ, որոնք անմիջականորեն Միավորված ազգերին վերագրելի չեն և հետևաբար կարող են առաջ քաշել պետության պատասխանատվության հարցը:

178. Ինչ վերաբերում է միջազգային դատարանների որոշումներին՝ Դատարանն ընդհանուր առմամբ որոշել է, որ չունի *ratione personae* իրավագործություն

քննության առնելու նախկին Հարավսլավիայի միջազգային քրեական տրիբունալում իրականացված վարույթի վերաբերյալ գանգատները, քանի որ այն ստեղծվել է Միավորված ազգերի Անվտանգության խորհրդի բանաձևով ([Galić *ընդդեմ Նիդերլանդների*](#) (որոշում), [Blagojević *ընդդեմ Նիդերլանդների*](#) (որոշում), [Blagojević *ընդդեմ Նիդերլանդների*](#) (որոշում)): Բոսնիա և Հերցեգովինայի բարձր ներկայացուցիչների՝ Միավորված ազգերի Անվտանգության խորհրդի բանաձևից բխող իրավասությամբ ընդունված որոշմամբ պետական պաշտոնյաներին պաշտոնանկ անելու մասով, տե՛ս [Berić and Others *ընդդեմ Բոսնիայի և Հերցեգովինայի*](#) (որոշում), §§ 26 և հաջորդները:

179. Անդամ պետությանը չի կարելի վերագրել այն որոշումը կամ միջոցառումը, որն ընդունվել [կամ ձեռնարկվել] է այն միջազգային կազմակերպության կողմից, որին պետությունը անդամակցում է, այն դեպքում, երբ չի հաստատվել կամ նույնիսկ չի կարող ենթադրվել, որ սովորաբար այդ միջազգային կազմակերպության կողմից իրականացվող հիմնարար իրավունքների պաշտպանությունը «համարժեք չէ» Կոնվենցիայով նախատեսված պաշտպանությանը և այն դեպքում, երբ պետությունն անմիջականորեն կամ անուղղակի չի մասնակցել քննարկվող գործողության իրականացմանը ([Gasparini *ընդդեմ Իտալիայի and Belgium*](#) (որոշում)):

180. Այսպիսով, Դատարանը վճռել է, որ այն չունի *ratione personae* իրավասություն քննելու աշխատանքային տարաձայնությունների համատեքստում ներկայացվող այն գանգատները, որոնք ուղղված են միջազգային կազմակերպության իրավասու մարմնի կողմից կայացրած անհատական որոշումների դեմ և ամբողջովին ենթակա են այնպիսի կազմակերպության ներքին իրավական կարգավորմանը, որի իրավասուբյեկտությունն առանձնացված է իր անդամ պետության իրավասուբյեկտությունից, [և] այն դեպքում, երբ այդ պետություններն երբևէ անմիջականորեն կամ անուղղակի չեն միջամտել վեճի լուծմանը և իրենց ոչ մի գործողություն կամ անգործություն չի ենթադրում Կոնվենցիայով նախատեսված պատասխանատվություն (անհատական աշխատանքային վեճ Եվրոկոնսորտի հետ՝ [Boivin *ընդդեմ Եվրոպական միության 34 անդամ պետությունների*](#) (որոշում), կարգապահական վարույթ Ինտերնեյշնլ Օլիվ Քաունսիլ շրջանակներում՝ [Lopez Cifuentes *ընդդեմ Իսպանիայի*](#) (որոշում), §§ 28-29 և կարգապահական վարույթներ Եվրոպայի Խորհրդի շրջանակներում՝ [Beygo *ընդդեմ Եվրոպական միության 46 անդամ պետությունների*](#) (որոշում)): Եվրոպայի հանձնաժողովի պաշտոնյային աշխատանքից ազատելու և առաջին ատյանի դատարանում, ինչպես նաև Եվրոպական միության Արդարադատության դատարանում բողոքարկման ընթացակարգի մասով, տե՛ս [Connolly *ընդդեմ Եվրոպական միության 15 անդամ պետությունների միջև*](#) (որոշում): Եվրոպական արտոնագրի գրասենյակի վարույթի մասով, տե՛ս [Rambus Inc. *ընդդեմ Գերմանիայի*](#) (որոշում):

Ուսուցողական է համեմատել անդամ պետությունների ինքնավարության որոշակի մասը տնօրինող միջազգային կազմակերպության ներքին մեխանիզմում գոյություն ունեցող ենթադրյալ կառուցվածքային թերությունների վերաբերյալ Դատարանի քննության արդյունքները, որի ժամանակ վիճարկվել է այն փաստը, որ կազմակերպության կողմից հիմնական իրավունքների պաշտպանությունը «համարժեք» չէ Կոնվենցիայով երաշխավորված պաշտպանությանը ([Gasparini *ընդդեմ Իտալիայի and Belgium*](#) (որոշում)):

181. Դատարանն այլ մոտեցում է ցուցաբերում այն դեպքերում, որոնք

վերաբերում են պատասխանող անդամ պետության ուղղակի կամ անուղղակի միջամտությամբ վեճի քննարկմանը, որով բարձրացվել էր տվյալ պետության միջազգային պատասխանատվության հարցը, տե՛ս [Bosphorus Hava Yollari Turizm ve Ticaret Anonim Şirketi ընդդեմ Իռլանդիայի](#) (ՄՊ), § 153, [Michaud ընդդեմ Ֆրանսիայի](#), §§ 102-04, [Nada ընդդեմ Շվեյցարիայի](#) (ՄՊ), §§ 120-22, համեմատե՛ք [Behrami ընդդեմ Ֆրանսիայի and Saramati ընդդեմ Ֆրանսիայի, Germany and Norway \(որոշում\)](#) (ՄՊ), § 151: Տե՛ս նաև հետևյալ օրինակները.

- Եվրոպական միության շրջանակներում կնքված պայմանագրի հիման վրա դիմումատուին որպես ընտրող չգրանցելու որոշում՝ ([Matthews ընդդեմ Միացյալ Թագավորությունների](#) (ՄՊ)),
- Եվրոպական միության դիրեկտիվը գործողության մեջ դնող ֆրանսիական օրենքի կիրառումը դիմումատուի նկատմամբ ([Cantoni ընդդեմ Ֆրանսիայի](#) (ՄՊ)),
- գերմանական դատարանների մատչելիության իրավունքի մերժումը ([Beer and Regan ընդդեմ Գերմանիայի](#) (ՄՊ), [Waite and Kennedy ընդդեմ Գերմանիայի](#) (ՄՊ)),
- պատասխանող պետության տարածքում նախարարի՝ Եվրոպական միության իրավունքի շրջանակներում ստանձնած իրավական պարտավորության համապատասխան [արձակած] հրամանով իշխանությունների կողմից իրականացվող ազդարարումը ([Bosphorus Hava Yollari Turizm ve Ticaret Anonim Şirketi ընդդեմ Իռլանդիայի](#) (ՄՊ)). Եվրոպական միության Կանոնակարգն ինքնին հրապարակվել էր հետամուտ լինելով ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի բանաձևին, տե՛ս §§ 153-54),
- Եվրոպական միության արդարադատության դատարանին ուղղված ներպետական դատարանի դիմումը ([Cooperatieve Producentenorganisatie van de Nederlandse Kokkelvisserij U.A. v the Netherlands](#) (որոշում)):

182. Այսպիսով, ինչ վերաբերում է Եվրոպական միությանը, Համայնքների իրավունքի կիրառման առնչությամբ անդամ պետությունների դեմ ներկայացված գանգատները այս հիմքով պարտադիր չէ, որ անընդունելի ճանաչվեն ([Bosphorus Hava Yollari Turizm ve Ticaret Anonim Şirketi ընդդեմ Իռլանդիայի](#) (ՄՊ), § 137, [Matthews ընդդեմ Միացյալ Թագավորությունների](#) (ՄՊ), §§ 26-35):

183. Ինչ վերաբերում է Կոնվենցիայի անդամ չհանդիսացող Եվրոպական կառույցների դեմ բերված գանգատներին, գոյություն ունի ավելի բարձր մարմին, որը դրանք ճանաչում է *ratione personae* անընդունելի ([Confédération française démocratique du travail ընդդեմ Եվրոպական համայնքների](#) (Հանձնաժողովի որոշում), կամ որպես այլընտրանք՝ նրանց անդամ պետությունները՝ (ա) համատեղ և (բ) առանձին. տե՛ս [Bosphorus Hava Yollari Turizm ve Ticaret Anonim Şirketi ընդդեմ Իռլանդիայի](#) (ՄՊ), § 152 և թվարկված այլ հղումները, տե՛ս վերջերս կայացված [Cooperatieve Producentenorganisatie van de Nederlandse Kokkelvisserij U.A. ընդդեմ Նիդերլանդների](#) (որոշում)) որոշումը:

Այս դիրքորոշումն որդեգրվել է նաև Եվրոպական պատենտի գրասենյակի համար ([Lenzing AG ընդդեմ Գերմանիայի](#) (որոշում)):

184. Այն հարցի համար, թե արդյոք կարող է պետության վրա դրվել պատասխանատվություն իր Սահմանադրության առնչությամբ, որը հանդիսանում

է միջազգային պայմանագրի մաս, տե՛ս [Sejdić and Finci ընդդէմ Բոսնիայի և Հերցեգովինայի](#) (ՄՊ), § 30:

Բ. Ratione loci անհամատեղելիությունը

Հոդված 35, կետ 3 (ա)՝ Ընդունելության չափանիշ

«3. Դատարանն անընդունելի է համարում 34-րդ հոդվածին համապատասխան ներկայացված ցանկացած անհատական գանգատ, եթե գտնում է որ.

ա. այն անհամատեղելի է սույն Կոնվենցիայի կամ նրան կից Արձանագրությունների դրույթների հետ (...),»

Հոդված 32՝ Դատարանի իրավագործությունը

«1. Դատարանի իրավագործությունը տարածվում է այն բոլոր հարցերի վրա, որոնք վերաբերում են Կոնվենցիայի և նրան կից Արձանագրությունների դրույթների մեկնաբանման ու կիրառմանը, և որոնք նրա քննությանն են հանձնվում 33, 34, 46 և 47-րդ հոդվածների դրույթներով նախատեսված դեպքերում:

2. Դատարանի իրավագործության վերաբերյալ վեճի դեպքում՝ հարցը լուծում է Դատարանը»:

1. Սկզբունքները

185. Համատեղելիության՝ *ratione loci* [սկզբունքը] պահանջում է, որպեսզի Կոնվենցիայի ենթադրյալ խախտումները տեղի ունենցած լինեն պատասխանող պետության դատագործության ներքո գտնվող կամ նրա կողմից վերահսկվող տարածքում ([Cyprus ընդդէմ Թուրքիայի](#) (ՄՊ), §§ 75-81 և [Drozd and Janousek ընդդէմ Ֆրանսիայի and Spain](#), §§ 84-90):

186. Եթե գանգատները հիմնված են այնպիսի դեպքերի վրա, որոնք տեղի են ունեցել անդամ պետության տարածքից դուրս և այդ դեպքերի և իշխանությունների միջև որևէ կապ առկա չէ, ապա դրանք կճանաչվեն Կոնվենցիայի հետ *ratione loci* անհամատեղելի:

187. Եթե գանգատները վերաբերում են այնպիսի գործողությունների, որոնք տեղի են ունեցել անդամ պետության տարածքից դուրս, կառավարությունը կարող է ներկայացնել նախնական առարկություն առ այն, որ գանգատը *ratione loci* անհամատեղելի է Կոնվենցիայի դրույթների հետ ([Loizidou ընդդէմ Թուրքիայի](#) (նախնական առարկություններ), § 55, [Rantsev ընդդէմ Վիպրնուի and Russia](#), § 203): Նման առարկությունը կքննվի Կոնվենցիայի 1-ին հոդվածի ներքո (սույն հոդվածի իմաստով «իրավագործություն» հասկացողության համար տե՛ս [Banković and Others ընդդէմ Բելգիայի and Others](#) (որոշում) (ՄՊ), § 75):

188. Առարկությունները հաճախ ներկայացվում են պատասխանող պետության կողմից առ այն, որ գանգատն անընդունելի է, քանի որ *ratione loci* անհամատեղելի է Կոնվենցիայի դրույթների հետ այն հիմքով, որ վարույթի ընթացքում դիմումատուն բնակվում էր մեկ ուրիշ անդամ պետությունում, բայց վարույթ է հարուցել պատասխանող պետությունում, որովհետև կարգավորումներն ավելի բարենպաստ էին: Նման գանգատները Դատարանն ուսումնասիրում է նաև 1-ին հոդվածի տեսանկյունից ([Haas ընդդէմ Շվեյցարիայի](#) (որոշում)):

189. Սակայն, պարզ է, որ պետությունը պատասխանատու կլինի արտերկրում իր դիվանագիտական և հյուպատոսական ներկայացուցիչների գործողությունների համար, և *ratione loci* անհամատեղելիության հարցը կարող է առաջանալ դիվանագիտական առաքելությունների գործողությունների առնչությամբ ([X](#)

[ընդդեմ Գերմանիայի](#) (1965 թվականի սեպտեմբերի 25-ի Հանձնաժողովի որոշում) [Al-Skeini ընդդեմ Միացյալ Թագավորությունների](#) (ՄՊ), § 134, [M. ընդդեմ Դանիայի](#) (որոշում), Commission decision, § 1 և որոշման մեջ թվարկված հղումներ) կամ տվյալ պետությունում գրանցված կամ դրոշի ներքո թռչող օդանավերի վրա և նավերի տախտակամածին տեղի ունեցած գործողությունների առնչությամբ ([Banković and Others ընդդեմ Բելգիայի and Others](#) (dec.) (ՄՊ), § 73, [Hirsi Jamaa and Others ընդդեմ Իտալիայի](#) (ՄՊ), §§ 77 and 81):

190. Վերջապես, *ratione loci* իրավագործության բացակայության հաստատումը Դատարանին չի ազատում այն հարցի քննությունից, թե արդյոք դիմումատուն Կոնվենցիայի 1-ին հոդվածի իմաստով գտնվում է մեկ կամ մի քանի անդամ պետությունների իրավագործության ներքո ([Drozd and Janousek ընդդեմ Ֆրանսիայի and Spain](#), § 90):

Ուստի, առարկություններն առ այն, որ դիմումատուները չեն գտնվում պատասխանող պետության իրավասության շրջանակներում, սովորաբար ներկայացվում են որպես Կոնվենցիայի հետ *ratione personae* անհամատեղելի լինելու մասին պնդումներ (տե՛ս [Banković and Others ընդդեմ Բելգիայի and Others](#) (որոշում) (ՄՊ), § 35, [Ilascu and Others ընդդեմ Սլովակիայի and Russia](#) (ՄՊ), § 300, [Weber and Saravia ընդդեմ Գերմանիայի](#) (որոշում) գործերում պատասխանող կառավարության ներկայացրած դիրքորոշումները):

2. Հատուկ դեպքեր

191. Ինչ վերաբերում է կախյալ տարածքներին, գանգատը *ratione loci* անհամատեղելի կճանաչվի, եթե անդամ պետությունը Կոնվենցիայի 56-րդ հոդվածի համաձայն խնդրո առարկա տարածքում Կոնվենցիայի կիրառման վերաբերյալ հայտարարություն չի ներկայացրել [Gillow ընդդեմ Միացյալ Թագավորությունների](#), §§ 60-62, [Bui Van Thanh and Others ընդդեմ Միացյալ Թագավորությունների](#) (Հանձնաժողովի որոշում), [Yonghong ընդդեմ Պորտուգալիայի](#) (որոշում), [Chagos Islanders ընդդեմ Միացյալ Թագավորությունների](#) (որոշում), §§ 60-76): Դա ինքնրստինքյան ենթադրում է, որ նշվածը վերաբերում է նաև Կոնվենցիային կից արձանագրություններին: ([Quark Fishing Limited ընդդեմ Միացյալ Թագավորությունների](#) (որոշում)):

Այն դեպքում, երբ անդամ պետությունը 56-րդ հոդվածին համապատասխան ներկայացրել է նման հայտարարություն, անհամատեղելիության հարց չի առաջանա ([Tyrer ընդդեմ Միացյալ Թագավորությունների](#), §23):

192. Եթե կախյալ տարածքը դառնում է անկախ, ապա հայտարարությունն ինքնրստինքյան դադարում է գործել: Մետրոպոլիտ պետության դեմ ներկայացված հետագա գանգատները կճանաչվեն *ratione personae* անհամատեղելի ([Church of X. ընդդեմ Միացյալ Թագավորությունների](#) (Հանձնաժողովի որոշում)):

193. Եթե կախյալ տարածքը դառնա անդամ պետության մետրոպոլիտ տարածքի մաս, ապա Կոնվենցիան ինքնաբերաբար կտարածվի նաև տվյալ նախկին կախյալ տարածքի վրա ([Hingitq 53 and Others ընդդեմ Դանիայի](#) (որոշում)):

Գ. *Ratione temporis* անհամատեղելիությունը

Հոդված 35, կետ 3 (ա)՝ Ընդունելիության չափանիշ

«3. Դատարանը անընդունելի է համարում 34-րդ հոդվածի շրջանակներում ներկայացված ցանկացած անհատական գանգատ, եթե գտնում է որ.

ա. այն անհամատեղելի է սույն Կոնվենցիայի կամ նրան կից Արձանագրությունների դրույթների հետ»:

Հոդված 32՝ Դատարանի իրավասությունը

«1. Դատարանի իրավագործությունը տարածվում է այն բոլոր հարցերի վրա, որոնք վերաբերում են Կոնվենցիայի և նրան կից Արձանագրությունների դրույթների մեկնաբանմանն ու կիրառմանը, և որոնք իր քննությանն են հանձնվում 33, 34, 46 և 47-րդ հոդվածների դրույթներով նախատեսված դեպքերում:

2. Դատարանի իրավագործության շուրջ եղած վեճի դեպքում՝ հարցը լուծում է Դատարանը»:

1. Ընդհանուր սկզբունքներ

194. Միջազգային իրավունքի ընդհանուր կանոնների համաձայն՝ (պայմանագրերի հետադարձ ուժ չունենալու մասին սկզբունքը) Կոնվենցիան պարտադիր ուժ չունի պայմանավորվող կողմի այն գործողության կամ փաստի կամ իրավիճակի նկատմամբ, որը Կոնվենցիայի ուժի մեջ մտնելու պահից դադարել է գոյություն ունենալ ([Blečić ընդդեմ Խորվաթիայի](#) (ՄՊ), § 70, [Šilih ընդդեմ Սլովենիայի](#) (ՄՊ), § 140, [Varnava and Others ընդդեմ Թուրքիայի](#) (ՄՊ), § 130):

195. *Ratione temporis* իրավագործությունը տարածվում է միայն պատասխանող պետության կողմից Կոնվենցիայի կամ դրան կից Արձանագրությունների վավերացմանը հաջորդող ժամանակահատվածի վրա: Այնուամենայնիվ, Կոնվենցիան պայմանավորվող պետության համար մինչև Կոնվենցիայի [վավերացման] օրը պատճառված վնասը հատուցելու որևէ պարտավորություն չի սահմանում ([Kopecký ընդդեմ Սլովակիայի](#) (ՄՊ), § 38):

196. Վավերացման օրվանից սկսած՝ պետության բոլոր ենթադրյալ գործողությունները և անգործությունները պետք է համապատասխանեն Կոնվենցիային կամ դրան կից Արձանագրություններին, և հաջորդող փաստերը պետք է դիտարկվեն Դատարանի իրավագործության շրջանակներում, նույնիսկ, եթե դրանք հանդիսանում են արդեն գոյություն ունեցող իրավիճակի շարունակություն ([Almeida Garrett, Mascarenhas Falcão and Others ընդդեմ Պորտուգալիայի](#), § 43): Դատարանը, սակայն, կարող է հաշվի առնել վավերացման օրվան նախորդող փաստերը, այնքանով որքանով, որ դրանք ենթադրվում է նպաստել են վավերացմանը հաջորդող իրավիճակի ստեղծմանը կամ դրանց անդրադառնալը կարևոր է այդ ամսաթվին հաջորդող փաստերը հասկանալու համար ([Hutten-Czapska ընդդեմ Լեհաստանի](#) (ՄՊ), §§ 147-53, [Kuric and Others ընդդեմ Սլովենիայի](#) (ՄՊ), §§ 240-41):

197. Դատարանն իրավասու է վարույթի ցանկացած փուլում իր նախաձեռնությամբ քննարկել *ratione temporis* հարցը, քանի որ այն ավելի շատ Դատարանի իրավասության ներքո քննարկվող խնդիր է, քան իր նեղ իմաստով՝ ընդունելիության հարց ([Blečić ընդդեմ Խորվաթիայի](#) (ՄՊ), § 67):

2. Ընդհանուր սկզբունքների կիրառումը

(ա) Կոնվենցիայի վավերացման կամ Կոնվենցիայի ինստիտուտների իրավագործության ընդունման համար վճռորոշ ամսաթիվը

198. Սկզբունքորեն, Դատարանի ժամանակային իրավագործության որոշման համար հիմք է ընդունվում տվյալ կողմի համար Կոնվենցիայի և դրան կից Արձանագրությունների ուժի մեջ մտնելու օրը (տե՛ս օրինակ՝ [Šilih ընդդեմ Սլովենիայի](#) (ՄՊ), § 164):

199. Այնուամենայնիվ, 1950 թվականին Կոնվենցիան, պայմանավորվող կողմի հատուկ հայտարարություններից կախված՝ անհատական գանգատների քննությունը հանձնել է Հանձնաժողովի (25-րդ հոդված) և Դատարանի (46-րդ հոդված) իրավագործությանը: Այս հայտարարությունները հնարավոր է ենթակա լինեն սահմանափակումների, մասնավորապես՝ ժամանակային: Ինչ վերաբերում է այն երկրներին, որոնք այդպիսի հայտարարություններ ներկայացրել են Կոնվենցիայի վավերացումից հետո, Հանձնաժողովը և Դատարանն ընդունել են իրենց իրավասության ժամանակային սահմանափակումներն այն փաստերի առնչությամբ, որոնք տեղի են ունեցել Կոնվենցիայի ուժի մեջ մտնելու և տվյալ հայտարարությունն անելու միջև ընկած ժամանակահատվածում ([X. ընդդեմ Բուլղարիայի](#) (Հանձնաժողովի որոշում) և [Stamoulakatos ընդդեմ Հունաստանի \(թիվ 1\)](#), § 32):

200. Այն դեպքում, երբ պետության հայտարարությունում ժամանակային սահմանափակում առկա չի եղել, Կոնվենցիայի ինստիտուտները ճանաչել են իրենց իրավագործության ընդունման հետադարձ ուժը ([X. ընդդեմ Ֆրանսիայի](#) (Հանձնաժողովի՝ 1982 թվականի դեկտեմբերի 13-ի որոշում)):

Այս հայտարարություններում ներառված ժամանակային սահմանափակումները վավեր են այնքան ժամանակ, մինչև [Կոնվենցիային կից թիվ 11 Արձանագրության](#) 6-րդ հոդվածի ուժով ([Blečić ընդդեմ Խորվաթիայի](#) (ՄՊ), § 72) կորոշվի Կոնվենցիայի 34-րդ հոդվածի շրջանակներում անհատական գանգատներ ընդունելու վերաբերյալ Դատարանի իրավագործության հարցը: Դատարանը, հաշվի առնելով նախորդ համակարգն որպես ամբողջություն, գտել է, որ Հանձնաժողով անհատական գանգատ ներկայացնելու իրավունքը ճանաչող առաջին հայտարարության օրվանից սկսած, հայտարարությունն անելու և Դատարանի իրավագործությունը ճանաչելու միջև առկա ժամանակային տարբերությունից անկախ, իրավագործություն ունի ([Cankocak ընդդեմ Թուրքիայի](#), § 26, [Yorgiyadis ընդդեմ Թուրքիայի](#), § 24, [Varnava and Others ընդդեմ Թուրքիայի](#) (ՄՊ), § 133):

(բ) Հայտարարությանը կամ ուժի մեջ մտնելուն անմիջապես նախորդող կամ հաջորդող փաստեր

201. Դատարանի ժամանակային իրավագործությունը պետք է սահմանվի ենթադրյալ միջամտության վերաբերյալ փաստերի հիման վրա: Հետևաբար, յուրաքանչյուր գործում անհրաժեշտ է հստակեցնել ենթադրյալ միջամտության ճշգրիտ պահը: Այս կապակցությամբ Դատարանը պետք է հաշվի առնի դիմումատուի կողմից ներկայացված գանգատի փաստերը և Կոնվենցիայով երաշխավորված այն իրավունքի շրջանակը, որը ենթադրաբար խախտվել է ([Blečić ընդդեմ Խորվաթիայի](#) (ՄՊ), § 82, [Varnava and Others ընդդեմ Թուրքիայի](#) (ՄՊ), § 131):

202. Կիրառելով այս թեստը վճռորոշ ամսաթվին նախորդող կամ հաջորդող

տարբեր դատական որոշումների նկատմամբ՝ Դատարանը հաշվի է առնում այն վերջնական վճիռը, որն ինքնին կարող էր խախտել դիմումատուի իրավունքները, չնայած, որ առկա էին իրավական պաշտպանության միջոցներ, որոնք միայն նպաստել են, որ միջամտությունը շարունակվի ([Blečić *ընդդեմ Խորվաթիայի*](#) (ՄՊ), § 85, գործում Գերագույն դատարանի վճիռը, որը դադարեցրել էր դիմումատուի վարձակալության իրավունքը կամ [Mrkić *ընդդեմ Խորվաթիայի*](#) (որոշում)) գործում Համայնքի դատարանի վճիռը, (Սահմանադրական դատարանի որոշումը, որն [Blečić *ընդդեմ Խորվաթիայի*](#) (ՄՊ), § 85 գործում Գերագույն դատարանի որոշումը թողել էր ուժի մեջ կամ [Mrkić *ընդդեմ Խորվաթիայի*](#) (որոշում)) գործում Սահմանադրական դատարանի և Գերագույն դատարանի որոշումները):

Միջամտության փոխհատուցմանն ուղղված իրավական պաշտպանության միջոցների ձախողումը Դատարանի ժամանակային իրավագործություն չի ենթադրում ([Blečić *ընդդեմ Խորվաթիայի*](#) (ՄՊ), §§ 77-79): Դատարանը բազմիցս նշել է, որ ներպետական դատարանները պարտավոր չեն Կոնվենցիան հետադարձ ուժով կիրառել այն միջամտությունների նկատմամբ, որոնք տեղի են ունեցել մինչ վճռորոշ ամսաթիվը ([Varnava and Others *ընդդեմ Թուրքիայի*](#) (ՄՊ), § 130):

203. Այդ դեպքերի օրինակները ներառում են.

- միջամտություններ, որոնք տեղի են ունեցել մինչ վճռորոշ ամսաթիվը և դատարանի վերջնական որոշումների կայացումը ([Meltex Ltd *ընդդեմ Հայաստանի*](#) (որոշում)),
- միջամտություններ, որոնք տեղի են ունեցել վճռորոշ ամսաթվից հետո ([Lepojić *ընդդեմ Սերբիայի*](#), § 45, [Filipović *ընդդեմ Սերբիայի*](#), § 33),
- վճռորոշ ամսաթվից հետո կայացրած դատական ակտերում մինչ վճռորոշ ամսաթիվը վատ վերաբերմունքի արդյունքում ձեռք բերված ապացույցի օգտագործում ([Harutyunyan *ընդդեմ Հայաստանի*](#), § 50),
- սեփականության իրավունքի չեղյալ հայտարարելու մասին հայց, որը ներկայացվել է մինչ վճռորոշ ամսաթիվը, սակայն, հայցով որոշում կայացվել է վճռորոշ ամսաթվից հետո ([Turgut and Others *ընդդեմ Թուրքիայի*](#), § 73),
- սեփականության իրավունքի վերջնական դադարեցման օրը ([Fener Rum Patrikliği Patrikliği \(Ecumenical Patriarchy\) *ընդդեմ Թուրքիայի*](#) (որոշում)):

204. Տե՛ս նաև՝

- մինչ Հունաստանի՝ 25-րդ հոդվածին համապատասխան հայտարարություն ներկայացնելը հունական դատարանների կողմից դիմումատուի *in absentia* դատապարտումը ([Stamoulakatos *ընդդեմ Հունաստանի \(թիվ 1\)*](#), § 33),
- մինչ վավերացման օրը Կենտրոնական ընտրական հանձնաժողովի ընդունած անուղղակի որոշումը, համաձայն որ միջնորդությունը ստորագրելու վերաբերյալ անձնագրում կնիք չունեցող դիմումատուի խնդրանքը մերժվել է, չնայած այդ կապակցությամբ վարույթը հարուցվել էր տվյալ ամսաթվից հետո ([Kadikis *ընդդեմ Լատվիայի*](#) (որոշում)),
- դիմումատուին աշխատանքից ազատելը և վավերացումից առաջ նրա ներկայացրած քաղաքացիական հայցը, որին վավերացումից հետո հաջորդել է Սահմանադրական դատարանի որոշումը ([Jovanović *ընդդեմ Խորվաթիայի*](#) (որոշում)),
- դիմումատուների կազմակերպության ղեկավարումն Էկոնոմիկայի նախարարության կողմից նշանակված հանձնաժողովին փոխանցելու մասին

նախարարի հրամանը, որը դիմումատուներին զրկվել էր դատարանի մատչելիության իրավունքից, մինչդեռ դիմումատուների բողոքը մերժելու մասին Գերագույն դատարանը վճիռ կայացրել էր վճռորոշ ամսաթվից հետո ([Kefalas and Others ընդդեմ Հունաստանի](#), § 45),

- 46-րդ հոդվածի շրջանակներում արված հայտարարությունից հետո դիմումատուի՝ մինչ այդ ամսաթիվը լրագրողներին ներակայացրած հայտարարությունների հիման վրա դատապարտումը ([Zana ընդդեմ Թուրքիայի](#), § 42),
- դիմումատուի կազմակերպության տարածքի զննումը և փաստաթղթերի առգրավումը, մինչդեռ համապատասխան դատավարությունները սկսվել էին վավերացումից հետո ([Veeber ընդդեմ Էստոնիայի \(թիվ 1\)](#), § 55, տե՛ս նաև՝ [Kikots and Kikota ընդդեմ Լատվիայի](#) (որոշում):

205. Այնուամենայնիվ, եթե դիմումատուն հետագա վարույթների՝ Կոնվենցիային համապատասխանության վերաբերյալ ներկայացնում է առանձին զանգատ, Դատարանը կարող է հայտարարել, որ իրավական պաշտպանության միջոցների նկատմամբ ունի *ratione temporis* իրավագործություն (թերթի տպագրության ու տարածման կասեցման առաջին ատյանի դատարանի կարգադրության դեմ Գերագույն դատարան ներկայացված վճռաբեկ բողոքի մասով՝ [Kerimov ընդդեմ Ադրբեջանի](#) (որոշում), [Kotov ընդդեմ Ռուսաստանի](#) (ՄՊ), §§ 68-69 գործում բանկի ակտիվների անօրինական բաժանումը, որն իրականացվել էր մինչև վճռորոշ ամսաթիվը և մինչ այդ օրը ներկայացված քաղաքացիական պահանջը):

206. [Blečić ընդդեմ Խորվաթիայի](#) (ՄՊ) գործով հաստատված թեստը և չափանիշներն ունեն ընդհանուր բնույթ. այդ չափանիշները կիրառելու ժամանակ պետք է հաշվի առնել որոշ իրավունքների, ինչպիսիք են օրինակ՝ Կոնվենցիայի 2-րդ և 3-րդ հոդվածներով նախատեսված իրավունքները, առանձնահատուկ բնույթը ([Šilih ընդդեմ Սլովենիայի](#) (ՄՊ), § 147):

3. Հատուկ իրավիճակներ

(ա) Շարունակական խախտումներ

207. Կոնվենցիայի ինստիտուտներն ընդունել են իրենց *ratione temporis* իրավագործությունն այն իրավիճակների նկատմամբ, որոնք ենթադրում են մինչև Կոնվենցիայի ուժի մեջ մտնելն առաջացած և ուժի մեջ մտնելուց հետո շարունակվող շարունակական խախտումներ ([De Becker ընդդեմ Բելգիայի](#) (Հանձնաժողովի որոշում):

208. Դատարանը հետևել է այս մոտեցմանը սեփականության իրավունքին վերաբերող մի շարք գործերում՝

- ռազմածովային նավատորմի կողմից դիմումատուներին պատկանող հողի շարունակաբար անօրինական և առանց փոխհատուցման զբաղեցնելը, [Papamichalopoulos and Others ընդդեմ Հունաստանի](#), § 40),
- դիմումատուի՝ Հյուսիսային Կիպրոսում գտնվող սեփականության մատչելիության իրավունքի մերժում ([Loizidou ընդդեմ Թուրքիայի](#) (նախնական առարկություններ), §§ 46-47),
- ազգայնացված սեփականության դիմաց վերջնական փոխհատուցումը չվճարելը ([Almeida Garrett, Mascarenhas Falcão and Others ընդդեմ Պորտուգալիայի](#), § 43),

- դիմումատուի՝ իր սեփականության նկատմամբ տիրապետումը վերականգնելու և իր տան վարձակալության դիմաց համարժեք վարձավճար ստանալու շարունակական անհնարինությունը՝ պայմանավորված Լեհաստանի կողմից Կոնվենցիային կից թիվ 1 Արձանագրության վավերացումից առաջ և հետո գործող օրենքներով ([*Hutten-Czapska քնդդեմ Լեհաստանի*](#) (ՄՊ), §§ 152-53):

209. Սահմանափակումներ. անձին սեփականությունից կամ տնից զրկելն ընդհանուր առմամբ հանդիսանում է «մեկանգամյա գործողություն» և առնչվող իրավունքների նկատմամբ չի առաջացնում «զրկվածության» շարունակական իրավիճակ ([*Blečić քնդդեմ Խորվաթիայի*](#) (ՄՊ), § 86 և թվարկված հղումները): 1945 թվականին նախորդող կառավարման ռեժիմի ժամանակ սեփականությունից զրկելու առանձնահատուկ դեպքի մասով, տե՛ս՝ [*Preussische Treuhand GmbH & Co. KG a.A. քնդդեմ Լեհաստանի*](#) (որոշում), §§ 55-62 գործում թվարկված հղումները:

210. Կոնվենցիայի ցանկացած այլ հոդվածի խախտում ևս կարող է լինել շարունակական բնույթի (2-րդ հոդվածի և մինչ վճռորոշ ամսաթիվը մահապատժի դատապարտված դիմումատուների մասով, տե՛ս՝ [*Ilaşcu and Others քնդդեմ Սլովակիայի և Ռուսաստանի*](#) (ՄՊ), §§ 406-08, 8-րդ հոդվածի և մշտական կեցության ռեզիստրից «ջնջված» անձանց կեցության հարցը չկարգավորելու մասով, տե՛ս [*Kurić and Others քնդդեմ Սլովենիայի*](#) (ՄՊ), §§ 240-41):

**(բ) Վճռորոշ ամսաթվին նախորդող անհետացման դեպքերը
քննելու «շարունակական» ընթացակարգային
պարտավորությունը**

211. Անհետացումն «ակնթարթային» գործողություն կամ եղելություն չէ: Ընդհակառակը, Դատարանը անհետացումը դիտարկում է որպես յուրահատուկ երևույթ, որը բնութագրվում է որպես անհստակության և անվերահսկելիության շարունակական իրավիճակ, որտեղ առկա է տեղեկատվության պակաս կամ նույնիսկ տեղի ունեցածի դիտավորյալ քողարկում և տեղի ունեցածի մասին չշփոթեցնող տեղեկատվության տրամադրում: Ավելին, անհայտ կորած մարդու գտնվելու վայրի և ճակատագրի մասին բացատրություն չտրամադրելը հանգեցնում է շարունակական իրավիճակի: Այդ իսկ պատճառով, քննություն իրականացնելու ընթացակարգային պարտավորությունները կմնան անփոփոխ այնքան ժամանակ, քանի դեռ անձի ճակատագիրն անհայտ է. անհրաժեշտ քննությունը շարունակաբար չիրականացնելը կդիտարկվի որպես շարունակական խախտում, նույնիսկ եթե մահվան մասին կան ենթադրություններ ([*Varnava and Others քնդդեմ Թուրքիայի*](#) (ՄՊ), §§ 148-49): *Varnava*-ի գործով ստեղծված նախադեպի կիրառման մասով, տե՛ս [*Palić քնդդեմ Բոսնիայի և Հերցեգովինայի*](#), § 46:

**(գ) Հոդված 2-ով նախատեսված մահը հետաքննելու
ընթացակարգային պարտավորությունը. Դատարանի
ժամանակային իրավասությունից դուրս գտնվող փաստերի
առնչությամբ իրականացվող վարույթը**

212. Դատարանը տարբերակում է կասկածելի մահը կամ սպանությունը և կասկածելի անհետացումը քննելու պարտավորությունները:

Այսպիսով, Դատարանը գտնում է, որ Կոնվենցիայի 2-րդ հոդվածի իմաստով արդյունավետ քննություն իրականացնելու պոզիտիվ պարտավորությունը հանդիսանում է անջատելի (առանձին) պարտավորություն, և պետության համար կարող է առաջ գալ նույնիսկ այն դեպքում, երբ մահը վրա է հասել վճռորոշ ամսաթվից առաջ (*Šilih քնդդեմ Սլովենիայի* (ՄՊ), § 159 գործը վերաբերում է մահվան այն դեպքին, որը վրա էր հասել վճռորոշ ամսաթվից առաջ, իսկ իրականացվող քննության բացթողումներն ու թերությունները՝ դրանից հետո): Նմանատիպ պարտավորությունների կատարումը վերանայելու [Դատարանի] ժամանակային իրավագործությունն իրականացվում է նրա սահմանած սահմանափակումների շրջանակներում՝ հաշվի առնելով իրավական որոշակիության սկզբունքը (նույն տեղում, §§ 161-63): Նախ, միայն վճռորոշ ամսաթվից հետո կատարված ընթացակարգային գործողությունները և/կամ ցուցաբերած անգործությունն է (են) դիտարկվում Դատարանի ժամանակային իրավասության ներքո (նույն տեղում, § 162): Այնուհետև, Դատարանն ընդգծում է, որ ընթացակարգային պարտավորությունների ուժի մեջ մտնելու համար, անհրաժեշտ է, որպեսզի մահվան և Կոնվենցիայի՝ պատասխանող պետության համար ուժի մեջ մտնելու փաստերի միջև առկա լինի իրական կապ: Հետևաբար, որպեսզի այդ կապի առկայությունը հաստատվի, անհրաժեշտ է, որպեսզի հետևյալ երկու չափանիշները բավարարվեն. առաջինը՝ մահվան և Կոնվենցիայի ուժի մեջ մտնելու փաստերի միջև առկա ժամանակային հեռավորությունը պետք է լինի բավականաչափ կարճ (չգերազանցի տասը տարին), և երկրորդը՝ պետք է ապացուցվի, որ ձեռնարկվող ընթացակարգային քայլերի զգալի մասը (ներառյալ ոչ միայն անձի մահվան փաստի կապակցությամբ իրականացվող արդյունավետ քննությունը, այլ նաև մահվան պատճառների և մեղավոր անձանց բացահայտման նպատակով հարուցվող համապատասխան վարույթները) իրականացվել կամ պետք է իրականացվեր տվյալ պետության կողմից Կոնվենցիան վավերացնելուց հետո (*Janowiec and Others քնդդեմ Ռուսաստանի* (ՄՊ), §§ 145-48): Այնուամենայնիվ, Դատարանը չի բացառում, որ որոշակի հանգամանքներում կապի առկայությունը հնարավոր է հիմնավորվի նաև Կոնվենցիայի երաշխիքների և դրա հիմքում ընկած արժեքների իրական և արդյունավետ պահպանման անհրաժեշտությամբ (*Šilih քնդդեմ Սլովենիայի*, § 163): «Իրական կապի» կիրառման մասով, տե՛ս, օրինակ՝ *Sandru and Others քնդդեմ Ռումինիայի*, § 57, *Šilih*-ի գործով վճռի կիրառման մասով, տե՛ս *Çakir and Others քնդդեմ Կիպրոսի* (որոշում):

213. *Tuna քնդդեմ Թուրքիայի* գործում, որը վերաբերում էր խոշտանգումների արդյունքում վրա հասած մահվան, Դատարանը առաջին անգամ կիրառեց *Šilih*-ի վճռով սահմանված սկզբունքները՝ միասին քննելով դիմումատուների կողմից 2-րդ և 3-րդ հոդվածների զուգակցմամբ ներկայացված ընթացակարգային բողոքները: Դատարանը ևս մեկ անգամ նշել է ընթացակարգային պարտավորությունների «անջատելիության» սկզբունքները, մասնավորապես՝ այն երկու չափանիշները, որոնք կիրառվում են իր *ratione temporis* իրավագործությունն որոշելու համար, երբ տվյալ գործում իրավական առումով 2-րդ և 3-րդ հոդվածներին վերաբերող փաստերը տեղի են ունեցել իր իրավագործության ժամանակային սահմաններից դուրս, մինչդեռ ընթացակարգային հարցերին վերաբերող փաստերը (այն է՝ հաջորդող ընթացակարգը) առնվազն մասամբ տեղի են ունեցել այդ ժամանակային սահմաններում:

3-րդ հոդվածի ընթացակարգային կողմի վերաբերյալ բողոքներ ներկայացնող հետագա գանգատների մասով, տե՛ս օրինակ՝ [*Yatsenko ընդդեմ Ուկրաինայի*](#) և [*Jenița Mocanu and Others ընդդեմ Ռումինիայի*](#)։

214. Սակայն, արտասովոր հանգամանքներում, երբ «իրական կապի» չափանիշը բավարարված չէ, Դատարանը չի բացառում, որ կապը կարող է հիմնավորվել նաև Կոնվենցիայով նախատեսված երաշխիքների և արժեքների իրական և արդյունավետ պաշտպանության ապահովման անհրաժեշտությամբ ([*Šilih ընդդեմ Սլովենիայի*](#) (ՄՊ), § 163)։ «Կոնվենցիայի արժեքների» այս թեստը, որը գործում է որպես ընդհանուր կանոնից բացառություն՝ թույլատրելով, որ Դատարանի իրավագործությունը տարածվի նաև անցյալի իրադարձությունների վրա, կարող է կիրառվել միայն այն դեպքում, երբ [իրավագործության] առաջացման համար հիմք է հանդիսացել այնպիսի լայնամասշտաբ իրադարձությունը, որը հանգեցնում է Կոնվենցիայի ակունքների ժխտմանը (օրինակ՝ միջազգային իրավունքի հանցագործություններ), սակայն որը տեղի է ունեցել Կոնվենցիայի ընդունումից՝ 1950 թվականի նոյեմբերի 4-ից հետո։ Այսպիսով, պայմանավորվող կողմը չի կարող Կոնվենցիայով նախատեսված պատասխանատվություն կրել նույնիսկ միջազգային իրավունքի ամենալուրջ հանցագործությունների մասով քննություն չիրականացնելու համար, եթե դրանք նախորդել են Կոնվենցիայի ընդունմանը ([*Janowiec and Others ընդդեմ Ռուսաստանի*](#) (ՄՊ), §§ 149-51, գործը վերաբերում է 1940 թվականին Կատինի կոտորածների քննությանը, որոնք համապատասխանաբար Դատարանի *ratione temporis* իրավասությունից դուրս էին)։

(դ) Նախորդող փաստերի ուսումնասիրությունը

215. Դատարանն այն կարծիքին է, որ «Կոնվենցիայի վավերացմանը նախորդող փաստերը կարող է ուսումնասիրել այնքանով, որքանով որ դրանք ստեղծում են այնպիսի իրավիճակ, որը շարունակում է գոյություն ունենալ վավերացումից հետո կամ դրանք հաջորդող իրավիճակը հասկանալու համար կարևոր նշանակություն ունեն» ([*Broniowski ընդդեմ Լեհաստանի*](#) (որոշում) (ՄՊ), § 74)։

(ե) Դատարանի վարույթում գտնվող հայց կամ ազատությունից զրկում

216. Առանձնահատուկ իրավիճակ է առաջանում այն դատավարությունների տևողության վերաբերյալ ներկայացված բողոքների դեպքում (Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետ), որոնք սկսվել են մինչ Կոնվենցիայի վավերացումը, բայց շարունակվել վավերացումից հետո։ Չնայած Դատարանի իրավագործությունը տարածվում է վճռորոշ ամսաթվին նախորդող ժամանակահատվածի վրա, այն, որպես ուղեցույց, հաճախ հաշվի է առել մինչ այդ ժամանակահատվածը տեղի ունեցած դատավարությունների ընթացքը, օրինակ՝ [*Humen ընդդեմ Լեհաստանի*](#) (ՄՊ), §§ 58-59, [*Foti and Others ընդդեմ Իտալիայի*](#), § 53)։

Նույնը վերաբերում է 5-րդ հոդվածի 3-րդ կետի իմաստով նախնական կալանքին (տե՛ս [*Klyakhin ընդդեմ Ռուսաստանի*](#), §§ 58-59) կամ 3-րդ հոդվածի իմաստով կալանքի պայմաններին (տե՛ս [*Kalashnikov ընդդեմ Ռուսաստանի*](#), § 36)։

217. Ինչ վերաբերում է վարույթի անաչառությանը, Դատարանը կարող է ուսումնասիրել այն փաստը, թե արդյոք դատական քննության փուլում թույլ տված թերությունները կարող են հատուցվել վճռորոշ ամսաթվից առաջ իրականացված

հետաքննության ընթացքում տրամադրված ընթացակարգային երաշխիքներով ([Barberà, Messegué and Jabardo ընդդեմ Իսպանիայի](#), §§ 61 և 84): Այդ կապակցությամբ, Ստրասբուրգի դատավորները դատավարությունը դիտարկում են որպես ամբողջություն (տե՛ս նաև [Kerojärvi ընդդեմ Ֆինլանդիայի](#), § 41):

218. 5-րդ հոդվածի 5-րդ կետի իմաստով ընթացակարգային բողոքը չի կարող դիտարկվել Դատարանի ժամանակային իրավագործության շրջանակներում, երբ ազատությունից զրկելը տեղի է ունեցել մինչև Կոնվենցիայի ուժի մեջ մտնելը ([Korizno ընդդեմ Լատվիայի](#) (որոշում):

(զ) Միսալ դատապարտման համար փոխհատուցում ստանալու իրավունքը

219. Դատարանը հայտարարել է, որ իրավագործ է քննել Կոնվենցիային կից թիվ 7 Արձանագրության 3-րդ հոդվածի շրջանակներում բերված բողոքն, այն դեպքում, երբ անձը դատապարտվել է մինչև վճռորոշ ամսաթիվը, բայց դատապարտումը չեղյալ է հայտարարվել այդ օրվանից հետո ([Matveyev ընդդեմ Ռուսաստանի](#), § 38):

Դ. *Ratione materiae* անհամատեղելիությունը

Հոդված 35, կետ 3 (ա) Ընդունելիության չափանիշներ

«3. Հոդված 34 համաձայն՝ Դատարանը անընդունելի է համարում ցանկացած անհատական գանգատ, եթե գտնում է, որ՝

(ա) այն անհամատեղելի է Կոնվենցիայի կամ դրան կից Արձանագրության դրույթների հետ...»

Հոդված 32՝ Դատարանի իրավագործությունը

«1. Դատարանի իրավագործությունը տարածվում է այն բոլոր հարցերի վրա, որոնք վերաբերում են Կոնվենցիայի և դրան կից Արձանագրության կիրառմանը և մեկնաբանմանը, և որոնք իրեն հանձնվում են 33, 34, 46 և 47 հոդվածների դրույթով նախատեսված դեպքերում:

2. Դատարանի իրավագործության վերաբերյալ վեճի դեպքում՝ հարցը լուծում է Դատարանը»:

220. Գանգատի՝ Կոնվենցիայի հետ *ratione materiae* համատեղելիությունը բխում է Դատարանի՝ ըստ էության քննություն իրականացնելու իրավագործությունից: Որպեսզի բողոքը լինի Կոնվենցիայի հետ *ratione materiae* համատեղելի, անհրաժեշտ է, որպեսզի դիմումատուի վկայակոչած իրավունքը պաշտպանվի ուժի մեջ մտած Կոնվենցիայով և դրան կից Արձանագրություններով: Օրինակ՝ գանգատներն անընդունելի են, երբ վերաբերում են վարորդական վկայական ստանալու իրավունքին ([X. ընդդեմ Գերմանիայի](#) (Հանձնաժողովի 1977 թվականի մարտի 7-ի որոշում), ինքնորոշման իրավունքին ([X. ընդդեմ Նիդերլանդների](#) (Հանձնաժողովի որոշում)) և օտարերկրացիների՝ պայմանավորվող պետություն մուտք գործելու և այնտեղ ապրելու իրավունքին ([Peñafiel Salgado ընդդեմ Իսպանիայի](#) (որոշում), քանի որ այս իրավունքները, որպես այդպիսին, արտացոլված չեն Կոնվենցիայով երաշխավորված իրավունքների և ազատությունների շարքում:

221. Չնայած Դատարանն իրավասու չէ քննելու այլ միջազգային փաստաթղթերով պաշտպանվող իրավունքների ենթադրյալ խախտումները՝ Կոնվենցիայի տեքստում առկա եզրույթներն ու հասկացությունները սահմանելիս

Կոնվենցիայից բացի այն պետք է հաշվի առնի նաև միջազգային իրավունքի տարրերը (*Demir and Baykara* [ընդդեմ Թուրքիայի](#) (ՄՊ), § 85):

222. Վարույթի յուրաքանչյուր փուլում Դատարանը պարտավոր է քննարկել իր *ratione materiae* իրավասության հարցը, անկախ նրանից, թե Կառավարությունը զրկված է եղել այդ առարկությունը բարձրացնելու հարցից, թե՛ ոչ (*Tănase* [ընդդեմ Սոլովայի](#) (ՄՊ), § 131):

223. Այն գանգատները, որոնք վերաբերում են Կոնվենցիայի՝ պատասխանող պետության կողմից վերապահում արած դրույթին, ճանաչվում են Կոնվենցիայի հետ *ratione materiae* անհամատեղելի (օրինակ՝ *Kozlova and Smirnova* [ընդդեմ Ղազախստանի](#) (որոշում)), պայմանով, որ Դատարանը Կոնվենցիայի 57-րդ հոդվածի իմաստով այդ վերապահումը համարում է վավեր (տե՛ս *Belilos* [ընդդեմ Շվեյցարիայի](#)):

224. Ի հավելումն վերը նշվածի՝ Դատարանը *ratione materiae* իրավասություն չունի քննելու Դատարանի վճիռներից որևէ մեկով պայմանավորվող կողմերի համար նախատեսված պարտավորության կատարումը: Այն չի կարող նմանաբնույթ բողոքները քննելիս չմիջամտել Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի լիազորություններին, որը Կոնվենցիայի 46-րդ հոդվածի 2-րդ կետի ուժով վերահսկում է վճիռների կատարումը: Այնուամենայնիվ, Նախարարների կոմիտեի դերն այս ոլորտում չի նշանակում, որ Դատարանի հայտնաբերած խախտված իրավունքը վերականգնելու համար պատասխանող պետության ձեռնարկած միջոցառումները չեն կարող առաջացնել մի նոր՝ վճռով չորոշված խնդիր և այդպիսով ստեղծել գանգատի նոր առարկա, որը հնարավոր է քննվի Դատարանի կողմից (*Verein gegen Tierfabriken Schweiz (VgT)* [ընդդեմ Շվեյցարիայի \(թիվ 2\)](#) (ՄՊ), § 62): Այլ կերպ ասած, Դատարանը կարող է քննել այն բողոքը, որն առաջ է եկել իր վճիռներից մեկի կատարման համար ներպետական մակարդակում գործի վերաբացման ժամանակ տեղի ունեցած Կոնվենցիայի նոր խախտման արդյունքում (նույն տեղում, *Lyons* [ընդդեմ Միացյալ Թագավորությունների](#) (որոշում)):

225. Այնուամենայնիվ, գանգատները՝ *ratione materiae* անհամատեղելիության հիմքով անընդունելի ճանաչելու մասին որոշումների մեծամասնությունը սահմանափակվում է Կոնվենցիայի կամ դրան կից Արձանագրությունների հոդվածների շրջանակով, մասնավորապես՝ 6-րդ հոդվածով (արդար դատաքննության իրավունք), 8-րդ հոդվածով (անձնական և ընտանեկան կյանքը, բնակարանը և նամակագրությունը հարգելու իրավունք) և թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածով (սեփականության պաշտպանությունը):

*1. «Քաղաքացիական իրավունքների և պարտականությունների»
հասկացությունը*

Հոդված 6, կետ 1՝ Արդար դատաքննության իրավունք

«1. Յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են իր քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները ... ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք»:

**(ա) 6-րդ հոդվածի 1-ին կետի կիրառելիության ընդհանուր
պահանջները**

226. «Քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ»
70

հասկացությունը չի կարող մեկնաբանվել միայն պատասխանող պետության ներպետական իրավունքի տեսակետից. այն Կոնվենցիայից բխող «ինքնուրույն հասկացություն» է: Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետը կիրառվում է անկախ կողմերի կարգավիճակից, վեճը կարգավորող օրենսդրության բնույթից և գործը քննելու իրավագործություն ունեցող մարմնից ([Georgiadis *ընդդեմ Հունաստանի*](#), § 34):

227. Սակայն, այն սկզբունքը, որի համաձայն Կոնվենցիայում ներառված ինքնուրույն հասկացությունները պետք է մեկնաբանվեն ժամանակակից պայմաններին համապատասխան, Դատարանին թույլ չի տալիս 6-րդ հոդվածի 1-ին կետը մեկնաբանել այնպես, կարծես «քաղաքացիական» ածականը (ներառյալ ածականի՝ «քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ» կատեգորիայի համար սահմանած սահմանափակումները) տեքստում առկա չէ ([Ferrazzini *ընդդեմ Իտալիայի*](#) (ՄՊ), § 30):

228. 6-րդ հոդվածի 1-ին պարբերության վերաբերելիությունը քաղաքացիական գործերին, առաջին հերթին կախված է վեճի առկայությունից: Այնուհետև, վեճը պետք է վերաբերի «իրավունքներին և պարտականություններին», որոնք ներպետական իրավունքում առնվազն ճանաչված են: Ի վերջո, այս «իրավունքները և պարտականությունները» Կոնվենցիայի իմաստով պետք է լինեն քաղաքացիական՝ չնայած 6-րդ հոդվածն ինքնին պայմանավորվող կողմերի իրավական համակարգերում առանձնահատուկ բովանդակություն դրանց չի հաղորդում ([James and Others *ընդդեմ Միացյալ Թագավորությունների*](#), § 81):

(բ) «Վեճ» եզրույթը

229. «Վեճ» բառին (ֆրանսերեն՝ *contestation*) պետք է տրվի ավելի շատ նյութական, քան ձևական նշանակություն ([Le Compte, Van Leuven and De Meyere *ընդդեմ Բելգիայի*](#), § 40): Անհրաժեշտ է այն դիտարկել արտաքին դրսևորման և լեզվական իմաստի սահմաններից դուրս և յուրաքանչյուր գործի հանգամանքներին համապատասխան՝ կենտրոնանալ առկա իրավիճակի վրա (նույն տեղում, [Gorou *ընդդեմ Հունաստանի \(թիվ 2\)*](#) (ՄՊ), §§ 27 և 29): 6-րդ հոդվածը չի վերաբերում վեճ չենթադրող և միակողմ ընթացակարգին, որտեղ հակառակ շահեր հետապնդող կողմերը բացակայում են և որը կիրառվում է միայն այն դեպքում, երբ իրավունքների վերաբերյալ վեճ առկա չէ ([Alaverdyan *ընդդեմ Հայաստանի*](#) (որոշում), § 33):

230. «Վեճը» իր բնույթով պետք է լինի իրական և կարևոր ([Sporrong and Lönnroth *ընդդեմ Շվեդիայի*](#), § 81): Սա բացառում է օրինակ այն քաղաքացիական վարույթը, որը վերաբերում է բանտում ՁԻԱՀ-ով վարակված բանտարկյալների առնչությամբ բանտի կառավարման մարմինների դեմ բերված բողոքին ([Skorobogatykh *ընդդեմ Ռուսաստանի*](#) (որոշում): Օրինակ՝ Դատարանն ընդունել է, որ «վեճն» իրական է, երբ այն վերաբերել է վճռաբեկ բողոք բերելու մասին հանրային դատախազին ուղղված խնդրանքին, քանի որ այն կազմում էր այն դատավարության ամբողջության անքակտելի մասը, որին, փոխհատուցում ստանալու ակնկալիքով, դիմողը միացել էր որպես քաղաքացիական հայցվոր ([Gorou *ընդդեմ Հունաստանի \(թիվ 2\)*](#) (ՄՊ), § 35):

231. Վեճը կարող է վերաբերել ինչպես իրավունքի փաստացի գոյությանը, այնպես էլ դրա գործողության շրջանակին կամ կիրառման ձևին ([Bentham *ընդդեմ Նիդերլանդների*](#), § 32): Վեճը կարող է վերաբերել նաև փաստերի հաստատմանը:

232. Դատավարության արդյունքը պետք է վիճարկվող իրավունքի համար լինի

ուղղակիորեն վճռորոշ (օրինակ՝ [*Ulyanov ընդդեմ Ուկրաինայի*](#) (որոշում))։ Հետևաբար, աննշան կապը կամ հեռավոր հետևանքները 6-րդ հոդվածի 1-ին կետը կիրառելու համար բավարար չեն։ Օրինակ՝ Դատարանը համարել է, որ ատոմակայանի լիցենզիայի գործողության ժամկետի երկարաձգման օրինականությունը վիճարկող դատավարությունը չի կարող դիտարկվել 6-րդ հոդվածի 1-ին կետի շրջանակներում, քանի որ ժամկետը երկարաձգելու մասին որոշման և դիմումատուների՝ կյանքի, ֆիզիկական անձեռնմխելիության և սեփականության իրավունքի պաշտպանության միջև առկա կապը շատ «աննշան և հեռավոր» է, և դիմումատուները չեն ապացուցել, որ անձամբ իրենց սպառնացող վտանգը եղել է որոշակի և ամենից առաջ՝ մոտալուտ ([*Balmer-Schafroth and Others ընդդեմ Շվեյցարիայի*](#), § 40, [*Athanassoglou and Others ընդդեմ Շվեյցարիայի*](#) (ՄՊ), §§ 46-55, վերջերս քննված գործերից՝ [*Sdružení Jihočeské Matky ընդդեմ Չեխիայի Հանրապետության*](#) (որոշում), գործարանում սահմանափակ ձայնային աղտոտման մասով, տե՛ս [*Zapletal ընդդեմ Չեխիայի Հանրապետության*](#) (որոշում), հանքարդյունաբերական թափոնները վերամշակող գործարանի՝ շրջակա միջավայրի վրա թողած ենթադրյալ ազդեցության մասով, տե՛ս [*Ivan Atanasov ընդդեմ Բուլղարիայի*](#), §§ 90-95)։ Նմանապես, այն դատավարությունը, որտեղ պետական համակարգի երկու աշխատակից վիճարկում էին իրենց գործընկերներից մեկի պաշտոնում նշանակումը, իրենց քաղաքացիական իրավունքների, մասնավորապես՝ պաշտոնում նշանակվելու իրենց իրավունքի վրա, կարող էր ունենալ միայն աննշան ազդեցություն ([*Revel and Mora ընդդեմ Ֆրանսիայի*](#) (որոշում))։

233. Ի հակադրումն վերոնշյալի, 6-րդ հոդվածի 1-ին կետը կիրառելի էր ջրամբարի կառուցմանը վերաբերող գործում, որը դիմումատուի գյուղում կարող է ջրհեղեղ առաջացնել ([*Gorraiz Lizarraga and Others ընդդեմ Իսպանիայի*](#), § 46) կամ դիմումատուի գյուղի մոտակայքում ոսկու հանքաքարը ցիոնիդով մշակող հանքի գործունեության լիցենզիայի վերաբերյալ գործում ([*Taşkın and Others ընդդեմ Թուրքիայի*](#), § 133, տե՛ս նաև [*Zander ընդդեմ Շվեդիայի*](#), §§ 24-25)։ Վերջերս մի գործով, որով շրջակա միջավայրի պահպանության տեղական ասոցիացիային վերաբնիչ բողոք էր ներկայացրել և պահանջել էր դատական կարգով վերանայել կառուցապատման թույլտվությունը, Դատարանը որոշել էր, որ այդ իրավաբանական անձի վկայակոչած իրավունքի և վեճի միջև առկա է բավարար կապ՝ հատկապես հաշվի առնելով կազմակերպության կարգավիճակը, նրա հիմնադիրները, ինչպես նաև ստեղծման նպատակը և գործունեության հստակ գծագրված աշխարհագրական սահմանները ([*L'Érablière A.S.B.L. ընդդեմ Բելգիայի*](#), §§ 28-30)։ Ավելին, իրավաբանական անձի իրավասությունները վերականգնելու վարույթները անձի քաղաքացիական իրավունքների և պարտականությունների որոշման համար ուղղակիորեն որոշիչ են։

(գ) Վիճարկվող իրավունքի գոյությունը ներպետական իրավունքում

234. Դիմումատուն, թերևս, պետք է հնարավորություն ունենա պնդելու ամենայն հավանականությամբ ազգային իրավունքում ճանաչված իր իրավունքը ([*Masson and Van Zon ընդդեմ Նիդերլանդների*](#), § 48, [*Gutfreund ընդդեմ Ֆրանսիայի*](#), § 41, [*Boulois ընդդեմ Լյուքսեմբուրգի*](#) (ՄՊ), §§ 90-94, տե՛ս նաև [*Beaumartin ընդդեմ Ֆրանսիայի*](#), § 28՝ կապված միջազգային համաձայնագրին)։ 6-րդ հոդվածի 1-ին կետն, անդամ

պետության նյութական իրավունքում «իրավունքի» համար հատուկ բովանդակություն չի ապահովում, և այդ իրավունքի գոյությունը հաստատելու համար Դատարանը, սկզբունքորեն, պետք է հղում կատարի ներպետական իրավունքին:

235. Պետք է նաև հաշվի առնել, թե արդյոք դիմումատուի կողմից պահանջված միջոցառման իրականացումը որոշելիս իշխանություններն օգտվել են հայեցողությունից. սա կարող է նաև որոշիչ լինի: Մակայն, զուտ այն հանգամանքը, որ իրավական դրույթը հայեցողության տարր է պարունակում, ինքնին իրավունքի առկայությունը չի բացառում: Մյուս չափանիշները, որոնք Դատարանը կարող է հաշվի առնի, ներառում են նմանատիպ հանգամանքներում ներպետական դատարանների կողմից ենթադրյալ իրավունքի ճանաչումը կամ այն փաստը, որ վերջիններս ըստ էության քննել են դիմումատուի դիմումը ([Boulois ընդդեմ Լյուքսեմբուրգի](#) (ՄՊ), §§ 91-101):

236. Դատարանը կարող է որոշել, որ օրինակ՝ կյանքի, առողջության, առողջ միջավայրի և սեփականությունը հարգելու իրավունքները, ներպետական իրավունքով ճանաչված իրավունքներ են ([Athanassoglou and Others ընդդեմ Շվեյցարիայի](#) (ՄՊ), § 44):

237. Վիճարկվող իրավունքը ներպետական իրավունքում պետք է ունենա իրավական հիմք:

238. Այնուամենայնիվ, անհրաժեշտ է նշել, որ այն հարցը, թե արդյոք անձի ներպետական պահանջը հիմնավոր է, հնարավոր է կախված լինի ոչ միայն համապատասխան քաղաքացիական իրավունքի՝ ներպետական իրավունքում սահմանված բուն բովանդակությունից, այլ նաև հնարավոր բողոքը դատարան ներկայացնելու հնարավորությունը բացառող կամ սահմանափակող ընթացակարգային արգելքների առկայությունից ([Fayed ընդդեմ Միացյալ Թագավորությունների](#), § 65): Նշված վերջին կատեգորիայի գործերում Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետը հնարավոր է կիրառվի ([Al-Adsani ընդդեմ Միացյալ Թագավորությունների](#) (ՄՊ), §§ 46-47, [Fogarty ընդդեմ Միացյալ Թագավորությունների](#) (ՄՊ), § 25): Թեպետ, սկզբունքորեն ներպետական իրավունքում գոյություն ունեցող իրավունքի նյութական սահմանափակումների առնչությամբ այն որևէ կիրառություն չունի ([Roche ընդդեմ Միացյալ Թագավորությունների](#) (ՄՊ), § 119), քանի որ Կոնվենցիայի կիրառությունն ապահովող մարմինները՝ 6-րդ հոդվածի 1-ին կետի մեկնաբանությամբ, չեն կարող ստեղծել այնպիսի քաղաքացիական իրավունք, որը տվյալ պետությունում իրավական հիմք չունենա (նույն տեղում, § 117):

239. Որոշելու համար, թե արդյոք կա քաղաքացիական «իրավունք» և արդյոք սահմանափակումը պետք է դասակարգվի որպես նյութական թե ընթացակարգային, առաջին հերթին անհրաժեշտ է հաշվի առնել ներպետական իրավունքի համապատասխան դրույթները և թե ինչպես են ներպետական դատարանները մեկնաբանում դրանք ([Masson and Van Zon ընդդեմ Նիդերլանդների](#), § 49): Անհրաժեշտ է արտաքին դրսևորման սահմաններից դուրս ուսումնասիրել, թե ինչպես է ներպետական իրավունքը դասակարգում տվյալ սահմանափակումը և կենտրոնանալ իրականության վրա ([Van Droogenbroeck ընդդեմ Բելգիայի](#), § 38): Ի վերջո, պարտադիր չէ, որ դատարանի վերջնական որոշումը հետադարձ կերպով զրկի դիմումատուների գանգատներն իրենց փաստարկելիությունից ([Le Calvez ընդդեմ Ֆրանսիայի](#), § 56): Օրինակ՝ արտաքին քաղաքականությանը վերաբերող ակտի (ՆԱՏՕ-ի օդային հարձակումը Սերբիայի վրա) դատական վերանայման

սահմանափակ շրջանակը չի կարող հետադարձ ուժով դիմումատուի կողմից պետության դեմ ներկայացված գանգատները դարձնել ոչ փաստարկելի, քանի որ այդ հարցը առաջին անգամն է, որ ներկայացվելու է ներպետական դատարանների քննությանը ([Markovic and Others ընդդեմ Իտալիայի](#) (ՄՊ), §§ 100-02):

240. Նյութական և ընթացակարգային սահմանափակումները այս չափանիշների լույսի ներքո տարանջատելիս Դատարանը, օրինակ՝ որոշել է, որ անգործության առնչությամբ ոստիկանության ([Osman ընդդեմ Միացյալ Թագավորությունների](#)) կամ տեղական իշխանությունների դեմ ներկայացված քաղաքացիական հայցերը ([Z. and Others ընդդեմ Միացյալ Թագավորությունների](#) (ՄՊ)) պետք է դիտարկվեն 6-րդ հոդվածի 1-ին կետի շրջանակներում և քննարկել է այն հարցը, թե արդյոք տվյալ սահմանափակումը (քրեական հետապնդման ենթարկվելուց ազատ լինելը կամ պատասխանատվություն չկրելը) 6-րդ հոդվածի 1-ին կետի իմաստով համաչափ է: Մյուս կողմից Դատարանը որոշել է, որ թագավորական ընտանիքին զինված ուժերի անդամների նկատմամբ քաղաքացիական պատասխանատվությունից ազատելը բխել է նյութական սահմանափակումից: Հետևաբար, Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի իմաստով ներպետական իրավունքն այդ «իրավունքը» չի ճանաչել ([Roche ընդդեմ Միացյալ Թագավորությունների](#) (ՄՊ), § 124, [Hotter ընդդեմ Ավստրիայի](#) (որոշում), և [Andronikashvili ընդդեմ Վրաստանի](#) (որոշում)):

241. Դատարանը նաև մանրամասնել է, որ հանրային իշխանությունների կողմից որոշակի պայմաններում անօրինական գործողությունների հանդուրժումը չի ենթադրում օրենքին համապատասխան լիցենզիայի տրամադրում և ներպետական իրավունքով ճանաչված «իրավունքի» առկայություն ([De Bruin ընդդեմ Նիդերլանդների](#) (որոշում), § 57):

242. Դատարանն ընդունել է, որ ասոցիացիաները նույնպես կարող են օգտվել 6-րդ հոդվածի 1-ին կետի պաշտպանությունից, եթե նրանք փորձում են պաշտպանել իրենց անդամների իրավունքները և շահերը ([Gorraiz Lizarraga and Others ընդդեմ Իսպանիայի](#), § 45) կամ այն դեպքում, երբ նրանք, որպես իրավաբանական անձ, ներկայացնում են պահանջներ, օրինակ՝ «հանրության» տեղեկացված լինելու, շրջակա միջավայրի հետ կապված հարցերում որոշումների կայացմանը մասնակցելու իրավունքի մասին ([Collectif national d'information et d'opposition à l'usine Melox – Collectif Stop Melox et Mox ընդդեմ Ֆրանսիայի](#) (որոշում)) կամ երբ ասոցիացիայի գործողությունը չի կարող դիտվել որպես *actio popularis* ([L'Érablière A.S.B.L. ընդդեմ Բելգիայի](#)):

243. Երբ օրենսդրությունը սահմանում է աշխատանքի ընդունելիության կամ որևէ մասնագիտությամբ [աշխատելու] պայմաններ, թեկնածուն, ով բավարարում է դրանց, իրավունք ունի ընդունվելու այդ աշխատանքին կամ [աշխատելու այդ] մասնագիտությամբ ([De Moor ընդդեմ Բելգիայի](#), § 43): Օրինակ, եթե դիմումատուն ներկայացնում է հիմնավոր պահանջ առ այն, որ որպես բժիշկ գրանցվելու համար համապատասխանում է սահմանված իրավական պահանջներին, ապա այս դեպքում 6-րդ հոդվածը կիրառելի է ([Chevrol ընդդեմ Ֆրանսիայի](#), § 55, ի հակադրումն, տե՛ս [Bouilloc ընդդեմ Ֆրանսիայի](#) (որոշում) գործին): Ամեն դեպքում, երբ քաղաքացիական իրավունքի վերաբերյալ վարույթի օրինականության վիճարկման համար նախատեսված է իրավական պաշտպանության միջոց, որից դիմումատուն օգտվել է, պետք է ենթադրել, որ տեղի է ունեցել «քաղաքացիական իրավունքի» վերաբերյալ «վեճ», նույնիսկ եթե ներպետական իշխանությունները հետազայում պարզեն, որ դիմումատուն փաստացի չի համապատասխանել իրավական պահանջներին (արտասահմանում ստացած բժշկական

մասնագիտացմամբ գործունեությունը շարունակելու իրավունքի մասով, տե՛ս [Kök pնդդեմ Թուրքիայի](#), § 37): Հետևաբար, պետք է համոզվել, թե արդյոք դիմումատուի պնդումներն եղել են բավականաչափ հիմնավորված ([Neves e Silva pնդդեմ Պորտուգալիայի](#), § 37, [Éditions Périscope pնդդեմ Ֆրանսիայի](#), § 38):

(դ) Իրավունքի «քաղաքացիական» բնույթը

244. Այն հարցը, թե արդյոք Կոնվենցիայի լույսի ներքո իրավունքը պետք է դիտարկվի որպես քաղաքացիական իրավունք, պետք է պարզել՝ հղում անելով իրավունքի նյութական բովանդակությանը և ազդեցությանը, այլ ոչ ներպետական իրավունքում դրա իրավական դասակարգմանը: Իր վերահսկողական գործառույթներն իրականացնելիս՝ Դատարանը պետք է հաշվի առնի Կոնվենցիայի օբյեկտը, նպատակը և պայմանավորվող կողմերի ներպետական իրավական համակարգերը ([König pնդդեմ Գերմանիայի](#), §89):

245. Հիմնականում, մասնավոր անձանց միջև ծագած այն վեճերի նկատմամբ, որոնք ներպետական իրավունքով դասակարգվել են որպես քաղաքացիական բնույթի վեճեր, 6-րդ հոդվածի կիրառելիությունը Դատարանում անատարելի է (դատական տարանջատման վերաբերյալ գործի մասով, տե՛ս [Airey pնդդեմ Իռլանդիայի](#), § 21):

(ե) Իրավունքի մասնավոր բնույթը՝ նյութական մասը

246. Դատարանը գտնում է, որ 6-րդ հոդված 1-ին կետի ներքո կարող են դիտարկվել այն վարույթները, որոնք ներպետական իրավունքում հանդես են գալիս «հանրային իրավունքի» ներքո և դրանց արդյունքն որոշիչ է մասնավոր իրավունքների և պարտականությունների համար: Այսպիսի վարույթները կարող են, *inter alia*, առնչվել հողը կամ տարածքը վաճառելու թույլտվությանը ([Ringeisen pնդդեմ Ավստրիայի](#), § 94), մասնավոր կլինիկա աշխատացնելու ([König pնդդեմ Գերմանիայի](#), §§ 94-95), կառուցապատման թույլտվությանը (տե՛ս, *inter alia* [Sporrong and Lönnroth pնդդեմ Շվեդիայի](#), § 79), եկեղեցական կառույցի նկատմամբ սեփականության և օգտագործման իրավունքին ([Sâmbata Bihor Greco-Catholic Parish pնդդեմ Ռումինիայի](#), § 65), գործունեություն իրականացնելու համար վարչական թույլտվությանը ([Bentham pնդդեմ Նիդերլանդների](#), § 36), ոգելից խմիչքներ վաճառելու լիցենզիային ([Tre Traktörer Aktiebolag pնդդեմ Շվեդիայի](#), § 43) կամ աշխատանքի պայմաններով պայմանավորված հիվանդությանը կամ վթարի դիմաց փոխհատուցում վճարելու վեճին ([Chaudet pնդդեմ Ֆրանսիայի](#), § 30):

Նույն հիմքով 6-րդ հոդվածը կիրառվում է մասնագիտական մարմիններում իրականացվող կարգապահական վարույթների նկատմամբ, երբ վտանգված է մասնագիտական գործունեություն ծավալելու իրավունքը ([Le Compte, Van Leuven and De Meyere pնդդեմ Բելգիայի](#), [Philis pնդդեմ Հունաստանի \(թիվ 2\)](#), § 45)՝ չմոռանալով, որ մասնագիտական գործունեությունն ազատ ծավալելու կամ այն շարունակելու իրավունքը հանդիսանում է քաղաքացիական իրավունք, պետության անգործության վերաբերյալ հայցի ([X pնդդեմ Ֆրանսիայի](#)), հայցվորի իրավունքները վնասող վարչական որոշումը չեղյալ հայտարարելու հայցի ([De Geouffre de la Pradelle pնդդեմ Ֆրանսիայի](#)), հայցվորներին սեփականության իրավունքով պատկանող ջրերում ձկնորսություն իրականացնելու արգելքին վերաբերող վարչական վարույթների ([Alatulkkila and Others pնդդեմ Ֆինլանդիայի](#), § 49) և պետական պատվերի ընթացակարգի նկատմամբ, որոնց դեպքում

վտանգված է քաղաքացիական այնպիսի իրավունք, ինչպիսին է, օրինակ՝ հանրային ծառայությունների պայմանագրեր կնքելու հայտերի ներկայացման ժամանակ կրոնի կամ քաղաքական հայացքների համար խտրականության չենթարկվելու իրավունքը ([Tinnelly & Sons Ltd and Others and McElduff and Others ընդդեմ Միացյալ Թագավորությունների](#), § 61 գործը, ի հակադրումն՝ [I.T.C. Ltd ընդդեմ Մայթայի](#) (որոշում) գործի):

247. 6-րդ հոդվածը կիրառվում է քրեական դատավարությունում քաղաքացիական հայցի նկատմամբ ([Perez ընդդեմ Ֆրանսիայի](#) (ՄՊ), §§ 70-71)՝ բացառությամբ այն դեպքերի, երբ այդ հայցը ներկայացվել է միայն անձնական վրեժխնդրության կամ պատժելու նպատակներով ([Sigalas ընդդեմ Հունաստանի](#), § 29, [Mihova ընդդեմ Բուլղարիայի](#) (որոշում)): Կոնվենցիան, որպես այդպիսին, չի երաշխավորում երրորդ կողմի նկատմամբ քրեական հետապնդում իրականացնելու կամ քրեական հանցագործության համար դատապարտելու իրավունքը: Կոնվենցիայի շրջանակներում դիտարկվելու համար անհրաժեշտ է, որպեսզի այդ իրավունքը գոհի՝ ներպետական իրավունքով երաշխավորված քաղաքացիական հայց ներկայացնելու իրավունքից լինի անանջատելի, նույնիսկ եթե այդ հայցը ներկայացվել է զուտ սիմվոլիկ փոխհատուցում ստանալու կամ «բարի համբավը» պահպանելու համար ([Perez ընդդեմ Ֆրանսիայի](#) (ՄՊ), § 70, տե՛ս նաև սիմվոլիկ պարգևատրման մասով՝ [Gorou ընդդեմ Հունաստանի \(թիվ 2\)](#) (ՄՊ), § 24 գործը): Հետևաբար, 6-րդ հոդվածը քաղաքացիական բողոք ենթադրող վարույթի նկատմամբ սկսվում է կիրառվել այն ժամանակ, երբ բողոքողը դառնում է քաղաքացիական հայցվոր՝ բացառությամբ այն դեպքերի, երբ ինքը միանշանակ հրաժարվել է փոխհատուցում ստանալու իր իրավունքից:

248. 6-րդ հոդվածի 1-ին կետը նաև կիրառվում է այն քաղաքացիական վարույթների նկատմամբ, որոնց ժամանակ հայցվորը փորձում է պետության վատ վերաբերմունքի արդյունքում պատճառված վնասի դիմաց ստանալ փոխհատուցում ([Aksoy ընդդեմ Թուրքիայի](#), § 92):

(գ) Այլ վեճերի նկատմամբ կիրառումը

249. Դատարանը գտել է, որ 6-րդ հոդվածի 1-ին կետը կիրառվում է այն վեճերի նկատմամբ, որոնք վերաբերում են սոցիալական հարցերին, ներառյալ՝ մասնավոր ընկերության կողմից աշխատողին աշխատանքից ազատելու ([Buchholz ընդդեմ Գերմանիայի](#)), սոցիալական ապահովագրության նպաստների վերաբերյալ վարույթների ([Feldbrugge ընդդեմ Նիդերլանդների](#)), նույնիսկ այն նպաստների վճարման վարույթների նկատմամբ, որոնք գոյացել են ոչ ներդրումային հիմքով ([Salesi ընդդեմ Իտալիայի](#)) և նաև պարտադիր սոցիալական ապահովագրության վճարներին վերաբերող գործերի նկատմամբ ([Schouten and Meldrum ընդդեմ Նիդերլանդների](#)): Այս գործերում Դատարանը հաշվի է առել այն, որ մասնավոր իրավունքի առանձնահատկությունները հանրային իրավունքի առանձնահատկությունների նկատմամբ գերակշռել են: Ի լրումն՝ Դատարանը գտել է նաև, որ սոցիալական նպաստներ ստանալու և նացիստների հետապնդումների դիմաց մասնավոր իրավական հիմնադրամի կողմից փոխհատուցում ստանալու իրավունքների միջև առկա են նմանություններ ([Woś ընդդեմ Լեհաստանի](#), § 76):

250. Պետական ծառայողներին վերաբերող վեճերը սկզբունքորեն դիտարկվում են 6-րդ հոդվածի 1-ին մասի շրջանակներում: [Pellegrin ընդդեմ Ֆրանսիայի](#) (ՄՊ), §§ 64-71, գործում Դատարանն ընդունել է «գործառնական» չափանիշ: [Vilho Eskelinen and Others ընդդեմ Ֆինլանդիայի](#) (ՄՊ), §§ 50-62, գործով վճռում Դատարանը որոշել

է կիրառել մի նոր մոտեցում: Սկզբունքն այսուհետ կայանում էր նրանում, որ 6-րդ հոդվածը ենթադրաբար կիրառելի է լինելու և պատասխանող կառավարությունն է, ով պետք է առաջինը՝ ապացուցի, որ քաղաքացիական ծառայողը, ներպետական իրավունքին համապատասխան, դատարանի մատչելիության իրավունք չունի և երկրորդ՝ քաղաքացիական ծառայողի հոդված 6-ով երաշխավորված իրավունքների սահմանափակումն արդարացված է: Եթե դիմումատուն ունեցել է ներպետական իրավունքով նախատեսված դատարանի մատչելիության իրավունք, ապա 6-րդ հոդվածը կիրառելի է (նույնիսկ գործող սպաների և զինվորական դատարաններում նրանց հայցերի նկատմամբ, տե՛ս [Pridatchenko and Others ընդդեմ Ռուսաստանի](#), § 47): Երկրորդ չափանիշի կապակցությամբ՝ սահմանափակումը պետք է արդարացված լինի «պետության շահերի հետ կապված օբյեկտիվ հիմքերով», ինչը պարտավորեցնում է պետությանը ապացուցել, որ քննարկվող վեճի առարկան կապված է հանրային իշխանության իրագործման հետ կամ վեճը բարձրացնում է հարցեր, որոնք վերաբերում են քաղաքացիական ծառայողի և պետության միջև առկա հատուկ կապին: Այդ իսկ պատճառով, սկզբունքորեն չի թույլատրվում քաղաքացիական ծառայողի և պետության միջև առանձնահատուկ բնույթ կրող հարաբերությունների հիմքով սովորական աշխատանքային վեճերը, որոնք վերաբերում են աշխատավարձին, նպաստներին կամ նմանատիպ իրավունքներին, բացառել 6-րդ հոդվածի շրջանակներից (տե՛ս օրինակ՝ վեճ, որը վերաբերում էր հատուկ նպաստ ստանալու ոստիկանի իրավունքին՝ [Vilho Eskelinen and Others ընդդեմ Ֆինլանդիայի](#) (ՄՊ)): Վերջերս *Vilho Eskelinen* գործով վճռում ամրագրված չափանիշի լույսի ներքո Դատարանը 6-րդ հոդվածի 1-ին կետը հայտարարել է կիրառելի՝ դեսպանատան աշխատակցին անհիմն աշխատանքից ազատելու վերաբերյալ հարուցված վարույթի նկատմամբ (Լեհական դեսպանատան աշխատակիցների՝ քարտուղարի և հեռախոսավարի մասով, [Cudak ընդդեմ Լիտվայի](#) (ՄՊ), §§ 44-47), ավագ ոստիկանի ([Šikić ընդդեմ Խորվաթիայի](#), §§ 18-20) կամ զինվորական դատարանների զինվորական սպաների ([Vasilchenko ընդդեմ Ռուսաստանի](#), §§ 34-36), Խորհրդարանում օգնականի պաշտոն ձեռք բերելու իրավունքի ([Savino and Others ընդդեմ Բուլղարիայի](#)), դատավորների դեմ կարգապահական վարույթի ([Olujic ընդդեմ Խորվաթիայի](#)), դատախազի՝ իրեն տեղափոխելու մասին կարգադրող նախագահի հրամանագիրը բողոքարկելու վարույթի ([Zalli ընդդեմ Ալբանիայի](#) (որոշում և նշված հղումները) և մաքսատան ծառայողի մասնագիտական կարիերային վերաբերող դատավարության նկատմամբ (պաշտոնի բարձրացման համար դիմում ներկայացնելու իրավունքի մասով՝ [Fiume ընդդեմ Բուլղարիայի](#), §§ 33-36): Այսպիսով, միայն դիմումատուի կարգավիճակի հիմքով 6-րդ հոդվածի 1-ին կետի կիրառելիությունը չի կարող բացառվել ([Di Giovanni ընդդեմ Բուլղարիայի](#), § 37):

251. Սահմանադրական վեճերը նույնպես կարող են դիտարկվել 6-րդ հոդվածի շրջանակներում, եթե սահմանադրական դատավարությունը ընդհանուր վեճի լուծման համար ունի որոշիչ դեր («քաղաքացիական» իրավունքի մասով) ([Ruiz-Mateos ընդդեմ Բալանիայի](#)): Սա չի կիրառվում այն վեճերի դեպքում, որոնք վերաբերում են իբրև բացառիկ միջոց անձին քաղաքացիություն շնորհելու մասին Նախագահի հրամանագրին կամ Նախագահի՝ սահմանադրական երդման ենթադրյալ խախտմանը, քանի որ այդ դատավարությունները չեն վերաբերում քաղաքացիական իրավունքներին և պարտականություններին ([Paksas ընդդեմ Լիտվայի](#) (ՄՊ), §§ 65-66): Սահմանադրական դատարանի ձեռնարկված միջանկյալ միջոցառման նկատմամբ 6-րդ հոդվածի կիրառելիության մասով, տե՛ս [Kübler](#)

[ընդդեմ Գերմանիայի](#), §§47-48:

252. Ի վերջո, 6-րդ հոդվածը կիրառվում է նաև այլ՝ ոչ նյութական հարցերի նկատմամբ, ինչպիսիք են՝ շրջակա միջավայրը, որի առնչությամբ կարող են ծագել կյանքի, առողջության և առողջ միջավայրի հետ կապված վեճեր ([Taşkın and Others](#) [ընդդեմ Թուրքիայի](#)), երեխաների դաստիարակման ([McMichael](#) [ընդդեմ Միացյալ Թագավորությունների](#)), երեխաներին դպրոց տեղավորելու ([Ellès and Others](#) [ընդդեմ Շվեյցարիայի](#), §§ 21-23), հայրության իրավունքի ճանաչելու ([Alaverdyan](#) [ընդդեմ Հայաստանի](#) (որոշում), § 33), ազատության իրավունքի վերաբերյալ հարցերը ([Laidin](#) [ընդդեմ Ֆրանսիայի \(թիվ 2\)](#)), բանտարկյալի ազատությունից զրկելու պայմանների վերաբերյալ հարցերը, օրինակ՝ խիստ ռեժիմի տակ գտնվող ([Enea](#) [ընդդեմ Իտալիայի](#) (ՄՊ), §§ 97-107) կամ բարձր անվտանգության մակարդակ ունեցող բանտախցերում պահվող բանտարկյալների նկատմամբ կիրառվող սահմանափակումների վերաբերյալ վեճերը ([Stegarescu and Bahrin](#) [ընդդեմ Պորտուգալիայի](#))) կամ այն կարգապահական վարույթների առնչությամբ, որոնց արդյունքում բանտում ընտանեկան այցելությունները սահմանափակվում են ([Gülmez](#) [ընդդեմ Թուրքիայի](#), § 30), բարի համբավի ([Helmers](#) [ընդդեմ Շվեդիայի](#), § 27), վարչական փաստաթղթերի մատչելիության իրավունքի ([Loiseau](#) [ընդդեմ Ֆրանսիայի](#) (որոշում), կամ անձնական գործում ոստիկանության կատարած այն գրառման առնչությամբ ներկայացված բողոքը, որն ազդել էր բարի համբավի, սեփականության պաշտպանության իրավունքի և աշխատանքի անցնելու հնարավորության, և, հետևաբար, ապրուստ վաստակելու իրավունքի վրա ([Pocius](#) [ընդդեմ Լիտվայի](#), §§ 38-46, [Užkauskas](#) [ընդդեմ Լիտվայի](#), §§ 32-40), §§ 32-40), ասոցիացիայի անդամ դառնալու իրավունքը ([Pocius](#) [ընդդեմ Լիտվայի](#), §§ 38-46, [Užkauskas](#) [ընդդեմ Լիտվայի](#), §§ 32-40) (որոշում), նույն ձևով ասոցիացիայի գրանցման հետ կապված հարցերը վերաբերում են վերջինիս քաղաքացիական իրավունքներին, նույնիսկ եթե ներպետական իրավունքի համաձայն, ասոցիացիայի անկախության հարցը դիտարկվում է հանրային իրավունքի շրջանակներում ([APEH Üldözütteinek Szövevénye and Others](#) [ընդդեմ Հունգարիայի](#), §§ 34-35) և ի վերջո, բարձրագույն կրթությունը շարունակելու իրավունքի ([Emine Arac](#) [ընդդեմ Թուրքիայի](#), §§ 18-25) վերաբերյալ դիտարկումը, որը *a fortiori*, կիրառվում է միջնակարգ կրթության համատեքստում ([Oršuš Orsus and Others](#) [ընդդեմ Խորվաթիայի](#) (ՄՊ), § 104): Այս ընդլայնված կիրառումը Դատարանին թույլ է տալիս հոդված 6-ի քաղաքացիական մասը դիտարկել ոչ միայն որպես զուտ նյութական, այլ նաև անձի անձնական բնույթի իրավունքներ ներառող:

(Է) Հարցեր, որոնք ենթակա չեն քննության

253. Միայն այն փաստը, որ վեճը նյութական բնույթի է, 6-րդ հոդվածի 1-ին կետի քաղաքացիական կողմի կիրառելիության համար ինքնին բավարար չէ ([Ferrazzini](#) [ընդդեմ Իտալիայի](#) (ՄՊ), § 25):

254. 6-րդ հոդվածի գործողության շրջանակներից դուրս գտնվող հարցերը ներառում են հարկերի վերաբերյալ վարույթները. հարկերի վերաբերյալ հարցերը, հարկ վճարողի և համայնքի փոխհարաբերությունների գերակշռող հանրային բնույթից անկախ, դեռևս հանրային իրավունքի բացառիկ իրավասության մաս են կազմում (նույն տեղում, § 29): Նմանապես, մաքսատուքերի առնչությամբ նախնական դատական արգելքի վարույթները նույնպես բացառված են 6-րդ հոդվածի շրջանակներից ([Emesa Sugar N.V.](#) [ընդդեմ Նիդերլանդների](#) (որոշում)):

255. Նույնը վերաբերում է նաև ներգաղթի ոլորտում քաղաքական ապաստան տալու կամ արտաքսման վարույթների շրջանակներում օտարերկրացու մուտքի, կացության և տեղափոխման հարցերին (արտաքսման մասին դատական որոշումը չեղարկելու միջնորդության մասով՝ [Maaouia ընդդեմ Ֆրանսիայի](#) (ՄՊ) § 38, հանձնման մասով՝ [Peñafiel Salgado ընդդեմ Իսպանիայի](#) (որոշում), և [Mamatkulov and Askarov ընդդեմ Թուրքիայի](#) (ՄՊ), §§ 81-83, և ապաստան փնտրողի կողմից ապաստան չստանալու արդյունքում կրած վնասի փոխհատուցման վերաբերյալ հայցի մասով՝ [Panjeheighalehei ընդդեմ Ղանիայի](#) (որոշում)՝ անձնական կամ ընտանեկան կյանքի վրա հնարավոր լուրջ հետևանքներից և աշխատանքային հեռանկարներից անկախ: Չկիրառման այս մոտեցումը տարածվում է նաև օտարերկրացու՝ Շենգենյան տեղեկատվական համակարգում ներառման վրա ([Dalea ընդդեմ Ֆրանսիայի](#) (որոշում)): Անձնագիր և քաղաքացիություն ունենալու իրավունքները 6-րդ հոդվածի իմաստով քաղաքացիական չեն ([Smirnov ընդդեմ Ռուսաստանի](#) (որոշում)): Այնուամենայնիվ, և՛ աշխատող, և՛ գործատու օտարերկրացու կողմից աշխատանքի թույլտվություն ստանալու իրավունքը կարող է դիտարկվել 6-րդ հոդվածի շրջանակներում, նույնիսկ եթե ներպետական իրավունքի համաձայն, աշխատողն աշխատանքի թույլտվության համար *locus standi* իրավասություն չունի, պայմանով, որ ներառվածը հանդիսանում է միայն ընթացակարգային արգելք և չի ազդում իրավունքի էության վրա ([Jurisic and Collegium Mehrerau ընդդեմ Ավստրիայի](#), §§ 54-62):

256. Համաձայն [Vilho Eskelinen and Others ընդդեմ Ֆինլանդիայի](#) (ՄՊ) վճռին, պետական ծառայողներին վերաբերող վեճերը չեն դիտարկվում 6-րդ հոդվածի շրջանակներում, երբ սահմանված երկու չափանիշներն առկա են (տե՛ս վերը նշված 234 պարբերությունը): Սա կարգապահական հիմունքներով ծառայությունից ազատված զինվորի դեպքն է, ով զրկվել էր դատական կարգով որոշումը բողոքարկելու իրավունքից, քանի որ վիճարկվում էր դիմումատուի և պետության միջև առկա առանձնահատուկ կապը ([Suküt ընդդեմ Թուրքիայի](#) (որոշում)): Նույնը վերաբերում է թոշակի անցած դատավորին նախկին պաշտոնին վերականգնելու մասին վեճին ([Apay ընդդեմ Թուրքիայի](#) (որոշում)):

257. Ի վերջո, քաղաքական այնպիսի իրավունքները, ինչպիսիք են օրինակ՝ ընտրություններին թեկնածությունը դնելու կամ մանդատը պահպանելու իրավունքը (ընտրական վեճի մասով՝ [Pierre-Bloch ընդդեմ Ֆրանսիայի](#), § 50), որպես խորհրդարանի նախկին անդամ թոշակ ստանալու իրավունքը ([Papon ընդդեմ Ֆրանսիայի](#) (որոշում), կամ կուսակցության՝ քաղաքական գործունեությունը շարունակելու իրավունքը (կուսակցության լուծարմանը վերաբերող գործ՝ [Refah Partisi \(The Welfare Party\) and Others ընդդեմ Թուրքիայի](#) (որոշում)) 6-րդ հոդվածի իմաստով չեն կարող համարվել քաղաքացիական իրավունքներ: Նմանապես, 6-րդ հոդվածի 1-ին կետի շրջանակներում չի կարող դիտարկվել այն դատավարությունը, որտեղ խորհրդարանական ընտրությունների դիտարկում իրականացնող հասարակական կազմակերպությանը մերժել են ընտրական հանձնաժողովի՝ որպես ընտրությունների դիտարկում իրականացնող մարմնի՝ հանրային գործառնությունների կատարմանը վերաբերող փաստաթղթերի մատչելիությունը ([Geraguyn Khorhurd Patgamavorakan Akumb ընդդեմ Հայաստանի](#) (որոշում)):

Ավելին, Դատարանը վերահաստատել է, որ դոնբաս դատավարության ընթացքում ասվածի մասին հաղորդելը քաղաքացիական իրավունք չէ ([Mackay and BBC Scotland ընդդեմ Միացյալ Թագավորությունների](#), §§ 20-22):

(ը) 6-րդ հոդվածի կիրառելիությունը այլ՝ ոչ հիմնական վարույթների նկատմամբ

258. Նախնական վարույթները, ինչպես նաև այն վարույթները, որոնք վերաբերում էին միջանկյալ միջոցառումների կիրառմանը, սովորաբար չեն համարվել որպես քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ «որոշող» և 6-րդ հոդվածի շրջանակներում չեն դիտարկվել (տե՛ս, *inter alia*, [Verlagsgruppe News GmbH ընդդեմ Ավստրիայի](#) (որոշում), և [Libert ընդդեմ Բելգիայի](#) (որոշում)): Այնուամենայնիվ, Դատարանը վերջերս շեղվել է իր՝ նախկինում ձևավորված նախադեպային իրավունքից և որդեգրել նոր մոտեցում ([Micallef ընդդեմ Մալթայի](#) (ՄՊ), §§ 83-86): Նշված գործում Դատարանը սահմանել է, որ միջանկյալ միջոցառումների նկատմամբ 6-րդ հոդվածի կիրառելիությունը կախված է այն բանից, թե արդյոք հետևյալ որոշակի պայմանները կպահպանվեն: Առաջին՝ վիճարկվող իրավունքը ինչպես հիմնական, այնպես էլ միջանկյալ միջոցառումների վերաբերյալ դատավարություններում պետք է Կոնվենցիայի իմաստով լինի «քաղաքացիական» իրավունք: Երկրորդ՝ խնդրո առարկա իրավունքի վրա միջանկյալ միջոցառման բնույթի, օբյեկտի, նպատակի ունեցած հետևանքները պետք է ուսումնասիրվեն: Յուրաքանչյուր դեպքում, երբ կհամարվի, որ տվյալ միջոցառումը, ուժի մեջ գտնվելու կարճ ժամկետից անկախ, սահմանում է խնդրո առարկա քաղաքացիական իրավունք կամ պարտականություն, 6-րդ հոդվածը կլինի կիրառելի:

6-րդ հոդվածը կիրառելի է այն միջանկյալ վարույթների նկատմամբ, որոնք հետամուտ են լինում նույն այն նպատակին, ինչ հիմնական վարույթը, որոնց ժամանակ միջանկյալ դատական արգելքն անհապաղ ենթակա է կատարման և որոնք ենթադրում են նույն իրավունքի վերաբերյալ վճռի կայացում ([RTBF ընդդեմ Բելգիայի](#), §§ 64-65):

259. Ինչ վերաբերում է միմյանց հաջորդող քրեական և քաղաքացիական դատավարություններին, եթե պետության ներպետական իրավունքը նախատեսում է դատավարության երկու փուլ և առաջին փուլում դատարանը որոշում է՝ արդյոք առկա է վնասի դիմաց հատուցում ստանալու իրավունք, իսկ երկրորդ փուլում սահմանում է գումարի չափը, Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ի կետի իմաստով, մինչ գումարի հստակ չափի որոշումը, քաղաքացիական իրավունքը համարվում է չորոշված. իրավունքն որոշելը նշանակում է ոչ միայն դրա առկայության հաստատում, այլ նաև այդ իրավունքի գործունեության շրջանակի կամ իրագործման պայմանների որոշումը, որն, իհարկե, ենթադրում է նաև պատճառված վնասի գնահատում ([Torri ընդդեմ Իտալիայի](#), § 19):

260. Ինչ վերաբերում է դատարանի որոշումների կատարմանը, ապա Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետը կիրառվում է «քաղաքացիական իրավունքները և պարտականությունները որոշելու» դատավարությունների բոլոր փուլերում՝ չբացառելով ըստ էության վճռի կայացմանը հաջորդող փուլերը: Այդ իսկ պատճառով, ցանկացած [ատյանի] դատարանի կայացրած վճռի կատարումը 6-րդ հոդվածի իմաստով պետք է դիտարկվի որպես դատավարության անբաժանելի մաս ([Hornsby ընդդեմ Հունաստանի](#), § 40, և [Romańczyk ընդդեմ Ֆրանսիայի](#), § 53 գործն, որը վերաբերում էր չվճարված ալիմենտները ստանալ լիազորող վճռի կատարմանը): Անկախ նրանից՝ արդյոք 6-րդ հոդվածը կիրառվում է նախնական դատավարության նկատմամբ, քաղաքացիական իրավունքները և

պարտականություններն որոշող վճիռը կատարելու իրավունքը պարտադիր չէ, որ առաջանա այն վարույթից, որի նկատմամբ 6-րդ հոդվածը եղել է կիրառելի ([Buj քննդեմ Խորվաթիայի](#), § 19): Օտարերկրյա դատարանի կողմից ընդունված բռնագրավման մասին կարգադրության կատարումը (*exequatur*) դիտարկվում է 6-րդ հոդվածի շրջանակներում ([Saccoccia քննդեմ Ավստրիայի](#) (որոշում)):

261. Գործով վարույթի վերաբացման վերաբերյալ գանգատների դեպքերում՝ քաղաքացիական գործով վարույթի վերաբացման վերաբերյալ գանգատի [քննության] վարույթի նկատմամբ 6-րդ հոդվածը չի կիրառվում, եթե գործն ավարտվել է դատարանի վերջնական վճռով ([Sablon քննդեմ Բելգիայի](#), § 86 գործը պետք է տարանջատել [San Leonard Band Club քննդեմ Մալթայի](#), § 41 հատուկ գործից): Այս մոտեցումը տարածվում է նաև գործով վարույթի վերաբացման այն գանգատի վրա, որը ներկայացվել է Դատարանի կողմից Կոնվենցիայի խախտում ճանաչելուց հետո ([Verein gegen Tierfabriken Schweiz \(VgT\) քննդեմ Շվեյցարիայի \(թիվ 2\)](#) (ՄՊ), § 24):

Եթե գործով վարույթը վերաբացվում է, վերաբացման կամ վերանայման դիմումին հաջորդող վարույթը կարող է վերաբերել «քաղաքացիական իրավունքներին և պարտականություններին» ([Rizi քննդեմ Ալբանիայի](#) (որոշում), § 47):

2. «Քրեական մեղադրանք» հասկացությունը

Հոդված 6, կետ 1՝ Արդար դատավարության իրավունք

«1. Յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են ... նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

2. Յուրաքանչյուր ոք, ով մեղադրվում է քրեական հանցագործություն կատարելու մեջ, համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ օրենքին համապատասխան:

3. Քրեական հանցագործություն կատարելու մեջ մեղադրվող յուրաքանչյուր ոք ունի հետևյալ նվազագույն իրավունքները (...):» :

(ա) Ընդհանուր սկզբունքներ

262. «Քրեական մեղադրանք» հասկացությունն ունի «ինքնուրույն» նշանակություն, կախված չէ անդամ պետությունների իրավական համակարգերում կիրառվող դասակարգումներից ([Adolf քննդեմ Ավստրիայի](#), § 30):

263. «Մեղադրանք» հասկացությունը պետք է դիտարկվի Կոնվենցիայի իմաստով: Հետևաբար, այն կարող է սահմանվել իբրև «իրավասու մարմնի կողմից անձին՝ ենթադրաբար նրա կողմից կատարված քրեական հանցանքի մասին ներկայացված պաշտոնական ծանուցում». այս սահմանումը համապատասխանում է նաև այն թեստին, թե արդյոք «[կասկածյալի] դրությունն էական ազդեցության էր ենթարկվել» (տե՛ս օրինակ՝ [Deweert քննդեմ Բելգիայի](#), §§ 42 և 46, և [Eckle քննդեմ Գերմանիայի](#), § 73): Հետևաբար, օրինակ, կասկածյալի՝ ավտոճանապարհային ստուգման ժամանակ ներկայացրած խոստովանությունը էականորեն ազդել էր նրա դրության վրա, չնայած որ նա որևէ քրեական հանցանք կատարելու մեջ պաշտոնապես չէր մեղադրվել ([Aleksandr Zaichenko քննդեմ Ռուսաստանի](#), § 43): Դատարանը նաև վճռել է, որ ոստիկանությունում պահվող անձը, ով մինչև որպես վկա հարցաքննվելը պարտավորվել էր երդում տալ, արդեն իսկ հանդիսանում էր «քրեական մեղադրանքի» սուբյեկտ և ուներ լռելու իրավունք ([Brusco քննդեմ](#)

[Ֆրանսիայի](#), §§ 46-50): Դատարանը գտնում է, որ անձը 6-րդ հոդվածով նախատեսված երաշխիքների կիրառելիությունը ենթադրող կասկածյալի կարգավիճակ ձեռք է բերում այն ժամանակ, երբ ներպետական իշխանություններն անհիմնաբար հանցագործության մեջ ներգրավվածության մասին կասկածելու համար հիմնավոր պատճառներ ունեն (նույն տեղում, § 47, [Bandaletov ընդդեմ Ուկրաինայի](#), § 56 և 61 գործը, որով դիմումատուն որպես վկա հարցաքննվելու ժամանակ խոստովանել է, և այդ խոստովանությունից հետո միայն ոստիկանությունը սկսել է նրան դիտարկել որպես կասկածյալ):

264. Ինչ վերաբերում է «քրեական» հասկացության ինքնուրույնությանը՝ Կոնվենցիան պայմանավորվող պետությունների «ապաքրեականացման» ուղղված գործողություններին դեմ չէ: Այնուամենայնիվ, ապաքրեականացումից հետո որպես «վարչական» դասակարգված հանցանքները կարող են դիտարկվել «քրեական» հանցանքի ինքնուրույն հասկացության ներքո: Այդ հանցանքների բացառումը պետության հայեցողությանը թողնելը կարող է հանգեցնել Կոնվենցիայի առարկային և նպատակին հակասող արդյունքի ([Öztürk ընդդեմ Գերմանիայի](#), § 49):

265. Կոնվենցիայի 6-րդ հոդվածի քրեական կողմի կիրառելիության գնահատման մեկնարկային կետը հիմնվում է [Engel and Others ընդդեմ Նիդերլանդների](#) (§§ 82-83) գործով ուրվագծված չափանիշների վրա. 1. ներպետական իրավունքում դասակարգումը, 2. հանցանքի բնույթը, և 3. այն պատժի խստությունը, որին տվյալ անձը կարող է ենթարկվել:

266. Առաջին չափանիշը հարաբերականորեն կարևորություն ունի և ծառայում է միայն որպես մեկնարկային կետ: Եթե ներպետական իրավունքը հանցանքը դասակարգում է որպես քրեական, ապա դա պետք է լինի վճռորոշ: Հակառակ դեպքում՝ Դատարանը կանտեսի ազգային դասակարգման հիմքերը և կքննի խնդրո առարկա ընթացակարգի էությունը:

267. Ավելի կարևոր համարվող երկրորդ չափանիշը գնահատելիս պետք է հաշվի առնել ([Jussila ընդդեմ Ֆինլանդիայի](#) (ՄՊ) § 38) հետևյալ գործոնները՝

- արդյոք իրավական նորմը հասցեագրված է միայն որոշակի խմբի, թե ընդհանրապես պարտադիր բնույթ ունի ([Bendenoun ընդդեմ Ֆրանսիայի](#), § 47),
- արդյոք իրավական նորմն ունի պատժիչ, թե կանխարգելիչ նպատակ (նույն տեղում, [Öztürk ընդդեմ Գերմանիայի](#), § 53),
- արդյոք վարույթը հարուցվել է [դատական ակտի] կատարումն ապահովելու օրենսդրական լիազորություն ունեցող պետական մարմնի կողմից ([Benham ընդդեմ Միացյալ Թագավորությունների](#) (ՄՊ), § 56),
- արդյոք պատժի սահմանումը կախված է մեղավորությունը պարզելուց (նույն տեղում),
- ինչպես են նմանատիպ դատավարությունները դասակարգվում Եվրոպական խորհրդի անդամ պետություններում ([Öztürk ընդդեմ Գերմանիայի](#), § 53):

268. Երրորդ չափանիշը սահմանվում է հիմնվելով համապատասխան օրենքով նախատեսվող հնարավոր առավելագույն պատժի վրա ([Campbell and Fell ընդդեմ Միացյալ Թագավորությունների](#), § 72, and [Demicoli ընդդեմ Մալթայի](#), § 34):

269. [Engel and Others ընդդեմ Նիդերլանդների](#) գործում ուրվագծված երկրորդ և երրորդ չափանիշներն այլընտրանքային են և ոչ թե գումարային (կումուլյատիվ): Որպեսզի 6-րդ հոդվածը կիրառվի, բավարար է, որ խնդրո առարկա հանցանքի բնույթը Կոնվենցիայի իմաստով լինի «քրեական» կամ հանցանքի համար անձի

նկատմամբ նշանակված պատիժը իր բնույթով և խստությամբ ընդհանուր առմամբ պատկանի «քրեական» ոլորտին ([Lutz ընդդեմ Գերմանիայի](#), § 55, [Öztürk ընդդեմ Գերմանիայի](#), § 54): Այն փաստը, որ հանցանքն ազատագրված և պատժվում, ինքնին որոշիչ չէ, քանի որ խնդրո առարկա պատժի խստության բացակայությամբ հանցանքը ըստ էության, իր՝ քրեական բնույթից չի կարող զրկվել (նույն տեղում, [Nicoleta Gheorghe ընդդեմ Ռումինիայի](#), § 26):

Գումարային (կումուլյատիվ) մոտեցումն այնուամենայնիվ կարող է կիրառվել այն դեպքում, երբ յուրաքանչյուր չափանիշի առանձին վերլուծությամբ քրեական մեղադրանքի առկայության մասին հնարավոր չէ գալ հստակ եզրահանգման ([Bendenoun ընդդեմ Ֆրանսիայի](#), § 47):

270. 6-րդ հոդվածի երեք պարբերություններում օգտագործվող «քրեական մեղադրանք» և «քրեական հանցանքի կատարման մեջ մեղադրվող» եզրույթները վերաբերում են նմանատիպ իրավիճակների: Այդ իսկ պատճառով, 6-րդ հոդվածի կիրառելիության թեստը հոդվածի քրեական տիրույթում երեք պարբերությունների համար կլինի նույնը:

Օրինակ՝ 6-րդ հոդվածի 2-րդ կետի շրջանակներում ներկայացվող և դատավարության համատեքստում առաջ եկող ցանկացած գանգատ գնահատելիս անհրաժեշտ է նախևառաջ պարզել՝ արդյոք վիճարկվող դատավարությունը ներառել է Դատարանի նախադեպային իրավունքի իմաստով «քրեական մեղադրանքի» որոշման հարցը ([Allen ընդդեմ Միացյալ Թագավորությունների \(ՄՊ\)](#), § 95):

(բ) Ընդհանուր սկզբունքների կիրառումը

(i) Կարգապահական վարույթ

271. Զինվորական կարգապահության դեմ ուղղված հանցանքները, որոնք պատժվում են կարգապահական միավորումում մի քանի ամիս տնտղությամբ պահմամբ, դիտարկվում են Կոնվենցիայի 6-րդ հոդվածի քրեական տիրույթում ([Engel and Others ընդդեմ Նիդերլանդների](#), § 85): Ի հակադրումն՝ երկօրյա ձերբակալությունը «քրեական իրավունքի» ոլորտին պատկանելու համար հանդիսանում է չափազանց կարճատև:

272. Ինչ վերաբերում է մասնագիտական կարգապահական վարույթներին, Դատարանը հաճախ անհրաժեշտ չի համարել քննել 6-րդ հոդվածի քրեական տիրույթի կիրառելիության հարցը՝ եզրակացնելով, որ դատավարությունը գտնվում է [6-րդ հոդվածի] քաղաքացիական տիրույթում ([Albert and Le Compte ընդդեմ Բելգիայի](#), § 30, [Harabin ընդդեմ Սլովակիայի](#), § 124): Սակայն, քաղաքացիական ծառայողի հարկադրված թոշակի անցնելու համար հիմք հանդիսացած կարգապահական վարույթների դեպքում, Դատարանը գտել է, որ նմանատիպ վարույթները 6-րդ հոդվածի իմաստով «քրեական» չեն, այնքանով որքանով, ներպետական իշխանությունները կարողացել են իրենց որոշումը ձևակերպել բացառապես վարչական ոլորտի շրջանակներում ([Mouillet ընդդեմ Ֆրանսիայի](#) (որոշում)): 6-րդ հոդվածի քրեական տիրույթից Դատարանը բացառել է նաև կարգապահությունը խախտելու համար զինվորական սպային աշխատանքից ազատելու ([Suküt ընդդեմ Թուրքիայի](#) (որոշում)), կարգապահական վարույթի արդյունքում ոստիկանության քննիչին աշխատանքից ազատելու վերաբերյալ վեճերը ([Nikolova and Vandova ընդդեմ Բուլղարիայի](#), § 59) և մասնագիտական էթիկան խախտելու համար հարուցված կարգապահական վարույթի արդյունքում

Գերագույն դատարանի դատավորին աշխատանքից ազատելու վերաբերյալ վեճը (*Oleksandr Volkov ընդդեմ Ուկրաինայի*, §§ 92-95):

273. Բանտի համատեքստի և բանտում առանձնահատուկ կարգապահական ռեժիմի մասին «պատշաճ ենթադրություն» անելիս 6-րդ հոդվածը կարող է կիրառվել բանտի կարգապահության դեմ ուղղված հանցագործությունների նկատմամբ՝ հաշվի առնելով մեղադրանքի բնույթը և պատժի խստությունն ու բնույթը (պրոբացիոն ծառայության աշխատակցին սպանելու սպառնալիքին վերաբերվող մեղադրանքը և բանտի աշխատակցին վիրավորելը, որի արդյունքում ազատագրվման ժամկետը երկարաձգվում է համապատասխանաբար քառասուն և յոթ օրով (*Ezeh and Connors ընդդեմ Միացյալ Թագավորությունների* (ՄՊ), § 82, ի հակադրումն, տե՛ս *Šitić ընդդեմ Խորվաթիայի*, §§ 51-63):

Այնուամենայնիվ, բանտային համակարգին վերաբերող վարույթներն որպես այդպիսին չեն դիտարկվում 6-րդ հոդվածի քրեական տիրույթի շրջանակներում (*Boulois ընդդեմ Լյուքսեմբուրգի* (ՄՊ), § 85): Այսպես, օրինակ, բանտարկյալի բարձր վերահսկողության բաժանմունք տեղափոխումը քրեական մեղադրանքին չի առնչվում. այդ միջոցը և դրան ուղեկցող սահմանափակումները վիճարկելու դատարանի մատչելիության իրավունքը պետք է քննվի 6-րդ հոդված 1-ին կետի քաղաքացիական տիրույթի շրջանակներում (*Enea ընդդեմ Իտալիայի* (ՄՊ), § 98):

274. Դատարանի՝ վարույթի ընթացքում ցուցաբերած անկարգ վարքի (դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունք) կանոններին համապատասխան կարգադրած միջոցառումները չեն դիտարկվում 6-րդ հոդվածի շրջանակներում, քանի որ դրանք իրենց տեսակով համարվում են կարգապահական լիազորությունների իրագործում (*Ravnsborg ընդդեմ Շվեդիայի*, § 34, *Putz ընդդեմ Ավստրիայի*, §§ 33-37): Այնուամենայնիվ, պատժի բնույթից և խստության աստիճանից կախված՝ 6-րդ հոդվածը կարող է կիրառվել դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունք ցուցաբերելու արդյունքում դատապարվելու նկատմամբ, եթե ներպետական օրենքում այն դասակարգված է որպես քրեական հանցանք (*Kyprianou ընդդեմ Կիպրոսի* (ՄՊ), §§ 61-64 գործը, որը վերաբերում էր 5 օր տևողությամբ ազատագրվմանը) կամ վարչական իրավախախտում (*Zaicevs ընդդեմ Լատվիայի*, §§ 31-36, գործը, որը վերաբերում էր եռօրյա վարչական կալանքին):

275. Ինչ վերաբերում է հետաքննության գաղտնիության խախտմանը, ապա անհրաժեշտ է տարբերակել մի կողմից այն անձանց, օրինակ՝ դատավորներ, իրավաբաններ և մնացած բոլոր այն անձինք, ովքեր սերտորեն առնչվում են դատարանների գործունեությանը, ովքեր ամեն ինչից անկախ պարտավորվում են պահպանել հետաքննության գաղտնիությունը, և մյուս կողմից՝ [դատավարության] այն կողմերը, որոնց նկատմամբ դատական համակարգի կարգապահական ոլորտը չի կիրառվում (*Weber ընդդեմ Շվեյցարիայի*, §§ 33-34):

276. Ինչ վերաբերում է Խորհրդարանի հանդեպ անհարգալից վերաբերմունքին՝ Դատարանը տարբերակում է օրենսդրի՝ իր անդամների իրավունքների խախտմանն առնչվող վարույթը և, մյուս կողմից՝ անդամ չհանդիսացող անձանց՝ որևէ այլ վայրում կատարած գործողությունների համար պատժելու ընդլայնված իրավասությունը: Առաջին դեպքը կարող է դիտվել իբրև կարգապահական բնույթ ունեցող, իսկ երկրորդը Դատարանը համարում է քրեական՝ հաշվի առնելով ընդհանուր կիրառելիությունը և հնարավոր պատժի խստությունը (*Demicoli ընդդեմ Մալթայի*, § 32 գործում՝ մինչև 60 օր տևողությամբ ազատագրվում և տուգանք):

(ii) Վարչական, հարկային, մաքսային և մրցակցության
պաշտպանության իրավունքներին վերաբերող վարույթներ

277. Հետևյալ վարչական իրավախախտումները կարող են դիտարկվել 6-րդ հոդվածի քրեական տիրույթի շրջանակներում՝

- ճանապարհային երթևեկությանը առնչվող իրավախախտումները, որոնք պատժվում են տուգանքով կամ վարորդական իրավունքի զրկմամբ ([Lutz pնդդեմ Գերմանիայի](#), § 182, [Schmautzer pնդդեմ Ավստրիայի](#), [Malige pնդդեմ Ֆրանսիայի](#)),
- հասարակական կարգը կամ անդորրը խախտող ոչ մեծ ծանրության հանցանքները ([Lauko pնդդեմ Սլովակիայի](#), [Nicoleta Gheorghe pնդդեմ Ռումինիայի](#), §§ 25-26),
- սոցիալական ապահովության օրենսդրության դեմ կատարված հանցանքներ (զբաղվածության մասին չհայտնելը, անկախ տուգանքի չափի փոքրությանը, տե՛ս [Hüseyin Turan pնդդեմ Թուրքիայի](#), §§ 18-21):
- էթնիկ հողի վրա ատելություն սերմանելու և այն հրահրող նյութեր բաժանելու վարչական հանցանք, որը պատժվում է վարչական նախազգուշացմամբ և խնդրո առարկա հրապարակումների առգրավմամբ ([Balsytė-Lideikienė pնդդեմ Լիտվայի](#), § 61):

278. 6-րդ հոդվածը կիրառվում է հավելյալ հարկային վարույթների նկատմամբ՝ հիմք ընդունելով հետևյալ տարրերը՝ 1. տուգանք նախատեսող օրենքը վերաբերում է հարկատու հանդիսացող բոլոր քաղաքացիներին, 2. հավելումը չի դիտվել որպես [հարկային մարմնի] կրած վնասի դիմաց դրամական փոխհատուցում, այլ իրականում հետագա խախտումը կանխարգելող պատիժ է, 3. այն նշանակվել է միաժամանակ պատժիչ և կանխարգելիչ նպատակ հետապնդող ընդհանուր կանոնով, և 4. հավելման չափն էական է ([Bendenoun pնդդեմ Ֆրանսիայի](#)): Հանցանքի քրեական բնույթը կարող է 6-րդ հոդվածը կիրառելու համար բավարար հիմք հանդիսանալ, անկախ նրանից, որ հավելյալ հարկի գումարը փոքր է ([Jussila pնդդեմ Ֆինլանդիայի](#) (ՄՊ), § 38 գործում վերագնահատված հարկի 10 տոկոսը): Առանձնահատուկ տնտեսական գործունեություն իրականացնող սահմանափակ խմբով անձանց նկատմամբ կիրառվող հավելյալ հարկերը 6-րդ հոդվածի ինքնուրույն իմաստով կարող են որակվել որպես «քրեական»՝ այնքանով որքանով դրանք նպատակ ունեն հարկեր և այլ մասնակցություններ վճարելու համընդհանուր պարտավորությունը հարմարեցնել տնտեսական գործունեության արդյունքում առաջ եկող հատուկ հանգամանքներին ([Steininger pնդդեմ Ավստրիայի](#), §§ 33-38):

279. Այնուամենայնիվ, 6-րդ հոդվածը ոչ «մաքուր» հարկի չափի որոշման, ոչ էլ ժամկետանց տոկոսների վճարմանն առնչվող վարույթների նկատմամբ չի կիրառվում, այնքանով որքանով այդ վարույթները հիմնականում նպատակ ունեն հարկային մարմիններին հասցված վնասի դիմաց դրամական փոխհատուցում տրամադրել, այլ ոչ թե կանխարգելել հետագա խախտումը ([Mieg de Boofzheim pնդդեմ Ֆրանսիայի](#) (որոշում)):

280. [Դատարանը] վճռել է, որ 6-րդ հոդվածի քրեական կողմը կիրառվում է մաքսային օրենքի ([Salabiaku pնդդեմ Ֆրանսիայի](#), § 24), ֆինանսական և բյուջետային հարցեր քննելու իրավագործություն ունեցող դատարանի նշանակված

տուգանքների նկատմամբ ([Guisset ընդդեմ Ֆրանսիայի](#), § 59) և ֆինանսական, տնտեսական, մրցակցության պաշտպանության բնագավառներում իրավագործություն ունեցող որոշ վարչական մարմիններում վարույթների նկատմամբ ([Lilly France S.A. ընդդեմ Ֆրանսիայի](#) (որոշում), [Dubus S.A. ընդդեմ Ֆրանսիայի](#), §§ 35-38, [A. Menarini Diagnostics S.r.l. ընդդեմ Իտալիայի](#), §§ 38-44):

(iii) Քաղաքական բնույթի հարցեր

281. [Դատարանը] վճռել է, որ 6-րդ հոդվածի քրեական կոդը չի կիրառվում ընտրական սանկցիաների ([Pierre-Bloch ընդդեմ Ֆրանսիայի](#), §§ 53-60), քաղաքական կուսակցությունների կազմալուծման հարցը ([Refah Partisi \(the Welfare Party\) and Others ընդդեմ Թուրքիայի](#) (որոշում)) քննող պառլամենտական հանձնաժողովների ([Montera ընդդեմ Իտալիայի](#) (որոշում)) և Սահմանադրության լուրջ խախտման համար Նախագահին անվստահություն հայտնելու (իմպինչմենտի) վերաբերյալ վարույթների նկատմամբ ([Paksas ընդդեմ Լիտվայի](#) (ՄՊ), §§ 66-67):

282. Ինչ վերաբերում է կոռուպացված և չարաշահող պաշտոնյաներին համակարգից հեռացնելու նպատակով իրականացվող գնահատումների և քննությունների (լուստրացիայի) վարույթներին, Դատարանը վճռել է, որ քրեական ենթատեքստի գերակայության պայմաններում (հանցանքի բնույթը՝ պետության անվտանգության ծառայություններում աշխատելու կամ վերջիններիս հետ համագործակցելու մասին ոչ ճշմարտացի հայտարարություն անելը, և պատժի խստությունը՝ որոշ տեսակի մասնագիտական գործունեություն ծավալելու երկարաժամկետ արգելք) այդ վարույթները կարող են դիտարկվել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի քրեական տիրույթում ([Matyjek ընդդեմ Լեհաստանի](#) (որոշում), ի հակադրումն՝ տե՛ս [Sidabras and Džiautas ընդդեմ Լիտվայի](#) (որոշում)):

(iv) Վտարում և հանձնում

283. Օտարերկրյա քաղաքացիների վտարման հետ կապված ընթացակարգերը, անկախ այն հանգամանքից, որ դրանք հնարավոր է հարուցված լինեն քրեական վարույթի համատեքստում, 6-րդ հոդվածի շրջանակներում չեն դիտարկվում ([Maouia ընդդեմ Ֆրանսիայի](#) (ՄՊ), § 39): Նույն բացառիկ մոտեցումը կիրառվում է հանձնման ընթացակարգերի առնչությամբ ([Peñafiel Salgado ընդդեմ Իսպանիայի](#) (որոշում)) կամ Եվրոպական միության բոլոր անդամ պետությունների տարածքում վավեր ձերբակալման մասին որոշմանը (European arrest warrant) վերաբերող վարույթների նկատմամբ ([Monedero Angora ընդդեմ Իսպանիայի](#) (որոշում)):

284. Ի հակադրումն վերոնշյալի՝ ազատագրված պատիժը արտաքսմամբ և ազգային տարածքից 10 տարով վտարմամբ փոխարինելը կարող է դիտարկվել որպես պատիժ, որը նշանակվել է այն նույն հիմքերով, որոնք առաջ էին եկել առաջին դատապարտման ժամանակ ([Gurguchiani ընդդեմ Իսպանիայի](#), §§ 40 և 47-48):

(v) Քրեական դատավարության տարբեր փուլերը, օժանդակ վարույթները և իրավական պաշտպանության միջոցները

285. 6-րդ հոդվածով նախատեսված երաշխիքները հասարակական կարգի

խախտումը կամ հանցագործությունը կանխելու նպատակով կիրառվող միջոցառումների նկատմամբ չեն տարածվում (նստիկանության կողմից իրականացվող հատուկ վերահսկողություն մասով՝ [Raimondo *ընդդեմ Իսայիայի*, § 43](#) կամ անչափահասի՝ իր դպրոցի աղջիկների սեռական անձեռնմխելիության դեմ կատարած ոտնձգությունների առնչությամբ նստիկանության նախագգուշացման մասով՝ [R. *ընդդեմ Միացյալ Թագավորությունների*](#) (որոշում)):

286. Սկզբունքորեն, 6-րդ հոդվածի քրեական կողմը չի կիրառվում այն վարույթների նկատմամբ, որոնք առնչվում են անվճար իրավաբանական օգնություն ստանալու դիմումներին ([Gutfreund *ընդդեմ Ֆրանսիայի*, §§ 36-37](#)):

287. Ինչ վերաբերում է մինչդատական վարույթին (հարցաքննում և հետաքննություն)՝ Դատարանը քրեական դատավարությունը դիտարկում է որպես մեկ ամբողջություն: Հետևաբար, 6-րդ հոդվածի որոշ պահանջներ, ինչպիսիք են՝ ողջամիտ ժամանակի կամ պաշտպանության իրավունքի պահանջը, դատավարության այս փուլում նույնպես կարող են լինել էական՝ այնքանով, որքանով դրանց կոպիտ խախտումը կվնասի արդարության իրականացմանը ([Imbrioscia *ընդդեմ Շվեյցարիայի*, § 36](#)): Օրինակ՝ 6-րդ հոդվածի 1-ին կետը որպես կանոն պահանջում է, որ փաստաբանի մատչելիության իրավունքը տրամադրվի նստիկանության կողմից կասկածյալին հարցաքննության ենթարկելու պահից սկսած, բացառությամբ եթե ապացուցվի, որ յուրաքանչյուր գործի հատուկ հանգամանքների լույսի ներքո այս իրավունքը սահմանափակելու համար առկա էին հիմնավոր պատճառներ ([Saldut *ընդդեմ Թուրքիայի*, § 55](#), տե՛ս նաև [Dayanan *ընդդեմ Թուրքիայի*, §§ 31-32](#)):

288. Չնայած քննող դատավորները չեն որոշում «քրեական մեղադրանքը»՝ նրանց ձեռնարկած քայլերն ունեն ուղղակի ազդեցություն հաջորդող վարույթների արդարության և ընթացքի, ներառյալ՝ բուն դատավարության վրա: Համապատասխանաբար, 6-րդ հոդվածի 1-ին կետը կարող է կիրառվել հետաքննության նկատմամբ, որն իրականացվում է հետաքննող դատավորների կողմից, չնայած՝ 6-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված երաշխիքները հնարավոր է չկիրառվեն (հետաքննող դատավորի նկատմամբ անաչառության պահանջի կիրառելիության մասով՝ [Vera Fernández-Huidobro *ընդդեմ Իսպանիայի*, §§ 108-14](#)):

289. 6-րդ հոդվածը կիրառվում է «քրեական մեղադրանքը» որոշելու նպատակով իրականացվող ողջ դատավարության ընթացքում, ներառյալ՝ դատավճռի կայացումը (օրինակ՝ բռնագրավման հետ կապված վարույթները թույլ են տալիս պետական դատարաններին որոշել գումարի չափը, որն ենթակա է սահմանման բռնագրավման հրամանագրում՝ [Phillips *ընդդեմ Միացյալ Թագավորությունների*, § 39](#)): 6-րդ հոդվածը կարող է կիրառվել նաև այն դատավարությունների նկատմամբ, որոնք առնչվում են առանց թույլտվության կառուցված տունը քանդելուն. այս դեպքում դա կարող է դիտվել որպես «պատիժ» ([Hamer *ընդդեմ Բելգիայի*, § 60](#)): Սակայն, այս հոդվածը չի կիրառվում այն դատավարությունների նկատմամբ, որոնք նպատակ ունեն նախորդ դատավճիռը համապատասխանեցնել է նոր Քրեական օրենսգրքի ավելի բարենպաստ դրույթներին ([Nurmagomedov *ընդդեմ Ռուսաստանի*, § 50](#)):

290. Դատավճռի կատարման վարույթները, օրինակ՝ համաներման դիմումի հետ կապված վարույթը ([Montcornet de Caumont *ընդդեմ Ֆրանսիայի*](#) (որոշում)), պայմանական վաղաժամկետ ազատման վարույթը ([Aldrian *ընդդեմ Ավստրիայի*](#) (Հանձնաժողովի որոշում)), տե՛ս նաև [Macedo da Costa *ընդդեմ Լյուքսեմբուրգի*](#)

(որոշում)), Դատապարտյալների փոխանցման մասին եվրոպական կոնվենցիայով նախատեսված փոխանցման վարույթը ([Szabó *ընդդեմ Շվեդիայի*](#) (որոշում), ի հակառակ նշված գործերի և հաշվի առնելով որոշ հանգամանքներ, տե՛ս [Buijen *ընդդեմ Գերմանիայի*](#), §§ 40-45, կամ կատարման (*exequatur*) վարույթները, որոնք առնչվում են օտարերկրյա դատարանի կողմից բռնագրավման որոշման կատարմանը ([Saccoccia *ընդդեմ Ավստրիայի*](#) (որոշում), 6-րդ հոդվածի քրեական տիրույթի շրջանակներում չեն դիտարկվում:

291. Սկզբունքորեն, երրորդ անձանց գույքային իրավունքների վրա բացասաբար անդրադարձող բռնագրավումները նրանց դեմ քրեական հետապնդում իրականացնելու սպառնալիքի բացակայության պայմաններում «քրեական պատժի որոշում» չեն ենթադրում ([Air Canada *ընդդեմ Միացյալ Թագավորությունների*](#) գործում ինքնաթիռի բռնագրավումը, [AGOSI *ընդդեմ Միացյալ Թագավորությունների*](#), §§ 65-66 գործում ոսկե մետաղադրամների բռնագրավումը): Այսպիսի միջոցառումները դիտարկվում են 6-րդ հոդվածի քաղաքացիական տիրույթում ([Silickienė *ընդդեմ Լիտվայի*](#), §§ 45-46):

292. 6-րդ հոդվածի երաշխիքները սկզբունքորեն կարող են կիրառվել վճռաբեկ բողոքների ([Meftah and Others *ընդդեմ Ֆրանսիայի*](#) (ՄՊ) § 40) և Սահմանադրական դատարանում վարույթների նկատմամբ ([Gast and Popp *ընդդեմ Գերմանիայի*](#), §§ 65-66, [Caldas Ramírez de Arrellano *ընդդեմ Իսպանիայի*](#) (որոշում)), որտեղ դրանք հանդիսանում են համապատասխան քրեական վարույթի հետագա փուլը և դրանց արդյունքները դատապարտյալի համար կարող են վճռորոշ լինել:

293. 6-րդ հոդվածը չի կիրառվում այն վարույթների նկատմամբ, որոնք վերաբերում են գործով վարույթի վերաբացմանը, որովհետև անձը, ում նկատմամբ կայացրած վճիռը վերջնական է, և ով գործով վարույթի վերաբացման համար հայց է ներկայացնում, 6-րդ հոդվածի իմաստով «քրեական հանցանքի մեջ մեղադրվող» չի հանդիսանում ([Fischer *ընդդեմ Ավստրիայի*](#) (որոշում)): Միայն վերաբացման պահանջի բավարարմանը հաջորդող նոր դատավարությունները կարող են դիտարկվել որպես քրեական մեղադրանքի որոշման վարույթներ ([Löffler *ընդդեմ Ավստրիայի*](#), §§ 18-19): Նմանապես, 6-րդ հոդվածը չի կիրառվում այն պահանջի նկատմամբ, որն առնչվում է Դատարանի կողմից խախտման հայտնաբերմանը հաջորդող քրեական գործով վարույթի վերաբացմանը ([Öcalan *ընդդեմ Թուրքիայի*](#) (որոշում)): Սակայն, վերջնական վճռի փոփոխման համար հիմք հանդիսացած վերահսկող-վերանայող վարույթները 6-րդ հոդվածի քրեական տիրույթի շրջանակներում դիտարկվում են ([Vanyan *ընդդեմ Ռուսաստանի*](#), § 58):

294. Եվ վերջապես, Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 2-րդ կետը (անմեղության կանխավարկած) կարող է կիրառվել քրեական դատավարության ավարտին հաջորդող հետագա վարույթների նկատմամբ: Այն դեպքում, երբ առկա է քրեական մեղադրանք և քրեական դատավարությունն ավարտվել է արդարացմամբ, քրեական դատավարության սուբյեկտ հանդիսացող անձն օրենքի առջև անմեղ է և նրա հանդեպ պետք է ցուցաբերվի համապատասխան վերաբերմունք: Այսպիսով, այս իմաստով անմեղության կանխավարկածը կշարունակի գործել նաև քրեական դատավարությունից հետո, որպեսզի ապահովվի չապացուցված ցանկացած մեղադրանքի առնչությամբ տվյալ անձի անմեղության պաշտպանությունը ([Allen *ընդդեմ Միացյալ Թագավորությունների*](#) (ՄՊ), § 103): Սակայն, որպեսզի համապատասխան վարույթի առնչությամբ 6-րդ հոդվածի 2-րդ կետի կիրառելիությունը հաստատվի, դիմումատուն պետք է ապացուցի ավարտված քրեական դատավարության և հաջորդող վարույթների միջև կապի առկայությունը

(նույն տեղում, § 104): Նման կապը հնարավոր է առկա լինի, երբ, օրինակ՝ հաջորդող վարույթները պահանջում են նախորդ քրեական դատավարության արդյունքների քննություն և, մասնավորապես, երբ դրանք պարտավորեցնում են դատարանին վերլուծել քրեական գործով դատավճիռը, մասնակցել քրեական գործում առկա ապացույցների վերանայմանը կամ գնահատմանը, գնահատել դիմումատուի մասնակցությունն այն իրադարձություններին, որոնք քրեական մեղադրանքի առաջադրման հիմք են հանդիսացել կամ մեկնաբանել դիմումատուի մեղավորության մասին վկայող նշանները (նույն տեղում): Հետևելով այս մոտեցմանը՝ Դատարանը վճռել է, որ 6-րդ հոդվածի 2-րդ կետը կիրառելի է նաև անարդար դատավճռի դիմաց փոխհատուցման տրամադրման վարույթների նկատմամբ (նույն տեղում, §§ 106-08, այլ օրինակների համար, որտեղ Դատարանն ուսումնասիրել է 6-րդ հոդվածի 2-րդ կետի կիրառելիության հարցը տե՛ս § 98):

(գ) Կոնվենցիայի այլ հոդվածների կամ դրան կից Արձանագրությունների հետ փոխհարաբերակցությունը

295. 5-րդ հոդվածի 1-ին կետի (գ) ենթակետն ազատագրվումը թույլատրում է միայն քրեական դատավարության առնչությամբ: Սա ակնհայտ է դառնում այդ դրույթի ձևակերպումից, որը պետք է մեկնաբանվի (գ) ենթակետի և 3-րդ պարբերության հետ զուգակցմամբ ([*Ciulla ընդդեմ Իտալիայի*](#), § 38): Այդ իսկ պատճառով, «քրեական մեղադրանք» հասկացությունը կարևոր է նաև 5-րդ հոդվածի 1-ին կետի (ա) և (գ) ենթակետերով և 3-րդ կետով նախատեսված երաշխիքների կիրառելիության համար (տե՛ս օրինակ [*Steel and Others ընդդեմ Միացյալ Թագավորությունների*](#), § 49): Հետևաբար, այն դատավարությունները, որոնք վերաբերում են 5-րդ հոդվածի 1-ին կետի հիմքերից որևէ մեկով նախատեսված կալանավորմանը, ինչպիսին է օրինակ՝ հոգեկան հիվանդություն ունեցող անձի կալանավորումը (կետ (ե)), դիտարկվում են 6-րդ հոդվածի քրեական տիրույթի շրջանակներում ([*Aerts ընդդեմ Բելգիայի*](#), § 59):

296. Չնայած քրեական դատավարության ոլորտում 5-րդ հոդվածի 4-րդ կետի և 6-րդ հոդվածի 1-ին կետի միջև առկա է սերտ կապ՝ պետք է հաշվի առնել այն, որ երկու հոդվածները հետապնդում են տարբեր նպատակներ և հետևաբար 6-րդ հոդվածի քրեական մասը չի առնչվում այն դատավարություններին հետ, որոնք վերաբերում են կալանավորման օրինականության վերանայմանը, որը դիտարկվում է 5-րդ հոդվածի 4-րդ կետի ներքո, որն էլ 6-րդ հոդվածի նկատմամբ հանդիսանում է *lex specialis* ([*Reinprecht ընդդեմ Ավստրիայի*](#), §§ 36, 39, 48 և 55):

297. Կոնվենցիայի 7-րդ հոդվածի համաձայն «պատժի» գաղափարը ևս ինքնուրույն հասկացություն է ([*Welch ընդդեմ Միացյալ Թագավորությունների*](#), § 27, [*Del Río Prada ընդդեմ Իսպանիայի*](#) (ՄՊ), §§ 81-90): «Պատժի» առկայության գնահատման հարցում Դատարանը որպես մեկնարկային կետ դիտարկում է այն հարցը, թե արդյոք քննարկվող միջոցառումը կիրառվել է «քրեական հանցանքի» կատարման մեջ դատապարտվելուց հետո: Այս պարագայում կիրառվում է *Engel and Others* գործով սահմանված եռակի թեստը ([*Brown ընդդեմ Միացյալ Թագավորությունների*](#) (որոշում)):

298. Ի վերջո, «քրեական հանցանք» և «պատժ» հասկացությունները կարևոր են նաև 2-րդ հոդվածի և Կոնվենցիային կից թիվ 7 Արձանագրության 4-րդ հոդվածի կիրառելիության համար ([*Greccu ընդդեմ Ռումինիայի*](#), § 81, և [*Sergey Zolotukhin ընդդեմ Ռուսաստանի*](#) (ՄՊ), §§ 52- 57) :

3. «Անձնական կյանք» և «ընտանեկան կյանք» հասկացությունները

Հոդված 8՝ Անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունքը

«1. Յուրաքանչյուր ոք ունի իր անձնական ու ընտանեկան կյանքի, (...) նկատմամբ հարգանքի իրավունք:

2. Չի թույլատրվում պետական մարմինների միջամտությունն այդ իրավունքի իրականացմանը, բացառությամբ այն դեպքերի, երբ դա նախատեսված է օրենքով և անհրաժեշտ է Մարդու իրավունքների մասին Կոնվենցիա ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության, հասարակական կարգի կամ երկրի տնտեսական բարեկեցության, ինչպես նաև անկարգությունների կամ հանցագործությունների կանխման, առողջության կամ բարոյականության պաշտպանության կամ այլ անձանց իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով»:

299. 8-րդ հոդվածն ուղղված է պաշտպանելու անհատական ինքնավարության չորս բնագավառները՝ անձնական կյանքը, ընտանեկան կյանքը, բնակարանը և անձնական նամակագրությունը, սակայն այդ բնագավառներն իրարամերժ չեն և միջամտությունը կարող է միաժամանակ վերաբերել և՛ ընտանեկան, և՛ անձնական կյանքին ([Mentes and Others ընդդեմ Թուրքիայի](#), § 73, [Stjerna ընդդեմ Ֆինլանդիայի](#), § 37, [López Ostra ընդդեմ Իսպանիայի](#), § 51, [Burghartz ընդդեմ Շվեյցարիայի](#), § 24, [Płoski ընդդեմ Լեհաստանի](#), § 32):

(բ) «Անձնական կյանքի» ոլորտը

300. Անձնական կյանքի հասկացության սպառնիչ սահմանում գոյություն չունի ([Niemiets ընդդեմ Գերմանիայի](#), § 29), այն լայն եզրույթ է ([Peck ընդդեմ Միացյալ Թագավորությունների](#), § 57, [Pretty ընդդեմ Միացյալ Թագավորությունների](#), § 61) և անձնական կյանք հասկացության շրջանակներում դիտարկվող գործերը կարելի է խմբավորել երեք կատեգորիաներով՝ (i) անձի ֆիզիկական, հոգեբանական և բարոյական ամբողջականությունը, (ii) նրա առանձնացվածությունը և (iii) անհատականությունը: Օրինակները ներկայացված են ըստ յուրաքանչյուր կատեգորիա.

(i) ֆիզիկական, հոգեբանական և բարոյական ամբողջականությունը

301. Այն կարող է առնչվել հետևյալ ոլորտներին՝

- անձի ֆիզիկական, հոգեբանական կամ բարոյական ամբողջականությունը ([X and Y ընդդեմ Նիդերլանդների](#), § 22), ներառյալ բուժումը և հոգեբուժական զննումը ([Glass ընդդեմ Միացյալ Թագավորությունների](#), §§ 70-72, [X ընդդեմ Ֆինլանդիայի](#), § 214, [Y.F. ընդդեմ Թուրքիայի](#), § 33, հարկադիր գինեկոլոգիական զննման մասով՝ [Matter ընդդեմ Սլովակիայի](#), § 64, [Worwa ընդդեմ Լեհաստանի](#), § 80) և հարկադրաբար ամլացում ([V.C. ընդդեմ Սլովակիայի](#), § 154, գործը), որը դիտարկվում է նաև ընտանեկան կյանքի ներքո,
- մտավոր առողջությունը ([Bensaid ընդդեմ Միացյալ Թագավորությունների](#), § 47),
- 3-րդ հոդվածով նախատեսված դաժանության մակարդակին չհասնող

վերաբերմունք, որը բավականաչափ բացասական հետևանքներ էր թողել ֆիզիկական և բարոյական ամբողջականության վրա ([Costello-Roberts *ընդդեմ Միացյալ Թագավորությունների*](#), § 36): Ինչ վերաբերում է կալանքի պայմաններին, որոնք չեն հասնում 3-րդ հոդվածով պահանջվող դաժանության աստիճանին, տե՛ս [Raninen *ընդդեմ Ֆինլանդիայի*](#), § 63 և կալանքի տակ գտնվելու ժամանակ հեռուստացույց դիտելու անկարողության մասով, որը անձնական կյանքի վրա կարող է սահմանափակող ազդեցություն ունենալ, տե՛ս [Laduna *ընդդեմ Սլովակիայի*](#), § 54,

– հղի կնոջ ֆիզիկական ամբողջականությունը՝ հղիության արհեստական ընդհատման առնչությամբ ([Tysiāc *ընդդեմ Լեհաստանի*](#), §§ 107 և 110, [A, B and C *ընդդեմ Բուլանդիայի*](#) (ՄՊ), §§ 244-46), հղիության արհեստական ընդհատման և տնային պայմաններում ծննդաբերության ([Ternovszky *ընդդեմ Հունգարիայի*](#), § 22) առնչությամբ կնոջ ֆիզիկական ամբողջականությունը ([Tysiāc *ընդդեմ Լեհաստանի*](#), §§ 107 և 110, [A, B and C *ընդդեմ Բուլանդիայի*](#) (ՄՊ), §§ 244-46), [R.R. *ընդդեմ Լեհաստանի*](#), § 181), ինչպես նաև իմպլանտացիային նախորդող ախտորոշում, երբ բժշկական պատճառներով արհեստական վերարտադրությունը և հղիության ընդհատումը թույլատրելի են ([Costa and Pavan *ընդդեմ Իտալիայի*](#)),

– առողջական և/կամ վատ ինքնազգացողության հիմքով հղիության արհեստական ընդհատման արգելքը՝ չնայած 8-րդ հոդվածը չի կարող մեկնաբանվել որպես հղիությունն արհեստական ընդհատելու իրավունք շնորհող ([A, B and C *ընդդեմ Բուլանդիայի*](#) (ՄՊ), §§ 214 և 216), տե՛ս նաև [P. and S. *ընդդեմ Լեհաստանի*](#), §§ 96, 99 և 111-112 (երբ բժիշկները բռնաբարության արդյունքում հղիացած անչափահասին ժամանակին և անարգել ձևով չեն տրամադրել հղիության արհեստական ընդհատման հնարավորություն և բացահայտել են անչափահասի վերաբերյալ տեղեկատվությունը),

– ընտանեկան բռնության գոհերի ֆիզիկական և հոգեբանական ամբողջականությունը ([Hajduová *ընդդեմ Սլովակիայի*](#), § 46),

– փողոցային շների կողմից հարձակման ենթարկված անձի ֆիզիկական ամբողջականությունը ([Georgel and Georgeta Stoicescu *ընդդեմ Ռումինիայի*](#), § 62),

– 8-րդ հոդվածով նախատեսված՝ անձի ֆիզիկական ամբողջականությունն ապահովելու պետության պոզիտիվ պարտականությունը կարող է վերաբերել նաև քրեական քննության արդյունավետությանն առնչվող հարցերին ([C.A.S. and C.S. *ընդդեմ Ռումինիայի*](#), § 72),

– դպրոցում բռնությունների ենթարկված երեխայի ֆիզիկական ամբողջականությունը կարող է դիտարկվել 8-րդ հոդվածի շրջանակներում, սակայն, բռնության մասին պնդումները, մասնավորապես, այն գործողությունների վայրի, ժամանակի և բնույթի մասին, որոնց առնչությամբ բողոք է ներկայացվել, պետք է լինեն կոնկրետ և մանրամասն ([Durdević *ընդդեմ Խորվաթիայի*](#), § 118),

– սեռական ինքնությունը ([B. *ընդդեմ Ֆրանսիայի*](#), §§ 43-63), տրանսսեքսուալների հետվիրահատական կարգավիճակի իրավաբանական ճանաչման իրավունքը ներառյալ ([Christine Goodwin *ընդդեմ Միացյալ Թագավորությունների*](#) (ՄՊ), § 77)

- սեռական կողմնորոշումը ([*Dudgeon ընդդեմ Միացյալ Թագավորությունների*](#), § 41)
- սեռական կյանքը (նույն տեղում, [*Laskey, Jaggard and Brown ընդդեմ Միացյալ Թագավորությունների*](#), § 36, [*A.D.T. ընդդեմ Միացյալ Թագավորությունների*](#), §§ 21-26, [*Mosley ընդդեմ Միացյալ Թագավորությունների*](#), § 71),
- գենետիկայի առումով ծնող դառնալու կամ չդառնալու ընտրության հարգանքի իրավունքը ([*Evans ընդդեմ Միացյալ Թագավորությունների*](#) (ՄՊ), § 71), ներառյալ՝ ծնող դառնալու համար պայմաններ ընտրելու իրավունքը (տնային պայմաններում ծննդաբերության մասով՝ [*Ternovszky ընդդեմ Հունգարիայի*](#), § 22, վերաբերյալ): Այնուամենայնիվ, Դատարանը չի պատասխանել այն հարցին, թե արդյոք որդեգրելու իրավունքը պետք է դիտարկվի միայն 8-րդ հոդվածի շրջանակներում՝ ընդունելով, որ միայնակ անձի՝ ներպետական իրավունքին համապատասխան որդեգրման թույլտվության համար դիմելու իրավունքը դիտարկվում է 8-րդ հոդվածի շրջանակներում ([*E.B. ընդդեմ Ֆրանսիայի*](#) (ՄՊ), §§ 46 և 49, տե՛ս նաև որդեգրման մատչելի ընթացակարգը ապահովման մասով՝ [*Schwizgebel ընդդեմ Շվեյցարիայի*](#), § 73): Կոնվենցիան չի երաշխավորում անձի որդեգրումը դադարեցնելու իրավունքը ([*Gotia ընդդեմ Ռումինիայի*](#) (որոշում)),
- մասնագիտական կամ գործարարական բնույթի գործողությունները ([*Niemietz ընդդեմ Գերմանիայի*](#), § 29, [*Halford ընդդեմ Միացյալ Թագավորությունների*](#), § 44, [*Özpinar ընդդեմ Թուրքիայի*](#), § 46, [*Oleksandr Volkov ընդդեմ Ուկրաինայի*](#), §§ 165-67, [*Michaud ընդդեմ Ֆրանսիայի*](#), § 91, ինչպես նաև [*Gillberg ընդդեմ Շվեդիայի*](#) (ՄՊ) (ՄՊ), § 74 գործը, որով Մեծ պալատը գտել է, որ որպես պետական պաշտոնյա պարտականություններն անտեսելու առնչությամբ դիմումատուի՝ պաշտոնի չարաշահման համար դատապարտումը չի դիտարկվում 8-րդ հոդվածի շրջանակներում,
- որոշ մասնագիտությունների կամ աշխատանքի տեսակի սահմանափակումները ([*Sidabras and Džiautas ընդդեմ Լիտվայի*](#), §§ 47-50, [*Bigaeva ընդդեմ Հունաստանի*](#), §§ 22-25),
- հաշմանդամների որոշ իրավունքների վերաբերյալ. որոշվել է 8-րդ հոդվածը կիրառել այն դեպքում, երբ անձին պարտադրվում է վճարել զինվորական ծառայությունից ազատման հարկ՝ չնայած նա համարվել է ծառայության համար ոչ պիտանի ([*Glor ընդդեմ Շվեյցարիայի*](#), § 54), սակայն [8-րդ հոդվածը] չի վերաբերում արձակուրդի ժամանակ հաշմանդամների՝ ծովային հանգստից օգտվելու իրավունքին ([*Botta ընդդեմ Բուլղարիայի*](#)), տես՝ նաև [*Zehnalová and Zehnal ընդդեմ Չեխիայի Հանրապետության*](#) (որոշում) գործը, որը վերաբերում է հանրային շենք մուտք գործելու հաշմանդամների համար նախատեսված հարմարության բացակայությանը, որի արդյունքում անձնական զարգացման կամ այլ անձանց հետ հարաբերություններ հաստատելու կարողության վրա լուրջ հետևանքների առկայության վերաբերյալ բավականաչափ ապացույց չի ներկայացվել, [*Mólka ընդդեմ Լեհաստանի*](#) (որոշում) գործն, որով Դատարանը չի բացառել, որ նշված հարմարության բացակայությունը կարող է ենթադրել 8-րդ հոդվածի կիրառելիություն,
- ընտանիքի անդամների հողարկավորությանը վերաբերող հարցեր,

որոնց առնչությամբ ևս 8-րդ հոդվածը կիրառելի է՝ երբեմն առանց Դատարանի հստակեցման, թե արդյոք միջամտությունը վերաբերում է անձնական, թե ընտանեկան կյանքին. դիախերձումից հետո երեխայի մարմինը վերադարձնելն իշխանությունների կողմից չափազանց ուշացնելը (*Pannullo and Forte* [ընդդեմ Ֆրանսիայի](#), § 36), դիմումատուի ամուսնու աճյունը պարունակող աճյունակալը տեղափոխելու արգելքը (*Elli Poluhas Dödsbo* [ընդդեմ Շվեդիայի](#), § 24), մոր՝ իր մեռելածին երեխայի՝ գուցե և արարողությամբ իրականացվող հողարկավորությանը ներկա գտնվելու և երեխայի մարմինը համապատասխան փոխադրամիջոցով տեղափոխելու իրավունքը (*Hadri-Vionnet* [ընդդեմ Շվեյցարիայի](#), § 52), և մահացած անձի մարմինը ընտանիքի անդամներին չվերադարձնելու մասին որոշումը (*Maskhadova and Others* [ընդդեմ Ռուսաստանի](#), §§ 208-12, *Sabanchiyeva and Others* [ընդդեմ Ռուսաստանի](#)),

– մերկ երեխային գաղտնի տեսանկարահանելու համար քրեական պատասխանատվություն նախատեսող հստակ օրենսդրական դրույթի բացակայությունն, այն դեպքում, երբ առկա է քրեական իրավունքի արդյունավետ դրույթների առկայությունն ապահովելու պետության պոզիտիվ պարտականությունը (*Söderman* [ընդդեմ Շվեդիայի](#) (ՄՊ), § 117),

– դիմումատուների՝ իրենց առողջությանը և կյանքին սպառնացող վտանգը գնահատելու համար անհրաժեշտ տեղեկատվության ստացումն ապահովելու պարտավորությունը (*Vilnes and Others* [ընդդեմ Նորվեգիայի](#)):

(ii) Առանձնացվածությունը

302. Այն կարող է ներառել հետևյալ ոլորտները՝

– անձի՝ իր նկարի և լուսանկարների օգտագործման իրավունքը (*Von Hannover* [ընդդեմ Գերմանիայի](#), §§ 50-53, *Sciacca* [ընդդեմ Իտալիայի](#), § 29, *Reklos and Davourlis* [ընդդեմ Հունաստանի](#), § 40, *Von Hannover* [ընդդեմ Գերմանիայի \(թիվ 2\)](#) (ՄՊ), §§ 95-99),

– անձի համբավը (*Chauvy and Others* [ընդդեմ Ֆրանսիայի](#), § 70, *Pfeifer* [ընդդեմ Ավստրիայի](#), § 35, *Petrina* [ընդդեմ Ռումինիայի](#), § 28, *Polanco Torres and Movilla Polanco* [ընդդեմ Իսպանիայի](#), § 40) և պատիվը (*A.* [ընդդեմ Նորվեգիայի](#), § 64), տե՛ս *Putistin* [ընդդեմ Ուկրաինայի](#) գործը, որտեղ Դատարանը գտել է, որ որոշ հանգամանքներում անձի՝ ընտանիքի մահացած անդամի համբավը կարող է ազդել նրա անձնական կյանքի և ինքնության վրա, եթե համապատասխան անձի և ընտանիքի ընդհանուր համբավի միջև առկա է սերտ կապ: Չնայած անձի կանխատեսելի գործողությունների արդյունքում վերջինիս բարի համբավը կորցնելու մասին բողոքելիս հնարավոր չէ հղում կատարել 8-րդ հոդվածին (տե՛ս, *inter alia*, *Sidabras and Džiautas* [ընդդեմ Լիտվայի](#), § 49, *Mikolajová* [ընդդեմ Սլովակիայի](#), § 57, *Gillberg* [ընդդեմ Շվեդիայի](#) (ՄՊ), § 67),

– անվտանգության ծառայությունների կամ այլ պետության իշխանությունների կողմից հավաքված և պահված անձնական կամ հանրային բնույթի տեղեկատվությունը (օրինակ՝ անձի քաղաքական գործունեության մասին տեղեկություն) (*Rotaru* [ընդդեմ Ռումինիայի](#) (ՄՊ), §§ 43-44, *Amann* [ընդդեմ Շվեյցարիայի](#) (ՄՊ), §§ 65-67, *Leander v Sweden*, § 48): ԴՆԹ-ի , բջիջների նմուշներին և մատնահետքերի մասով, տե՛ս *S. and*

[*Marper ընդդեմ Միացյալ Թագավորությունների*](#) (ՄՊ), §§ 68-86, գործը, որը սակայն անպայմանորեն չի վերաբերում դատապարտվածի ԴՆԹ-ի օրինակը վերցնելուն և պահելուն՝ հնարավոր հետագա քրեական վարույթներում օգտագործելու համար ([*Peruzzo and Martens ընդդեմ Գերմանիայի*](#) (որոշում), §§ 42 և 49): Անձի՝ սեռական բնույթի հանցագործություն կատարած անձանց տեղեկատվական բազայում գրանցվելու մասով, տե՛ս [*Gardel ընդդեմ Ֆրանսիայի*](#), § 58, և հանցագործության մեջ կասկածվող, բայց չդատապարտված անձանց մատնահետքերը վերցնելու, պահելու և վերցնելու երաշխիքների բացակայության մասով, տե՛ս [*M.K. ընդդեմ Ֆրանսիայի*](#), § 26,

– տեղեկատվություն անձի առողջական վիճակի (օրինակ՝ ՄԻԱՎ վարակի մասին ([*Z ընդդեմ Ֆինլանդիայի*](#), § 71, [*C.C. ընդդեմ Բալանիայի*](#), § 33) կամ վերարտադրողական ունակությունների ([*K.H. and Others ընդդեմ Սլովակիայի*](#), § 44)) և անձի առողջությանը սպառնացող վտանգի մասին ([*McGinley and Egan ընդդեմ Միացյալ Թագավորությունների*](#), § 97, [*Guerra and Others ընդդեմ Իտալիայի*](#), § 60),

– հաղորդակցության և հեռախոսային խոսակցությունների վերահսկումը ([*Halford ընդդեմ Միացյալ Թագավորությունների*](#), § 44, [*Weber and Saravia ընդդեմ Գերմանիայի*](#) (որոշում), §§ 76-79), սակայն, պարտադիր չէ գաղտնի գործակալների միջոցով ([*Lüdi ընդդեմ Շվեյցարիայի*](#), § 40), գաղտնի վերահսկման արդյունքում ձեռք բերված տեղեկատվությունը պահելը ճանաչվել է խախտում ([*Association 21 December 1989 and Others ընդդեմ Ռումինիայի*](#), § 115),

– հանրային վայրերի՝ տեսախցիկների միջոցով հսկումը, երբ տեսողական նյութը ձայնագրվում, պահվում և ցուցադրվում է հանրությանը ([*Peck ընդդեմ Միացյալ Թագավորությունների*](#), §§ 57-63),

– անձի՝ GPS-ի միջոցով հսկումը և դրա արդյունքում ձեռք բերված տեղեկատվության մշակումը և օգտագործումը ([*Uzun ընդդեմ Գերմանիայի*](#), § 52),

– գործատուի կողմից աշխատողին տեսահսկելը ([*Köpke ընդդեմ Գերմանիայի*](#) (որոշում) գործը, որը վերաբերում էր գողության մեջ կասկածվող սուպերմարկետի գանձապահին),

– մարդու իրավունքների կազմակերպության անդամակցության հիմքով անձին՝ ոստիկանության կողմից ցուցակում ներառելը և հսկելը ([*Shimovolos ընդդեմ Ռուսաստանի*](#), § 66):

(iii) Ինքնությունը և անհատական ինքնավարությունը

303. Այն կարող է ներառել հետևյալ ոլորտները՝

– անձնական զարգացման իրավունքը և անձնական ինքնությունությունը ([*Pretty ընդդեմ Միացյալ Թագավորությունների*](#), §§ 61 և 67. գործը վերաբերում էր անձի կյանքի, իր պատկերացմամբ՝ անարժանապատիվ և տանջող ավարտից խուսափելու որոշմանը)՝ չնայած, նշվածը չի ներառում անձի՝ այլ անձանց հետ իրականացվող բոլոր հանրային գործողությունները (օրինակ՝ վայրի կաթնասունների շներով որսը՝ [*Friend and Others ընդդեմ Միացյալ Թագավորությունների*](#) (որոշում), §§ 40-43 գործում): 8-րդ հոդվածն անձանց համար ապահովում է միջավայր, որի

շրջանակներում նրանք կարող են ազատորեն հետամուտ լինել իրենց զարգացմանը և անհատականության բավարարմանը, սակայն, այն չի սահմանափակվում անձի տանը կամ սեփական կալվածքներում տեղի ունեցող իր վրա ազդող միջոցառումներով. նույնիսկ հանրային [իրավահարաբերությունների] համատեքստում, գոյություն ունի անձի՝ այլ անձանց հետ շփման տարածք, որը հնարավոր է դիտարկվի անձնական կյանքի իրավունքի շրջանակներում (*P.G. and J.H. ընդդեմ Միացյալ Թագավորությունների*, §§ 56-57),

– անձի որոշումն առ այն, թե ինչպես և երբ պետք է իր կյանքն ավարտվի, եթե ինքն այդ առնչությամբ հնարավորություն ունի արտահայտել իր ազատ կամքը և գործել համապատասխանաբար (*Haas ընդդեմ Շվեյցարիայի*, § 51, *Koch ընդդեմ Գերմանիայի*, § 54, Կոնվենցիայի 8-րդ հոդվածը կարող է ներառել դատաքննության իրավունքը, նույնիսկ այն դեպքում, երբ գործով խնդրո առարկա նյութական իրավունքը դեռ չի հաստատվել),

– դիմումատուների բողոքն առ այն, որ իրենց կյանքի տևողությունը հնարավորին երկարաձգելու նպատակով բժշկի խորհրդակցությամբ բուժում ընտրելու հնարավորության վրա տարածվում է օրենսդրական սահմանափակում (*Hristozov and Others ընդդեմ Բուլղարիայի*, § 116),

– անձի ծագման և ծնողների ինքնության բացահայտման համար անհրաժեշտ տեղեկատվությունը ստանալու իրավունքը (*Mikulić ընդդեմ Խորվաթիայի*, § 53, *Odièvre ընդդեմ Ֆրանսիայի* (ՄՊ), § 29), անձի ինքնությունը բացահայտող փաստաթղթերի առգրավման մասով, տե՛ս *Smirnova ընդդեմ Ռուսաստանի*, §§ 95-97,

– ծննդյան պահից լքված երեխայի համար իր ծագումը կամ մոր ինքնությունը բացահայտող տեղեկատվություն ստանալու անկարողությունը (*Godelli ընդդեմ Իտալիայի*, § 58),

– անձի ամուսնական կարգավիճակն՝ որպես իր անձնական և սոցիալական ինքնության բաղկացուցիչ տարր (*Dadouch ընդդեմ Մալթայի*, § 48),

– հոր՝ իր ենթադրյալ երեխայի հարաբերությունները կարգավորող օրենսդրական դրույթների որոշում (օրինակ՝ հայրությունը վիճարկող վարույթում, տե՛ս *Rasmussen ընդդեմ Դանիայի*, § 33, *Yildirim ընդդեմ Ավստրիայի* (որոշում), *KruškovićKruskovi ընդդեմ Խորվաթիայի*, § 20, *Ahrens ընդդեմ Գերմանիայի*, § 60),

– էթնիկ ինքնությունը (*S. and Marper ընդդեմ Միացյալ Թագավորությունների* (ՄՊ), § 66, *Ciubotaru ընդդեմ Սոդոմիայի*, § 53) և ազգային փոքրամասնության անդամների՝ իրենց ինքնությունը պահպանելու և իրենց սովորույթներին համապատասխան անձնական կյանք վարելու իրավունքը (*Chapman ընդդեմ Միացյալ Թագավորությունների* (ՄՊ), § 73), մասնավորապես, որն է խմբի վերաբերյալ բացասական կարծրատիպի ստեղծումը, ինչը, երբ հասնում է որոշակի մակարդակի, հնարավոր է խմբի անդամների ինքնության, անձնական արժանիքների և ինքնավստահության վրա բացասաբար անդրադառնալ: Այդ առումով, կհամարվի, որ դա ազդում է խմբի անդամների անձնական կյանքի վրա (*Aksu ընդդեմ Թուրքիայի* (ՄՊ), §§ 58-61):

– կրոնական և փիլիսոփայական համոզմունքների մասին

տեղեկատվությունը (*Folgerø and Others ընդդեմ Նորվեգիայի* (ՄՊ), § 98),

– այլ անձանց և արտաքին աշխարհի հետ փոխհարաբերություններ ստեղծելու և զարգացնելու իրավունքը (*Niemietz ընդդեմ Գերմանիայի*, § 29),

– հանրային վայրում անձին կանգնեցնելը և հետախուզելը (*Gillan and Quinton ընդդեմ Միացյալ Թագավորությունների*, §§ 61-65),

– հետախուզությունները և առգրավումները (*McLeod ընդդեմ Միացյալ Թագավորությունների*, § 36, *Funke ընդդեմ Ֆրանսիայի*, § 48),

– բնակություն հաստատած ներգաղթյալների և նրանց համայնքի հետ սոցիալական կապերը՝ «ընտանեկան կյանքի» առկայությունից կամ այլ հանգամանքներից անկախ (*Üner ընդդեմ Նիդերլանդների* (ՄՊ), § 59, *A.A. ընդդեմ Միացյալ Թագավորությունների*, § 49),

– Շվեյցարիայի տարածք մուտք գործելու կամ Շվեյցարիայի տարածքով տեղափոխվելու արգելքը, որը դիմումատուի նկատմամբ կիրառվել էր Թալիբանի մասին դաշնային հրամանագրին (Federal Taliban Ordinance) կցված ցուցակում դիմումատուի անվան ավելացման արդյունքում (*Nada ընդդեմ Շվեյցարիայի* (ՄՊ), §§ 163-66),

– շրջակա միջավայրի լուրջ աղտոտումը, որն ազդում էր անձանց լավ ինքնազգացողության վրա և խանգարում, որպեսզի նրանք օգտվեն իրենց տան պայմաններից՝ այդպիսով բացասաբար ազդելով նրանց անձնական և ընտանեկան կյանքի վրա (*López Ostra ընդդեմ Իսպանիայի*, § 51, *Táatar ընդդեմ Ռուսիայի*, § 97), ներառյալ՝ բանտի կողքի աղբամանի տհաճ հոտը, որը հասնում էր բանտարկյալի խցին՝ երկար տարիներ նրան հասանելի միակ «ապրելու տարածքին» (*Brânduse ընդդեմ Ռուսիայի*, §§ 64-67), համապատասխան մարմինների կողմից աղբը շարունակաբար չհավաքելը և չհեռացնելը (*Di Sarno and Others ընդդեմ Իտալիայի*, § 112) և ձայնային աղտոտումը (*Deés ընդդեմ Հունգարիայի*, §§ 21-24 գործը, որ վերաբերում էր ճանապարհային երթևեկության աղմուկին, *Mileva and Others ընդդեմ Բուլղարիայի*, § 97, գործը, որը վերաբերում էր հարևան շենքի համակարգչային սրահից լսվող աղմուկին),

– որոշ հանգամանքներում քաղաքացիության տրամադրման կամայական մերժումը՝ չնայած նրան, որ կոնկրետ երկրի քաղաքացիություն ձեռք բերելու իրավունքը որպես այդպիսին Կոնվենցիայով երաշխավորված չէ (*Karashev ընդդեմ Ֆինլանդիայի* (որոշում)), այն անձանց բնակության հարցը չկարգավորելը, որոնց տվյալները Սլովենիայի անկախությունից հետո մշտական կացություն ունեցող անձանց ռեգիստրից «ջնջվել» էին (*Kurić and Others ընդդեմ Սլովենիայի* (ՄՊ), § 339),

– անձի անունը և ազգանունը (*Mentzen ընդդեմ Լատվիայի* (որոշում), *Burghartz ընդդեմ Շվեյցարիայի*, § 24, *Guillot ընդդեմ Ֆրանսիայի*, §§ 21-22, *Güzel Erdagöz ընդդեմ Թուրքիայի*, § 43, *Losonci Rose and Rose ընդդեմ Շվեյցարիայի*, § 26, *Garnaga ընդդեմ Ուկրաինայի*, § 36):

(գ) «Ընտանեկան կյանքի» ոլորտը

304. Ընտանեկան կյանք եզրույթը ինքնուրույն հասկացություն է (*Marckx ընդդեմ Բելգիայի*, Հանձնաժողովի զեկույց, § 69): Այդ իսկ պատճառով, ընտանեկան կյանքի առկայությունը հիմնականում փաստացի հանգամանք է, որը կախված է

անձնական սերտ կապերի առկայությունից (([K. քնդդեմ Միացյալ Թագավորությունների](#) (Հանձնաժողովի որոշում): Հետևաբար, Դատարանն այդ ընտանեկան կապերը պետք է դիտի *de facto*, օրինակ՝ հայցվորների համատեղ կյանքը ընտանեկան կյանքի իրավաբանական ճանաչման բացակայության դեպքում ([Johnston and Others քնդդեմ Իռլանդիայի](#), § 56): Մյուս գործոնները ներառում են հարաբերությունների երկարատևությունը և գույգերի դեպքում՝ ընդհանուր երեխա ունենալու նրանց պատրաստակամությունը ([X, Y and Z քնդդեմ Միացյալ Թագավորությունների](#) (ՄՊ), § 36): [Ahrens քնդդեմ Գերմանիայի](#), § 59, գործում Դատարանը չի գտել, որ գոյություն ունեւ *de facto* ընտանեկան կյանք, քանի որ մոր և դիմումատուի միջև փոխհարաբերությունները դադարել էին երեխայի բեղմնավորումից մոտավորապես մեկ տարի առաջ և այդ հարաբերությունները միայն սեռական բնույթի էին:

305. Կրկին, քանի դեռ գոյություն չունի ընտանեկան կյանքի սպառիչ սահմանում, Դատարանի նախադեպային իրավունքը վերաբերում է հետևյալին՝

(i) Ծնող դառնալու իրավունք

306. Ինչպես «անձնական կյանք»-ի, այնպես էլ «ընտանեկան կյանքի» գաղափարը ներառում է գենետիկ ծնողներ դառնալու որոշումը հարգելու իրավունքը ([Dickson քնդդեմ Միացյալ Թագավորությունների](#) (ՄՊ), § 66): Հետևաբար, գույզի՝ բժշկական աջակցությամբ ծնունդ տալու իրավունքը դիտարկվում է 8-րդ հոդվածի շրջանակների՝ որպես անձնական և ընտանեկան կյանքի արտահայտում ([S.H. and Others քնդդեմ Ավստրիայի](#), § 60): Այնուամենայնիվ, 8-րդ հոդվածի դրույթներն առանձին վերցված չեն երաշխավորում ընտանիք կազմելու կամ որդեգրելու իրավունքը ([E.B. քնդդեմ Ֆրանսիայի](#) (ՄՊ)):

(iii) Երեխաների վերաբերյալ

307. Ծնողի և երեխայի՝ միմյանց ներկայության համատեղ վայելումը Կոնվենցիայի 8-րդ հոդվածի իմաստով հանդիսանում է ընտանեկան կյանքի հիմնարար տարր (ի թիվս այլ նախադեպերի, տե՛ս [Kutzner քնդդեմ Գերմանիայի](#), § 58, [Monory քնդդեմ Ռումինիայի and Hungary](#), § 70, [Zorica Jovanović քնդդեմ Սերբիայի](#), § 68):

308. Մոր և իր երեխայի միջև բնական կապի մասով, տե՛ս [Marckx քնդդեմ Բելգիայի](#), § 31, [Kearns քնդդեմ Ֆրանսիայի](#), § 72:

309. Ամուսնական միությունից ծնված երեխան *ipso jure* հանդիսանում է փոխհարաբերությունների մի մասը, հետևաբար՝ երեխայի ծնվելու պահից սկսած և ծննդյան փաստով պայմանավորված՝ երեխայի և ծնողների միջև առկա է կապ, որն էլ առաջացնում է ընտանեկան կյանք, որի վրա հետագա իրադարձությունները չեն կարող բացասական ազդեցություն ունենալ՝ բացառությամբ որոշակի դեպքերի ([Ahmut քնդդեմ Նիդերլանդների](#), § 60, [Gül քնդդեմ Շվեյցարիայի](#), § 32, [Berrehab քնդդեմ Նիդերլանդների](#), § 21, [Hokkanen քնդդեմ Ֆինլանդիայի](#), § 54):

310. Կենսաբանական հոր և իր՝ արտաամուսնական կապերից ծնված երեխայի համար էական գործոնների շարքում կարող են ներառվել համատեղ ապրելը, ծնողների միջև փոխհարաբերությունների բնույթը և երեխայի հանդեպ հոր ցուցաբերած հետաքրքրությունը ([Keegan քնդդեմ Իռլանդիայի](#), §§ 42-45, [M.B. քնդդեմ Միացյալ Թագավորությունների](#) (Հանձնաժողովի որոշում), [Nylund քնդդեմ](#)

[Ֆինլանդիայի](#) (որոշում), [L. քնդդեմ Նիդերլանդների](#), §§ 37-40, [Chavdarov քնդդեմ Բուլղարիայի](#), § 40):

311. Կոնվենցիայի 8-րդ հոդվածով ընտանեկան կյանքի հասկացությունը չի ներառում միայն ամուսնության վրա հիմնված հարաբերությունները և կարող է ներառել այլ *facto* «ընտանեկան» կապեր, երբ արտասամուսնական կապերի մեջ գտնվող անձինք միասին են ապրում: Դատարանը հետագայում գտել է՝ ենթադրյալ ընտանեկան կյանքը կարող է որպես բացառություն դիտարկվել 8-րդ հոդվածի շրջանակներում, մասնավորապես այն դեպքերում, երբ այն փաստն, որ ընտանիքն ամբողջությամբ չի կազմավորվել, դիմումատուի հետ առնչություն չունի (համեմատի՛ր [Pini and Others քնդդեմ Ռումինիայի](#), §§ 143 and 146, գործը): Մասնավորապես, այն դեպքում, երբ հանգամանքները դա թույլատրում են, «ընտանեկան կյանքը» պետք է տարածվի նաև այն հնարավոր փոխհարաբերությունների վրա, որոնք կարող են զարգանալ արտասամուսնական կապերից ծնված երեխայի և կենսաբանական հոր միջև: Այս գործերում անձնական սերտ կապերի գոյության մասին վկայող վերաբերելի գործոնները ներառում են կենսաբանական ծնողների փոխհարաբերությունների բնույթը և մինչ երեխայի ծնունդը և ծնունդից հետո հոր՝ երեխայի նկատմամբ ցուցաբերած հետաքրքրվածությունը և նվիրվածությունը ([Nylund քնդդեմ Ֆինլանդիայի](#) (որոշում), [Nekvedavicius քնդդեմ Գերմանիայի](#) (որոշում), [L. քնդդեմ Նիդերլանդների](#), § 36, [Anayo քնդդեմ Գերմանիայի](#), § 57):

312. Ընդհանուր առմամբ, այնուամենայնիվ, համատեղ ապրելը չի հանդիսանում երեխաների և ծնողների միջև ընտանեկան կյանքի մասին վկայող *sine qua non* պահանջ չէ ([Berrehab քնդդեմ Նիդերլանդների](#), § 21):

313. Որդեգրված երեխաների և նրանց որդեգրող ծնողների մասով, տե՛ս [X. քնդդեմ Ֆրանսիայի](#) գործով Հանձնաժողովի 1988 թվականի որոշումը, [X. քնդդեմ Բելգիայի and the Netherlands](#) (Հանձնաժողովի որոշում), [Pini and Others քնդդեմ Ռումինիայի](#), §§ 139-40 և 143-48, օրինական և իրական որդեգրումը կարող է ենթադրել ստեղծել «ընտանեկան կյանք», նույնիսկ համատեղ բնակության կամ որդեգրած երեխաների և նրանց որդեգրող ծնողների միջև որևէ իրական կապերի բացակայության դեպքում (նույն տեղում, §§ 143- 48):

314. Դատարանը կարող է ճանաչել «ընտանեկան կյանքի» *de facto* առկայություն խնամակալ ծնողների և իրենց հետ ապրող երեխայի միջև՝ հաշվի առնելով իրար հետ անցկացրած ժամանակը, հարաբերությունների որակը և ծնողի դերը երեխայի կյանքում ([Moretti and Benedetti քնդդեմ Իտալիայի](#), §§ 48-52):

315. Ընտանեկան կյանքը չի ավարտվում, երբ երեխային վերցնում են խնամքի տակ ([Johansen քնդդեմ Նորվեգիայի](#), § 52) կամ երբ ծնողներն ամուսնալուծվում են ([Mustafa and Armağan ArmaganAkin քնդդեմ Թուրքիայի](#), § 19):

316. Արտագաղթի ժամանակ ծնողների և մեծահասակ երեխաների միջև առկա չէ ընտանեկան կյանք, բացառությամբ այն դեպքի, երբ նրանք սովորական էմոցիոնալ կապվածությունից բացի կարող են ներկայացնել կախվածության լրացուցիչ տարրեր ([Kwakyee-Nti and Dufie քնդդեմ Նիդերլանդների](#) (որոշում), [Slivenko քնդդեմ Լատվիայի](#) (ՄՊ), § 97): Սակայն, այսպիսի կապերը կարող են հաշվի առնվել «անձնական կյանքի» շրջանակներում ([Slivenko քնդդեմ Լատվիայի](#) (ՄՊ), § 97): Իրենց սեփական ընտանիքը դեռ չհիմնած երիտասարդների վերաբերյալ մի շարք գործերով, Դատարանն ընդունել է, որ իրենց ծնողների և մերձավոր ընտանիքի այլ անդամների հետ նրանց հարաբերությունները նույնպես համարվում են «ընտանեկան կյանք» ([Maslov քնդդեմ Ավստրիայի](#) (ՄՊ), § 62):

317. Ծնողական իրավունքներից զրկելուն կամ որդեգրմանը վերաբերող հարցերի մասով, երբ երեխայի նկատմամբ բռնություն գործադրելու մեջ կասկածվող ծնողի անմեղության կանխավարկածը խախտվել էր ([B.B. and F.B. ընդդեմ Գերմանիայի](#), §§ 49-52, [Ageyevy ընդդեմ Ռուսաստանի](#)):

318. Երեխայի խնամքի արձակուրդը և ծնողական նպաստները դիտարկվում են Կոնվենցիայի 8-րդ հոդվածի շրջանակներում ([Konstantin Markin ընդդեմ Ռուսաստանի](#) (ՄՊ), § 130):

(iv) *Զույգերի վերաբերյալ*

319. 8-րդ հոդվածում նշված «ընտանիք» հասկացությունը չի սահմանափակվում միայն ամուսնության վրա հիմնված հարաբերություններով և կարող է ներառել այլ *de facto* ընտանեկան կապեր, որտեղ կողմերն առանց ամուսնանալու ապրում են միասին ([Johnston and Others ընդդեմ Իռլանդիայի](#), § 56 և վերջերս քննված [Van der Heijden ընդդեմ Նիդերլանդների](#) (ՄՊ), § 50 գործը, որն առնչվում էր դիմումատուին՝ իր երկար տարիների գուգրնկերոջ դեմ ցուցմունք տալ համոզելուն):

320. Նույնիսկ համատեղ բնակության բացակայության դեպքում, հնարավոր է լինեն այլ կապեր, որոնք ընտանեկան կյանքի համար բավարար կլինեն ([Kroon and Others ընդդեմ Նիդերլանդների](#), § 30):

321. Ազգային օրենսդրությանը չհամապատասխանող ամուսնությունները ընտանեկան կյանքի համար խոչընդոտ չեն ներկայացնում ([Abdulaziz, Cabales and Balkandali ընդդեմ Միացյալ Թագավորությունների](#), § 63): Այն զույգը, որն ամուսնացել է զուտ կրոնական ամուսնությամբ, որը ներպետական իրավունքով որպես իրավաբանական փաստ չի ճանաչվում, կարող է դիտարկվել 8-րդ հոդվածի իմաստով «ընտանեկան կյանքի» շրջանակներում: Սակայն, 8-րդ հոդվածին չի կարող տրվել այնպիսի մեկնաբանություն, որի արդյունքում պետությունը, օրինակ՝ ժառանգության իրավունքների և կենսաթոշակների դեպքերում կկրի կրոնական ամուսնությունը ճանաչելու պարտականություն ([Serife Yigit ընդդեմ Թուրքիայի](#) (ՄՊ), §§ 97-98 and 102):

322. Նշանադրությունն իր բնույթով չի ստեղծում ընտանեկան կյանք ([Wakefield ընդդեմ Միացյալ Թագավորությունների](#) (Հանձնաժողովի որոշում):

323. Կայուն հարաբերություններում գտնվող համասեռ զույգը «ընտանեկան կյանք» հասկացության ներքո դիտարկվում է այնպես, ինչպես որ տարասեռ զույգը ([Schalk and Kopf ընդդեմ Ավստրիայի](#), §§ 92-94, և [P.B. and J.S. ընդդեմ Ավստրիայի](#), § 30): Ավելին, Դատարանը [Gas and Dubois ընդդեմ Ֆրանսիայի](#) գործի ընդունելիության մասին իր որոշմամբ գտել է, որ համատեղ ապրող և քաղաքացիական ամուսնության մեջ գտնվող երկու կանանց փոխհարաբերությունները, և օժանդակող վերարտադրության միջոցով նրանցից մեկի կողմից երեխայի սաղմնավորումը, բայց նրանց երկուսի կողմից դաստիարակումը Կոնվենցիայի 8-րդ հոդվածի իմաստով իրենից ենթադրում է «ընտանեկան կյանք»:

324. Համասեռ զույգի կողմից գրանցված միության կարգավիճակի համար դիմելը դիտարկվում է «ընտանեկան կյանքի» սահմանման շրջանակներում ([Vallianatos and Others ընդդեմ Հունաստանի](#) (ՄՊ), §§ 73-74):

(v) Այլ փոխհարաբերությունների վերաբերյալ

325. Ընտանեկան կյանք կարող է նաև գոյություն ունենալ քույրերի և եղբայրների միջև ([Moustaquim ընդդեմ Բելգիայի](#), § 36, [Mustafa and Armağan ArmaganAkın ընդդեմ Թուրքիայի](#), § 19), մորաքույրների, հորաքույրների /հորեղբայրների, մորեղբայրների, զարմիկների/զարմուհիների միջև ([Boyle ընդդեմ Միացյալ Թագավորությունների](#), §§ 41-47): Սակայն, ավանդական մոտեցումն այն է, որ գրեթե «ընտանեկան կյանք» համարվող սերտ հարաբերությունները սովորաբար դիտարկվում են «անձնական կյանքի» շրջանակներում ([Znamenskaya ընդդեմ Ռուսաստանի](#), § 27 և մեջբերված հղումները):

326. Երեխաների և մտերիմ բարեկամների միջև կապի մասով, ինչպիսին է օրինակ՝ տատիկների և պապիկների հետ թոռնիկների կապը (քանի որ այդ հարազատները ընտանեկան կյանքում էական դեր են խաղում), տե՛ս [Price ընդդեմ Միացյալ Թագավորությունների](#) գործով հանձնաժողովի որոշումը և [Bronda ընդդեմ Իտալիայի](#), § 51 գործը :

327. Դատապարտյալի ընտանեկան կյանքի հարգման իրավունքի առաջնահերթությամբ պայմանավորված՝ բանտի կառավարման մարմինները աջակցում են նրա՝ ընտանիքի մտերիմ անդամների հետ կապի պահպանմանը ([Messina ընդդեմ Իտալիայի \(թիվ 2\)](#), § 61, [Piechowicz ընդդեմ Լեհաստանի](#), § 212): Այլ բանտարկյալների և ընտանիքի անդամների հետ շփվելու բանտային կանոններով սահմանված սահմանափակումները Դատարանի կողմից որակվել են որպես Կոնվենցիայի 8-րդ հոդվածով պաշտպանվող իրավունքների «միջամտություն» ([Van der Ven ընդդեմ Նիդերլանդների](#), § 6: Բանտարկյալների բանտարկությունն իրենց տներից հազարավոր կիլոմետր հեռավորության վրա գտնվող քրեական գաղութներում ([Khodorkovskiy and Lebedev ընդդեմ Ռուսաստանի](#)):

(vi) Նյութական շահագրգռվածությունը

328. «Ընտանեկան կյանք»-ը չի ներառում միայն սոցիալական, բարոյական կամ մշակութային հարաբերություններ, այն բաղկացած է նաև նյութական բնույթի շահերից, ինչպես դա երևում է, ի թիվս այլոց, ալիմենտ վճարելու պարտավորությունից և ներպետական իրավական համակարգերում պահվող ժառանգական գույքի ինստիտուտի (ֆրանսերենով՝ «*réserve héréditaire*»): Կարևորությունից: Այդ իսկ պատճառով Դատարանն ընդունել է, որ երեխաների և ծնողների, թոռների և տատիկ/պապիկների միջև ժառանգության իրավունքն այնքան սերտորեն կապված է ընտանեկան կյանքի հետ, որ դիտարկվում է 8-րդ հոդված շրջանակներում ([Marckx ընդդեմ Բելգիայի](#), § 52, [Pla and Puncernau ընդդեմ Անդորայի](#), § 26): 8-րդ հոդվածը, այնուամենայնիվ, չի պահանջում, որպեսզի երեխան, ելնելով ժառանգության նպատակներից, ճանաչվի իր մահացած ծնողի ժառանգ ([Haas ընդդեմ Նիդերլանդների](#), § 43):

329. Դատարանը վճռել է, որ ընտանեկան նպաստ տրամադրելով՝ պետությունը, Կոնվենցիայի 8-րդ հոդվածի իմաստով հնարավորություն է ունենում «ցույց տալու ընտանեկան կյանքի նկատմամբ իր հարգանքը»։ դա է պատճառը, որ նպաստը դիտարկվում է այդ դրույթի շրջանակներում ([Fawsie ընդդեմ Հունաստանի](#), § 28)։

330. Դիմումատուի հարսնացուի մահվան արդյունքում երրորդ կողմի դեմ վնասների փոխհատուցման վերաբերյալ ներկայացված հայցի նկատմամբ «ընտանեկան կյանք» հասկացությունը կիրառելի չէ ([Hofmann ընդդեմ Գերմանիայի](#))

(որոշում):

4. «Բնակարան» և «նամակագրություն» հասկացությունները

Հոդված 8՝ Անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունքը

«1. Յուրաքանչյուր ոք ունի իր (...), բնակարանի և նամակագրության նկատմամբ հարգանքի իրավունք:

2. Չի թույլատրվում պետական մարմինների միջամտությունն այդ իրավունքի իրականացմանը, բացառությամբ այն դեպքերի, երբ դա նախատեսված է օրենքով և անհրաժեշտ է Մարդու իրավունքների մասին Կոնվենցիա ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության, հասարակական կարգի կամ երկրի տնտեսական բարեկեցության, ինչպես նաև անկարգությունների կամ հանցագործությունների կանխման, առողջության կամ բարոյականության պաշտպանության կամ այլ անձանց իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով»:

(ա) 8-րդ հոդվածի գործողության ոլորտը

331. Հոդված 8-ն ուղղված է պաշտպանելու անհատական ինքնավարության չորս բնագավառները՝ անձնական կյանք, ընտանեկան կյանք, բնակարան և անձնական նամակագրություն, սակայն այդ բնագավառներն իրարամերժ չեն, և միջամտությունը կարող է լինել միաժամանակ և՛ ընտանեկան և՛ անձնական կյանքին, և՛ բնակարանին ու նամակագրությանը ([Mentes and Others](#) [ընդդեմ Թուրքիայի](#), § 73, [Klass and Others](#) [ընդդեմ Գերմանիայի](#), § 41, [López Ostra](#) [ընդդեմ Իսպանիայի](#), § 51, [Margareta and Roger Andersson](#) [ընդդեմ Շվեդիայի](#), § 72):

(բ) «Բնակարան» հասկացության սահմանները

332. Բնակարանն ինքնուրույն հասկացություն է, և արդյոք որոշ տեսակի կացարանը հանդիսանում է 8-րդ հոդվածի 1-ին կետով պաշտպանվող «բնակարան»՝ կախված է փաստական հանգամանքներից, մասնավորապես՝ որոշակի վայրի նկատմամբ բավարար և շարունակական կապերի առկայությունից ([Prokopovich](#) [ընդդեմ Ռուսաստանի](#), § 36, [Gillow](#) [ընդդեմ Միացյալ Թագավորությունների](#), § 46, [McKay-Kopecka](#) [ընդդեմ Լեհաստանի](#) (որոշում): Ավելին, 8-րդ հոդվածի անգլերեն տարբերակում նշված «բնակարան» (“home”) եզրույթը չպետք է մեկնաբանվի նեղ իմաստով, այն ժամանակ, երբ ֆրանսերեն համարժեքը՝ «*domicile*»-ն, ունի ավելի լայն իմաստ ([Niemietz](#) [ընդդեմ Գերմանիայի](#), § 30): [Բնակարան] հասկացությունը՝

- մեկ այլ անձին պատկանող տունը տարեկան կտրվածքով էական ժամանակահատվածով զբաղեցնելը ([Mentes and Others](#) [ընդդեմ Թուրքիայի](#), § 73): 8-րդ հոդվածի իմաստով պարտադիր չէ, որ դիմումատուն հանդիսանա տան սեփականատեր,
- սահմանափակված չէ օրենքով հաստատված բնակության վայրերով ([Buckley](#) [ընդդեմ Միացյալ Թագավորությունների](#), § 54) և կարող է վկայակոչվել այն անձի կողմից, ով բնակվում է մի բնակարանում, որի վարձակալը մեկ այլ անձ է ([Prokopovich](#) [ընդդեմ Ռուսաստանի](#), § 36),
- հետևաբար, կարող է վերաբերել դիմումատուի՝ որպես վարձակալի զբաղեցրած հանրակացարանին, նույնիսկ եթե ներպետական իրավունքով վարձակալությունն ավարտվել է ([McCann](#) [ընդդեմ Միացյալ Թագավորությունների](#), § 46) կամ եթե երեսունինը տարի շարունակ

- բնակարանը զբաղեցված է եղել՝ առանց դրա համար օրինական հիմքի ([Brežec ընդդեմ Խորվաթիայի](#)),
- սահմանափակված չէ ավանդական բնակության վայրերով և կարող է ներառել օրինակ՝ քարավանները կամ այլ ոչ ֆիքսված բնակության վայրերը ([Buckley ընդդեմ Միացյալ Թագավորությունների](#), § 54, [Chapman ընդդեմ Միացյալ Թագավորությունների](#) (ՄՊ), §§ 71-74), ներառյալ հողակտորի վրա տեղակայված տնակները և բունգալոները՝ անկախ այն հանգամանքից, թե այդ հողակտորի զբաղեցումը ներպետական իրավունքով օրինական է, թե ոչ ([Winterstein and Others ընդդեմ Ֆրանսիայի](#), § 141, [Yordanova and Others ընդդեմ Բուլղարիայի](#), § 103),
 - կարող է նաև ներառել երկրորդական տները կամ հանգստյան տները ([Demades ընդդեմ Թուրքիայի](#), §§ 32-34),
 - անձի գրասենյակի և սեփական տան միջև կամ անձնական և գործնական օգտագործման նպատակներով նախատեսված տարածքների միջև հստակ տարբերակման բացակայության պայմաններում կարող է կիրառվել գործնական նպատակով օգտագործվող տարածքների նկատմամբ ([Niemiets ընդդեմ Գերմանիայի](#), §§ 29-31),
 - կարող է կիրառվել նաև կազմակերպության գրանցված գրասենյակի, մասնաճյուղերի կամ գործունեության այլ վայրի ([Société Colas Est and Others ընդդեմ Ֆրանսիայի](#), § 41) և անհատ անձին պատկանող և նրա կողմից կառավարվող սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության գործունեության վայրի նկատմամբ ([Buck ընդդեմ Գերմանիայի](#), § 32),
 - չի տարածվում հողակտորի վրա տուն կառուցելու մտադրության կամ որոշակի տարածքում արմատներ ունենալու փաստի նկատմամբ ([Loizidou ընդդեմ Թուրքիայի](#), § 66),
 - չի կիրառվում լվացքատան սենյակի վրա, որը միաժամանակ պատկանում է բազմաբնակարան շենքի մի քանի սեփականատերերի և նախատեսված է ժամանակ առ ժամանակ օգտագործման համար ([Chelu ընդդեմ Ռումինիայի](#), § 45), նկարչի հանդերձարանի նկատմամբ ([Hartung ընդդեմ Ֆրանսիայի](#) (որոշում) կամ այն հողակտորի նկատմամբ, որտեղ տերերը զբաղվում են կամ թույլատրվում է զբաղվել սպորտով, օրինակ՝ որսորդությամբ ([Friend and Others ընդդեմ Միացյալ Թագավորությունների](#) (որոշում), § 45) կամ արդյունաբերական շենքերը և կառույցները (օրինակ՝ միայն գործնական նպատակներով օգտագործվող ջրաղաց, փուռ և պահեստ՝ [Khamidov ընդդեմ Ռուսաստանի](#), § 131):

333. Այնուամենայնիվ, այն դեպքում, երբ պահանջվում է «բնակարան» հասկացությունը կիրառել այնպիսի սեփականության նկատմամբ, որը դիմումատուն երբեք կամ հազվադեպ է զբաղեցրել կամ չի զբաղեցվել էական ժամանակահատվածով, այդ սեփականության հետ ունեցած կապերը բավականին թուլանում են, որպեսզի 8-րդ հոդվածի ներքո խնդիր բարձրացվի (տե՛ս, օրինակ՝ [Andreou Papi ընդդեմ Թուրքիայի](#), § 54): Նման գույքը ժառանգելու հնարավորությունը չի վկայում այնպիսի ամուր կապի առկայության մասին, որպեսզի այն դիտվի որպես «բնակարան» ([Demopoulos and Others ընդդեմ Թուրքիայի](#) (որոշում) (ՄՊ), §§ 136-37):

334. Եթե Կոնվենցիային կից թիվ 1-ին Արձանագրության 1-ին հոդվածի իմաստով «բնակարան» և «սեփականություն» հասկացությունները հնարավոր է

զգալիորեն համընկնեն, «բնակարանի» առկայությունը անշարժ գույքի նկատմամբ իրավունքի կամ շահագրգռվածության առկայությամբ պայմանավորված չէ ([Surugiu *ընդդեմ Ռումինիայի*](#), § 63): Անձը կարող է շենքի կամ հողի նկատմամբ Կոնվենցիային կից թիվ 1-ին Արձանագրության 1-ին հոդվածի իմաստով սեփականության իրավունք ունենա, սակայն, վերջիններիս՝ 8-րդ հոդվածի իմաստով «բնակարան» համարվելու համար դրանց հետ բավականաչափ կապեր չունենա ([Khamidov *ընդդեմ Ռուսաստանի*](#), § 128):

(գ) «Բնակարան» հասկացության շրջանակներում դիտարկվող իրավիճակներ

335. Անձի բնակարանը հարգելու իրավունքի հնարավոր միջամտությունները ներառում են՝

- տունը միտումնավոր ոչնչացնելը ([Selçuk and Asker *ընդդեմ Թուրքիայի*](#), § 86),
- տեղահանված անձանց տուն վերադարձը չթույլատրելը ([Cyprus *ընդդեմ Թուրքիայի*](#) (ՄՊ), §§ 165- 77),
- վտարումը ([Orlic *ընդդեմ Խորվաթիայի*](#), § 56 գործը և մեջբերված հղումները), ներառյալ վտարման՝ դեռևս չկատարված հրամանը ([Gladysheva *ընդդեմ Ռուսաստանի*](#), § 91),
- խուզարկումները ([Murray *ընդդեմ Միացյալ Թագավորությունների*](#), § 88, [Chappell *ընդդեմ Միացյալ Թագավորությունների*](#), §§ 50-51, [Funke *ընդդեմ Ֆրանսիայի*](#), § 48)) կամ ոստիկանության այլ ներխուժումները ([Evcen *ընդդեմ Նիդերլանդների*](#), Հանձնաժողովի որոշում, [Kanthak *ընդդեմ Գերմանիայի*](#), Հանձնաժողովի որոշում), ոստիկանության հետ համագործակցությունը «միջամտության» առկայությունը չի բացառում [Saint-Paul Luxembourg S.A. *ընդդեմ Լյուքսեմբուրգի*](#), § 38), այն փաստը, որ հետախուզման համար հիմք հանդիսացած հանցանքը կատարվել է երրորդ անձի կողմից էական չէ ([Buck *ընդդեմ Գերմանիայի*](#)),
- նախագծային որոշումներ ([Buckley *ընդդեմ Միացյալ Թագավորությունների*](#), § 60) և հարկադիր օտարման կարգադրություններ ([Howard *ընդդեմ Միացյալ Թագավորությունների*](#) (Հանձնաժողովի որոշում),
- կազմակերպություններին ուղղված պահանջն առ այն, որ թույլ տան հարկային աուդիտորներին մուտք գործել կազմակերպության տարածք և պատճենահանեն սերվերների վրա պահվող տեղեկատվությունը ([Bernh Larsen Holding AS and Others *ընդդեմ Նորվեգիայի*](#), § 106):

336. 8-րդ հոդվածը հնարավոր է կիրառվի նաև տան վրա ուղղակի ազդեցություն ունեցող շրջակա միջավայրի լուրջ ախտոտման դեպքերում ([López Ostra *ընդդեմ Իսպանիայի*](#), § 51, [Powell and Rayner *ընդդեմ Միացյալ Թագավորությունների*](#), § 40, [Fadeyeva *ընդդեմ Ռուսաստանի*](#), §§ 68-69, [Deés *ընդդեմ Հունգարիայի*](#), §§ 21-24): Դրանք կարող են ներառել ձայնային, հոտային և այլ տեսակի աղտոտման դեպքեր, որոնց բացասական հետևանքներն, ի տարբերություն շրջակա միջավայրի ընդհանուր քայքայմանը և արդի հասարակությանը բնորոշ այլ տեսակի վտանգավոր հետևանքների, անձի համար իր տան պայմաններից օգտվելը դարձնում են անհնարին (օրինակ, տե՛ս [Moreno Gómez *ընդդեմ Իսպանիայի*](#), § 53, [Martínez Martínez and Pino Manzano *ընդդեմ Իսպանիայի*](#), §§ 41 and 45): [Տան պայմաններից օգտվելու անհնարինության] անհարմարությունը պետք է հասնի

լրջության որոշ մակարդակի ([*Leon and Agnieszka Kania ընդդեմ Լեհաստանի*](#), § 100): Այդպիսի միջամտությունը կարող է իրականացվել և՛ հանրային, և՛ մասնավոր անձանց կողմից:

8-րդ հոդվածը կարող է կիրառվել նաև դեռևս չիրականացված այն ռիսկերի նկատմամբ, որոնք կարող են տան վրա անմիջական ազդեցություն ունենալ ([*Hardy and Maile ընդդեմ Միացյալ Թագավորությունների*](#), §§ 190-92):

337. Տունը տնօրինելու հետ կապված որոշ միջոցառումներ, այնուամենայնիվ, պետք է քննվեն Կոնվենցիային կից թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի ներքո: Դրանք կարող են ներառել՝

– սովորական օտարման դեպքերը ([*Mehmet Salih and Abdulsamet Çakmak ընդդեմ Թուրքիայի*](#), § 22, [*Mutlu ընդդեմ Թուրքիայի*](#), § 23),

– վարձակալության որոշ ասպեկտներ՝ ինչպիսիք են վարձակալության փուլերը ([*Langborger ընդդեմ Շվեդիայի*](#), § 39):

338. Նմանապես, որոշ միջոցառումներ, որոնք ենթադրում են 8-րդ հոդվածի խախտում, պարտադիր չէ, որ հանգեցնեն Կոնվենցիային կից թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի խախտման ([*Surugiu ընդդեմ Ռումինիայի*](#)), և հակառակը ([*Öneryıldız ընդդեմ Թուրքիայի*](#) (ՄՊ), § 160):

339. Վտանգավոր գործողությունների համատեքստում Կոնվենցիայի 2-րդ հոդվածը ևս կարող է կիրառվել (նույն տեղում, [*Kolyadenko and Others ընդդեմ Ռուսաստանի*](#), §§ 212-213 և 216):

340. Բնակարանի նկատմամբ հարգանքի իրավունքն իրենից կարող է ենթադրել պետական իշխանությունների կողմից այնպիսի միջոցառումների նախաձեռնում, որոնք կապահովեն այդ իրավունքը (պոզիտիվ պարտականություն) նույնիսկ անձանց միջև փոխհարաբերությունների ոլորտում, օրինակ՝ դիմումատուի բնակարան մուտք գործելը կանխարգելելը և հարևանների ներկայությամբ պայմանավորված անհարմարություններից բացի, այլ միջամտությունները բացառելը (նույն տեղում, § 59 և մեջբերված հղումները, [*Novoseletskiy ընդդեմ Ուկրաինայի*](#), § 68):

Այնուամենայնիվ, սա ներպետական իշխանությունների համար անհնարին կամ անհամաչափ պարտավորություն չի կարող սահմանել (նույն տեղում, § 70):

341. Մասնավորապես վտանգ ներկայացնող գործողությունների համատեքստում պետությունները, հաշվի առնելով ենթադրաբար ներգրավված ռիսկի մակարդակը, պարտավորվում են ներդնել համապատասխան գործողությունների առանձնահատկությունները ներառող կարգավորումներ: Նման կարգավորումները պետք է ապահովեն այն քաղաքացիների արդյունավետ պաշտպանությունը, որոնց կյանքը հնարավոր է, որ վտանգված է ([*Di Sarno and Others ընդդեմ Իտալիայի*](#), § 106): Այն փաստը, որ հանրային ծառայության կառավարումը վերալիազորվել է մասնավոր անձանց, պետությանը չի ազատում իր շահերը պաշտպանելու պարտավորությունից (նույն տեղում):

342. Բնակարանի նկատմամբ հարգանքի իրավունքի պաշտպանության համար պետությունը պետք է ձեռնարկի ողջամիտ և համապատասխան միջոցառումներ: Դատարանը քննադատել է հետևյալը՝

- աղբահավաքի և հեռացման ծառայության բնականոն գործունեությունը երկար ժամանակ՝ մի քանի ամիս ապահովելու անհնարինությունը (նույն տեղում),
- ջրամբարի՝ հոսանքն ի վար տարածքում տեղակայված տների՝

ջրհեղեղից պաշտպանվածության ապահովման հարցում համապատասխան իշխանությունների ցուցաբերած անփութությունը (*Kolyadenko and Others ընդդեմ Ռուսաստանի*, § 216):

8-րդ հոդվածից բխող ընթացակարգային պարտավորությունները պահանջում են, որպեսզի հանրության համար իրենց սպառնացող վտանգը գնահատելու համար անհրաժեշտ տեղեկատվությունը լինի մատչելի (*Giacomelli ընդդեմ Իտալիայի*, § 83):

(դ) «Նամակագրություն» հասկացության սահմանները

343. 8-րդ հոդվածի իմաստով նամակագրության նկատմամբ հարգանքի իրավունքի նպատակն է պահպանելու անձնական հաղորդակցության գաղտնիությունը հետևյալ ոլորտներում՝

– անձանց միջև անձնական կամ գործնական բնույթի նամակագրությունը (*Niemietz ընդդեմ Գերմանիայի*, § 32 *in fine*), նույնիսկ երբ ուղարկողը կամ ստացողը բանտարկյալ է (*Silver and Others ընդդեմ Միացյալ Թագավորությունների*, § 84, *Mehmet Nuri Özen and Others ընդդեմ Թուրքիայի*, § 41), ներառյալ՝ մաքսատան ծառայողների կողմից բռնագրավված փաթեթները (*X. ընդդեմ Միացյալ Թագավորությունների* (Հանձնաժողովի 1978 թվականի հոկտեմբերի 12-ի որոշում),

– հեռախոսային խոսակցությունները (*Klass and Others ընդդեմ Գերմանիայի*, §§ 21 and 41, *Malone ընդդեմ Միացյալ Թագավորությունների*, § 64, *Margareta and Roger Andersson ընդդեմ Շվեդիայի*, § 72)՝ անձնական կամ գործնական կալվածքներից (*Halford ընդդեմ Միացյալ Թագավորությունների*, §§ 44-46, *Copland ընդդեմ Միացյալ Թագավորությունների*, § 41), ներառյալ՝ դրանց վերաբերյալ տեղեկատվությունը, օրինակ՝ ամսաթիվը, տևողությունը, հեռախոսահամարը, որով զանգահարել են (*P.G. and J.H. ընդդեմ Միացյալ Թագավորությունների*, § 42),

– փեյջերի հաղորդագրությունները (*Taylor-Sabori ընդդեմ Միացյալ Թագավորությունների*),

– ավելին հին էլեկտրոնային հաղորդագրության միջոցներով իրականացված հաղորդակցությունները, օրինակ՝ տելեքսները (*Christie ընդդեմ Միացյալ Թագավորությունների* (Հանձնաժողովի որոշում),

– էլեկտրոնային փոստի հաղորդագրությունները և անձնական համացանցի օգտագործման վերահսկողությունը, ներառյալ՝ աշխատանքի վայրում (*Copland ընդդեմ Միացյալ Թագավորությունների*, §§ 41-42), ինչպես նաև բանտի փոստարկղի միջոցով բանտարկյալին էլեկտրոնային նամակների ուղարկումը (*Helander ընդդեմ Ֆինլանդիայի* (որոշում), § 48),

– անձնական ռադիո (*X. and Y. ընդդեմ Բելգիայի* (Հանձնաժողովի որոշում), եթե այն չի գտնվում հանրային ալիքի վրա և մատչելի չէ բոլորի համար (*B.C. ընդդեմ Շվեյցարիայի* (Հանձնաժողովի որոշում),

– գործնական գործողությունների ընթացքում կամ գործնական տարածքում գաղտնի կերպով ձեռք բերված նամակագրությունը (*Kopp ընդդեմ Շվեյցարիայի*, § 50, *Halford ընդդեմ Միացյալ Թագավորությունների*, §§ 44-46),

– էլեկտրոնային տվյալները, որոնք բռնագրավվել են իրավաբանական գրասենյակում իրականացված խուզարկության ընթացքում (*Wieser and Bicos Beteiligungen GmbH ընդդեմ Ավստրիայի*, § 45):

344. Նամակագրության բովանդակությունը իրավունքի միջամտության հարցի

համար էական չէ ([A. v France](#), §§ 35-37, [Frérot ընդդեմ Ֆրանսիայի](#), § 54):

345. Միջամտության համար *de minimis* սկզբունք գոյություն չունի, մեկ նամակի բացումը արդեն իսկ բավարար է ([Narinen ընդդեմ Ֆինլանդիայի](#), § 32, [Idalov ընդդեմ Ռուսաստանի](#) (ՄՊ), § 197):

346. Նամակագրության առնչությամբ Դատարանը մինչ այսօր սահմանել է հետևյալ պոզիտիվ պարտավորությունները՝

- հանրային ոլորտում անձնական խոսակցությունների բացահայտման կանխարգելման պարտականությունը ([Craxi ընդդեմ Իտալիայի \(թիվ 2\)](#), §§ 68-76),
- բանտարկյալներին գրել օգնելու նպատակով անհրաժեշտ պարագաների մատակարարման պարտավորությունը ([Cotlet ընդդեմ Ռումինիայի](#), §§ 60-65, [Gagiu ընդդեմ Ռումինիայի](#), § 91),
- փաստաբանի և իր հաճախորդի հեռախոսային խոսակցությունների ձայնագրությունները պարունակող ձայներիզները վերացնելու մասին Սահմանադրական դատարանի որոշումը կատարելու պարտավորությունը ([Chadimová ընդդեմ Չեխիայի Հանրապետության](#), § 146):

(ե) Միջամտությունների օրինակները

347. Նամակագրության նկատմամբ հարգանքի իրավունքի միջամտությունը կարող է ներառել հանրային իշխանություններին հատուկ հետևյալ գործողությունները՝

- նամակագրության հսկումը ([Campbell ընդդեմ Միացյալ Թագավորությունների](#), § 33),
- անձնական կամ գործնական բնույթի խոսակցությունները գաղտնի լսելը և ձայնագրելը ([Amann ընդդեմ Շվեյցարիայի](#) (ՄՊ), § 45), օրինակ՝ հեռախոսային գծին միանալը ([Malone ընդդեմ Միացյալ Թագավորությունների](#), § 64), նույնիսկ այն դեպքում, երբ դա իրականացվում է երրորդ անձի հեռախոսային գծից ([Lambert ընդդեմ Ֆրանսիայի](#), § 21),
- հեռախոսի, էլեկտրոնային փոստի և ցանցի օգտագործման մասին գաղտնի ձեռք բերված տեղեկատվության պահպանումը ([Copland ընդդեմ Միացյալ Թագավորությունների](#), § 44): Միայն այն փաստը, որ նման տեղեկատվությունը կարող էր ձեռք բերվել օրինական ձևով, օրինակ՝ հեռախոսային վարձի միջոցով, չի խոչընդոտում, որպեսզի դա ճանաչվի «միջամտություն»: Այն փաստը, որ տեղեկատվությունը երրորդ անձանց չի բացահայտվել կամ տվյալ անձի դեմ հարուցված կարգապահական կամ այլ վարույթի շրջանակներում նրա դեմ չի օգտագործվել, նույնպես էական չէ (նույն տեղում, § 43),
- էլեկտրոնային նամակը երրորդ անձին ուղարկելը, ([Luordo ընդդեմ Իտալիայի](#), § 94),
- էլեկտրոնային ֆայլերի, ներառյալ՝ ընկերություններին պատկանող ֆայլերը, պատճենների ստեղծումը ([Bernh Larsen Holding AS and Others ընդդեմ Նորվեգիայի](#), § 106),
- բանտի տեսակցությունների սենյակում բանտի կառավարման մարմինների կողմից բանտարկյալի և նրա հարազատների

խոսակցությունների շարունակական ձայնագրումը ([Wisse *ընդդեմ Ֆրանսիայի*](#), § 29),

- բանտի կառավարման մարմինների՝ բանտարկյալի նամակը հասցեատիրոջն ուղարկել մերժելը ([Mehmet Nuri Özen and Others *ընդդեմ Թուրքիայի*](#), § 42),
- որոշ դեպքերում գաղտնի հսկման միջոցառումների կիրառումը ([Kennedy *ընդդեմ Միացյալ Թագավորությունների*](#), §§ 122-24 և թվարկված հղումները),

348. Իշխանությունների՝ մասնավոր անձի կողմից իրականացված ձայնագրմանը «վճռորոշ մասնակցությունը» ենթադրում է «հանրային իշխանության» կողմից իրականացված միջամտություն ([Van Vondel *ընդդեմ Նիդերլանդների*](#), § 49):

349. Բողոքի առարկա իրավիճակը, նամակագրության հարգանքի և 8-րդ հոդվածով պաշտպանված մնացած ոլորտների տեսանկյունից կարող է դիտարկվել 8-րդ հոդվածի 1-ին կետի շրջանակներում (օրինակ՝ [Chadimová *ընդդեմ Չեխիայի Հանրապետության*](#), § 143 և մեջբերված հղումները):

3. «Գույք» հասկացությունը

Կոնվենցիային կից թիվ 1 Արձանագրության 1-ին հոդված՝ Սեփականության պահպանումը

«1. Յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ ունի իր գույքից անարգել օգտվելու իրավունք (...):»:

(ա) Պաշտպանվող գույքը

350. Դիմումատուն կարող է վկայակոչել Կոնվենցիային կից թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի խախտման մասին միայն այն դեպքում, եթե վիճարկված որոշումները վերաբերվել են իր՝ սույն դրույթի իմաստով «գույքին»: «Գույք»-ը կարող է լինել «գոյություն ունեցող սեփականությունը» կամ ակտիվները, ներառյալ՝ պահանջները, որոնց առնչությամբ դիմումատուն կարող է վիճարկել, որ առնվազն ունի սեփականության իրավունքից անարգել օգտվելուց «իրավական ակնկալիք» ([J.A. Pye \(Oxford\) Ltd and J.A. Pye \(Oxford\) Land Ltd *ընդդեմ Միացյալ Թագավորությունների*](#) (ՄՊ), § 61, [J.A. Pye \(Oxford\) Ltd and J.A. Pye \(Oxford\) Land Ltd *ընդդեմ Միացյալ Թագավորությունների*](#) (որոշում) (ՄՊ), § 74 (գ), [Kopecký *ընդդեմ Սլովակիայի*](#) (ՄՊ), § 35 (գ)):

«Ակնկալիքը» համարվում է իրավական, եթե այն հիմնված է օրենսդրական դրույթի կամ քննարկվող գույքի վերաբերյալ իրավական ակտի վրա ([Saghinadze and Others *ընդդեմ Վրաստանի*](#), § 103):

(բ) Ինքնություն իմաստը

351. «Գույք» հասկացությունը Կոնվենցիային կից թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի առաջին մասում ունի ինքնություն իմաստ, որը նյութական իրերի սեփականությամբ չի սահմանափակում և անկախ է ներպետական իրավունքում առկա դասական դասակարգումներից. ակտիվներ հանդիսացող որոշակի այլ իրավունքներ և շահեր կարող են նույնպես դիտվել որպես «գույքային

իրավունքներ» և այդպիսով՝ սույն դրույթի իմաստով՝ «գույք»: Յուրաքանչյուր գործում քննարկման խնդիր է հանդիսանում այն, թե արդյոք գործի հանգամանքներն ընդհանուր առմամբ դիմումատուին շնորհում են թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածով երաշխավորված իրավունքը ([Depalle *ընդդեմ Ֆրանսիայի*](#) (ՄՊ), § 62, [Anheuser-Busch Inc. *ընդդեմ Պորտուգալիայի*](#) (ՄՊ), § 63, [Öneryildiz *ընդդեմ Թուրքիայի*](#) (ՄՊ), § 124, [Broniowski *ընդդեմ Լեհաստանի*](#) (ՄՊ), § 129, [Beyeler *ընդդեմ Իտալիայի*](#) (ՄՊ), § 100, [Iatridis *ընդդեմ Հունաստանի*](#) (ՄՊ), § 54, [Fabris *ընդդեմ Ֆրանսիայի*](#) (ՄՊ), § 51, [Centro Europa 7 S.r.l. and Di Stefano *ընդդեմ Իտալիայի*](#) (ՄՊ), § 171):

Ոչ նյութական ակտիվների դեպքում՝ Դատարանը հաշվի է առել հատկապես այն փաստը, թե արդյոք քննվող իրավական դիրքորոշումն առաջացրել է ֆինանսական իրավունքներ և շահեր և, հետևաբար, ունեցել է տնտեսական արժեք ([Paeffgen GmbH *ընդդեմ Գերմանիայի*](#) (որոշում)):

(գ) Գոյություն ունեցող գույք

352. Թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածը կիրառվում է միայն անձի՝ գոյություն ունեցող գույքի նկատմամբ ([Marckx *ընդդեմ Բելգիայի*](#), § 50, [Anheuser-Busch Inc. *ընդդեմ Պորտուգալիայի*](#) (ՄՊ), § 64): Այն չի երաշխավորում գույք ձեռք բերելու իրավունքը ([Slivenko and Others *ընդդեմ Լատվիայի*](#) (որոշում) (ՄՊ), § 121, [Kopecký *ընդդեմ Սլովակիայի*](#) (ՄՊ), § 35 (բ)):

353. Անձը, ով բողոքում է, որ իր սեփականության իրավունքը խախտվել է, պետք է առաջին հերթին ապացուցի, որ այդ իրավունքը գոյություն է ունեցել ([Pišturová *ընդդեմ Չեխիայի Հանրապետության*](#), § 38, [Des Fours Walderode *ընդդեմ Չեխիայի Հանրապետության*](#) (որոշում), [Zhigalev *ընդդեմ Ռուսաստանի*](#), § 131):

354. Որոշելու համար, թե արդյոք դիմումատուն ունի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածով պաշտպանվող գույքային շահ, Դատարանը պետք է որոշի դիմումատուի իրավական կարգավիճակը ([J.A. Pye \(Oxford\) Ltd and J.A. Pye \(Oxford\) Land Ltd *ընդդեմ Միացյալ Թագավորությունների*](#)):

(դ) Պահանջները և պարտքերը

355. Երբ գույքային շահն արտահայտված է պահանջի տեսքով, այն կարող է դիտարկվել որպես «ակտիվ» միայն այն դեպքում, երբ ներպետական իրավունքում ունի բավարար հիմք, օրինակ՝ երբ առկա է այդ պահանջը հաստատող ներպետական դատարանների հաստատած նախադեպային իրավունքը ([Plechanow *ընդդեմ Լեհաստանի*](#), § 83, [Vilho Eskelinen and Others *ընդդեմ Ֆինլանդիայի*](#) (ՄՊ), § 94, [Anheuser-Busch Inc. *ընդդեմ Պորտուգալիայի*](#) (ՄՊ), § 65, [Kopecký *ընդդեմ Սլովակիայի*](#) (ՄՊ), § 52, [Draon *ընդդեմ Ֆրանսիայի*](#) (ՄՊ), § 68):

356. Վճռով հաստատված պարտքն, որի առկայությունը բավականաչափ հաստատված է, որպեսզի պահանջվի, հանդիսանում է «գույք» ([Stran Greek Refineries and Stratis Andreadis *ընդդեմ Հունաստանի*](#), § 59, [Burdov *ընդդեմ Ռուսաստանի*](#), § 40, [Kotov *ընդդեմ Ռուսաստանի*](#) (ՄՊ), § 90):

357. Պարզելու համար, թե արդյոք առկա է թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածով պաշտպանվող «իրավական ակնկալիք», Դատարանի նախադեպային իրավունքն որպես չափանիշ չի ընդունում «իրական վեճի» կամ «փաստարկելի հայցի» առկայությունը ([Kopecký *ընդդեմ Սլովակիայի*](#) (ՄՊ), § 52, [Vilho Eskelinen and Others *ընդդեմ Ֆինլանդիայի*](#) (ՄՊ), § 94):

358. Իրավական ակնկալիքի առկայության մասին չի կարելի խոսել, երբ առկա է ներպետական իրավունքի ճիշտ մեկնաբանության և կիրառման վերաբերյալ վեճ, և դիմումատուների փաստարկները, հետևաբար, մերժվել են ներպետական դատարանների կողմից ([Anheuser-Busch Inc. ընդդեմ Պորտուգալիայի](#) (ՄՊ), § 65, [Kopecký ընդդեմ Սլովակիայի](#) (ՄՊ), § 50, [Centro Europa 7 S.r.l. and Di Stefano ընդդեմ Իտալիայի](#) (ՄՊ), § 173)։

359. «Գույք» հասկացությունը կարող է ներառել որոշակի օգուտ, որից անձը զրկվել է [այդ օգուտը ստանալու] իրավունքի ձեռքբերման խտրական պայմանների արդյունքում (ոչ ներդրումային հիմունքներով սոցիալական ապահովվածության նպաստի պահանջի առնչությամբ կանանց և տղամարդկանց միջև տարբերակում դնելու մասով, տե՛ս [Stec and Others ընդդեմ Միացյալ Թագավորությունների](#) (որոշում) (ՄՊ), § 55), թոշակառուների միջև ազգության հիմքով տարբերակում դնելու մասով, տե՛ս [Andrejeva ընդդեմ Լատվիայի](#) (ՄՊ), § 79, անօրինական երեխաների ժառանգություն ստանալու իրավունքը մերժելու մասով, տե՛ս [Fabris ընդդեմ Ֆրանսիայի](#) (ՄՊ), § 50)։

(ե) Սեփականությունը վերադարձնելը

360. Թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածը չի կարող մեկնաբանվել այնպես, որ անդամ պետությունները պարտավորվեն մինչև Կոնվենցիայի վավերացումն իրենց փոխանցված սեփականությունը վերադարձնել։ Թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածը չի սահմանափակում պայմանավորվող կողմերի ազատությունը՝ որոշելու վերադարձման ենթակա սեփականության շրջանակը և սահմանելու այն պայմանները, որոնց առկայությամբ նրանք համաձայն են վերականգնել նախկին սեփականատերերի գույքային իրավունքները։

361. Մասնավորապես, անդամ պետություններն որոշակի խմբի անձանց այդ իրավունքների շնորհումից բացառելու համար ունեն հայեցողության լայն շրջանակ։ Այն դեպքում, երբ մի խումբ սեփականատերերի իրավունքը նման կարգով բացառվում է, դրա վերականգման առնչությամբ ներկայացված պահանջները թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի իմաստով չեն կարող դիտվել որպես «իրավական ակնկալիքի» հիմք։

362. Մյուս կողմից, այն դեպքում, երբ անդամ պետությունները, վավերացնելով Կոնվենցիան և դրան կից թիվ 1 Արձանագրությունը, ընդունում են համապատասխան օրենսդրություն, որն ապահովում է նախորդ ռեժիմի ընթացքում առգրավված սեփականության ամբողջական կամ մասնակի վերականգնում, ապա այսպիսի օրենսդրությունը թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի շրջանակներում պետք է դիտվի որպես նոր գույքային իրավունք ընձեռող այն անձանց համար, ովքեր բավարարում են այդ իրավունքից օգտվելու պահանջները։ Նույն մոտեցումը կարող է կիրառվել նաև իրավունքի վերականգնման նախապատրաստական աշխատանքների կամ մինչև վավերացումը գործող օրենսդրությամբ սահմանված փոխհատուցման ընթացակարգի նկատմամբ, եթե այդ օրենսդրությունն անդամ պետությունների կողմից թիվ 1 Արձանագրության վավերացումից հետո դեռևս մնացել է ուժի մեջ ([Maltzan and Others ընդդեմ Գերմանիայի](#) (որոշում) (ՄՊ), § 74(դ), [Kopecký ընդդեմ Սլովակիայի](#) (ՄՊ), § 35 (գ))։

363. Այն սեփականության իրավունքի ճանաչման հույսը, որի արդյունավետ իրականացումն անհնարին էր, թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի իմաստով չի կարող դիտարկվել որպես «գույք»։ այն չի կարող դիտարկվել նաև պայմանի

չկատարման հետևանքով սպառված պայմանական պահանջ ([Malhous ընդդեմ Չեխիայի Հանրապետության](#) (որոշում) (ՄՊ), [Kopecký ընդդեմ Սլովակիայի](#) (ՄՊ), § 35 (q)):

364. Այն համոզմունքը, որ նախկինում գործող օրենքը կփոխվի հոգուտ դիմումատուի, թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի իմաստով չի կարող դիտվել որպես իրավական ակնկալիք: Գույքի վերադարձման գուտ հույսի, որքանով որ դրա առկայությունը հասկանալի է, և իրավական ակնկալիքի, որը պետք է իր բնույթով լինի ավելի հստակ, քան գուտ հույսը և պետք է հիմնված լինի իրավական դրույթի կամ իրավական ակտի՝ դատական վճռի վրա, միջև գոյություն ունի տարբերություն, ([Gratzinger and Gratzingerova ընդդեմ Չեխիայի Հանրապետության](#) (որոշում) (ՄՊ), § 73, [Maltzan and Others ընդդեմ Գերմանիայի](#) (որոշում) (ՄՊ), § 112):

(գ) Ապագա եկամուտը

365. Ապագա եկամուտը հանդիսանում է «գույք», այն դեպքում, երբ այն վաստակել են կամ դրա առնչությամբ առկա է կատարման ենթակա պահանջ ([Ian Edgar \(Liverpool\) Ltd ընդդեմ Միացյալ Թագավորությունների](#) (որոշում), [Wendenburg ընդդեմ Գերմանիայի](#) (որոշում), [Levänen and Others ընդդեմ Ֆինլանդիայի](#) (որոշում), [Anheuser-Busch Inc. ընդդեմ Պորտուգալիայի](#) (ՄՊ), § 64, [N.K.M. ընդդեմ Հունգարիայի](#), § 36):

(ե) Մասնագիտական գործունեությունից օգտվող հաճախորդները

366. Թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի կիրառելիությունը տարածվում է մասնագիտական գործունեության և դրա հաճախորդների վրա, քանի որ դրանք ներկայացնում են որոշակի արժեք ունեցող անձանց, ովքեր բազմաթիվ առումներով ունեն մասնավոր իրավունքի բնույթ և հանդիսանում են ակտիվ և, հետևաբար, Կոնվենցիային կից թիվ 1-ին արձանագրության 1-ին հոդվածի իմաստով համարվում են գույք ([Lederer ընդդեմ Գերմանիայի](#) (որոշում), [Buzescu ընդդեմ Ռումինիայի](#), § 81, [Wendenburg and Others ընդդեմ Գերմանիայի](#) (որոշում), [Olbertz ընդդեմ Գերմանիայի](#) (որոշում), [Döring ընդդեմ Գերմանիայի](#) (որոշում), [Van Marle and Others ընդդեմ Նիդերլանդների](#), § 41):

(ը) Բիզնեսի լիցենզավորումը

367. Գործունեություն իրականացնելու համար անհրաժեշտ լիցենզիան հանդիսանում է գույք. այն ուժը կորցրած ճանաչելը ենթադրում է թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածով երաշխավորված իրավունքի միջամտություն ([Megadat.com SRL ընդդեմ Սոլովայի](#), §§ 62-63, [Bimer S.A. ընդդեմ Սոլովայի](#), § 49, [Rosenzweig and Bonded Warehouses Ltd ընդդեմ Լեհաստանի](#), § 49, [Capital Bank AD ընդդեմ Բուլղարիայի](#), § 130, [Tre Traktörer Aktiebolag ընդդեմ Շվեդիայի](#), § 53):

368. Լիցենզիայի շահագործմանն առնչվող շահերը համարվում են Կոնվենցիային կից թիվ 1-ին Արձանագրության 1-ին հոդվածի պաշտպանությունն ենթադրող գույքային շահեր և առանց հեռարձակման համար անհրաժեշտ հաճախականության տրամադրման այդ լիցենզիան զրկվում է իր նշանակությունից ([Centro Europa 7 S.r.l. and Di Stefano ընդդեմ Իտալիայի](#) (ՄՊ), §§ 177-78):

(թ) Գնաճը

369. Թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածը պետության համար որևէ ընդհանուր բնույթի պարտավորություն չի նախատեսում, համաձայն որի պետությունը պետք է պահպանի ֆինանսական կազմակերպություններում ներդրված գումարների գնողականությունը՝ խնայողությունների սխտեմատիկ ինդեքսացիայի միջոցով ([Rudzińska ընդդեմ Լեհաստանի](#) (որոշում), [Gayduk and Others ընդդեմ Ուկրաինայի](#) (որոշում), [Ryabykh ընդդեմ Ռուսաստանի](#), § 63): Նույնը *a fortiori* վերաբերում է ոչ ֆինանսական կազմակերպություններում ներդրված գումարներին ([Flores Cardoso ընդդեմ Պորտուգալիայի](#), §§ 54-55):

Այն նաև չի պարտադրում, որպեսզի պետությունը պահպանի հայցի արժեքը կամ մասնավոր հայցերի նկատմամբ կիրառի գնաճին համապատասխան պարզ տոկոս ([Todorov ընդդեմ Բուլղարիայի](#) (որոշում)):

(ժ) Մտավոր սեփականությունը

370. Թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածն ըստ էության կիրառվում է մտավոր սեփականության նկատմամբ ([Anheuser-Busch Inc. ընդդեմ Պորտուգալիայի](#) (ՄՊ), § 72):

371. Այն կիրառվում է ապրանքանշանի գրանցման դիմումի նկատմամբ (նույն տեղում, § 78):

(ի) Ընկերության բաժնեմասերը

372. Տնտեսական արժեք ունեցող ընկերության բաժնեմասերը կարող են դիտարկվել որպես գույք ([Olczak ընդդեմ Լեհաստանի](#) (որոշում), § 60, [Sovtransavto Holding ընդդեմ Ուկրաինայի](#), § 91):

(լ) Սոցիալական ապահովության նպաստները

373. Թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի կիրառման իմաստով հատկացումներից և ոչ հատկացումներից ձևավորված նպաստների միջև տարբերակում դնելն անհիմն է:

374. Չնայած թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածը սոցիալական ապահովության որևէ վճար ստանալու իրավունք չի նախատեսում, եթե պայմանավորվող պետությունն ունի գործող օրենսդրություն, որի համաձայն նման վճարումն իրենից ենթադրում է բարեկեցությանն ուղղված նպաստ ստանալու իրավունք, անկախ այն փաստից՝ պայմանական է այն, թե ոչ, այդ օրենսդրությունը պետք է որակվի գույքային իրավունք առաջացնող և այդ հոդվածի պահանջները բավարարող անձանց համար պետք է դիտարկվի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի շրջանակներում ([Stec and Others ընդդեմ Միացյալ Թագավորությունների](#) (որոշում) (ՄՊ), §§ 53-55, [Andrejeva ընդդեմ Լատվիայի](#) (ՄՊ), § 77, [Moskal ընդդեմ Լեհաստանի](#), § 38):

III. ԳԱՆԳԱՏԻ ԸՍՏ ԷՈՒԹՅԱՆ ԱՆԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ

Ա. Ակնհայտորեն անհիմն

Հոդված 35, կետ 3(ա)՝ Ընդունելիության չափանիշ

«3. Դատարանն անընդունելի է համարում 34-րդ հոդվածին համապատասխան ներկայացված ցանկացած անհատական գանգատ, եթե գտնում է, որ

(ա) գանգատը (...) ակնհայտորեն անհիմն է (...),»

1. Ընդհանուր ներածություն

375. Նույնիսկ այն դեպքում, երբ գանգատը համապատասխանում է Կոնվենցիային և ընդունելիության բոլոր պահանջները բավարարված են, Դատարանը, այնուամենայնիվ, կարող է գանգատը գործի ըստ Էության քննության համար ճանաչել անընդունելի: Մինչ օրս ամենատարածված պատճառը եղել է գանգատի ակնհայտորեն անհիմն համարվելը: Ճիշտ է, որ 35-րդ հոդվածի 3-րդ կետի (ա) ենթակետում «ակնհայտորեն» եզրույթի օգտագործումը կարող է շփոթություն առաջացնել. դրա բառացի դիտարկումը կարող է նշանակել, որ գանգատն այս հիմքով անընդունելի կճանաչվի միայն այն դեպքում, երբ ցանկացած միջին կարգացողի համար անհայտ է, որ այն անհավանական և անհիմն է: Այնուամենայնիվ, Կոնվենցիայի ինստիտուտների հաստատված նախադեպային իրավունքի միջոցով (այսինքն՝ Դատարանը և մինչև 1998 թվականի նոյեմբեր Մարդու իրավունքների եվրոպական հանձնաժողովը) պարզ է դառնում, որ գործի վերջնական արդյունքի իմաստով այդ արտահայտությունը պետք է մեկնաբանվի ավելի լայնորեն: Փաստորեն, յուրաքանչյուր գանգատ պետք է համարվի «ակնհայտորեն անհիմն», եթե դրա նախնական ըստ Էության քննությունը Կոնվենցիայով երաշխավորված իրավունքների խախտում չի բացահայտում, որի արդյունքում այն կարող է ի սկզբանե հայտարարվել անընդունելի՝ առանց գործի հետագա ըստ Էության քննություն անցկացնելու (սովորաբար այս առնչությամբ կկայցվի վճիռ):

376. Այն փաստը, որ Դատարանը գանգատի ակնհայտորեն անհիմն ճանաչելու համար երբեմն անհրաժեշտ է համարում, որպեսզի կողմերը ներկայացնեն իրենց առարկությունները և ինքն իր վճռում այդ մասին երկար և մանրակրկիտ պատճառաբանություններ տա, դրանից դիմումի «ակնհայտորեն» անհիմն բնույթը չի փոխվում ([Mentzen ընդդեմ Լասովիայի](#) (որոշում):

377. Ակնհայտորեն անհիմն ճանաչված գանգատների մեծամասնությունը Կոնվենցիայի 27-րդ և 28-րդ հոդվածներին համապատասխան մեկ դատավորի կամ երեք դատավորներից կազմված հանձնաժողովի կողմից հայտարարվում է *de plano* անընդունելի: Այնուամենայնիվ, որոշ այդպիսի գանգատներ քննվում են Պալատի կամ նույնիսկ բացառիկ դեպքերում՝ Մեծ պալատի կողմից ([Gratzinger and Gratzingerova ընդդեմ Չեխիայի Հանրապետության](#) (որոշում) (ՄՊ), [Demopoulos and Others ընդդեմ Թուրքիայի](#) (որոշում) (ՄՊ)):

378. «Ակնհայտորեն անհիմն» եզրույթը կարող է կիրառվել գանգատի ամբողջության նկատմամբ կամ գործի համատեքստից ելնելով՝ կոնկրետ բողոքի նկատմամբ: Այդ իսկ պատճառով, որոշ դեպքերում, գանգատի մի մասը կարող է մերժվել՝ [Դատարանին որպես] «չորրորդ ատյան» դիմած լինելու պատճառով, մինչդեռ մնացած մասը կճանաչվի ընդունելի և նույնիսկ կհանգեցնի Կոնվենցիայի խախտման հայտնաբերմանը: Հետևաբար, ավելի ճիշտ է դրանք կոչել «ակնհայտորեն անհիմն գանգատներ»:

379. «Ակնհայտորեն անհիմն» հասկացության իմաստը և գործողության շրջանակները հասկանալու համար, անհրաժեշտ է հիշել, որ Կոնվենցիայի ամբողջ

համակարգի հիմքում ընկած հիմնական սկզբունքներից մեկը սուբսիդիարության սկզբունքն է: Մարդու իրավունքների եվրոպական դատարանի [նախադեպային իրավունքի] համատեքստում այն նշանակում է, որ Կոնվենցիայով նախատեսված իրավունքների պաշտպանության և իրականացման պատասխանատվությունն ավելի շատ ընկնում է պայմանավորվող պետության, քան Դատարանի վրա: Դատարանը կարող է միջամտել միայն այն դեպքում, երբ ներպետական իշխանությունները չեն կատարել իրենց պարտականությունները (*Scordino* [ընդդեմ Բուալիայի \(թիվ 1\)](#) (ՄՊ), § 140): Հետևաբար, լավագույն դեպքը կլինի այն, որ գործի փաստերը և խնդիրները ներպետական մակարդակում քննվեն այնպես, որ ներպետական իշխանություններն, իրենց երկրի իշխանությունների հետ ունենալով ուղղակի և շարունակական կապերի հնարավորություն, կարողանան վերացնել Կոնվենցիայի ցանկացած ենթադրյալ խախտում (*Varnava and Others* [ընդդեմ Թուրքիայի](#) (ՄՊ), § 164):

380. Ակնհայտորեն անհիմն գանգատները կարող են բաժանվել չորս խմբի՝ «չորրորդ ատյանի» գանգատներ, գանգատներ, որտեղ հստակորեն կամ ակնհայտորեն խախտում չկա, անհիմն գանգատներ և, վերջապես, շփոթ առաջացնող կամ անիմաստ գանգատներ:

2. «Չորրորդ ատյան»

381. Դատարան ներկայացվող գանգատների որոշակի տեսակ են կազմում այն գանգատները, որոնց սովորաբար կոչում են «չորրորդ ատյանի» գանգատներ: Այս եզրույթը, որը ներառված չէ Կոնվենցիայի տեքստում և սահմանվել է Կոնվենցիայի ինստիտուտների նախադեպերի միջոցով (*Kemmache* [ընդդեմ Տրանսիայի \(թիվ 3\)](#), § 44) մի փոքր պարադոքսային է, քանի որ շեշտադրում է այն, ինչ Դատարանը չի հանդիսանում. վերջինս վերաքննիչ դատարան կամ ներպետական դատարանների կողմից Կոնվենցիայի առնչությամբ ընդունված վճիռները բեկանող կամ նրանց կողմից քննված գործերով վերաքննություն իրականացնող դատարան չի և չի կարող նաև գործերը վերաքննել այնպես, ինչպես Գերագույն դատարանը: Չորրորդ ատյանի գանգատներն այդ իսկ պատճառով պայմանավորված են Կոնվենցիայի հիման վրա ստեղծված դատարանի դերի և իրավական համակարգի բնույթի մասին դիմումատուի թյուրիմացությամբ:

382. Չնայած իր առանձնահատկություններին՝ Կոնվենցիան շարունակում է մնալ միջազգային պայմանագիր, որը կարգավորվում է նույն օրենքներով, ինչ այլ միջպետական պայմանագրերը, հատկապես նրանք, որոնք արտացոլված են Միջազգային պայմանագրերի մասին Վիեննայի կոնվենցիայում (*Demir and Baykara* [ընդդեմ Թուրքիայի](#) (ՄՊ), § 65): Դատարանը, հետևաբար, չի կարող անցնել այն ընդհանուր իրավասությունների սահմանը, որոնք պայմանավորվող պետություններն իրենց ինքնիշխան կամքով փոխանցել են իրեն: Այս սահմաններն ամրագրված են Կոնվենցիայի 19-րդ հոդվածով, համաձայն որի՝

«Սույն Կոնվենցիայով և դրան կից Արձանագրություններով Բարձր պայմանավորվող կողմերի ստանձնած պարտավորությունների կատարումն ապահովելու համար հիմնվում է Մարդու իրավունքների եվրոպական դատարան...»:

383. Համապատասխանաբար, Դատարանի լիազորությունները

սահմանափակվում են միայն պայմանավորվող պետությունների կողմից Կոնվենցիայի (և դրան կից Արձանագրությունների) համաձայն ստանձնած պարտավորությունների կատարման հաստատումով: Այնուհետև, պայմանավորվող պետությունների իրավական համակարգերում անմիջականորեն միջամտելու լիազորության բացակայության պայմաններում, Դատարանը պետք է հարգի այդ իրավական համակարգերի ինքնավարությունը: Սա նշանակում է, որ ներպետական դատարանի ենթադրաբար թույլ տված փաստական կամ օրենսդրական սխալների քննությունը Դատարանի խնդիրը չէ, քանի դեռ այդ խախտումները չեն ոտնահարել Կոնվենցիայով երաշխավորված իրավունքները և ազատությունները: Դատարանը չի կարող ինքնուրույն գնահատել այն փաստերը, որոնք հանգեցրել են ներպետական դատարանի կողմից այս կամ այն որոշման ընդունմանը: Հակառակ դեպքում, Դատարանը կգործի իբրև երրորդ կամ չորրորդ ատյանի դատարան, ինչի արդյունքում իր գործունեության սահմանները կանտեսվեն ([García Ruiz *ընդդեմ Իսպանիայի*](#) (ՄՊ), § 28, [Perlala *ընդդեմ Հունաստանի*](#), § 25):

384. Վերոնշյալ նկատառումների լույսի ներքո, Դատարանը, որպես կանոն, ներպետական դատարանների որոշումները և եզրակացությունները կասկածի տակ դնել չի կարող այն դեպքում, երբ դրանք վերաբերում են՝

- գործի փաստերի հաստատմանը,
- ներպետական օրենքի մեկնաբանմանը և կիրառմանը,
- դատավարության ժամանակ ապացույցների ընդունելիությանը և գնահատմանը,
- քաղաքացիական վեճի արդյունքի էական արդարությանը,
- քրեական դատավարությունում մեղադրյալի մեղավորությանը կամ անմեղությանը:

385. Միակ դեպքը, երբ որպես այս կանոնից բացառություն Դատարանը կարող է կասկածի տակ դնել խնդրո առարկա որոշումները և եզրակացություններն, այն է, երբ այդ որոշումները և եզրակացություններն ակնհայտորեն չպատճառաբանված են և անմիջականորեն են ուղղված արդարադատության և առողջ դատողության դեմ, ինչն ինքնին Կոնվենցիայի խախտում է առաջացնում ([Sisojeva and Others *ընդդեմ Լատվիայի*](#) (հանվել է քննվող գործերի ցանկից) (ՄՊ), § 89):

386. Չորրորդ ատյանի գանգատները կարող են ներկայացվել Կոնվենցիայի ցանկացած դրույթի շրջանակներում՝ անկախ ներպետական մակարդակում այն իրավական ոլորտից, որի շրջանակներում դատավարությունները դիտարկվում են: Չորրորդ ատյանի դոկտրինը կիրառվում է օրինակ հետևյալ դեպքերում՝

- քաղաքացիական գործեր ([García Ruiz *ընդդեմ Իսպանիայի*](#) (ՄՊ), § 28, [Pla and Puncernau *ընդդեմ Անդորայի*](#), § 26),
- քրեական գործեր ([Perlala *ընդդեմ Հունաստանի*](#), § 25, [Khan *ընդդեմ Միացյալ Թագավորությունների*](#), § 34),
- հարկային գործեր ([Dukmedjian *ընդդեմ Ֆրանսիայի*](#), § 71),
- սոցիալական բնույթի հարցերի հետ կապված գործեր ([Marion *ընդդեմ Ֆրանսիայի*](#), § 22),
- վարչական գործեր ([Agathos and Others *ընդդեմ Հունաստանի*](#), § 26),
- ընտրական իրավունքներին վերաբերող գործեր ([Agathos and Others *ընդդեմ Հունաստանի*](#), § 118),
- ոչ քաղաքացիների մուտքի, բնակության և տեղափոխման հետ կապված

գործեր ([*Sisojeva and Others ընդդեմ Հատվիայի*](#) (քննվող գործերի ցանկից հանվել է) (ՄՊ)):

387. Այնուամենայնիվ, չորրորդ աստյանի գանգատների մեծամասնությունը ներկայացված է Կոնվենցիայի 6-րդ հոդված 1-ին կետի համաձայն և վերաբերում է քաղաքացիական և քրեական դատավարություններում «արդար դատաքննության» իրավունքին: Պետք է հիշել, քանի որ դրանք հաճախ դիմումատուի թյուրիմացության պատճառ են, 6-րդ հոդվածի 1-ին կետի շրջանակներում պահանջվող «արդարությունը» ոչ թե «նյութական» (հասկացություն, որը մասնակիորեն իրավաբանական է, մասնակիորեն էլ բարոյագիտական և կարող է կիրառվել միայն գործը քննող դատավորի կողմից), այլ «ընթացակարգային» արդարություն է: Վերջինս գործնական առումով վերաբերում է մրցակցային դատավարությանը, որի ժամանակ կողմերի դիրքորոշումները լավում են և հավասար հիմքերով ներկայացվում դատարանին ([*Star Cate Epilekta – Gevmata and Others ընդդեմ Հունաստանի*](#) (որոշում)):

388. Հետևաբար, Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի շրջանակներում ներկայացված չորրորդ աստյանի գանգատը կմերժվի, այն հիմքով, որ դիմումատուն մասնակցել է մրցակցային դատավարությանը, որ դատավարության տարբեր փուլերում կարողացել է ներկայացնել գործին առնչվող փաստարկներ և ապացույցներ, հնարավորություն է ունեցել արդյունավետ ձևով վիճարկել հակառակ կողմի բերված փաստարկներն ու ապացույցները, իր կողմից ներկայացված բոլոր փաստարկներն օբյեկտիվորեն դիտարկվել են, գործի լուծման համար եղել են էական և պատշաճ կերպով քննվել և լսվել են դատարանների կողմից, վիճարկված որոշման համար ներկայացվել են իրավական և փաստացի պատճառներ. հետևաբար, դատավարություններն ընդհանուր առմամբ եղել են արդար ([*García Ruiz ընդդեմ Իսպանիայի*](#) (ՄՊ), [*Khan ընդդեմ Միացյալ Թագավորությունների*](#)):

3. Խախտման հստակ կամ ակնհայտ բացակայությունը

389. Դիմումատուի գանգատը կճանաչվի ակնհայտ անհիմն, նույնիսկ եթե ընդունելիության բոլոր ձևական պահանջները բավարարված են եղել, գանգատը համապատասխանել է Կոնվենցիային, սակայն այն չի հանդիսացել չորրորդ աստյանի գանգատ և առկա չէ Կոնվենցիայով երաշխավորված իրավունքների խախտում: Նման դեպքերում Դատարանի մոտեցումը կլինի հետևյալը. կիրականացնի բողոքի ըստ էության քննություն, կեզրակացնի, որ խախտում չկա և առանց հետագա քննության՝ գանգատը կճանաչի անընդունելի: Տարբերակվում են երեք տեսակի գանգատներ, որոնց նկատմամբ տարածվում է նշված մոտեցումը:

(ա) Անարդարության կամ կողմնակալության բացակայությունը

390. Սուբսիդիարության սկզբունքի համաձայն՝ Կոնվենցիայով երաշխավորված հիմնական իրավունքների պաշտպանությունն առաջին հերթին ներպետական մարմինների խնդիրն է: Հետևաբար, որպես ընդհանուր կանոն, գործի փաստական հանգամանքների հաստատումը և ներպետական օրենքի մեկնաբանումը բացառապես ներպետական դատարանների և այլ մարմինների խնդիրն է, որոնց որոշումներն ու եզրակացություններն այս առումով պարտադիր են Դատարանի համար: Սակայն, Կոնվենցիայի ամբողջ համակարգին ներհատուկ իրավունքների

արդյունավետության սկզբունքից ելնելով՝ Դատարանը կարող է և պետք է համոզվի, որ որոշման կայացման գործընթացը, որի առնչությամբ դիմումատուս բողոք է ներկայացրել, եղել է արդար և անկողմնակալ (խնդրո առարկա դատավարությունները կարող են լինել վարչական, իրավական կամ երկուսը միասին՝ կախված գործից):

391. Հետևաբար, Դատարանը կարող է ակնհայտորեն անհիմն ճանաչել այն գանգատը, որն ըստ էության քննվել է իրավասու պետական դատարանների կողմից այնպիսի դատավարության շրջանակներում, որոնք *a priori* բավարարել են հետևյալ պայմանները (ի հակառակը՝ ապացույցի բացակայության դեպքում):

– դատավարությունն իրականացվել է ներպետական իրավունքի դրույթներով նման իրավասություն ունեցող մարմինները,

– դատավարությունը իրականացվել է ներպետական իրավունքով սահմանված ընթացակարգային պահանջներին համապատասխան,

– շահագրգիռ կողմը հնարավորություն է ունեցել բերել փաստարկներ և ապացույցներ, որոնք պատշաճ կերպով քննվել են իրավասու մարմնի կողմից,

– իրավասու մարմինները քննել և հաշվի են առել գործի բոլոր փաստական և իրավական տարրերը, որոնք օբյեկտիվորեն անհրաժեշտ են գործի արդար լուծման համար,

– դատավարության արդյունքում կայացվել է պատշաճ հիմնավորված և պատճառաբանված որոշում:

(բ) Միջոցի և նպատակի անհամաչափության բացակայությունը

392. Այն դեպքում, երբ Կոնվենցիայով երաշխավորված իրավունքը բացարձակ չէ և կարող է այնպիսի սահմանափակումների առարկա հանդիսանալ, որոնք ակնհայտ (ուղղակիորեն նախատեսված են Կոնվենցիայում) կամ ենթադրելի են (նախատեսված են Դատարանի նախադեպային իրավունքով), ապա Դատարանից հաճախ պահանջվում է գնահատել, թե արդյոք վիճարկվող միջամտությունն եղել է համաչափ:

393. Համապատասխան սահմանափակումները հստակորեն սահմանող դրույթների խմբի ներսում կարելի է առանձնացնել այլ չորս հոդվածներ ներառող ենթախումբ՝ 8-րդ հոդված (անձնական ու ընտանեկան կյանքը հարգելու իրավունք), 9-րդ հոդված (մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունք), 10-րդ հոդված (ազատ արտահայտվելու իրավունք) և 11-րդ հոդված (խաղաղ հավաքների և միավորման ազատության իրավունք): Բոլոր այս հոդվածներն ունեն նույն կառուցվածքը. առաջին պարբերությունը սահմանում է քննարկվող հիմնական իրավունքը, մինչդեռ երկրորդ պարբերությունը սահմանում է այն հանգամանքները, որոնց առկայությամբ պետությունը կարող է սահմանափակել այդ իրավունքի իրականացումը: Երկրորդ պարբերությունը յուրաքանչյուր գործի համար նույն ձևակերպումը չունի, բայց կառուցվածքային տեսանկյունից նույնն է: Օրինակ՝ անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունքի վերաբերյալ, հոդված 8-րդ հոդվածի 2-րդ կետը սահմանում է՝

«Չի թույլատրվում պետական մարմինների միջամտությունն այդ իրավունքի իրականացմանը, բացառությամբ այն դեպքերի, երբ դա նախատեսված է օրենքով և անհրաժեշտ է Մարդու իրավունքների մասին Կոնվենցիա ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական

անվտանգության, հասարակական կարգի կամ երկրի տնտեսական բարեկեցության, ինչպես նաև անկարգությունների կամ հանցագործությունների կանխման, առողջության կամ բարոյականության պաշտպանության կամ այլ անձանց իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով»:

Կոնվենցիային կից թիվ 4 Արձանագրության 2-րդ հոդվածը (ազատ տեղաշարժվելու իրավունք) նույնպես պատկանում է այս խմբին, քանի որ դրա երրորդ պարբերությունն ունի նույն կառուցվածքը:

394. Այն դեպքում, երբ Դատարանից պահանջվում է քննել պետական մարմինների կողմից վերոհիշյալ իրավունքներից մեկին միջամտելու հարցը, Դատարանը խնդիրը միշտ վերլուծում է երեք փուլով: Եթե իրականում պետության կողմից իրականացվել է «միջամտություն» (սա մի առանձին խնդիր է, որին անհրաժեշտ է անդրադառնալ առաջին հերթին, և պատասխանը միշտ չէ, որ ակնհայտ է), Դատարանը փորձում ըստ հերթականության պատասխանել այս երեք հարցերին՝

- արդյոք միջամտությունն իրականացվել է այն օրենքին համապատասխան, որը եղել է բավականաչափ մատչելի և կանխատեսելի,
- եթե այո, արդյոք այն հետապնդել է սպառնալից կերպով թվարկված «իրավաչափ նպատակներից» առնվազն մեկը (ցանկը կարող է աննշան տարբերվել՝ կախված է հոդվածից),
- եթե դա այդպես է, արդյոք միջամտությունը «անհրաժեշտ էր ժողովրդավարական հասարակությունում» նպատակին հասնելու համար: Այլ կերպ ասած, նպատակը և քննարկվող սահմանափակումները համաչափ են եղել:

395. Միայն այն դեպքում, երբ նշված երեք հարցերի պատասխանը դրական է, միջամտությունը կհամարվի Կոնվենցիայի հետ համատեղելի: Հակառակ դեպքում՝ կարձանագրվի խախտում: Քննելով երրորդ հարցը՝ Դատարանը պետք է հաշվի առնի Պետության հայեցողության շրջանակը, որը, գործի հանգամանքներից, պաշտպանվող իրավունքից և միջամտության բնույթից ելնելով, էականորեն կտարբերվի (*Stoll ընդդեմ Շվեյցարիայի* (ՄՊ), § 105, *Demir and Baykara ընդդեմ Թուրքիայի* (ՄՊ), § 119, *S. and Marper ընդդեմ Միացյալ Թագավորությունների* (ՄՊ), § 102, *Mentzen ընդդեմ Լատվիայի* (որոշում)):

396. Նույն սկզբունքը կիրառվում է ոչ միայն վերը նշված հոդվածների, այլ նաև Կոնվենցիայի այլ դրույթների մեծամասնության և քննարկվող հոդվածում չնշված ենթադրյալ սահմանափակումների նկատմամբ: Օրինակ՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետում նշվում է, որ արդար դատաքննության իրավունքը, բացարձակ չէ և ենթակա է սահմանափակումների, որոնք թույլատրված են, քանի որ դատարանի մատչելիության իրավունքն իր բնույթով կարգավորվում է պետության կողմից: Այս տեսանկյունից, պայմանավորվող կողմերն ունեն հայեցողության որոշակի շրջանակ, այնուամենայնիվ, Կոնվենցիայի պահանջների պահպանման վերաբերյալ վերջնական որոշումն ընդունում է Դատարանը: Դատարանը պետք է համոզվի, որ կիրառված սահմանափակումները չեն սահմանափակում կամ նվազեցնում անձի դատարանի մատչելիության իրավունքն այն աստիճան, որ խախտվի իրավունքի ողջ էությունը: Ավելին, արդար դատաքննության իրավունքի սահմանափակումը չի համապատասխանում 6-րդ հոդվածի 1-ին կետին, եթե այն չի հետապնդում իրավաչափ նպատակ և

հետապնդվող նպատակի և ձեռնարկվող միջոցների միջև առկա չէ ողջամիտ համաչափություն ([Cudak քննդեմ Լիսովայի](#) (ՄՊ), § 55):

397. Եթե գանգատի նախնական քննությունից հետո Դատարանը համոզվի, որ վերը նշված պայմանները բավարարված են, և, հաշվի առնելով գործի փաստական հանգամանքները, համոզվի, որ պետության իրականացրած միջամտության և ձեռնարկված միջոցների միջև պարզ համաչափության պակաս չկա, Դատարանը գանգատը կճանաչի անընդունելի՝ ակնհայտ անհիմն լինելու հիմքով: Այս դեպքում, անընդունելիության մասին որոշման պատճառները և խախտում տեղի ունեցած չլինելու մասին Դատարանի ըստ էության վճռի պատճառները կլինեն նույնական կամ միատեսակ ([Mentzen քննդեմ Լասովիայի](#) (որոշում)):

(գ) Այլ համեմատաբար ակնհայտ էական հարցեր

398. Ի լրումն վերը նկարագրված իրավիճակների՝ Դատարանը գանգատն ակնհայտորեն անհիմն կճանաչի, եթե համոզվի, որ գործի էությանը վերաբերող պատճառներով Կոնվենցիայի դրույթի խախտում տեղի չի ունեցել: Գոյություն ունի երկու հնարավոր իրավիճակ՝

- երբ նույնատիպ կամ միանման գործերի մասով գոյություն ունի Դատարանի նախադեպային իրավունք, որի հիման վրա Դատարանը կարող է եզրակացնել, որ իր վարույթում գտնվող գործում Կոնվենցիայի խախտում տեղի չի ունեցել ([Galev and Others քննդեմ Բուլղարիայի](#) (որոշում)),
- երբ չկան նախորդ որոշումներ, որոնք ուղղակիորեն և առանձնահատուկ կերպով առնչվում են խնդրին, Դատարանը, հիմք ընդունելով գոյություն ունեցող նախադեպային իրավունքը, կարող է եզրակացնել, որ Կոնվենցիայի խախտում տեղի չի ունեցել ([Hartung քննդեմ Ֆրանսիայի](#) (որոշում)):

399. Երկու իրավիճակում էլ Դատարանը կարող է անհրաժեշտ համարել մանրամասն ուսումնասիրել գործի փաստերը և վերաբերելի այլ փաստական տարրերը ([Collins and Akaziebie քննդեմ Շվեդիայի](#) (որոշում)):

4. Անհիմն գանգատներ. ապացույցների պակաս

400. Դատարանում իրականացվող դատավարություններն իրենց բնությամբ մրցակցային են: Հետևաբար, կողմերը՝ դիմումատուն և պատասխանող կառավարությունը, պետք է հիմնավորեն իրենց ներկայացրած փաստերն (Դատարան ներկայացնելով անհրաժեշտ փաստացի ապացույցներ) ու իրավական փաստարկները (բացատրելով, թե ինչու, իրենց կարծիքով, առկա է կամ առկա չէ Կոնվենցիայի խախտում):

401. Դատարանի Կանոնակարգի 47-րդ կանոնի համապատասխան հատվածները, որոնք կարգավորում են անհատական գանգատի բովանդակությունը, հետևյալն են սահմանում՝

«1. Կոնվենցիայի 34-րդ հոդվածի ներքո ներկայացվող գանգատը պետք է ներկայացվի Քարտուղարության տրամադրած դիմումի (գանգատի) ձևաթղթով, բացառությամբ, եթե Դատարանն այլ կերպ է որոշել: Այն պետք է պարունակի

դիմումի ձևաթղթի համապատասխան հատվածով պահանջվող ողջ տեղեկատվությունը և ներկայացնի

(...)

(դ) փաստերի հակիրճ և պարզ նկարագրություն,

(ե) Կոնվենցիայի ենթադրյալ խախտման (խախտումների) և պնդումների մասին հակիրճ և պարզ նկարագրություն,

(...)

2. (ա) 1(դ) և (զ) վերը նշված պարագրաֆների ողջ տեղեկատվությունը, որն առկա է դիմումի ձևաթղթի համապատասխան հատվածներում պետք է բավարար լինի, որպեսզի Դատարանն առանց որևէ այլ փաստաթղթից օգտվելու կարողանա որոշել գանգատի բնույթը և կիրառելիության շրջանակը:

(...)

3.1. Դիմումի ձևաթուղթը պետք ստորագրվի դիմումատուի կամ նրա ներկայացուցչի կողմից և պետք է ուղեկցվի՝

(ա) բողոքի առարկա որոշումների՝ դատական կամ այլ, և միջոցառումներին վերաբերող փաստաթղթերի պատճեններով,

(բ) այն փաստաթղթերի և որոշումների պատճեններով, որոնք վկայում են, որ դիմումատուն բավարարել է իրավական պաշտպանության ներպետական բոլոր միջոցները սպառելու պահանջը և Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 1-ին կետում նշված ժամանակային պահանջը,

(...)

5.1. Սույն կանոնի 1-ից 3 պարբերություններում նշված պահանջները չբավարարելու արդյունքում՝ գանգատը Դատարանի կողմից չի քննվի, բացառությամբ, եթե

(ա) դիմումատուն պահանջները չբավարարելու մասին ներկայացրել է համապատասխան բացատրություն,

(...)

(զ) Դատարանն իր նախաձեռնությամբ կամ դիմումատուի դիմումի հիման վրա այլ բան է կարգադրել:

(...)»:

402. Ի լրումն՝ Դատարանի Կանոնակարգի 44(զ) կանոնի 1-ի կետի համաձայն՝

«Երբ կողմին չի հաջողվում Դատարանի կողմից պահանջված ապացույցը ներկայացնել կամ տեղեկատվություն տրամադրել կամ էլ առնչվող տեղեկատվությունը իր կամքով հրապարակել, կամ էլ նրան չի հաջողվում արդյունավետ կերպով մասնակցել դատավարությանը, Դատարանն անհրաժեշտության դեպքում կարող է այդպիսի եզրակացություններ անել»:

403. Երբ վերը նշված պայմանները բավարարված չեն, Դատարանը գանգատը կճանաչի անընդունելի՝ ակնհայտորեն անհիմն լինելու հիմքով: Գոյություն ունի երկու իրավիճակ, երբ տեղի է ունենում նկարագրվածը՝

- երբ դիմումատուն ուղղակի վկայակոչել է Կոնվենցիայի մեկ կամ ավել դրույթ, առանց բացատրելու, թե ինչպես են դրանք խախտվել, եթե դա գործի փաստերից ակնհայտ չի ([*Trofimchuk ընդդեմ Ուկրաինայի*](#) (որոշում), [*Baillard ընդդեմ Ֆրանսիայի*](#) (որոշում)),
- երբ դիմումատուն, ի հավաստումն իր հայտարարությունների չի ներկայացրել կամ հրաժարվել է ներկայացնել փաստաթղթային ապացույցներ (մասնավորապես՝ դատարանների և այլ ներպետական մարմինների որոշումներ), բացառությամբ այն դեպքերի, երբ առկա են իր հսկողությունից դուրս գտնվող բացառիկ հանգամանքներ, որոնք խոչընդոտում են դրան (օրինակ՝ երբ բանտի կառավարման մարմինները մերժում են բանտարկյալի գործերից փաստաթղթեր փոխանցել Դատարանին) կամ բացառությամբ, եթե Դատարանն այլ բան է կարգադրել:

5. Շփոթ առաջացնող կամ անհիմն գանգատներ

404. Դատարանը որպես ակնհայտորեն անհիմն կմերժի այն գանգատները, որոնք այնքան շփոթեցնող են, որ օբյեկտիվորեն անհնար է հասկանալ դիմումատուի բողոքարկած փաստերի և այն բողոքների իմաստը, որոնք վերջինս ցանկանում է Դատարան ներկայացնել: Նույնը կիրառվում է անհիմն գանգատների նկատմամբ՝ գանգատներ, որոնք վերաբերում են օբյեկտիվորեն անհնար, ակնհայտորեն հորինված կամ իմաստագուրկ փաստերի: Այս դեպքում այն, որ Կոնվենցիայի խախտում առկա չէ, ակնհայտ կլինի ցանկացած, նույնիսկ իրավաբանական կրթություն չունեցող կարդացողին:

Բ. Ոչ էական վնաս

Հոդված 35, կետ 3(ա)՝ Ընդունելիության չափանիշ

«3. Դատարանն անընդունելի է համարում 34-րդ հոդվածին համապատասխան ներկայացված ցանկացած անհատական գանգատ, եթե գտնում է, որ

(...)

(բ) դիմողը չի կրել էական վնաս, եթե Կոնվենցիայով և դրան կից արձանագրություններով սահմանված մարդու իրավունքների պաշտպանությունը չի պահանջում գանգատի ըստ էության քննություն, և պայմանով, որ ոչ մի գանգատ չի կարող մերժվել այս հիմքով, եթե այն պատշաճ կերպով չի քննվել ներպետական դատական ատյանների կողմից»:

1. Նոր չափանիշի նախապատմությունը

405. 2010թ. հունիսի 1-ին թիվ 14 Արձանագրության ուժի մեջ մտնելու հետ միաժամանակ 35-րդ հոդվածով նախատեսված չափանիշներին նոր ընդունելիության չափանիշ էր ավելացել: Արձանագրության 20-րդ հոդվածի համաձայն՝ նոր դրույթը կկիրառվի Դատարանին ներկայացված բոլոր գանգատների նկատմամբ, բացառությամբ ընդունելի ճանաչված գանգատների: Համապատասխանաբար, [*Vistinš Vistinsand Perepjolkins ընդդեմ Լատվիայի*](#) (ՄՊ), § 66, գործում կառավարության՝ զգալի վնասի մասին ճնշող նախնական առարկությունը մերժվել է, որովհետև, մինչև թիվ 14 Արձանագրության ուժի մեջ մտնելը, 2006 թվականին գանգատն արդեն ճանաչվել էր ընդունելի:

Այս չափանիշի ներդրումը պայմանավորված էր Դատարանի վարույթում

գտնվող գանգատների մշտապես ավելացմամբ: Այն Դատարանին տրամադրում է լրացուցիչ գործիք, որը պետք է օգնի կենտրոնանալ այն գործերի վրա, որոնք երաշխավորում են ըստ էության քննություն: Այլ կերպ ասած, այն թույլ է տալիս Դատարանին մերժել այն գործերը, որոնք համարվում են «ոչ էական»՝ համաձայն այն սկզբունքին, որ դատավորները չպետք է քննեն նման գործեր («*de minimis non curat praetor*»):

406. Մինչև 2010 թվականի հուլիսի 1-ը պաշտոնապես Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի մաս չհանդիսանալով հանդերձ՝ «*de minimis*» հասկացությունը, այնուամենայնիվ Հանձնաժողովի անդամներից մի քանիսի չհամաձայնվող կարծիքներում վկայակոչվել է (տե՛ս [Eyoun-Priso ընդդեմ Տրանսիայի](#) (որոշում), [H.F. K.-F. ընդդեմ Գերմանիայի](#) (որոշում), [Lechesne ընդդեմ Տրանսիայի](#) (որոշում)) գործերով Հանձնաժողովի զեկույցները և օրինակ՝ [Dudgeon ընդդեմ Միացյալ Թագավորությունների](#), [O'Halloran and Francis ընդդեմ Միացյալ Թագավորությունների](#) (ՄՊ), [Micallef ընդդեմ Մալթայի](#) (ՄՊ)) գործերով Դատարանի դատավորների զեկույցները և օրինակ՝ [Koumoutsea and Others ընդդեմ Հունաստանի](#) (որոշում) գործում կառավարության՝ Դատարանին ներկայացված դիրքորոշումները):

2. Գործողության ոլորտը

407. 3-րդ հոդվածի 3(բ) կետը բաղկացած է երեք տարբեր տարբերից: Առաջին՝ ընդունելիության չափանիշը. Դատարանը ցանկացած անհատական գանգատ կարող է ճանաչել անընդունելի, եթե դիմումատու չի կրել էական վնաս: Դրան հաջորդում են երկու պաշտպանական դրույթներ: Առաջինը՝ Դատարանը չի կարող գանգատն անընդունելի ճանաչել, եթե մարդու իրավունքների նկատմամբ հարգանքը պահանջում է գանգատի ըստ էության քննություն: Երկրորդը՝ ներպետական իշխանությունների կողմից պատշաճ կերպով չքննված ոչ մի գործ այս նոր չափանիշի հիման վրա չի կարող մերժվել: Այստեղ անհրաժեշտ է նշել, որ Կոնվենցիան փոփոխող և լրացնող թիվ 15 Արձանագրության 5-րդ հոդվածի համաձայն, որը դեռևս ուժի մեջ չէ, երկրորդ պաշտպանական դրույթը պետք է վերանա⁵: Այն դեպքում, երբ անընդունելիության երեք չափանիշները բավարարված են, Դատարանը բողոքը Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3(բ) և 4 կետերի իմաստով ճանաչում է անընդունելի:

408. [Shefer ընդդեմ Ռուսաստանի](#) (որոշում) գործում Դատարանը նշել է, որ մինչդեռ 35-րդ հոդվածի 3(բ) կետով նախատեսված երեք տարբերի միջև ֆորմալ առումով հիերարխիա գոյություն չունի՝ «էական վնասին» վերաբերող հարցը նոր չափանիշի կորիզն է: Գործերի մեծամասնությունում կիրառվում է հիերարխիկ մոտեցում, համաձայն որի նոր չափանիշի յուրաքանչյուր տարր քննվում է իր հերթին:

409. Դատարանը միակ իրավասու մարմինն է, ով մեկնաբանում է ընդունելիության այս պահանջը և գանգատի վերաբերյալ որոշում կայացնում: Ուժի մեջ մտնելուն հաջորդող առաջին երկու տարվա ընթացքում չափանիշի կիրառումը վերապահված էր Պալատներին և Մեծ պալատին (թիվ 14 Արձանագրության 20-րդ հոդվածի 2-րդ կետ): 2012 թվականի հունիսի 1-ից չափանիշը սկսել է կիրառվել

⁵ 35-րդ հոդվածի 3-րդ կետի «բ» ենթակետի «և պայմանով, որ ոչ մի գանգատ չի կարող մերժվել այս հիմքով, եթե այն պատշաճ կերպով չի քննվել ներպետական դատական ատյանների կողմից» ձևակերպումը պետք է ջնջվի:

Դատարանի բոլոր դատական բաժանմունքների կողմից:

410. Դատարանը կարող է իր նախաձեռնությամբ ([Ionescu ընդդեմ Ռումինիայի](#) (որոշում)) կամ ի պատասխան կառավարության ներկայացրած առարկման՝ ([Gaglione and Others ընդդեմ Իտալիայի](#)) ներկայացնել ընդունելիության նոր չափանիշ: Որոշ գործերում, մինչ մնացած ընդունելիության պահանջներին անդրադառնալը, Դատարանը, նախ քննարկում է նոր չափանիշը ([Korolev ընդդեմ Ռուսաստանի](#) (որոշում)), [Rinck ընդդեմ Ֆրանսիայի](#) (որոշում), [Gaftoniuc ընդդեմ Ռումինիայի](#), [Burov ընդդեմ Սոլովովայի](#) (որոշում), [Shefer ընդդեմ Ռուսաստանի](#) (որոշում)): Մյուս գործերում, վերջինս սկսում է քննարկել նոր չափանիշը միայն այն ժամանակ, երբ մնացած չափանիշներն արդեն բացառել է:

3. Արդյոք դիմումատուն կրել է էական վնաս

411. Չափանիշի հիմնական տարրը կազմում է այն, հարցն՝ արդյոք դիմումատուն «էական վնաս» է կրել: «Էական վնասը» հիմնվում է այն գաղափարի վրա, որ իրավունքի խախտումը, չնայած զուտ իրավական տեսանկյունից իրական է, պետք է հասնի լրջության նվազագույն աստիճանի, որպեսզի հաշվի առնվի միջազգային դատարանի կողմից: Ձևական կառուցվածքից դուրս բացառապես տեխնիկական և անէական խախտումները եվրոպական վերահսկողության ենթակա չեն ([Shefer ընդդեմ Ռուսաստանի](#) (որոշում)): Այս նվազագույն աստիճանի գնահատումը հարաբերական է և կախված է գործի բոլոր հանգամանքներից: Խախտման լրջությունը պետք է գնահատվի հաշվի առնելով և՛ դիմումատուի սուբյեկտիվ ընկալումը, և՛ այն, ինչը կոնկրետ գործով օբյեկտիվորեն վտանգված է ([Korolev ընդդեմ Ռուսաստանի](#) (որոշում)): Սակայն, միայն դիմումատուի սուբյեկտիվ ընկալումը բավարար չէ եզրակացնելու, որ նա էական վնաս է կրել: Սուբյեկտիվ ընկալումը պետք է հիմնավորվի օբյեկտիվ հիմքերով ([Ladygin ընդդեմ Ռուսաստանի](#) (որոշում)): [Giuran ընդդեմ Ռումինիայի](#), §§ 17-25, գործով Դատարանը պարզել է, որ դիմումատուն էական վնաս է կրել, քանի որ վարույթը վերաբերել է նրա համար սկզբունքային կարևորության հարցի, մասնավորապես՝ նրա գույքի և տան սեփականության հարգման իրավունքին: [Այս եզրակացությանը Դատարանը հանգել է] անկախ այն հանգամանքից, որ խնդրո առարկա ներպետական վարույթը նպատակ ուներ վերադարձնել դիմումատուին պատկանող բնակարանից գողացված 350 եվրո արժողությամբ իրերը:

412. Ավելին, դիմումատուի համար խնդրի սուբյեկտիվ կարևորությունը գնահատելիս Դատարանը կարող է հաշվի առնել դիմումատուի վարքագիծը, օրինակ՝ դատավարության ընթացքում որոշ ժամանակ ակտիվություն չցուցաբերելը, ինչն այդ գործով կարող է նշանակել, որ վարույթը դիմումատուի համար էական նշանակություն չի ունեցել ([Shefer ընդդեմ Ռուսաստանի](#) (որոշում)): [Giusti ընդդեմ Իտալիայի](#), §§ 22-36, գործով Դատարանը ներդրել է որոշ նոր բաղադրիչներ, որոնք միջազգային դատարանի կողմից իրականացվող քննության համար անհրաժեշտ լրջության նվազագույն աստիճանը որոշելիս պետք է հաշվի առնել, մասնավորապես, ենթադրաբար խախտված իրավունքի բնույթը, վկայակոչվող խախտման լրջությունը և/կամ խախտման՝ դիմումատուի անձնական իրավիճակի վրա թողած հնարավոր հետևանքները: Այս հետևանքները գնահատելիս Դատարանը մասնավորապես պետք է քննի՝ ինչ է վտանգված կամ ինչպիսին է լինելու ազգային դատավարության հանգուցալուծումը:

(ա) Էական ֆինանսական վնասի բացակայությունը

413. Մի շարք գործերում լրջության աստիճանը գնահատվել է վեճի առարկայի ֆինանսական ազդեցության և դիմումատուի համար գանգատի կարևորության լույսի ներքո: Ֆինանսական ազդեցություն չի գնահատվում բացառապես դիմումատուի պահանջած ոչ դրամական վնասի լույսի ներքո: [*Kiousi* *ընդդեմ Հունաստանի*](#) (որոշում) գործով Դատարանը վճռել է, որ պահանջված ոչ նյութական վնասի չափը, մասնավորապես՝ 1,000 եվրոն, դիմումատուի համար խնդրո առարկայի իրական կարևորությունը հաշվարկելու համար էական չէր. ոչ նյութական վնասը հաճախ հաշվարկվում է հենց դիմումատուների կողմից՝ դատական գործի արժեքի մասին իրենց իսկ ենթադրությունների հիման վրա:

414. Այն դեպքերում, երբ ֆինանսական ազդեցության հարցը խնդրո առարկա է, Դատարանը հետևյալ գործերով, որոնցով վեճի առարկան եղել է 500 եվրոյին համարժեք կամ 500 եվրոյից պակաս, վճռել է, որ «Էական վնաս» առկա չէ.

- գործ, որով վեճի առարկան կազմում էր 90 եվրո ([*Ionescu* *ընդդեմ Ռումինիայի*](#) (որոշում)),
- իշխանությունների կողմից դիմումատուին 1 եվրոյին համարժեք գումար չվճարելու գործով ([*Korolev* *ընդդեմ Ռուսաստանի*](#) (որոշում)),
- իշխանությունների կողմից դիմումատուին մոտավորապես 12 եվրոյին համարժեք գումար չվճարելու գործով ([*Vasilchenko* *ընդդեմ Ռուսաստանի*, § 49\),](#)
- 150 եվրոյին համարժեք ճանապարհային երթևեկության տուգանքի և դիմումատուի վարորդական իրավունքում այդ մասին նշելու վերաբերյալ գործով ([*Rinck* *ընդդեմ Ֆրանսիայի*](#) (որոշում)),
- 25 եվրոյի ուշ վճարումը (Gaftoniuc *ընդդեմ Ռումինիայի*),
- 125 եվրոն չփոխհատուցելը ([*Stefanescu* *ընդդեմ Ռումինիայի*](#) (որոշում)),
- իշխանությունների կողմից դիմումատուին 12 եվրո չվճարելը ([*Fedotov* *ընդդեմ Սոլովայի*](#) (որոշում)),
- իշխանությունների կողմից դիմումատուին 107 եվրո և 121 եվրո ծախսերի և ծախքերի համար (ընդհանուր՝ 228 եվրո) չվճարելը ([*Burov* *ընդդեմ Սոլովայի*](#) (որոշում)),
- 135 եվրոյի տուգանքը, 22 եվրոյի ծախսերը և դիմումատուի վարորդական իրավունքում խախտման մասին համապատասխան նշում անելու գործով ([*Fernandez* *ընդդեմ Ֆրանսիայի*](#) (որոշում)),
- գործ, որով Դատարանը նշել է, որ խնդրո առարկա նյութական վնասի չափը կազմում է 504 եվրո ([*Kiousi* *ընդդեմ Հունաստանի*](#) (որոշում)),
- գործ, որով դիմումատուի՝ իր փաստաբանի դեմ ներկայացրած 99 եվրոյի նախնական պահանջը դիտարկվել էր այն փաստի համադրությամբ, որ գործն ըստ էության լուծող դատավարության տևողության համար նրան տրամադրվել էր 1,515 եվրո ([*Havelka* *ընդդեմ Չեխիայի Հանրապետության*](#) (որոշում)),
- 200 եվրոյին համարժեք աշխատավարձի ուշ վճարման գործով ([*Guruyan* *ընդդեմ Հայաստանի*](#) (որոշում)),
- 227 եվրոյի ծախսերին վերաբերող գործով ([*Šumbera* *ընդդեմ Չեխիայի Հանրապետության*](#) (որոշում)),
- 34 եվրոյի արժողությամբ վճռի կատարման վերաբերյալ գործով ([*Shefer* *ընդդեմ Ռուսաստանի*](#) (որոշում)),

- Էլեկտրաէներգիայի մատակարարումը դադարեցնելու համար 445 եվրոյի ոչ նյութական պահանջի վերաբերյալ գործով ([*Bazelyuk ընդդէմ Ուկրաինայի*](#) (որոշում)),
- 50 եվրոյի վարչական տուգանքի գործով ([*Boelens and Others. ընդդէմ Բելգիայի*](#) (որոշում)),
- 98-ից մինչև 137 եվրոյի վարձատրության (գումարած տուժերի) պահանջի գործով ([*Hudecová and Others ընդդէմ Սլովակիայի*](#) (որոշում)):

415. [*Havelka ընդդէմ Չեխիայի Հանրապետության*](#) (որոշում) գործում Դատարանը հաշվի է առել այն փաստը, որ այն ժամանակ, երբ 1,515 եվրո տրամադրումը Դատարանի նախադեպային իրավունքի լույսի ներքո առանձնապես չէր կարող համարվել պատշաճ և արդյունավետ հատուցում, գումարը պատշաճ արդարացի փոխհատուցումից այնքան չէր տարբերվում, որպեսզի դիմումատուին էական վնաս պատճառվեր:

416. Ի վերջո Դատարանը գիտակցում է, որ նյութական կորուստի ազդեցությունը չպետք է գնահատվի վերացական պայմաններում. անձի համար հատուկ պայմանների և նրա բնակության երկրի կամ տարածքի տնտեսական վիճակի լույսի ներքո նույնիսկ ամենաչնչին նյութական կորուստը կարող է լինել էական: Այսպիսով, Դատարանը ֆինանսական կորուստի ազդեցությունը գնահատում է՝ հաշվի առնելով անձի իրավիճակը: Fernandez ընդդէմ Ֆրանսիայի (որոշում) գործում այն փաստը, որ անձը Մարսելում վարչական վերաքննիչ դատարանի դատավոր էր, էական նշանակություն ունեցավ, որպեսզի Դատարանը վճռի, որ 135 եվրոյի տուգանքը նրա համար էական գումար չէր:

(բ) Էական ֆինանսական վնաս

417. Եվ հակառակը. երբ Դատարանը գտնում է, որ դիմումատուն կրել է էական ֆինանսական վնաս, այդ դեպքում [դրամային սահմանաչափի] չափանիշը հնարավոր է մերժվի.

- դատավարության տևողության համար 200-ից մինչև 13,749.99 եվրո փոխհատուցում սահմանող վճռի կատարումն ինից քառասունինը ամիս ուշացնելու գործով ([*Gaglione and Others ընդդէմ Իտալիայի*](#)),
- օտարված գույքի դիմաց փոխհատուցումն ուշացնելուն և տասնյակ հազար եվրոյի գումարներին վերաբերող գործով ([*Sancho Cruz and Others ընդդէմ Պորտուգալիայի*](#), §§ 32-35),
- վիճարկվող աշխատանքի իրավունքի կապակցությամբ մոտավորապես 1,800 եվրոյի պահանջի գործով ([*Živić ընդդէմ Սերբիայի*](#)),
- առանց որևէ փոխհատուցման տասնհինգ տարի և հինգ ամիս տևողությամբ քաղաքացիական դատավարության կապակցությամբ «նշանակալից չափի» պահանջի գործով ([*Giusti ընդդէմ Իտալիայի*](#), §§ 22-36),
- քաղաքացիական դատավարության տևողության վերաբերյալ գործով, որտեղ խնդրո առարկան հաշմանդամության նպաստն էր, որի չափն էական էր ([*De Ieso ընդդէմ Իտալիայի*](#)),
- գործ, որում դիմումատուն պարտավորվել է վճարել իր ամսական եկամուտը 20 ցենտով գերազանցող դատական ծախսերը ([*Piętka ընդդէմ Լեհաստանի*](#), §§ 33-41):

(գ) Էական ոչ ֆինանսական վնասի բացակայությունը

